ՀՀ ԿԳՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Ա. Սարգսյան
Ս. Համբարձումյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ

Ուսումնական ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ 2012

ՀՏԴ 809. 198 1 (07)
ԳՄԴ 81.2 Հg7
Ս 259

Երաշխավորված է
ՀՀ ԿԳ նախարարի՝ 07.12.2012 № 1114 Ա/Ք հրամանով

Սարգսյան Ա.
Ս 259 Հայոց լեզու և խոսքի մշակույթ: Ուս. ձեռնարկ/ Ա. Սարգսյան, Ս.Համբարձումյան; Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն.-Ե.: Կրթության ազգային ինստիտուտ, 2012.-160 էջ:

«Հայոց լեզու և խոսքի մշակույթ» ձեռնարկը ներառում է ժամանակակից հայոց լեզվի դասընթացը՝ ընդգրկելով հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն (ձևաբանություն, շարահյուսություն) բաժինները, ինչպես նաև խոսքի մշակույթին վերաբերող հարցեր: Ձեռնարկը համապատասխանում է ՀՀ ԿԳՆ «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի կողմից մշակված պետական կրթական չափորոշիչներին: Սույն ձեռնարկի բովանդակային հիմքը դպրոցական ծրագրային դասագրքերն են: Հաշվի առնելով ՄԿՈՒ համակարգում կարողություններին միտված կրթության կազմակերպման առանձնահատկությունները՝ տեսական նյութին զուգահեռ բերվում են գործնական առաջադրանքներ:

ՀՏԴ 809. 198 1 (07)
ԳՄԴ 81.2 Հg7

ISBN 978-9939-806-68-6

©ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայերենը աշխարհի հին լեզուներից է: Դարերի ընթացքում նրանով ստեղծվել և ստեղծվում են մշակութային ու գիտական արժեքներ, որոնք կարևոր են ոչ միայն հայ ժողովրդի, այլև համաշխարհային պատմամշակութային ժառանգության համար: Հայերեն տարբեր բնագրերի միջոցով են պահպանվել անցյալին վերաբերող շատ տեղեկություններ, որոնք վերաբերում են ինչպես հայ, այնպես էլ այլ ժողովուրդների մշակույթին ու պատմությանը:

Լեզուն հասարակական կարևոր իրողություն է, որն ունի հաղորդման, արտահայտման, ճանաչողական գործառույթներ: Գիտնականները միշտ էլ ուսումնասիրել են լեզուն, բացահայտել նրա տարբեր հատկանիշները: Պատմական տարբեր շրջաններում լեզուն տարբեր մոտեցումներով է ուսումնասիրվել: Հնում լեզուներն ուսումնասիրում էին առանձին-առանձին՝ իրենց կառուցվածքային տարբեր հատկանիշներով: Սակայն ուսումնասիրությունների ընթացքում ի վերջո պարզ դարձավ, որ տարբեր լեզուների միջև կան մի շարք նմանություններ, և 19-րդ դարի սկզբին Եվրոպայում ձևավորվեց համեմատական լեզվաբանության տեսությունը: Գիտնականներն ապացուցեցին, որ նախկին քիչ թվով լեզուներից հետագայում առաջացել են նորերը: Այս հիմունքով առանձնացվեցին մայր լեզուները և նրանց ճյուղավորումները: Մայր լեզուն իր ճյուղավորումներով կազմում է լեզվաընտանիք, օրինակ՝ հնդեվրոպական, իբերակովկասյան, ֆիննաուգրական և այլն:

19-րդ դարում, երբ դեռ նոր էր հիմնադրվել համեմատական լեզվաբանությունը, եվրոպացի շատ լեզվաբաններ (Հ. Պետերման, Ֆ. Վինդիշման, Ֆ. Բոպպ, Ֆ. Մյուլլեր և այլք) հայերենը համարեցին հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական ճյուղի լեզու: 1875թ. լույս տեսավ գերմանացի նշանավոր լեզվաբան Հայնրիխ Հյուբշմանի «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների մեջ» հոդվածը, որով նա ապացուցում էր, որ հայերենը, թեև մտնում է հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ, սակայն առանձին ճյուղ է և սերում է հենց մայր լեզվից:

Կենդանի լեզուները հասարակական կյանքի զարգացմանը զուգընթաց զարգանում ու փոփոխվում են: Ուսումնասիրողները լեզուների զարգացման ընթացքը սովորաբար բաժանում են փուլերի: 5-րդ դարից, այսինքն՝ այբուբենի ստեղծումից հետո հայերենն անցել է զարգացման երեք շրջան՝ գրաբար (5-11-րդ դդ.), միջին հայերեն հայերեն (12-16-րդ դդ.) և աշխարհաբար (17-րդ դ. մինչև մեր օրերը): Աշխարհաբարն իր զարգացման ընթացքում երկփեղկվեց, և այսօր կա երկու գրական լեզու՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Թե՛ արևելահայերենով, թե՛ արևմտահայերենով ստեղծվել ու ստեղծվում են գեղարվեստական բարձրարժեք

ստեղծագործություններ, հրատարակվել ու հրատարակվում են լրագրեր ու ամսագրեր: Արևելահայերենն ու արևմտահայերենը իրարից տարբերվում են հնչյունական, բառային և քերականական որոշ հատկանիշներով: Մասնավորապես բաղաձայնական համակարգի արտասանության մեջ արևմտահայերենում տեղի է ունենում որոշ խուլերի ձայնեղացում (*պ, կ, տ, ծ, ճ* հնչյուններն արտասանվում են *բ, գ, դ, ձ, ջ*) և ձայնեղների շնչեղ խլացում (*բ, գ, դ, ձ, ջ* հնչյուններն արտասանվում են *փ, ք, թ, ց, չ*)[1], արևմտահայերենը չունի ներգոյական հոլով, բացառականը արևելահայերենում կազմվում է *–ից* վերջավորությամբ (օրինակ՝ *քաղաքից*), իսկ արևմտահայերենում՝ *-է* վերջավորությամբ (օրինակ՝ *քաղաքէ*), սահմանական եղանակի ներկան արևմտահայերենում կազմվում է *կը-* մասնիկով (օրինակ՝ արևմտահայերենի *կգրեմ*-ը համապատասխանում է արևելահայերենի *գրում եմ* բայաձևին): Արևմտահայերենում գործածվում է *մը* անորոշ հոդը՝ *մարդ մը:*

Գրական լեզվին զուգահեռ գոյություն են ունեցել և ունեն բարբառներ: Հայերենի բարբառները, ըստ Հրաչյա Աճառյանի դասակարգման, բաժանվում են *կը, ում, ել* ճյուղերի, նայած թե որ բարբառում սահմանական եղանակի ներկան ինչ մասնիկով է կազմվում:

Լեզուն մարդկության հաղորդակցման հիմնական և գլխավոր միջոցն է: Մարդն իր մտքերը ձևավորում ու արտահայտում է բառերի ու նրանցով կազմվող նախադասությունների միջոցով: Ուստի լեզուն ընդգրկուն, բարդ ու բազմակողմանի երևույթ է, և քննվում է ըստ բաղադրամասերի՝ մակարդակների: Երբ ուսումնասիրում ենք լեզուն, պարզ է դառնում, որ այն կազմված է տարբեր միավորներից: Օրինակ՝ ամենապարզ մոտեցմամբ *«Երեխան նկարեց»* նախադասությունը կարող ենք բաժանել *«երեխան», «նկարեց»* բառերի: Այդ բառերն էլ կարող ենք բաժանել հնչյունների՝ *«Ե-ր-ե-խ-ա-ն ն-կ-ա-ր-ե-ց»:* Լեզուն ուսումնասիրելիս՝ անդրադառնում ենք լեզվական տարբեր մակարդակների միավորներին: Ըստ դրա էլ առանձնացվում են տարբեր բաժիններ՝ *հնչյունաբանություն, բառագիտությունն* և *քերականություն,* որն ունի երկու մեծ ենթաբաժին՝ *ձևաբանություն* և *շարահյուսություն:*

Հնչյունաբանության մեջ ուսումնասիրվում են լեզվի հնչյունները, դրանց արտասանության և գրության հատկանիշները, փոփոխության առանձնահատկությունները, վանկը, շեշտը և այլն:

---

[1] Այն բաղաձայնները, որոնց արտասանության ժամանակ գերակշռում է ձայնը, կոչվում են ձայնորդ (լ, ր, ռ, յ, մ, ն): Այն բաղաձայնները, որոնց արտասանության ժամանակ գերակշռում է աղմուկը, կոչվում են ձայնեղ (բ, գ, դ, ձ, ջ, վ, զ, ժ, ղ): Այն բաղաձայնները, որոնք ձևավորվում են միայն աղմուկի միջոցով, կոչվում են խուլ (պ, տ, կ, ծ, ճ, փ, թ, ք, ց, չ, ֆ, ս, շ, խ, հ): Խուլ բաղաձայններից փ, թ, ք, ց, չ հնչյուններն արտասանվում են ուժեղ շնչով և կոչվում են շնչեղ խուլեր: Մնացած խուլերը կոչվում են պարզ խուլեր:

Բառագիտության մեջ ուսումնասիրվում են լեզվի բառերը, դրանց կազմության (պարզ, բարդ և այլն), ձևաիմաստային (հոմանիշ, հականիշ, համանուն, հարանուն) հատկանիշները և այլն:

Ձևաբանությաննն մեջ ուսումնասիրվում են խոսքի մասերն ու նրանց քերականական հատկանիշները (հոլովում, խոնարհում, հոգնակի թվի կազմություն և այլն):

Շարահյուսության մեջ ուսումնասիրվում են բառերի ու նախադասությունների կապակցման միջոցներն ու եղանակները, կապակցական տարբեր հարաբերությունները, բառակապակցության ու նախադասության անդամների պաշտոնները:

<u>Վարժություններ</u>[2]

Վարժություն 1: **Ո՞ր տարբերակում են ճիշտ նշված հայերենի գրային շրջանի զարգացման փուլերը:**

1. գրաբար (5-9-րդ դդ.), միջին հայերեն (10-17-րդ դդ.), աշխարհաբար (18-րդ դարիցմինչև մեր օրերը)
2. գրաբար (5-11-րդ դդ.), միջին հայերեն (12-16-րդ դդ.), աշխարհաբար (17-րդ դարիցմինչև մեր օրերը)
3. գրաբար (5-10-րդ դդ.), միջին հայերեն (11-16 դդ.), աշխարհաբար (17-րդ դարիցմինչև մեր օրերը)
4. գրաբար (5-12-րդ դդ.), միջին հայերեն (13-17-րդ դդ.), աշխարհաբար (18-րդ դարիցմինչև մեր օրեր)

Վարժություն 2: **Ո՞ր լեզվաընտանիքին է պատկանում հայերենը:**

1. իբերակովկասյան
2. դրավիդյան
3. հնդեվրոպական
4. ֆիննաուգրական

Վարժություն 3: **Գրերի ստեղծումից հետո հայերենը զարգացման քանի՞ փուլ է անցել:**

1. հինգ
2. չորս
3. երեք
4. երկու

[2] Այս ձեռնարկի տարբեր բաժինների տեսական նյութն ամրապնդելու նպատակով կարող եք օգտվել հետևյալ գրքից. *Ս. Վ. Համբարձումյան, Տ. Ղ. Սիրունյան,* Հայոց լեզվի գործնական վարժություններ (ՄԿՈՒ համակարգի ուսանողների համար), Երևան, 2010, տե՛ս http://mkuzak.am/images/Hayoc_lezu.pdf

ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ

Հնչյունը լեզվի նվազագույն ձայնային-արտասանական միավորն է, որը բառ է կազմում կամ հանդես է գալիս որպես բառ: Օրինակ՝ *սար* բառում հնարավոր է առանձնացնել *ս-ա-ր* հնչյունները: Առանձին հնչյունները ևս կարող են գործածվել որպես բառեր, օրինակ՝ *ու, է՛, օ՛:* Հնչյուններն արտաբերվում են արտասանական մի շարք օրգանների միջոցով: Թոքերից ելնող օդի հոսքը անցնում է շնչափողով, կոկորդով և դուրս գալիս բերանի խոռոչից: Այդ ճանապարհին կարող են ստեղծվել տարբեր խոչընդոտներ, որոնք փակում կամ փոփոխում են օդի ճանապարհը: Հնչյունների արտաբերման ժամանակ ձայնալարերը թրթռում են: Ձայնալարերի պարբերական թրթռումից առաջանում է ձայն, իսկ ոչ պարբերական թրթռումից՝ աղմուկ: Ըստ արտասանական հատկանիշների էլ դասակարգվում են հնչյունները: Հնչյունները լինում են ձայնավոր և բաղաձայն:

Ձայնավոր են այն հնչյունները, որոնց արտբերման ժամանակ արտասանական համակարգում արգելքներ չեն ստեղծվում, և որոնք կազմված են միայն ձայնից: Ձայնավոր են *ա, է, ը, ի, օ, ու* հնչյունները:

Բաղաձայն են այն հնչյունները, որոնց արտաբերման ժամանակ արտասանական համակարգում ստեղծվում են խոչընդոտներ (լեզվի, ատամների, շրթունքների և կոկորդի միջոցով), և որոնք կազմված են ձայնից ու աղմուկից կամ միայն աղմուկից: Բաղաձայն են *բ, գ, դ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ* հնչյունները: *Յ* հնչյունը յուրահատուկ արտասանության պատճառով կոչվում է նաև *կիսաձայն:*

ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՁԱՅՆԱԿԱՊ

Որևէ ձայնավորի և *յ* կիսաձայնի արտասանական զուգակցումը կոչվում է երկհնչյուն: Ժամանակակից արևելահայերենի երկհնչյուններն են՝

այ - *լայն, վայր*	յա - *դայակ, եղյամ*
ույ - *նույն, լույս*	յու - *սյուն, նյութ*
էյ (եյ) - *թեյ, սեյսմիկ*	յէ (յե) - *երազ, հայելի*
օյ (ոյ) - *խոյ, Նոյ*	յօ (յո) - *արդյոք, յոթ*
յի - *փղայի, խաղայի*	յը - *հայը, բայը:*

Ինչպես տեսնում ենք, *յ*-ն ձայնավորներին համակցվում է սկզբից կամ վերջից՝ բացի *ի, ը* ձայնավորներից, որոնց կցվում է միայն սկզբից: Միջձայ-

նավորային *յ*-ն երկհնչյուն է կազմում հաջորդող ձայնավորի հետ, օրինակ՝ *Հա-յաստան,* ոչ թե *Հայ-աստան:*

Շեշտի դիրքի փոփոխության հետևանքով որոշ երկհնչյուններ կարող են հնչյունափոխվել, օրինակ՝ *լույս-լուսավոր, մատյան-մատենագիր:*

Իրար հաջորդող երկու ձայնավորներն արտասանելիս սովորաբար նրանց միջև հնչում է *յ* կիսաձայնը, օրինակ՝ *տղայի, արքայի* և այլն: Այս *յ*-ն կարող է չգրվել, օրինակ՝ *վերարկուի, ժողովածուի* և այլն: *Յ*-ն գրվում է միայն այն դեպքում, երբ *ա*-ին, *ո*-ին հաջորդում է որևէ ձայնավոր, օրինակ՝ *կաթսայի, երեկոյի* և այլն: Սակայն մի շարք բառերում (հատկապես օտար) *ա*-ին և *ո*-ին ձայնավոր հաջորդելու դեպքում էլ *յ*-ն չի գրվում (մեծ մասամբ այն գրեթե չի էլ արտասանվում), օրինակ՝ *արխաիկ, պոեմ, պոետ* և այլն: Ձայնավորների միջև արտասանվող *յ* հնչյունը կոչվում է *ձայնակապ:*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Դո՛ւրս գրել այն բառերն ու բառաձևերը, որոնցում երկհնչյուն կա, և ընդգծե՛լ երկհնչյունը (բառի կրկնության դեպքում դո՛ւրս գրել միայն մեկը):**

Գարունդ հայերեն է գալիս,
Ձյուներդ հայերեն են լալիս….

Լույսը յոթ անգամ չեմուչում արեց,
Յոթ թռչուն պոկվեց յոթ բարդու ճյուղից…

Հայաստան ասելիս այտերս այրվում են,
Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են,
Չգիտեմ՝ ինչո՞ւ է այդպես:

Ծանր նստել է քարափը ձորում,
Հյուրընկալ տերը մանկության ձորի:

Ամպե՛ր, արծիվնե՛ր, կաքավնե՛ր համեստ
Եվ թափառական ուլե՛ր քարայծի,

Մի՛ չարաշահեք բարությունը մեծ
Ու համբերությունն այս մեծ քարափի:

Թողե՛ք՝ նա մի քիչ ինքն իր հետ մնա,
Իր ներսը նայի, և ով իմանա,
Գուցե թե սրտից մի աղբյուր հանի
Կամ թե այնպիսի մի հարստություն,
Որ ուրիշ քարափ աշխարհում չունի:

Համո Սահյան

Վարժություն 2: **Արտագրե՛լ՝ լրացնելով երկհնչյունները:**

Առավոտ….ն, ծովեզր…., այծ….մ, արդ….ք, մատ….ն, առ…ծ, բազմամ…., ստորոգ….լ, լուսն….կ, կոր…ն, եղ….մ, ս…թաքել, կ….սր, եռամս….կ, լռակ….ց,

գործուն…., դդ….կ, ծննդ….ն, կղզ…կ, մշակ….թ, անասնաբ….ժ, մեղվաբ….ծ, համբ….ր, եղջ….ր, թ….ման, սառուց….լ, ն….թ, ձ….թ, կ…տ, շաբաթօր…կ, հ…սն:

Վարժություն 3: **Դո՛ւրս գրել այն բառերը, որոնցում մեկից ավելի երկհնչյուն կա:**

Արտաժամյա, պայթյուն, հայություն, օտարերկրյա, գյուղական, միջանկյալ, մայրություն, այժմյան, մագաղաթյա, ներքոհիշյալ, կայունություն, արքայորդի, հարյուրամյա, լայնություն, հարաբերյալ, վայրագություն, գրաբարյան, մետաքսյա, յուրային:

Վարժություն 4: **Որոշե՛լ տրված բառերից յուրաքանչյուրի ձայնավորների ու բաղաձայնների քանակը:**

Ակունք, բարձունք, խճանկար, անդունդ, հրաժեշտ, պայթյուն, դաստիարակ, մանրէ, սրբատաշ, հյուլե, անընդհատ, սրընթաց, մերթընդմերթ, մտավոր, դազգահ:

ՏԱՌ ԵՎ ԱՅԲՈՒԲԵՆ

Գրավոր խոսքում հնչյուններն արտահայտվում են գրանշաններով: Հնչյունի գրային նշանը տառն է: Հնչյունը արտասանվում է, տառը՝ գրվում: Լեզվի տառերի՝ ընդունված կարգով դասավորված ամբողջությունը կոչվում է այբուբեն: Հայերենի այբուբենը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը 405 թվականին[3]: Մաշտոցի մահից հետո նրա աշակերտներից մեկը՝ Կորյունը, գրել է իր ուսուցչի կյանքի ու գործունեության վերաբերյալ մի աշխատություն՝ «Վարք Մաշտոցի»: Այդտեղից մեջբերենք մի քանի հատված[4]. «Մաշթոց[5] էր անունն այն մարդու, որ հիշեցինք մեր խոսքի սկզբում, որի համար և մենք հոգ ենք տարել պատմելու: Նա Տարոն գավառից էր, Հացեկաց գյուղից, Վարդան անունով երանելի մարդու որդին: Մանկական հասա-

[3] Այբուբենի ստեղծման թվականի վերաբերյալ կան այլ կարծիքներ:

[4] Կորյուն, Վարք Մաշտոցի (աշխարհաբարի վերածումը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Աբեղյանի), Երևան, «Սովետական գրող» հրատ., 1979, էջ 25-32:

[5] Մաշտոցի անվան առնչությամբ Մ. Աբեղյանը գրքի առաջաբանում գրել է հետևյալը. «Ինչպես կարելի է նկատել, գրքի վերնագրի մեջ է Մեսրովպ անունը, իսկ համառոտ վերնագրի մեջ է՝ Մեսրոպ («Կորիւն, Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի»), մինչդեռ բնագրի մեջ այդ անունը չկա, այլ միայն Մաշթոց: Այս անունն էլ բնականաբար այսպես պահվում է այստեղ թարգմանության մեջ, և վերնագրի մեջ էլ փոխում, դարձնում եմ Մաշթոց: Ղազար Փարպեցին ունի միայն Մաշտոց, իսկ Մովսես Խորենացին, երբ գրերի և դպրության մասին է գրում, ունի բազմաթիվ անգամներ Մեսրոպ, Մեսրովպ, մեկ անգամ միայն նա գործ է ածել Մաշտոց անունը՝ գրելով, թե Եվսեբիոս Կեսարացու «Էկլէսիաստէ» գիրքը «ետ թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց ի հայ լեզու»: Այժմ ընդհանրացած է և՛ Մեսրոպ, և՛ Մաշտոց, այլև միասին՝ Մեսրոպ Մաշտոց»:

կում նա կրթվել էր հելլենական դպրությամբ, [ապա] եկել, հասել Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը, կացել էր արքունի դիվանատանը՝ դառնալով արքայի տված հրամանի ծառայողը՝ ոմն Առավանի՝ մեր Հայոց աշխարհի հազարապետության ժամանակ: Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, իր զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին: Եվ այնտեղ հենց ջանալով ուշադրությամբ հետևում էր աստվածային գրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց, խորամուխ եղավ աստվածային հրամանների հանգամանքների մեջ և ամեն պատրաստությամբ՝ զարդարելով իրեն՝ իշխանների ծառայություն էր կատարում:

Եվ դրանից հետո նա, ըստ ավետարանական կանոնի, դարձավ մարդասեր Աստծու ծառայությանը. այնուհետև մերկացավ[6][իրենից] իշխանական ցանկությունները և պարծանքի խաչն առնելով՝ դուրս եկավ ամենակեցույց խաչվածի հետևից: Եվ [հավատքի] հրամաններին հավանելով՝ խառնվեց Քրիստոսի խաչակիր գնդին ու շուտով մտավ միայնակեցական կարգի մեջ: ....Եվ մի քանիսին ևս գտել, հարեցրել էր իրեն՝ աշակերտ դարձնելով նույն սովորական ավետարանությանը:

....Երանելին այնուհետև իր հավատացյալներին առավ, գնաց, իջավ Գողթնի անկարգ ու անխնամ [թողած] տեղերը: Նրա առաջ դուրս եկավ նաև Գողթնի իշխանը՝ մի աստվածավախ և աստվածասեր մարդ, որի անունը Շաբիթ էր....: Իսկ երանելին, իսկույն իր ավետարանական արվեստը բանեցնելով, իշխանի հավատարիմ օգնությամբ սկսեց [քարոզել] գավառում....: Նա մտքում դրեց ավելի հոգալ նույնպես համայն աշխարհի[7] ժողովրդին մխիթարելու մասին....: Եվ այնպես տրտմական հոգսերով պաշարված ու թակարդապատված և մտածմունքների ծփանքի մեջ էր ընկած, թե արդյոք ինչպիսի՞ ելք գտնի այդ բանի համար:

Եվ շատ օրեր հենց այնտեղ նույն [խնդրով] զբաղվելուց հետո վեր կացավ, այնուհետև [եկավ], հասավ Մեծ Հայաստանի սուրբ կաթողիկոսի մոտ, որի անունը Սահակ էր, որին և պատրաստ ու հավան գտավ նույն հոգսի վերաբերմամբ:

....Շատ հարցուփորձով ու որոնումով պարապեցին և շատ նեղություններ կրեցին. հետո և իրենց առաջուց ուզած բանի մասին իմաց տվին Հայոց թագավորին, որի անունը Վռամշապուհ էր կոչվում: Այն ժամանակ արքան պատմեց նրանց մի մարդու՝ Դանիել անունով մի ազնվական ասորի եպիսկոպոսի մասին,

[6] Այսինքն՝ վանեց:
[7] Այսինքն՝ Հայոց աշխարհի

որ հանկարծ գտել է հայերեն լեզվի ալփաբետներ–նշանագրեր: Եվ երբ արքան պատմեց նրանց Դանիելի գտածի մասին, արքային հոժարեցրին, որ հոգ տանի այն պիտույքի համար: Նա էլ Վահրիճ անունով մեկին հրովարտակներով ուղարկեց Հաբել անունով մի երեց մարդու մոտ, որ ասորի եպիսկոպոս Դանիելի մերձավորն էր: Իսկ Հաբելն այդ որ լսեց, շտապով հասավ Դանիելի մոտ և նախ ինքը Դանիելից տեղեկացավ նշանագրերին և հետո նրանից առավ, ուղարկեց արքային Հայոց երկիրը: Նրա թագավորության հինգերորդ տարում հասցրեց նրան [նշանագրերը], իսկ արքան՝ սուրբ Սահակի և Մաշթոցի հետ միասին, նշանագրերն ստանալով Հաբելից, ուրախացան:

Ապա երանելի հոգաբարձուները, [իրենց] հանկարծագյուտ ուզածն առնելով, էլի խնդրեցին արքայից մատաղահաս մանուկներ, որոնց միջոցով կարողանային նշանագրերը գործադրել:

....Իսկ երբ հասկացան, որ այդ նշանագրերը բավական չեն հայերեն լեզվի սիղոբաները-կապերն ամբողջությամբ արտահայտելու համար,- մանավանդ որ նշանագրերն էլ իսկապես ուրիշ դպրություններից թաղված և հարություն առած հանդիպեցին,- ապա դարձյալ երկրորդ անգամ նույն հոգսի մեջ ընկան և մի քանի ժամանակ ելք էին փնտրում դրան:

Դրա համար երանելի Մաշթոցը, արքայի հրամանով և սուրբ Սահակի համաձայնությամբ, մի խումբ մանուկներ առավ հետը և սուրբ համբույրով միմյանց հրաժեշտ տալուց հետո ճանապարհ ընկավ....: ....հասավ Արամի կողմերը՝ ասորոց երկու քաղաքները, որոնց առաջինը Եդեսիա է կոչվում, և երկրորդի անունն է Ամիդ: Ներկայացավ սուրբ եպիսկոպոսներին, որոնց առաջինի անունը Բաբիլաս էր, և երկրորդինը՝ Ակակիոս:

....աշակերտասեր ուսուցիչը, իր հետ տարածներին երկու [խմբի] բաժանելով, ոմանց ասորական դպրության կարգեց [Եդեսիա քաղաքում] և ոմանց հունական դպրության [կարգելով]՝ այնտեղից ուղարկեց Սամուսատական քաղաքը:

....Եվ այսպես նա շատ նեղություններ քաշեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: Ամեն բան շնորհող Աստծուց իսկապես պարգևվեց նրան [այդ] բախտը. նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ–հայերեն լեզվի նշանագրեր: Եվ այստեղ շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիղոբաներով-կապերով:

Եվ ապա հրաժեշտ տալով սուրբ եպիսկոպոսին՝ իր օգնականների հետ միասին իջավ Սամոսատ քաղաքը, ուր մեծապատիվ կերպով մեծարվեց եպիսկոպոսից և եկեղեցուց:

Եվ հենց այնտեղ՝ նույն քաղաքում, գտավ հելլենական դպրության մի գրագիր՝ Հռոփանոս անունով, որի ձեռով նշանագրերի բոլոր զանազանությունները՝ բարակն ու հաստը, կարճն ու երկայնը, առանձինն ու կրկնավորը ամբողջապես հորինելուց և վերջացնելուց հետո ձեռնարկեց թարգմանություն անելու երկու մարդու՝ իր աշակերտների հետ, որոնց առաջինի անունը Հովհան էր՝ Եկեղյաց գավառից, և երկրորդինը՝ Հովսեփ՝ Պաղանական տնից: Եվ սկսեց թարգմանել [Սուրբ] գիրքը՝ նախ Սողոմոնի առակներից, որ սկզբում հենց հանձնարարում է ծանոթ լինել իմաստության՝ ասելով, թե՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», որ և գրվեց այն գրագրի ձեռով. Միաժամանակ և սովորեցնում էին մանուկներին՝ գրագիրներ [պատրաստելով] նույն դպրության համար»:

Մեսրոպյան այբուբենի տառերն ունեն նաև թվային արժեքներ.

Ա - 1	Ժ – 10	Ճ – 100	Ռ – 1000
Բ - 2	Ի – 20	Մ – 200	Ս – 2000
Գ - 3	Լ – 30	Յ – 300	Վ – 3000
Դ - 4	Խ -40	Ն – 400	Տ – 4000
Ե - 5	Ծ – 50	Շ – 500	Ր – 5000
Զ - 6	Կ - 60	Ո – 600	Ց – 6000
Է - 7	Հ - 70	Չ – 700	Ւ – 7000
Ը – 8	Ձ - 80	Պ – 800	Փ – 8000
Թ - 9	Ղ - 90	Ջ - 900	Ք - 9000

Մեսրոպյան այբուբենն այնքան կատարյալ է, որ մի քանի մասնակի փոփոխություններով ծառայում է հայ ժողովրդին արդեն 1700 տարուց ավելի: Այն պատմամշակութային և գիտական խոշոր արժեք է:

Տարբեր ցանկերում, հատկապես բառարաններում բառերը հեշտությամբ գտնելու համար դասավորում են այբբենական կարգով: Այդ դեպքում նախ հաշվի է առնվում առաջին տառը, ապա երկրորդը, այնուհետև երրորդը և այլն: Օրինակ՝ *ավանդ, ավագ, ավազ, ավաղ, ավազախառն, ավազաբլուր բառերը, ըստ այբբենական հերթականության, կդասավորվեն այսպես՝ ավագ, ավազ, ավազաբլուր, ավազախառն, ավաղ, ավանդ:*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Ո՞վ է Մեսրոպ Մաշտոցի մասին վարք գրել:**

1. Եզնիկ Կողբացի
2. Ագաթանգեղոս
3. Մովսես Խորենացի
4. Կորյուն

Վարժություն 2: **Նշվածներից ո՞վ Մաշտոցի հետ վերջնականապես ձևավորեց հայերենի այբուբենը:**

1. Փավստոս
2. Ստեփանոս
3. Հռոփանոս
4. Հովսեփ

Վարժություն 3: **Հայոց ո՞ր արքայի օրոք են ստեղծվել գրերը:**

1. Արշակ
2. Վարազդատ
3. Պապ
4. Վռամշապուհ

Վարժություն 4: **Ո՞վ էր Մաշտոցի օրոք հայոց Հայրապետը:**

1. Գրիգոր
2. Արիստակես
3. Սահակ
4. Վրթանես

Վարժություն 5: **Այբուբենն ստեղծելուց հետո Մաշտոցն ո՞ւմ հետ սկսեց թարգմանել Սուրբ գիրքը:**

1. Կորյունի և Մովսես Խորենացու
2. Հովսեփ Պաղնացու և Հովհան Եկեղյացու
3. Հռոփանոսի և Հաբելի
4. Կորյունի և Հռոփանոսի

Վարժություն 6: **Տրված թվականները գրե՛լ հայոց այբուբենի տառերով:**

3, 25, 34, 251, 301, 405, 2514, 4976, 3333, 2012:

Վարժություն 7: **Գտնե՛լ, թե որ շարքերում են բառերը դասավորված այբբենական կարգով:**

1. այգաբաց, այգեբաց, այգեգործ, այգեգործություն, այգեպան
2. բախտ, բախտավոր, բակ, բաղադրիչ, բաղաձայն
3. թավիշ, թատերագետ, թարգմանել, թարթիչ, թիթեռ
4. լավատես, լավորակ, լեգենդ, լեռնային, լեռնալիճ
5. երանգ, երանելի, երաշխիք, երաշտ, երգ
6. զանգ, զավակ, զարդարել, զարմանալ, զբաղվել
7. կատու, կարապ, կղզի, հազար, հաղթել
8. անձնական, աստիճան, աստղ, աստղազարդ, աստղանիշ
9. գեղեցիկ, գետեզր, գերկարճ, գինեթաս, գիպս
10. ծանրորդ, կենցաղ, կղմինդր, համար, համարակալել

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գրության և արտասանության միջև կարող են լինել որոշ տարբերություններ, օրինակ՝ գրվում է *վարդ,* արտասանվում է *վարթ*, *դարբին*-ը՝ արտասանվում է *դարփին* և այլն: Ճիշտ գրելու և ճիշտ խոսելու համար կան կանոններ:

Ուղղագրությունը ճիշտ գրելու կանոնների համակարգն է, իսկ ուղղախոսությունը՝ ճիշտ խոսելու, գրվածը ճիշտ կարդալու կանոնների համակարգը:

Բառերի մի մասը գրության և արտասանության տարբերություն չունի՝ *փուն, ծառ, կապու* և այլն: Ուղղագրական դժվարություն են առաջացնում այն բառերը, որոնց գրությունը տարբեր է արտասանությունից: Երբեմն էլ հանդիպում են ուղղագրական սխալներ, որոնք ոչ ճիշտ արտասանության կամ այլ հնչյունների (նախորդող կամ հաջորդող) արտասանական ազդեցության հետևանք են: Դրանք հիմնականում վերաբերում են մ-ն, ժ-շ, զ-ս բաղաձայններին:

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից հայերենում *ա, ի, ու* ձայնավորների գրությունն ու արտասանությունը հիմնականում համապատասխանում են, ուստի ուղղագրական դժվարություններ չեն առաջանում, օրինակ՝ *այգի, իմաստ, ուրախ* և այլն: Ուղղագրական դժվարություններն առնչվում են *է, ը, օ* ձայնավորների գրությանը:

Է - Ե

Է հնչյունը բառասկզբում հիմնականում գրվում է *է* տառով, իսկ բառամիջում և բառավերջում՝ *ե* տառով, օրինակ՝ *էական, էլեկտրական, էություն, հերոս, մեխ, ափսե* և այլն: Բառամիջում և բառավերջում *է* տառը գրվում է այն դեպքում, երբ արմատի սկզբնատառ է, օրինակ՝ *անէական, էլեկտրաէներգիա, հէկ, մանրէ:* Բառասկզբում գրվում է *ե,* երբ արտասանվում է *յէ,* օրինակ՝ *եղնիկ, երեկ, երկաթ: Եմ, ես, ենք, եք, են* (նաև *չեմ, չես, չենք, չեք, չեն*) օժանդակ բայերը գրվում են *ե* տառով, որը կարդացվում է *է:*

Օ-Ո

Օ ձայնավորը բառասկզբում հիմնականում գրվում է *օ* տառով, իսկ բառամիջում և բառավերջում՝ *ո* տառով, օրինակ՝ *օգուտ, օր, գոն, երեկո:* Բառամիջում և բառավերջում *օ* գրվում է այն դեպքում, երբ այն արմատի սկզբնատառ է, օրինակ՝ *այսօր, անօգուտ, մեղմօրոր:* Բացառություն է *ով* (հոգնակին՝ *ովքեր*) բառը, որում բառասկզբի *ո*-ն կարդացվում է *օ:* Բառասկզբում արտասանվող *վօ*-ն գրվում է *ո* տառով, իսկ բառամիջում արտասանվող *վօ*-ն՝ *վ, ո* տառերով օրինակ՝ *որակ, որսորդ, բանվոր:* Բառամիջում արտասանվող *վօ*-ն գրվում է *ո* տառով, եթե նրանով սկսվող արմատը հաջորդում է ձայնավորին, օրինակ՝ *ամենաորակյալ, հնաոճ*: Բառասկզբում *վո* գրվում է օտար լեզուներից անցած բառերում՝ *վոլտ, վոլեյբոլ, վոլֆրամ, վոկալ, Վոլոդյա, Վոլգա, Վորոնեժ* և այլն:

Անցյալում փոխառված *Ոդիսևս, Որմիզդ, Որմիզդուխտ* բառերը գրվում են *ո* տառով:

Ը

Ը ձայնավորը բառասկզբում գրվում է միայն *ղ, մ, ն* բաղաձայններից առաջ և *ըստ* բառում, օրինակ՝ *ղոծալի, ըմպել, ընթանալ:* Բառամիջում *ը*-ն գրվում է, եթե արմատի սկզբնատառ է, օրինակ՝ *ամենաընտիր, անընդունելի, խաղընկեր: Ը*-ն բառամիջում գրվում է նաև այն դեպքում, երբ արմատի սկզբնատառ չէ, սակայն այդ բառում ուրիշ ձայնավորներ չկան, օրինակ՝ *շը՛խկ, խը՛շշ:* Եթե բառի մեջ կան մեկից ավելի ձայնավորներ, և բոլորը՝ *ը,* ապա գրվում է միայն վերջինը, օրինակ՝ *շրը՛խկ* (արտասանվում է *շըրը՛խ*): Բառավերջում լսվող *ը*-ն գրվում է, օրինակ՝ *սառը, դառը, խառը, մարդը, գիրքը* և այլն: Մյուս դեպքերում բառասկզբում և բառամիջում լսվող *ը*–ն գաղտնավանկի վանկարար է և չի գրվում, օրինակ՝ *(ը)զգույշ, մ(ը)կրատ, ման(ը)ր* և այլն: Գաղտնավանկի *ը*-ն կարող է գրվել վանկատման և տողադարձի ժամանակ, օրինակ՝ *ըզ-գույշ, մըկ-րատ, մա-նըր* և այլն:

Վարժություններ

Վարժություն 1: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *է* կամ *ե*:**

Այգե....տ, այժմ....ական, ան....ական, անպատ....հ, առ....ջ, առօր....ական, անվր....պ, գոմ....շ, գրեթ..., դող....րոցք, ելև....ջ, երբև...., երբևից...., էլեկտրա....ներգիա, էմալ..., ինչև...., ինչևից...., լայն....կրան, խ....ցի, կր....տ, հ...կ, հապճ....պ, հիպոթ....զ, հյուլ...., հն....աբան, մանան....խ, մանր...., միջօր....ական, որև...., որևից...., պո....մ, սեթև....թել, վայր....ջք, տի....զերք, տոթակ....զ, տրիոլ....տ, քրիստոն....ական:

Վարժություն 2: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *օ* կամ *ո*:**

Ականջ....ղ, աման....ոյա, ամեն....ոյա, ան....գնական, ան....թևան, ան....ոոշ, ապ....ոինի, արծաթազ....ծ, բաց....թյա, բն....ոոան, գազ....ջախ, գիշերուզ....ր, գիշեր....թիկ, զ....ոք, լավ....ոակ, կես....ր, հանապազ....ոդ, հանապազ....ոյա, հ....գս, հ....դս ցնդել, հ....տնկայս, մեղմ....ոոր, մեղմ....ոեն, մի....ոինակ,, նախ....ոոք, ոսկեզ....ծ, ջր....ոինեք, վաղ....ոդայն, վաղ....ոոք, տասն....ոյակ, տար....ոոշել, տափ....ղակ, օրըստ....ոե, օր....ոել:

Վարժություն 3: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *ը* տառը:**

Ակ....նդետ, ակ....նթարթ, անակ....նկալ, ան....նդհատ, առ....նթեր, առ....նչվել, գույն....զգույն, դաս....նթաց, դաս....նկեր, երկ....նտրանք, ինքն....ստինքյան, լուս....նկա, խոչ....նդոտ, կոր....նթարդ, համ....նկնել, հյուր....նկալ, ձեռ....նտու, ճեպ....նթաց, մերթ....նդմերթ, նոր....նտիր, որոտ....նդոստ, սր....նթաց, ունկ....նդիր:

ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ Յ ՁԱՅՆԱԿԱՊԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից արևելահայերենի երկհնչյուններն են *այ, յա, էյ, յէ, ույ, յու, օյ, յօ, յի, յը:* Բառամիջում և բառավերջում, ըստ ուղղագրական կանոնների, երկհնչյունների *է, օ* հնչյունները գրվում են *ե, ո* տառերով (օրինակ՝ *թեյ, յոթ*), իսկ բառասկզբում *յէ* երկհնչյունը գրվում է *ե*՝ *ելակ, երկաթ, երկիր:*

Երկհնչյունների արտասանությունն ու գրությունը հիմնականում համընկնում են, և ուղղագրական դժվարություններ առաջանում են ոչ ճիշտ արտասանության հետևանքով, օրինակ՝ *հյուրը*-ը սխալ արտասանվում է *հույր, սյունակ*-ը՝ *սույնակ, հյութ*-ը՝ *հույթ, համբույր*-ը՝ *համբյուր, առյուծ*-ը՝ *այռուծ* և այլն, ու դա էլ սխալ գրության պատճառ է դառնում:

Որոշ տարբերություններ կան միայն *յա* և *յո* երկհնչյունների գրության ու արտասանության միջև:

ՅԱ

Յա երկհնչյունը մի քանի դեպքում գրվում է *իա* տառերով.

ա) մի շարք բառերում՝ *ալելուիա, ակացիա, բամիա, բիլիարդ, դաստիարակ, զինկոմիսարիատ, էներգիա, էքսկուրսիա, իշիաս, խավիար, կրիա, հեքիաթ, մատերիա, միլիարդ, մոնոպոլիա, մումիա, պրոլետարիատ, ռապսոդիա, Սիսիան, սոցիալ-, փասիան, քիմիա, օլիմպիադա, օվկիանոս* և այլն.

բ) տեղանուններում՝ *Անգլիա, Գերմանիա, Իտալիա, Կիլիկիա* և այլն.

գ) արական մի քանի անձնանուններում՝ *Ազարիա, Անանիա, Բենիամին, Բունիաթ, Եղիա, Եղիազար, Երեմիա, Զաքարիա, Սուքիաս* (բայց՝ *Իլյա, Կոլյա, Վանյա, Վոլոդյա*) և այլն.

դ) իգական *Աիդա, Մարիամ* անուններում, իսկ իգական մյուս անուններում գրվում է *յա*՝ *Ամալյա, Արաքսյա, Օֆելյա* և այլն: *Ասյա, Սոֆյա, Վիկտորյա* իգական անձնանունները գրվում են *յա*-ով, իսկ որպես աշխարհագրական տեղանուններ՝ *իա*-ով՝ *Ասիա* (աշխարհամաս), *Սոֆիա* (Բուլղարիայի Հանրապետության մայրաքաղաքը), *Վիկտորիա* (ջրվեժ, լիճ, գետ և այլն).

ե) *Անդրեաս, իդեալ, հրեա, սեանս* բառերում գրվում է *եա:*

ՅՈ

Յո երկհնչյունը մի շարք բառերում գրվում է *իո*՝ *ամբիոն, աքսիոմ, բիլիոն* (թվական), *Բյուզանդիոն, բրաբիոն, գիլիոտին* (գլխատելու սարք), *էքսկուրսիոն, իդիոմատիկ* (դարձվածային), *կանիոն* (խոր գետահովիտ, կիրճ), *հեգիոտն, մարմարիոն, մեդալիոն, միլիոն, շամպինիոն* (սունկի տեսակ), *չեմպիոն, պանսիոնատ, ռադիո, Սրապիոն, տրիլիոն, օրիորդ* և այլն: *Յո* երկհնչյունն այդպես է գրվում նաև *-ցիոն*-ով կամ *սիոն*-ով ավարտվող բառերում (օր,՝ *ավիացիոն, ինդուկցիոն, կոմիսիոն*):

Ակորդեոն, ամեոբա, թեորեմ, լեգեոն, Նապոլեոն, քամելեոն բառերում *յո* երկհնչյունը գրվում *եո:*

Յ

Յ ձայնակապը գրվում է միայն *ա*-ից և *ո*-ից հետո, երբ նրանց հաջորդում է ձայնավոր, օրինակ՝ *երեկոյան, Իսրայել, Միքայել, նայել, տղայի* և այլն: Մի շարք, հատկապես օտար բառերում *ա*-ի և *ո*-ին ձայնավոր հաջորդելու դեպքում *յ* չի գրվում (դրանցից շատերում այն չի էլ հնչում)՝ *Աիդա, արխաիկ* (հնաբանական),

բառբաբ (վարազածառ), *բոա* (վիշապօձ), *Լաուրա, կակաո, կաուչուկ, կոալա* (պարկավոր արջ), *կոալիցիա, Նաիրի, նոկաուտ, պոեզիա, պոեմ, պոետ, ռաունդ, սաքսաուլ* (անապատային բույս), *Ուկրաինա* և այլն:

Բաղադրյալ բառերում, եթե *ա*-ով կամ *ո*-ով ավարտվող բաղադրիչին հաջորդում է ձայնավորով սկսվող բաղադրիչ, ապա ձայնավորից առաջ *յ* չի գրվում, օրինակ՝ *ամենաուժեղ, կինոասպող, հակաօդային:*

Բառավերջում եղած *յ*-ն քերականական փոփոխություններ կատարելիս և բաղադրյալ բառեր կազմելիս գրվում է, օրինակ՝ *Ալեքսեյ-Ալեքսեյի, Գալիլեյ-Գալիլեյի, թեյ-թեյել-թեյաման, հոկեյ-հոկեյի:*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *յա, իա, եա*:**

Հեք….աթ, ակաց…., բամ…., այծ….մ, էներգ…., Անդր….ս, եղ….մ, էքսկուրս…., խավ….ր, կղզ….կ, Սուք….ս, կր…., միլ….ոդ, վայրկ….ն, Բեն….մին, մում…., Սիս….ն, փաս….ն, միմ….նց, Արաքս…., դաստ….ռակ, լ….ոդ, քիմ…., օվկ….նոս, անց….լ, Ազար…., Անան…., Եղ…., Եղ….զար, Երեմ…., հեծ….լ, Զաքար…., Մար….մ, Ամալ…., Օֆել….:

Վարժություն 2: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *յո, իո, եո*:**

Ամբ….ն, աքս….մ, բրաբ….ն, լեգ….ն, հետ….տն, արդ….ք, մարմար….ն, թ….ռեմ, մեդալ….ն, միլ….ն, ակորդ….ն, չեմպ….ն, պանս….նատ, Սրապ….ն, տրիլ….ն, օր….ոդ ավիաց….ն, ինդուկց….ն, ամ….բա, քամել….ն:

Վարժություն 3: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության գրելով *յ* տառը:**

Կա….ուն, հա….ելի, Միքա….ել, զրո….ական, է….ություն, նա….ել, վա….ելել, գա….իսոն, է….ակ, ատամնաբու….ժ, Ռաֆա….ել, մի….այն, պո….եմ, պո….ետ, մի….ասին, հի….անալ, թե….ել, խնա….ել, հի….անալ, որդի….ական:

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բ-Պ-Փ

Պ-ի և *փ*-ի գրության ու արտասանության տարբերություններ չկան, օրինակ՝ *պարզ, պարել, փերի, փոշի:*

Բ-ի արտասանությունն ու գրությունը որոշ բառերում տարբեր են:

Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում *մ*-ից, *ր*-ից կամ ձայնավորից հետո արտասանվում է *փ* հնչյունը, բայց գրվում է *բ* տառը՝ *աբխազ, Գաբրիել, դարբին, երբ, իբր, լիրբ, խաբել, Հակոբ, համբերել, համբույր, հարբել, նուրբ, շաբաթ, որբ, Սերոբ, սուրբ, սրբել, ուրբաթ, Քերոբ:*

Աղբ, աղբյուր, եղբայր, ողբ և նրանցից կազմված բառերում գրվող *ղբ*-ն կարդացվում է *խպ:*

Գ-Կ-Ք

Կ-ի և *ք*-ի գրության ու արտասանության տարբերություններ չկան, օրինակ՝ *կապտու, մկրատ, մաքուր, քանոն:*

Գ-ի արտասանությունն ու գրությունը որոշ բառերում տարբեր են:

Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում *ն*-ից, *ր*-ից կամ ձայնավորից հետո արտասանվում է *ք* հնչյունը, բայց գրվում է *գ* տառը՝ *անգամ, ավագ, գոգ, երգ, զուգել, էգ, էգուց, թագավոր, թարգմանել, ծագել, ծեգ, կարագ, կարգ, հագնել, հոգնել, հոգի, հոգնակի, ձագ, ձիգ, ճիգ, ճրագ, ճրագու, մարագ, մարգարե, մարգարիտ, մուգ, նորոգել, շոգ, շոգի, ոգի, ոռոգել, պատարագ, պարգև, սուգ, տեգր (տագր), ուրագ, օգնել, Օգսեն, օգուտ:*

Շաղգամ բառում *ղգ*-ն արտասանվում է *խկ*, բայց տարածված է նաև *ղգ*-ով արտասանությունը: Տարածված է նաև *ճիգ* (և նրանից կազմված բառերի՝ *ճգնել, ճգնավոր, ճգնաժամ* և այլն) *գ*-ով արտասանությունը:

Դ-Տ-Թ

Տ-ի և *թ*-ի գրության ու արտասանության տարբերություններ չկան՝ *տեսր, կապտու, թիթեռ, հարթ, որթ* (խաղողի վազ):

Դ -ի արտասանությունն ու գրությունը որոշ բառերում տարբեր են:

Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում *ն*-ից, *ր*-ից կամ ձայնավորից հետո արտասանվում է *թ* հնչյունը, բայց գրվում է *դ* տառը՝ *անդամ, արդար, արդեն, արդյոք, արդյունք, արդուկ, բարդ, բերդ, բրդել* (մանրել), *բուրդ,*

դադար, դդում, դրդել, երդիկ, երդում, զարդ, լաջվարդ (մուգ երկնագույն), *լերդանալ, լյարդ, խնդիր, խորդուբորդ, կարդալ, կենդանի, հաղորդել, մարդ, նյարդ, Նվարդ, որդ* (ճիճու), *որդի, վարդ, Վարդան, վարդապետ, Վարդգես, վրդովել, օդ, օրիորդ:*

Թ հնչյունը *դ* տառով է գրվում նաև *-որդ, -ուրդ* ածանցներում՝ *գնորդ, ժողովուրդ* և այլն, ինչպես նաև *ընդ*-ով սկսվող բառերում՝ *ընդամենը, ընդհակառակը, ընդհանուր, ընդունակ, ընդունել* և այլն: Բացառություն են *ընդդեմ, ընդդիմություն, ընդարմանալ* բառերը, որոնք արտասանվում են *դ*-ով:

Խեղդել բառում *ղդ*-ն արտասանվում է *խտ:*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *բ, պ* կամ *փ*:**

Գա....րիել, ս....րթնել, ս....րդել, դար....աս, դար....ին, շամ....ուր, եր...., ի....րև, խա....ել, խարխա....ել, Հակո...., համ....երել, ջրար....ի, համ....ույր, փր....ուր, հա....ճեպ, հա....շտակել, հար....ել, նուր...., շա....աթ, որ...., Սերո...., ա....շել, սուր...., սր....ել, հղ....անալ, ուր....աթ, Քերո...., թ....րտալ, աղ....անոց, ցայտաղ....յուր, եղ....այր, ող....:

Վարժություն 2: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *գ, կ* կամ *ք*:**

Ան....ամ, ավա...., կողպե...., գո...., եր...., զու....ել, թա....ավոր, վարա....ել, թար....մանել, կարա...., կար...., հա....նել, հան....ափոր, հո....նել, հո....ի, հո....նակի, ձա...., ձի...., տարեր...., ճի...., ճրա...., մարա...., մար....արե, մար....արիտ, փեղ...., տրտմաշու...., փող...., նորո....ել, շո...., ո....ի, բազրի...., պատարա...., պար....և, սու...., արտասու...., փա....ցնել, թա....ցնել, ուրա...., օ....նել, Օ....սեն, վարուցան...., քսու...., օ....ուտ:

Վարժություն 3: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *դ, տ* կամ *թ*:**

Աղո....ք, ար....ար, ար....են, ար....յոք, ար....յունք, թփու...., ար....ուկ, բար...., բեր...., բուր...., դա....ար, դր....ել, եր....իկ, եր....ում, զար...., լաջվար...., զվար...., լեր....անալ, լյար...., խն....իր, խոր....ուբոր...., թուղ...., կար....ալ, կեն....անի, հաղոր....ել, պա....գարակ, մար...., նյար...., ս....ափվել, թա....երական, Նվար...., որ.... (ճիճու), որ.... (խաղողի վազ), որ....ի, վար...., Վար....ան, վար....ապետ, շքեր...., Վար....գես, վր....ովել, օ...., օրիոր...., գնոր...., ժողովուր.... խր....վիլակ, ըն....ամենը, ըն....հակառակը, փար....ամ, ըն....հանուր, ըն....ունակ, ըն....ունել, ըն....արմանալ:

Ձ-Ծ-Ց

Ծ-ի և *ց*-ի գրության ու արտասանության տարբերություններ չկան, օրինակ՝ *ծաղիկ, կարծր, ցանց, ցորեն:*

Ձ-ի արտասանությունն ու գրությունը որոշ բառերում տարբեր են:

Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում *ղ*-ից (արտասանվում է *խ*), *ր*-ից կամ ձայնավորից հետո արտասանվում է *ց* հնչյունը, բայց գրվում է *ձ* տառը՝ *արձակ* (նաև *արձակուրդ, ընդարձակ, համարձակ*), *բարձ, բարձել, բարձր, դաղձ, դարձ, դեղձ, դեղձան* (բաց դեղնագույն, խարտյաշ), *դեղձանիկ, դերձակ, դերձան* (կարի թել), *խուրձ, հանդերձ, հարձակվել, համբարձվել, Համբարձում, որձ, վարձ, փորձ, օձ:*

Ջ-Ճ-Չ

Ճ-ի և *չ*-ի գրության ու արտասանության տարբերություններ չկան, օրինակ՝ *ճահիճ, կարճ, չամիչ, կանաչ:*

Ջ-ի արտասանությունն ու գրությունը որոշ բառերում տարբեր են:

Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում *ղ*-ից (արտասանվում է *խ*), *ր*-ից կամ ձայնավորից հետո արտասանվում է *չ* հնչյունը, բայց գրվում է *ջ* տառը՝ *աղջիկ, ամբողջ, աջ, առաջ, առաջին, առաջնորդ, արջ, զիջել, թրջել* (խոնավացնել), *իջնել, մեջ* (նաև *միջև*), *մեջք, ողջ* (նաև *ողջույն, առողջ*), *ոջիլ, վերջ, քաջք* (դև):

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *ձ, ծ* կամ *ց*:**

Ար....ակուրդ, ասացվա....ք, ընդար....ակ, ատաղ....ագործ, գլուխկոն....ի, համար....ակ, բար...., բար....ել, թխվա....ք, բար....ր, խ....կել, առան....ք, դաղ...., դար...., կ....կտուր, դեղ...., դեղ....անիկ, հանդիպակա...., դեր....ակ, դեր....ան, խուր...., ձվա....եղ, հանդեր...., հինավուր...., լպր....ուն, հար....ակվել, համբար....վել, Համբար....ում, փայ....աղ, որ...., վար...., ուր...., փոր...., որ....ալ, օ...., օ....իք:

Վարժություն 2: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *ջ, ճ* կամ *չ*:**

Աղ....իկ, ամբող...., թարթի...., ա...., ծխամոր...., առա...., ա....պարար, գո....ի, խո....կոր, առա....ին, կո....կել, առա....նորդ, ար...., զի....ել, թռ....ել,

թր....ել, ի....նել, կարկա....ել, մե...., մի....և, մե....ք, ող...., մուր...., ող....ույն, մահ....ակալ, առող...., ո....իլ, կա....աղակ, վեր....:

Ղ-Խ

Խ-ի գրության և արտասանության տարբերություններ չկան, օրինակ՝ *ախտ* (հիվանդություն), *դժոխք, դրախտ, թախտ, Որմիզդուխտ, տախտակ, ուխտ* (երդում, դաշինք), *փախչել:*

Ղ-ի արտասանությունն ու գրությունը որոշ բառերում տարբեր են:

Մի շարք արմատներում և նրանցից կազմված բառերում արտասանվում է *խ* հնչյունը, բայց գրվում է *ղ* տառը՝ *աղբյուր, Աղթամար* (կղզու և վանքի անվանումը)[8], *աղջիկ, աղտ* (կեղտ), *աղքատ, բողկ, գաղթ, դաղձ, դեղձ, դեղձանիկ, եղբայր, զեղչ, թուղթ, կեղտ, կողպեք, կողք, հաղթել, հղկել, ճեղք, մաղթել, մեղք, մղկտալ, շաղգամ*[9]*, շաղկապ, շղթա, ողբ, ողջ, ողկույզ, պղտոր, ուղտ* (սապատավոր կենդանի), *փեղկ, փողք, քաղցր, սանդուղք, սեղմել:*

Ր-Ռ

Բառասկզբում, բառամիջում կամ բառավերջում գրվող *ր*-ն արտասանվում է *ր,* իսկ *ռ*-ն՝ *ռ,* օրինակ՝ *ռոպե, Ռաֆֆի, արժեք, արհամարհել, լար, կար, ռազ-մական, ռեփին, առակ, նուռ* և այլն:

Երբեմն դժվարություն կարող է առաջացնել արմատի կրկնությամբ կազմված բառերի գրությունը: Դրանց առնչությամբ անհրաժեշտ է հիշել հետևյալը:

Ռ-ով վերջացող արմատի կրկնությամբ կազմված բառերում առաջին ար-մատի *ռ*-ն փոխվում է *ր*-ի, օրինակ՝ *բարբառ, գրգիռ, թրթիռ, կարկառել, մրմռալ* (կսկծալ), *սարսուռ* և այլն:

Եթե *ռ*-ով վերջացող արմատի կրկնությամբ կազմված բառերը բնաձայնական են, ապա առաջին արմատի *ռ*-ն չի փոխվում՝ *դռդռալ, խռխռալ, կռկռալ, ճռճռալ, մռմռալ, փռփռալ* և այլն:

Արմատի կրկնությամբ բազմապատկականություն արտահայտող բայերում պահպանվում են արմատավերջի *ռ*-ն կամ *ր*-ն՝ *թռվռալ, խրթխրթալ, ծռմռել, մարմրել, փորփրել, քրքրել* և այլն:

Վառվռուն բառը գրվում է *ռ*-երով:

Թրթուր, կերկերուն, մարմար, փրփուր բառերը գրվում են *ր*-երով:

---

[8] Հովի. Թումանյանի հայտնի բալլադի վերնագիրը գրվում է խ-ով՝ «Ախթամար», քանի որ բալլադում այն մեկնաբանված է որպես ա՛խ ձայնարկության և Թամար անձնանվան միացումից ծագած բառ:

[9] Ինչպես նշվել է, տարածված է նաև շաղգամ բառի **ղգ**-ով արտասանությունը:

Վարժություններ

Վարժություն 1: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *ղ* կամ *խ*:**

Ա....բյուր, ա....ջիկ, խրո....տ, ա....տ (կեղտ), ա....տ (հիվանդություն), հա....ճապակի, ա....քատ, բո....կ, տա....տակ, գա....թ, դա....ձ, կմա....ք, դե....ձ, դե....ձանիկ, ե....բայր, զե....չ, թու....թ, կե....տ, կո....պեք, կո....ք, հա....թել, տա....տկալի, հ....կել, ճե....ք, կ....տար, մա....թել, մե....ք, մ....կտալ, շա....կապ, շ....թա, թու....պ, ո....բ, ո....ջ, ո....կույզ, ցողաթաթա...., պ....տոր, ու....տ (սապատավոր կենդանի), ու....տ (երդում, դաշինք), փե....կ, ծ....նի, փո....ք, քա....ցր, սանդու....ք, ծ....նելույզ, փա....չել, սե....մել:

Վարժություն 2: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *ր* կամ *ռ*:**

Վա....վռուն, ախո....ժակ, բա....բառ, խ....խռալ, գանգու...., կենսաթ....թիռ, թ....թուր, կա....կառել, երկնակա....կառ, սա....սուռ, ճանկ....ել, դ....դռալ, կ....ճիկ, ա....ժանի, ճ....ճռալ, ա....համարհել, գ....գիռ, խ....ճիթ, կ....ծել, խոշո...., խոժո...., թ....վռալ, խ....թխ....թալ, ծ....մռել, փ....փռալ, փ....փրել, փո....փրել, ք....քրել:

Վ-Ֆ

Ավտո, հարավ, նավթ, ինչպես նաև նրանցից կազմված բառերում (*ավ-տոմեքենա, հարավային, նավթամուղ* և այլն) գրվող *վ*-ն արտասանվում է *ֆ:*

Մյուս բառերում *վ*-ի և *ֆ*-ի գրության ու արտասանության տարերություններ չկան, ինչպես՝ *ասֆալտ, գովք, զավթել, թավշյա, թովչանք, խոռվք, կաքավ, հավք, սֆինքս, փլավ, օվկիանոս* և այլն:

Հ

Աշխարհ, ընդհանուր, խոնարհ, խորհուրդ, Հովհաննես, ճանապարհ, շնորհ, ինչպես նաև նրանցից կազմված բառերում (*աշխարհագրական, խոնարհաբար, խորհրդատու, Հովհաննիսյան, ճանապարհորդ, շնորհաշատ* և այլն) *հ*-ն չի արտասանվում կամ թույլ է արտասանվում: *Արհամարհել* բառում առաջին *հ*-ն արտասանվում է, երկրորդը՝ ոչ:

Աշխարհայացք բառը գրվում է մեկ *հ*-ով:

ԵՎ

Հայերենում մեծատառ *և* չկա. մեծատառի անհրաժեշտության դեպքում գրվում է *եվ* տառակապակցությունը:

Բացի *ևեթ, ևս* բառերից՝ բառասկզբում միշտ գրվում է *եվ* տառակապակ-ցությունը, ինչպես՝ *Եվա, Եվգինե, Եվրոպա, եվրո* (դրամական միավոր), *եվրո-*

պացի և այլն: Եթե բառասկզբում *եվ* ունեցող բառերին սկզբից բառակազմական նոր բաղադրիչ է ավելանում, ապա պահպանվում է գրության նույն սկզբունքը, ինչպես՝ *արևելաեվրոպական, համաեվրոպական, հնդեվրոպական* և այլն:

Բառամիջում գրվում է *եվ,* եթե *ե*-ին հաջորդող *վ*-ն արմատի սկզբնատառ է, օրինակ՝ *ագեվազ, գերեվարել, գինեվաճառ, գինեվարպետ, դափնեվարդ, կարեվեր, հոգեվարք, հոգեվիճակ, ոսկեվազ, ոսկեվարս, ուղեվճար* և այլն: Վ-ին նախորդող *ե*-ն սովորաբար լինում է *ի+ա-ե* հնչյունփոխության հետևանքով, օրինակ՝ *գինի+ա+վաճառ-գինեվաճառ:* Իսկ *-վոր*-ով կազմված բառերում գրվում է *և,* ոչ թե *եվ,* որովհետև *-վոր*-ը վերջածանց է, այլ ոչ թե արմատ, օրինակ՝ *ագևոր* (ագի-ա-վոր), *ալևոր, գոտևորել, հոգևոր, ոգևորել, ոսկևորել, ուղևոր, ունևոր:*

Վանկատման ժամանակ գրվում է *եվ,* երբ *ե*-ն և *վ*-ն պատկանում են տարբեր վանկերի, ինչպես՝ *հա-ղե-վան, հո-գե-վոր, ու-ղե-վոր* և այլն

Տողադարձի ժամանակ գրվում է *եվ*, եթե *ե*-ն պետք է մնա վերևի տողում, իսկ *վ*-ն անցնի հաջորդ տող, օրինակ՝ *հոգե-վոր, ուղե-վոր:* Այլապես գրվում է *և,* ինչպես՝ *հո-գևոր, ու-ղևոր:*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *վ* կամ *ֆ*:**

Ա....տոմեքենա, օ....կիանոս, կարտո....իլ, թա....շյա, նա....թամուղ, հարա....ային, կաքա...., աս....ալտ, հա....ք, գո....ք, զա....թել, թո....չանք, կաթ....ածահար, խռո....ք, հա....ք, ս....ինքս, փլա....:

Վարժություն 2: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *հ* տառը:**

Ընդ....անուր, ընդ....ամենը, դազգա...., ար....եստ, խոնար...., հայթ....այթել, ապաշխար....ել, խոր....ուրդ, ընդ....ուպ, անհեթ....եթ, ճանապար...., շնոր...., հեղ....եղ, խոտ....արք, հեղ....եղուկ, շնոր....ակալ, աշխար....ագրական, մա....ճակալ, խոնար....աբար, նշխար...., խոր....ոդատու, Հով....աննիսյան, հեկ....եկալ, ճանապար....որդ, շնոր....աշատ, արհամար....ել, խոր....ել, օր....նանք:

Վարժություն 3: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով *և* կամ *եվ*:**

Ուղ....ճար, ագ....ազ, սերկ....իլ, գեր....արել, գին....աճառ, կար....որ, գին....արպետ, դափն....արդ, ոսկ....որել, կար....եր, հոգ....արք, հոգ....իճակ, ոգ....որել, հար....ան, ոսկ....ազ, ոսկ....արս, արևելա....րոպական, իջ....անել:

ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մի շարք բառերում որևէ բաղաձայնը արտասանվում է տևական, ուստի գրվում է կրկնատառ:

Կրկնակ բաղաձայն ունեն մի շարք բառեր՝ *աբբա* (կաթոլիկ վանահայր), *անդորր, Աննա, Աքիլլես, բալլադ, բերրի, Բուդդա, Էլլադա, Էմմա, ինն* (ինը), *կեցցե՛, կտրտանք* (տանջանք), *մրրիկ* (այսինքն՝հողմ, իսկ *մրիկ*-ը հացաբույսերի հիվանդություն է), *Վիեննա, տարր, տոննա, Ռաֆֆի, Օթելլո, ֆիննա* և այլն:

Կրկնակ բաղաձայն ունեն մեծ թվով բնաձայնական բառեր՝ *բզզալ, խշշոց, ճռռոց, տզզալ, ֆշշոց և այլն:*

Կրկնակ բաղաձայններ լինում են բաղադրյալ այն բառերում, որոնց բաղադրիչներից մեկն ավարտվում է այն նույն բաղաձայնով, որով սկսվում է հաջորդը, ինչպես՝ *այբբենական, աննշան, երեսսրբիչ, երկկողմ, երրորդ, չորրորդ* և այլն:

Բաղաձայնների կրկնություն կարող է առաջանալ բառակազմության ընթացքում տեղի ունեցած հնչյունափոխության հետևանքով, ինչպես՝ *արճիճ-արճճե, բջիջ-բջջային, (զնին)-զննել, ծնունդ-ծննդական, հովիվ-հովվական, նինջ-ննջել, պտույտ-պտտահողմ, ուղիղ-ուղղակի, (փթիթ)-փթթել* և այլն:

Ն բաղաձայնի կրկնություն է առաջանում *ն*-ով ավարտվող բազմավանկ բառերի հոգնակին *–ներ* վերջավորությամբ կազմելիս, ինչպես՝ *պահարան-պահարաններ, պատճեն-պատճեններ, քանոն-քանոններ* և այլն:

Բաղաձայնների կրկնություն է առաջանում *ս, դ, ն* հնչյուններով ավարտվող բառերին *ս, դ, ն* հոդերն ավելացնելիս (դրանց միջև հիմնականում հնչում է գաղտնավանկի *ը* ձայնավորը), ինչպես՝ *դասս, հողամասս, խորհուրդդ, ծնունդդ, կայարանն, շրջանն* և այլն:

Բառասկզբում իրար հաջորդող կրկնակ բաղաձայնների միջև արտասանվում է գաղտնավանկի *ը* ձայնավորը, որը գրվում է տողադարձի կամ վանկատման ժամանակ՝ *գգվել (գըգ-վել), զզվել (զըզ-վել), լլկել (լըլ-կել, խխունջ (խը-խունջ), կկու (կը-կու), շշուկ (շը-շուկ)* և այլն:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով մեկ կամ կրկնակ բաղաձայն:**

Անդո...., բա....ադ, պ....ահողմ, բե....ի, տայատեսակ, մ....իկ (հողմ), մ....իկ (հացաբույսերի հիվանդություն), տա....ական, տո....ա, բ....այինն, սովա....ուկ,

տա....որոշել, այ....ենական, երե....րբիչ, ե....որդ, հինգե....որդ, չո....որդ, անդո....ագիր, հո....ասուն, ու....ևոր, հո....ական, հո....անոց, ու....ակի:

Վարժություն 2: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով բաց թողած տառերը (նաև կրկնակ):**

Քարի մշակման վարպետությունը մի....նադարյան Հայաստանում առավել հարուստ ձևով է արտա....այտվել խաչքարերի արվեստում: Պահպանելով կանոնի վերածվա.... կառուցվա....քը՝ խաչքարերի հարդարանքի մեջ, տասնմեկե....որդ դարից սկսած, գերիշխող են դառնում երկրաչափական-գծային ու բուսական բար.... հյուսվա....քավոր զար....անախշերը: Ընդ որում, բեկվող գիծը, ստե....ծելով երկրաչափական կոնկրետ պատկեր, չի ընդ....ատվում նույնիսկ այն դեպքում, երբ դա....արում է ու....ածիգ լինելուց և ներփակվում մի այլ երկրաչափական ձևի մեջ (շրջանակ, քա....անկյունի): Դրանց օրինաչափ հաջոր....ականությունն ու շա....կապվածությունը, ստե....ծելով որոշակի ռիթմ, եզրագծում են խաչքարը: Գծային հյուսվա....քը թվում է անսկիզբ-անվեր...., իր շարժման ըն....ացքի մեջ փոխակերպվում մի ձևից մ....ուսը՝ չսահմանագծելով սկիզբն ու ավարտը: Այս պարագայում զար....ապատկերը իր ան....նդմեջ հյուսվա....քի շնոր....իվ դառնում է անսահմանության ու հավերժականության գաղափարի արտահայտություն:

«Հայկական խաչքարեր» գրքից (տեքստի հեղ. Լ. Ազարյան)

ՄՅՈՒՍ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես նշվել է, բաղաձայնների մի մասի գրությունն ու արտասանությունը երբեմն տարբեր են, և այդ հնչյունները ճիշտ գրելու համար անհրաժեշտ է իմանալ որոշ կանոններ: Բայց պատահում են նաև մյուս բաղաձայնների գրությանն առնչվող սխալներ, որոնք հիմնականում ոչ ճիշտ արտասանության կամ այլ հնչյունների (նախորդող կամ հաջորդող) արտասանական ազդեցության հետևանք են: Դրանք հիմնականում առնչվում են *մ-ն, ժ-շ, զ-ս* բաղաձայններին: Ուղղագրական նման սխալներ չկատարելու համար պետք է հիշել բառերի ճիշտ գրությունը:

Մ-ն. *ամբաստանել, ամբար, ամբարիշտ, ամբարձիչ, ամբարտակ, ամբարտավան, ամբիոն, ամբոխ, ամբողջ, ամեոբա, ամպ, ամփոփ, ամֆիթատրոն, անբասիր, անբավ, բամբակ, բամբուկ, բանբեր, գամփռ, դամբարան, դրմբոց, զամբյուղ, ըմբոստ, ըմբռնել, ըմպանակ, թմբլիկ, թմբուկ,*

համբավ, ճամբար, ճամփորդ, ճանապարհ, շամփուր, շիմպանզե, չեմպիոն, սիմֆոնիա, սմբակ, սուսամբար, Սուսաննա, փամփուշտ և այլն:

Ժ-շ. *ապառաժ, գույժ, դժխեմ, դշխո, դրժել, երաժշտական, երաշտահավ, խոժոռ, խոշոր, հուժկու, նաժիշտ, պատշգամբ, օժտել* և այլն:

Զ-ս. *ավտոբուս, բազպան, բզկտել, գիպս, համհարզ, հիպնոս, նարգիզ, որպես, որպեսզի, ֆիզկուլտուրա* և այլն:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով բաց թողած տառերը (մ-ն, ժ-շ, զ-ս):**

ա) Ա....բաստանել, ը....պանակ, ա....բար, ա....բարիշտ, շա....փուր, զա....բյուղ, ա....բարձիչ, ա....բարտակ, շի....պանզե, ա....բարտավան, ա....բիոն, ա....բոխ, ա....բողջ, ա....պամած, ա....փոփ, ա....ֆիթատրոն, ա....բասիր, բա....բակ, բա....բուկ, թ....բուկ, գա....փռ, դա....բարան, ը....բոստ, ը....բռնել, թ....բլիկ, հա....բավ, ա....բավ, ճա....բար, ճա....փորդ, ճա....ապարհ, չե....պիոն, սի....ֆոնիա, ս....բակ, սուսա....բար, փա....փուշտ:

բ) Ապառա...., պատ....գամբ, գույ...., դ....խեմ, դ....խո, երա....տահավ, խո....ռռ, խո....որ, հու....կու, դր....ել, նա....իշտ, օ....տել:

գ) Ավտոբու...., գիպ...., բ....կտել, վա....քուղի, նարգի...., համհար...., հիպնո...., որպե...., ֆի....կուլտուրա:

Վարժություն 2: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով բաց թողած տառերը (նաև կրկնակ):**

ա) Ազնվամորին (մոռ) վար....ազգիների ընտանիքին պատկանող 1-1,5 մ բար....ությամբ թուփ է կամ կիսաթուփ: Տեր....ները բարդ են՝ եռամասնյա, վեր....ից գրեթ.... մերկ ու կանաչ, ներք....ից՝ թաղի....անման ու սպիտակավուն: Ծա....կաբույլը ո....կույզ է, ծա....կաթերթիկները սպիտակ են, պտուղը բազմակորիզավոր է: Բույսը ծա....կում է հունիս-հուլիս, պտղակալում՝ հուլիս-օգոստոս ամիսներին: Ձմե....ելուց հետո բերք է տալիս մի....այն երկրորդ տարում ու չորանում ե....որդ տարում:

Դեռ....ս հին հույներն ու հռոմ....ացիներն անտառից հավաքած ազնվամորու պտուղներն օ....տագործել են ոչ մի....այն ուտելու, այլ.... բ....ժական նպատակներով: Հին Ռուսիայում օրգանիզմի առույգության համար առավոտ....ն

ժամերին ը....պել են ազնվամորու և լոռամրգու պտուղներից պատրաստված խոշապ[10]:

բ) Հայրենական ժողովր....ական բժշկության մե.... ազնվամորու պտուղների թուրմը լայն....րեն կի....առվում է գրիպի, մի շարք ցրտառական հիվանդությու....երի ժամանակ: Պտուղները լայն կիրառում ունեն նաև լնդա....տի, սակավար....նության, ստամոքսային ցավերի ժամանակ: Օ....տագործվում են նա.... մարսողությունը լավացնելու և ալկոհոլային հար....ածությունից սթա....եցնելու նպատակներով:

Հայկական ժողովր....ական բժշկության մե.... ազնվամորու պտուղները լայն կի....առում են ունեցել տենդային հիվանդությունների, իսկ ծաղիկների թուրմը՝ օ....ի կծածի դեպքերում:

Ա. Թորոսյանի «Հայաստանի դեղաբույսերը» գրքից

ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՌԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բաղադրյալ բառերի ուղղագրական առանձնահատկությունները գլխավորապես առնչվում են նրանց բաղադրիչների միասին, անջատ կամ գծիկով գրվելուն, իսկ ձայնավորների և բաղաձայնների ուղղագրության ընդհանուր կանոնները նույնն են: Հիմնականում գործում են բաղադրյալ բառերի գրության հետևյալ սկզբունքները:

1. Կրկնավոր բարդությունները գրվում են գծիկով, օրինակ՝ *զույգ-զույգ, մեծ-մեծ, շերտ-շերտ, շուտ-շուտ, տեղ-տեղ:* Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բաղադրիչներից որևէ մեկը կարող է հնչյունափոխված լինել, ինչպես՝ *մանր-մունր, պարապ-սարապ, լեփ-լեցուն, ճեփ-ճերմակ* և այլն: Հիմնականում անջատ են գրվում *առ*-ով կազմված կրկնավորները, օրինակ՝ *բառ առ բառ, ժամ առ ժամ,* բայց սրանց մի մասը կարող է նաև միասին գրվել՝ *դեմ առ դեմ // դեմառդեմ:*

2. Եթե բաղադրիչներից մեկը քերականական քարացած ձև է, ապա բաղադրիչները գրվում են միասին, օրինակ՝ *ամսեամիս, գյուղեգյուղ, երկրեերկիր, տնետուն:*

3. Կրկնությամբ կազմված այն կապակցությունները, որոնց բաղադրիչներից մեկը ինքնուրույն իմաստով հոլովված բառ է, անջատ են գրվում, օրինակ՝ *գյուղից գյուղ, երկրից երկիր, ձեռք ձեռքի, մեջք մեջքի, ուս ուսի:*

[10] *Խոշապ* - չամչարակ՝ կոմպոտ:

4. Միևնույն խոսքի մասին պատկանող բառերից կազմված բաղադրյալ բառերը, որոնց բաղադրիչները միմյանց նկատմամբ հոմանշային, հականշային, առնչակից որևէ հարաբերություն ունեն կամ մեկը բնութագրում է մյուսին, գրվում են գծիկով, օրինակ՝ *ամառ-ձմեռ, այստեղ-այնտեղ, ասել-խոսել, ուտել-խմել, գիշեր-ցերեկ, հյուսիս-արևմուտք, տուն-թանգարան* և այլն:

5. Գծիկով են գրվում միաժամանակ գործածվող չափման միավորները, որոնք տարբեր չափանիշներով բնորոշում են չափը՝ *լիտր-վայրկյան, կիլոմետր-ժամ, կիլովատտ-ժամ* և այլն:

6. Տարբեր ժողովուրդներ ու պետություններ անվանող բաղադրիչներից կազմված բառերը գրվում են գծիկով՝ *հայ-ռուսական, գերմանա-իտալական* և այլն:

7. *Տեր, մելիք, բեկ, միրզա* և նման բաղադրիչներից կազմված ազգանունները հիմնականում գծիկով են գրվում, օրինակ՝ *Տեր-Գրիգորյան, Մելիք-Մուսյան, Միրզա-Ավագյան* և այլն: Բայց կան այսպիսի ազգանուններ, որոնք միասնական են արտասանվում և գրվում են միասին, ինչպես՝ *Բեկնազարյան, Մելիքսեթյան, Միրզախանյան* և այլն:

8. Մի շարք անուններ ավանդաբար գրվում են գծիկով, ինչպես՝ *Գամառ-Քաթիպա, Խնկո-Ապեր, Նար-Դոս, Սայաթ-Նովա* և այլն:

9. Հոդակապով միացած բաղադրիչները գրվում են միասին, օրինակ՝ *բառա-քերականական, գիտահետազոտական, դրամահրային, նյութատեխնիկական* և այլն:

10. Եթե բաղադրիչներից առաջինը որոշիչ է, երկրորդը՝ որոշյալ, ապա բաղադրիչները գրվում են առանձին, օրինակ՝ *ալ կարմիր, բաց դեղին, մուգ դեղին, թղթակից անդամ, տիեզերագնաց օդաչու, Նոր Զելանդիա, Փոքր Ասիա* և այլն: Այսպիսի տեղանուններից կազմված ածականները գրվում են միասին, ինչպես՝ *նորզելանդական, փոքրասիական* և այլն:

11. *Ի* բաղադրիչը հիմնականում գրվում է առանձին, ինչպես՝ *ի շահ, ի ծնե, ի լուր* և այլն: *Իզուր, իհարկե, իսպառ* բառերում *ի*-ն գրվում է միասին:

12. *Ինչ* դերանունով կազմված և անորոշության իմաստ արտահայտող բառերը գրվում են գծիկով՝ *ինչ-որ, փոքր-ինչ, դույզն-ինչ, ինչ-ինչ:*

13. Կոտորակային, ինչպես նաև հարյուրից բարձր բաղադրյալ թվականների բաղադրիչները գրվում են առանձին՝ *երկու երրորդ, մեկ հինգերորդ, զրո ամբողջ հինգ տասնորդական, հազար ինը հարյուր իննսունմեկ* և այլն:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Առանց փակագծերի և փակագծերում տրված բաղադրիչները, ըստ ընդունված կանոնների, գրել միասին, անջատ կամ գծիկով:**

Արագ (արագ), հյուր (ընկալություն), յոթանասուն (երեք), տեղի (անտեղի), մուգ (կարմիր), հյուսիս (արևելք), դեմ (դիմաց), ուշ (ուշ), ըստ (արժանվույն), դուրս (մղել), ծառից (ծառ), քանի (որ), կողք (կողքի), կապտա (կանաչ), մի (քանի), լեփ (լեցուն), տեղից (տեղ), լեռն (աշխարհ), երկ (կենցաղ), սպիրտ (այրոց), երկու (երրորդ), փայտ (փորիկ), հյուսիս (արևմտյան), ի (սկզբանե), փոք (ինչ), հող (անցում), ծափ (տալ), ոտքից (գլուխ):

Վարժություն 2: **Արտագրե՛լ՝ ըստ անհրաժեշտության լրացնելով բաց թողած տառերը (նաև կրկնակ):**

ա) Վիշապագորգը հայկական գորգ է, որի շեղացանց հորինվա....քում բ....սական ու կեն....անական զար....անախշերի տարբեր զուգոր....ումներում կար....որված է վիշապի վերա....արկված, ոճավորված կերպարը: Վիշապագորգի դաշտում երկայնակի կենտրոնական առան....քով դասավորված են բազմազան հորինվա....քներով վարդյակներ: Վիշապները տեղադրված են այդ առան....քին զուգահեռ երկու շարքում, յուրաքանչ....րում՝ երկուսից չորս հատ: Նրանց մոտ պատկերված են կենա.... ծառեր: Վիշապագորգին բնորոշ են մեծ չափերը, երիզող մեկ զար....ագոտին, տիրապետող չորս գույները՝ կարմիր, կապույտ, շա....անակագույն, փղ....սկրագույն:

բ) Վիշապագորգի հիմնագ....նը գերազանցապես վառ կարմիրն է՝ ստացվա.... որ....ան կարմրից, որի արտադրության հիմնական վայրը եղել է Արարատյան դաշտը: Վիշապագորգերը համարվում են ոչ միայն հայկական, այլև ող.... գորգագործության ամենահին խումբը: Քսանե....որդ դարի սկզբին վիշապագորգը առա....ին ան....ամ ուսումնասիրել են անվանի ար....ելագետ արվեստաբաններ Ֆ. Մարտինը, Ֆ. Սարրեն և այլք, որոնք առանձնացրել են ար....ելյալ գորգերի այդ խումբը և հայկական արվեստի մ....ուս բնագավառների հետ ունեցած ընդ....անրությունների հիման վրա բն....րոշել դրանց անվանումն ու հայ մշակույթին պատկանելը:

գ) Դար....նությունը հնագույն ժամանակներից հայտնի է եղել աշխարհի գրեթ.... բոլոր ժողովուր....ներին: Հին հույները նույնիսկ ունեցել են դար....նության աստված՝ Հեփեստոսը: Դար....ինները, ավելի վաղ շրջանում պղինձը, ապա երկաթը կրակի վրա շիկացնելով և կռելով, պատրաստում էին

երկրագործական և արհեստագործական գործի....ներ, տնտեսական ու կեն....աղային իրեր: Երբ արհեստների զարգացմամբ ու տա....աբաժանմամբ պղնձագործությունն անջատվեց մետաղագործության մայր արհեստից, դար....նություն համարվեց միայն երկաթի մշակման արհեստը: Դար....իններն են առա....ին ան....ամ ձուլել պո....պատը, հայտնագործել պղնձի օ....նությամբ պո....պատը երկաթին զոդելու եղանակը:

դ) Դար....նությունը հարգված արհեստ է եղել Հին Հայաստանում: Դար....նությունը համարվում էր կորովի մար....կանց արհեստ: Հայերի համար դար....նությունը ուժի, զ....րության խորհր....անիշ էր: Ըստ առասպելի՝ Արտաշես արքայի որ....ի Արտավազդը, որը շ....թայված էր Մասիսի վիհում, չար հո....ի էր, որը կարող էր դուրս գալ ու կործանել աշխար....ը: Դրա համար դար....ինները խփում էին սալին և ամրացնում Արտավազդի շ....թաները: Ընդ....ուպ մինչև տասնի....երորդ դարի վեր....երը ժողովր....ական հավատալիքը դար....նին վերագրում էր գերբնական զ....րություն, որն առ....նչվում է վաղնջական ժամանակներից եկող մետաղի պաշտամունքին:

Ըստ «Հայկական սովետական հանրագիտարանի»

ՎԱՆԿԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բառի մեկ հնչյունը կամ հնչյունների խումբը արտասանվում է օդի մեկ մղումով: Օրինակ՝ *ասեղ* բառն արտասանելիս աննշան դադարով առանձնանում են *ա-սեղ* հատվածները: Հնարավոր է, որ ամբողջ բառն արտասանվի օդի մեկ մղումով, օրինակ՝ *դուռ* բառն ամբողջությամբ արտասանվում է մեկ շնչով: Ըստ այդմ՝ առանձնացվում են արտասանական միավորներ, որոնք կոչվում են վանկեր: *Բառի այն հնչյունը կամ հնչյունախումբը, որն արտասանվում է օդի մեկ մղումով, կոչվում է վանկ:* Վերը բերված *ասեղ* բառը կազմված է *ա* և *սեղ* վանկերից, իսկ *դուռ* բառը՝ մեկ վանկից: Ըստ վանկերի քանակի՝ բառերը լինում են *միավանկ* և *բազմավանկ:*

Ժամանակակից հայերենում վանկի կազմում անպայման պետք է լինի մեկ ձայնավոր, որը կոչվում է *վանկարար:* Վանկը լինում է *բաց* և *փակ:* Ձայնավորով ավարտվող կամ միայն մեկ ձայնավորով արտահայտված վանկը կոչվում է բաց, իսկ բաղաձայնով ավարտվող վանկը՝ փակ:

Կան վանկեր, որոնց ձայնավոր հնչյունը *ը*-ն է, որը լսվում է, բայց չի գրվում, օրինակ՝ *մ(ը)կրատ, զ(ը)վարթ, ն(ը)կար:* Լսվող բայց չգրվող *ը* ձայնավոր ունեցող վանկը կոչվում է *գաղտնավանկ:* Գաղտնավանկի *ը*-ն գրվում է միայն վանկատման և տողադարձի ժամանակ, երբեմն էլ բանաստեղծական տողի չափը հուշելու համար: Գաղտնավանկի *ը*-ն կարող է լինել նաև բառի առաջին հնչյունը, օրինակ՝ (*ը)սկսել, (ը)զգույշ,* որը շատ թույլ է հնչում: Բառասկզբում լսվող *ը*-ն գրվում է միայն *ղ, մ, ն* բաղաձայններից առաջ և *ըստ* բառում, օրինակ՝ *ըղձալի, ըմպել, ընդունակ:*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գտնե՛լ, թե որ շարքերի բոլոր բառերն կազմված միայն բաց վանկերից:**

1. հետագա, մուրաբա, պարագա, լեռնաշղթա
2. մեթոդիկա, գենետիկա, թեմատիկա, շոգեմեքենա
3. ճոպանուղի, հայուհի, չարաճճի, մագաղաթյա
4. փիրուզե, ամենադառը, բանալի, հակամանրէ
5. չափածո, ձուլածո, հայալեզու, գինեթթու, հավաքածու
6. ժողովածու, օդաչու, քահանա, հավաքատեղի
7. կարոտալի, ապագա, մետաղե, ապակե
8. հայելի, հուսալի, աբեղա, մարմարյա
9. հիանալի, մեդուզա, առաջիկա, գրամեքենա
10. փիլիսոփա, գրեթե, բյուրեղապակե, իրականանալի

Վարժություն 2: **Գտնե՛լ, թե որ շարքերում գաղտնավանկ ունեցող բառ կա:**

1. պատկերազարդ, բազմամարդ, մանածագործ, խառատային
2. երկաթուղի, սալահատակ, թիավարում, հրուշակագործ
3. երկաստիճան, ավազակույտ, ներկապնակ, ջերմամեկուսիչ
4. ռադիոընդունիչ, մեսրոպատառ, աշխարհամաս, մետաղահատ
5. կարճաժամկետ, խաղողաքաղ, ավազամաղ, հյուրընկալ
6. վանդակաճաղ, հարթեցում, մարզադահլիճ, շքեղակազմ
7. արդյունահանում, ընթերցողական, հյուսիսարևելյան, հեռախոսակայան
8. խողովակաշար, վերջակետ, հաստոցաշինական, ձուլակաղապար
9. անտառաշերտ, կալվածատեր, ջրահեռացում, շաքարեղեգ
10. պարարտանյութ, թխվածքաբլիթ, հողապատնեշ, նախշազարդ

Վարժություն 3: **Գտնե՛լ և դո՛ւրս գրել այն բառերն ու բառաձևերը, որոնց առաջին վանկը բաց է: Բառաձևերը դո՛ւրս գրել տեքստում եղած (փոփոխված) ձևով:**

Այս բաժակը անշունչ, որ լուռ նայում է ինձ,
Մերթ ուրախ է լինում ու մերթ տխրաթախիծ.
Նրա մեջ վառ գինին մերթ իբրև խնդություն
Եվ մերթ տխրության պես նայում է իմ հոգուն:

Եվ իմ սիրտն էլ այդպես մի բաժակի նման
Լցվում է մերթ խինդով, մերթ վշտով անսահման.
Վշտով լեցուն պահին դարձյալ ուրախ եմ ես,
Որ չի լինում սիրտըս դատարկ բաժակի պես:

Գեղամ Սարյան

ՏՈՂԱԴԱՐՁ

Գրելիս երբեմն տողավերջի բառը չի տեղավորվում, և բառի մյուս մասը հաջորդ տող տանելու անհրաժեշտություն է առաջանում: Բառի մի մասը հաջորդ տող փոխադրելը կոչվում է *տողադարձ:* Կան տողադարձի որոշակի կանոններ, որոնցում կիրառվում է երկու սկզբունք՝ *վանկատման* և *բառակազմական:* Ահա տողադարձի՝ ներկայումս գործող կանոնները[11]:

1. Տողադարձը հիմնականում կատարվում է բառը վանկերի բաժանելով կամ վանկատմամբ, ըստ որում՝

ա) երկու ձայնավորի միջև եղած մեկ բաղաձայնը անցնում է հաջորդ տողը, օրինակ՝ *ա-շա-կերտ, գա-րուն, բա-նա-կա-յին, դա-սա-րան, լե-գե-ոն, կա-տու, հե-քի-աթ.*

բ) երկու ձայնավորի միջև եղող երկու և ավելի բաղաձայններից հաջորդ տողն է անցնում միայն վերջին բաղաձայնը, օրինակ՝ *ար-ձան, բուր-ժու-ա-կան, բեր-րի, Աստ-ղիկ, Արծ-վիկ, թարգ-ման, բարձ-րա-նալ, երկ-դի-մի, ա-ռանցք-ներ:*

Ծանոթություն 1: *Քանի որ հայերենի* յա, յո, յու *երկբարբառակերպ վանկերի* յ *բաղադրիչի և նրան նախորդող բաղաձայնի միջև* ը *չի արտասանվում, ուստի* յ*-ին*

[11]Տողադարձի կանոնները ներկայացվում են ըստ Հ. Բարսեղյանի կազմած նախագծի, որը հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի 2003 թ. հունվարի 14-ի հ. 22 հրամանով: Զետեղված է «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուում», Երևան, «9-րդ հրաշալիք» հրատ., 2006, էջ 295-297:

նախորդող բաղաձայնը կամ բաղաձայններից վերջինը կարող է նաև նրան միացած անցնել հաջորդ տողը՝ առաջացնելով տողադարձի երկակիություն, օրինակ՝ անկ-յուն//ան-կյուն, արդ-յոք//ար-դյոք, գոչ-յուն//գո-չյուն, գիտութ-յուն//գիտու-թյուն, կոստ-յում//կոս-տյում, կոն-յակ//կո-նյակ, Հակոբ-յան//Հակո-բյան, հոբել-յար//հոբե-լյար, մատ-յան//մա-տյան, սեն-յակ//սե-նյակ, սին-յոր//սի-նյոր, ուխտ-յալ//ուխ-տյալ *և այլն:*

Տողադարձի այս երկակիությունը չի պահպանվում երկարա-կյաց, կնքա-զգյաց (կնքազգեստ), բյուրա-բյուր, ամենա-հյուրասեր, ան-հյուրընկալ, լեռնա-գյուղ, ոսկե-հյուս, սառցա-ձյուն, քարա-սյուն *ու նման բաղադրություններում, որոնց սույն վանկային կամ արտասանական և բառակազմական տողադարձումները նույնական են:*

Ծանոթություն 2: *Բառամիջի ձայնավորից առաջ ընկած* և-*ը տողադարձի ժամանակ գրվում է* եվ, *և* վ-*ն անցնում է հաջորդ տողը, օրինակ՝* Երե-վան, բարե-վել, սե-վաթույր, տերե-վաթափ:

2. Գաղտնավանկ, այսինքն՝ արտասանվող, բայց չգրվող *ը* ունեցող բառերի տողադարձի ժամանակ *ը*-ն գրվում է միայն տողավերջի և հաջորդ տողի սկզբի վանկերում, օրինակ՝ *շը՛ղ-թա, կը-տը՛րտել, կտը՛ր-տել, Մը-կը՛րտիչ, Մկը՛ր-տիչ, երբե-մը՛ն, գը՛լ-խավոր:*

Այսպես նաև՝ փոխառյալ օտար բառերում՝ *դեմո-կը՛րատիա, դեմոկը՛-ռատիա, էլեկ-տը՛ական, էլեկտը՛-ական, մաես-տը՛ռո, մասեստը՛-ռո (//մաեստ-ռո), ֆոքստը՛-ռոտ, ֆոքս-տը՛ռոտ (//ֆոքստ-ռոտ):*

Ծանոթություն 1: *Անշեշտ և թույլ արտասանվող* ը *ձայնավորը գրական արտասանությամբ առավելապես սղվում, իսկ ժողովրդական արտասանությամբ և բանաստեղծական խոսքում հաճախ պահպանվում է՝ առաջացնելով արտասանության և տողադարձի երկակիություն՝*

ա) բառասկզբի ը *գաղտնավանկին հաջորդած վերջնավանկի* ի *կամ* ու *ձայնավորը շեշտային հնչյունափոխության ենթարկված հետևյալ կրկնաբաղաձայն բայերում՝* զը-նը-նել//զը՛ն-նել, խը-ճը-ճել//խը՛ճ-ճել, խը-տը-տել//խը՛տ-տել, կը-ծը-ծել//կը՛ծ-ծել, պը-տը-տել//պը՛տ-տել, փը-թը-թել//փը՛թ-թել, քը-թը-թել//քը՛թ-թել, քը-նը-նել//քը՛ն-նել, այսպես նաև՝ մը-րը-րիկ//մը՛ր-րիկ, խը՛ր-տը՛նել//խը՛ր-տ-նել, սը-ր-սկել//սը՛ր-ս-կել *և այլն.*

բ) վերջնավանկի ի-*ն մեկ սղված, մեկ* ը-*ի հնչյունափոխված բազմավանկ այլ բառերում՝* աղջը-կա//աղջ-կա, արճը-ճի//արճ-ճի, խը՛ն-դ-ը՛ր-ել//խը՛ն-դ-ր-ել, կարմը-ր-ել//կարմ-ր-ել, մարմը-նի//մարմ-նի, քը՛ր-տ-ը-նել//քը՛ր-տ-նել *և այլն.*

գ) պատճառական և երկու բաղաձայնից հետո վ *ածանց ունեցող կրավորական բայերում՝* թրռ-ցը-նել//թրռց-նել, խաղացը-նել//խաղաց-նել, մերկացը-նել//մերկաց-նել, մոտեցը-նել//մոտեց-նել, վազեցը-նել//վազեց-նել, փախցը-նել//փախց-նել, զրս-պը-վել//զրսպ-վել, թրր-ջը-վել//թրրջ-վել, կազմը-վել//կազմ-վել, տանջը-վել//տանջ-վել *և այլն:*

Ծանոթություն 2: Զբ, զգ, շտ, սպ, ստ *և նման հնչյունակապակցություններով սկսվող հատուկ անունների տողադարձի ժամանակ այդ հնչյունակապակցությունները հաջորդ ձայնավորից չեն անջատվում, որպեսզի հատուկ անվան գրությունը* ը-*ով չսկսվի, այսինքն՝ պետք է տողադարձել՝* Ստե-փան, Սպար-տակ, Ստրաս-բուրգ, *և ոչ թե՝* Ըս-տեփան, Ըս-պարտակ, Ըստ-ռասբուրգ:

3. Բարդ և նախածանցավոր բառերը կարելի է տողադարձել նաև առանց վանկատման՝ հաջորդ տողը փոխադրելով արմատը կամ ամբողջական բառը, այսինքն, կարդալիս պահելով բառի վանկային ճիշտ արտասանությունը, ոչ միայն կարելի գրել՝ *արա-գընթաց, գերխընդիր, ա-նօգուտ, ա-նորոշ, հա-կազդել, ծովեզր, գե-տափ, ինք-նիշխան, համազ-գեստ, համ-ընթաց, վայ-րէջք, մե-կընդմեջ, երեսուներկու* և այլն, այլ նաև՝ ըստ բառակազմության՝ *արագ-ընթաց, գերխնդիր, ան-օգուտ, ան-որոշ, հակ-ազդել, ծով-եզր, գետ-ափ, ինքն-իշխան, համազգեստ, համր-ընթաց, վայր-էջք, մեկ-ընդմեջ, երեսուն-երկու:*

Ծանոթություն 1: *Բառակազմությամբ կամ բաղադրիչներով տողադարձված բառերի նախորդ տողի վերջնավանկի և հաջորդ տողն անցնող արմատի սկզբնավանկի գաղտնավանկ* ը-*ն չի գրվում, օրինակ՝* ան-վնաս, ապա-շնորհ, արև-մտյան, բացա-տրական, գրա-քննիչ, դարա-գլուխ, դիմա-դրել, երկնա-սլաց, լեռնա-բնակ, կարգա-դրում, հակա-կղերական, համա-կրանք, հաշվե-տվություն, հեծ-կլտոց, հեղա-շրջում, նախա-դրյալ, շարա-դրել, չարա-ճճի, վազ-վզել, վառ-վռուն, փայլ-փլել, փոխ-գնդապետ, քաշ-քշել, *ապա նաև՝* ակն-կալել, ակն-դետ, հոտն-կայս, ձեռն-տու, ունկն-դրել *և այլն: Այսպես նաև փոխառյալ օտար բառերում՝* ցինկո-գրաֆիա, դիա-գրամ, պոլի-գրաֆիա, պոլի-կլինիկա, մելո-դրամա, բջջա-պլազմա *և այլն:*

Ծանոթություն 2: *Որոշ բացառություններում հաջորդ տողն անցնող արմատի սկզբնավանկի* ը-*ն սղվում է, ուստի բառը տողադարձվում է միայն ըստ վանկատման, օրինակ՝* գայթակ-ղել, գերբ-նական, համալ-սարան, մասնակ-ցություն *և այլն:*

Ծանոթություն 3: *Եթե բարդ բառի՝ նախորդ տողում մնացող հնչյունափոխված բաղադրիչը գաղտնավանկ* ը-*ից բացի այլ ձայնավոր չունի, ապա տողավերջում այդ գաղտնավանկ* ը-*ն գրվում է, օրինակ՝* դռըն-բաց, ձկըն-կուլ, մթըն-կա, մկըն-դեղ, այսպես և գըռ-գռալ, ճըռ-ճռոց, թրր-թիռ, մրր-մուռ *և այլն:*

4. Տառային և վանկատառային հապավումները չեն տողադարձվում, օրինակ՝ ԱՄՆ, ՄԱԿ, ԼՂՀ, ՌԴ, ԽՍՀՄ, ՀՅԴ, ՀԿԿ, ՀՀՇ, ԳԱԱ, ՀամԼԿԵՄ, ՀԷԿ և այլն:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Յուրաքանչյուր շարքում գտնե՛լ տողադարձման սխալ ձևը:**

1. ան~համարձակորեն, անհա~մարձակորեն, անհամարձակ~որեն, անհամար~ձակորեն
2. պը~տուտակահան, պտուտա~կահան, պտուտակա~հան, պտուտ~ակահան
3. հա~ցաթխման, հացաթըխ~ման, հացա~թխման, հացա~թըխման
4. ար~տասանական, արտասա~նական, արտա~սանական, արտասան~ական
5. ջը~րօգտագործում, ջրօգ~տագործում, ջրօգտագոր~ծում, ջրօգտագործ~ում
6. հաշ~վապահություն, հաշվապահ~ություն, հաշվա~պահություն, հաշվապահու~թյուն
7. կա~մըրջասյուն, կամըր~ջասյուն, կամըրջա~սյուն, կամրջա~սյուն
8. էլեկտ~րաշարժիչ, էլեկտրա~շարժիչ, է~լեկտրաշարժիչ, էլեկտրաշարժ~իչ
9. եր~կարաճիտ, երկա~րաճիտ, երկարա~ճիտ, երկ~արաճիտ
10. ա~սեղնագործ, ասեղ~նագործ, ասեղն~ագործ, ասեղնա~գործ

Վարժություն 2: **Վանկատման միջոցով քանի՞ ձևով է հնարավոր տողադարձել *երկվանկ, եռավանկ, քառավանկ, հնգավանկ* բառերը. գրե՛լ երկվանկ, եռավանկ, քառավանկ, հնգավանկ մեկական բառ և յուրաքանչյուրը տողադարձել բոլոր հնարավոր ձևերով:**

Վարժություն 3: **Դո՛ւրս գրել և վանկատե՛լ այն բառերն ու բառաձևերը, որոնցում գաղտնավանկ կա: Բառաձևերը դո՛ւրս գրել տեքստում եղած (փոփոխված) ձևով:**

Հրուշակեղենը մեծ քանակությամբ շաքար պարունակող սննդամթերք է. աչքի է ընկնում բարձր կալորիականությամբ և մարսելիությամբ, հաճելի համով ու բույրով: Հրուշակեղենի պատրաստման համար օգտագործում են սննդահումքի բազմազան տեսակներ՝ շաքար, մեղր, մրգեր և հատապտուղներ, ցորենի ալյուր, կաթ և յուղ, ճարպեր, օսլա, կակաո, ընկույզ, ձու, սննդաթթուներ, անուշահոտություն և դոնդողային հատկություններ հաղորդող նյութեր: Կիրառվող հումքով, արտադրման տեխնոլոգիայով և ստացվող արդյունքի հատկություններով պայմանավորված՝ հրուշակեղենը բաժանվում է երկու հիմնական խմբի՝ շաքարային

(կարամել, կոնֆետ, շոկոլադ և այլն) և թխվածքային (պաքսիմատ, քաղցրաբլիթ, տորթ և այլն):

Ըստ «Հայկական սովետական հանրագիտարանի»

ՇԵՇՏԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բառի ձայնավոր հնչյուններից մեկը (միավանկ բառերի դեպքում՝ միակը) արտասանվում է մյուսներից ավելի ուժգին, օրինակ՝ *մարզադա՛շտ* բառում վերջին *ա*-ն արտասանվում է փոքր-ինչ ուժգին և տևական: Բառի որևէ ձայնավորի արտասանության ուժեղացումը՝ շեշտումը, գրավոր խոսքում անհրաժեշտության դեպքում արտահայտվում է կետադրական շեշտ նշանով, օրինակ՝ *մա՛րդ, փողո՛ց, մայրաքաղա՛ք:* Հայերենում բառական շեշտը հիմնականում ընկնում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, և եթե բառի վերջից ավելանում է նոր բաղադրիչ, տեղափոխվում է նրա վերջին ձայնավորի վրա, օրինակ՝ *քաղա՛ք-քաղաքայի՛ն:* Սակայն այս ընդհանուր օրինաչափությունից կան որոշ շեղումներ:

ա) Կան մի շարք բառեր, որոնցում շեշտը վերջին ձայնավորի վրա չի ընկնում՝ *գո՛նե, գրե՛թե, գո՛ւցե, ե՛րբևէ, իհա՛րկե, մա՛նավանդ, մի՛գուցե, մի՛թե, մի՛միայն, նա՛մանավանդ, նո՛ւյնիսկ, նո՛ւյնպես, ո՛վևէ, ո՛րևէ* և այլն:

բ) Բացառություն են նաև օտար լեզուներից անցած մի շարք բառեր՝ *մաթեմա՛տիկա, ռա՛դիո, տե՛խնիկա, քի՛միա, օլիմպիա՛դա, կակա՛ո, մա՛նգո* այլն:

գ) Շեշտը վերջին վանկի վրա չի ընկնում նաև *իա*-ով ավարտվող տեղանուններում՝ *Ավստրա՛լիա, Արմե՛նիա, Գերմա՛նիա, Դա՛նիա* և այլն:

դ) *Հինգերորդ* թվականից սկսած՝ դասական թվականների շեշտը վերջին վանկի վրա չի ընկնում՝ *վե՛ցերորդ, յո՛թերորդ, ո՛ւթերորդ, տասնմե՛կերորդ* և այլն:

ե) Հարադիր բայերում շեշտվում է անվանական մասը, օրինակ՝ *պա՛ր գալ, ծա՛փ տալ, ձա՛յն տալ, ուշքի՛ գալ* և այլն:

զ) Օտար որոշ անձնանունների ու տեղանունների ուղղական հոլովում շեշտը չի ընկնում վերջին վանկի ձայնավորի վրա՝ *Բեթհո՛վեն, Լե՛րմոնտով, Մայակո՛վսկի, Պո՛ւշկին* և այլն, սակայն եթե այդ բառերին ավելանում է որևէ քերականական կամ բառակազմական միավոր, ապա շեշտվում է վերջին ձայնավորը՝ *Պուշկինի՛, Պուշկինի՛ց, պուշկինյա՛ն* և այլն:

է) Օժանդակ բայի դրական ձևերը չեն շեշտվում *(գրո՛ւմ եմ)*, իսկ ժխտական ձևերը շեշտվում են *(չե՛մ գրում):*

ը) Եթե բառի վերջին ձայնավորը *ը* հնչյունն է, ապա շեշտվում է նախորդ ձայնավորը, օրինակ՝ *դառը, գի՛րքը, ա՛րկ(ը)ղ* և այլն: *Ը* ձայնավորը շեշտվում է

միայն այն դեպքում, երբ բառի միակ ձայնավորն է կամ մյուս ձայնավորները ևս *ը*-ներ են (*շրը՛խկ, չը՛խկ* և այլն):

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գտնե՛լ այն բառերը, որոնցում շեշտը չի ընկնում վերջին վանկի ձայնավորի վրա:**

Գրեթե, գետը, բարիք, Իտալիա, կիտրոն, գուցե, ծանր, ծաղիկ, նույնիսկ, տեխնիկա, չորրորդ, քանիերորդ, գիրքս, հեքիաթ, նույնպես:

Վարժություն 2: **Գտնե՛լ, թե որ շարքերի բոլոր բառերում է շեշտն ընկնում վերջին վանկի ձայնավորի վրա:**

1. ծառուղի, ասֆալտապատ, մայթեզր, ցուցափեղկ
2. ձևավորող, խոհարար, թթխմոր, շոկոլադ
3. գյուղատնտեսական, հիշարժան, երկկենցաղ, տնամերձ
4. կռունկ, խարույկ, հացահատիկ, գերծանր
5. հյուրընկալ, թթենի, ճանապարհորդ, նախշազարդ
6. սակայն, հավանաբար, գրեթե, լիովին
7. վրձին, շոգեքարշ, ծովախորշ, մեկուսիչ
8. փոքրատառ, ուղղաթիռ, զուգահեռ, արծաթապատ
9. մոլախոտ, գեղարվեստ, արքայադուստր, պարարվեստ
10. ավազաշերտ, դիմանկար, երաժշտասեր, բառատետր

ՇԵՇՏԱՓՈԽԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայերենում, եթե բառի վերջից ավելանում է նոր բաղադրիչ, ապա շեշտը տեղափոխվում է վերջին ձայնավորի վրա, օրինակ՝ *գոո՛ւն-գ(ը)նակա՛ն:* Այն հնչյունը, որը կորցնում է շեշտը, կարող է փոխվել կամ սղվել: Բերված օրինակում *ու*-ն փոխվել է գաղտնավանկի *ը*-ի: Հնչյունի այսպիսի փոփոխությունը, որը պայմանավորված է շեշտի դիրքի փոփոխությամբ, կոչվում է *շեշտափոխական հնչյունափոխություն:*

Ժամանակակից հայերենում շեշտի դիրքի փոփոխության հետևանքով շեշտը կորցնելիս հիմնականում փոխվում են *է(ե), ի, ու, ը* ձայնավորները: Հնչյունափոխվում են նաև *ույ, յու, յա* երկհնչյունները:

Է ՁԱՅՆԱՎՈՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1.Բառասկզբի *է* ձայնավորը մի քանի բառերում դառնում է *ի*, օրինակ՝ *էգ-իգական, էշ-իշուկ, էջ-իջնել:*

2.Բառամիջի փակ վանկի *է* (գրվում է *ե*) ձայնավորը դառնում է *ի*, օրինակ՝ *գեր-գիրանալ, դեզ-դիզել, կես-կիսել, հանդես-հանդիսավոր, մեջ-միջուկ, սեր-սիրել, վեպ-վիպագիր:*

3.Բառավերջի *է*-ն չի հնչյունափոխվում՝ *բազե-բազեակիր, մարգարե-մարգարեական, ռոպե-ռոպեական* և այլն:

Ի ՁԱՅՆԱՎՈՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1. Բառասկզբի *ի* ձայնավորը մի քանի բառերում դառնում է *ը,* օրինակ՝ *իղձ-ըղձալի, ինձ-ընձուղտ, ինչք-ընչաքաղց:*

2. Բառամիջի փակ վանկում *ի*-ն կարող է դառնալ *ը*, օրինակ՝ *գին-գնել, գիր-գրել, հին-հնանալ, միտք-մտածել, միշտ-մշտական, պինդ-պնդանալ* և այլն: Մի շարք բառերում *ի*-ն կարող է սղվել, օրինակ՝ *ամիս-ամսական, դարբին-դարբնոց, երգիչ-երգչախումբ, ժպիտ-ժպտալ, ծաղիկ-ծաղկել, կոշիկ-կոշկակար:*

3. Բառավերջի *ի*-ն կարող է փոխվել մի քանի ձևով: *Ա* հոդակապից առաջ եղած *ի*-ն, միանալով նրան, դառնում *է(ե),* օրինակ՝ *այգի+ա+պան-այգեպան, գինեգործ, տարեվերջ* և այլն: *-Ակ* վերջածանցից առաջ եղած *ի*-ն դառնում է *յ,* օրինակ՝ *աղավնի-աղավնյակ, կղզի-կղզյակ, պատանի-պատանյակ* և այլն: Բառավերջի *ի*-ն կարող է նաև սղվել՝ *բարի-բարություն, գաղտնի-գաղտնապահ, մորթի-մորթեղեն:* Բառավերջի *ի*-ն միավանկ բառերում չի հնչյունափոխվում՝ *դի-դիակ, թի-թիակ, լի-լիություն, ձի-ձիավոր, մի-միություն* և այլն:

ՈՒ ՁԱՅՆԱՎՈՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1. Բառասկզբի *ու*-ն հազվադեպ դառնում է *ը,* օրինակ՝ *ումպ-ըմպել, ունդ-ընդեղեն, ունչ-ընչացք:*

2. Բառամիջի փակ վանկի *ու*-ն կարող է դառնալ *ը,* օրինակ՝ *ծուռ-ծռել, շուն-շներ, սուր-սրել, տուն-տնական:* Մի շարք բառերում *ու*-ն կարող է նաև սղվել, օրինակ՝ *ամուր-ամրություն, մանուկ-մանկական, մաքուր-մաքրել* և այլն:

3. Բառավերջի բաց վանկի *ու*-ն ձայնավորից առաջ որոշ բառերում դառնում է *վ,* օրինակ՝ *առու-առվի, թթու-թթվի, մեղու-մեղվաբույծ* և այլն: Սակայն մի շարք

բառերում չի հնչյունափոխվում՝ *թեկնածու-թեկնածուի, ժողովածու-ժողովածուի, հարսնացու-հարսնացուի, վերարկու-վերարկուի* և այլն:

Ը ՁԱՅՆԱՎՈՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Վերջնագաղտնավանկ *ը*-ն կարող է սղվել՝ *դուստ(ը)ր-դստրիկ, ծան(ը)ր-ծանրամարտ, ման(ը)ր-մանրել, մեղ(ը)ր-մեղրամոմ, փոք(ը)ր-փոքրություն* և այլն:

ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հնչյունափոխվում են *ույ, յու* և *յա* երկհնչյունները:

Ույ-ը փակ վանկում երբեմն դառնում է *ու՝ գույն-գունավոր, զգույշ-զգուշանալ, թույն-թունավոր, լույս-լուսավոր* և այլն: Կարող է նաև սղվել՝ *կապույտ-կապտել, սառույց-սառցարան:* Հազվադեպ դառնում է *ը՝ բույն-բ(ը)ներ:*

Յու-ն կարող է դառնալ *է(ե),* օրինակ՝ *միություն-միութենական, եղջյուր-եղջերափող:* Կարող է դառնալ *ը՝ ձյուն-ձ(ը)նծաղիկ,* ինչպես նաև կարող է սղվել՝ *ալյուր-ալրոտ, արյուն-արնագույն:*

Յա-ն դառնում է *է(ե),* օրինակ՝ *առօրյա-առօրեական, գործունյա-գործունեություն, մատյան-մատենագիր, պատյան-պատենավոր, վայրկյան-վայրկենական:*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գտնե՛լ, թե որ բառերի կազմության ժամանակ է կատարվել *է* ձայնավորի հնչյունափոխություն:**

Միջնապատ, միություն, գինեգործ, կիսալուսին, թիավարել, վիպասան, շինարարություն, հիվանդասենյակ, գիրանալ, գիտուն, վիրահատել, վիճահարույց, գիսավոր, հիանալի, լիություն, զինագործ, սիրավեպ, դիմաքանդակ, կինոթատրոն:

Վարժություն 2: **Գտնե՛լ, թե որ բառերի կազմության ժամանակ է կատարվել *ի* ձայնավորի հնչյունափոխություն:**

Հնադարյան, տնական, ջրավազան, ընչաքաղց, ըղձական, ընկուզենի, ազնվական, գնորդ, վեհապանծ, մտաբերել, լեռնագործ, հիմնադիր, լրագրեր, աղավնյակ, վիրակապ, քմային, գարեհաց, ճգնել, թրթիռ, գունագեղ, միջանկյալ, նշաձև, գրակալ, թխամորթ, կրաման, նմանատիպ, սրտակից:

Վարժություն 3: **Գտնե՛լ, թե որ բառերի կազմության ժամանակ է կատարվել *ու* ձայնավորի հնչյունափոխություն:**

Բրդոտ, կարմրախայտ, բվեճ, թմբեր, ըմպանակ, գնացուցակ, ջրամբար, նշանագրություն, տնական, գթալ, ժողովրդական, խճուղի, խմբակային, մրգահյութ, խնկարկել, տրտնջալ, ոսկեգույն, սրել, գրականություն, աշխարհագրական, լրաբեր, ցորենահատ, առվակ, մթնել, դյուրահալ, հնձել:

Վարժություն 4: **Գտնե՛լ, թե որ բառերի կազմության ժամանակ է կատարվել *ը* ձայնավորի հնչյունափոխություն:**

Տնակ, մանկական, ծանրամարտ, մանրադրամ, մտադրություն, մեղրահաց, կիսակառույց, փոքրություն, լրատվական, քաղցրահամ, սանրել, ընձուղտ, եզրաշերտ, լիտրաչափ, գլխաշոր, ցուցափեղկ, վագրաձի, լուսավորություն, դստրիկ, կպրագույն, լայնություն, բարձրություն, ծաղկաման, մետրանոց, ծաղրանկար, սրամիտ, ժանրային:

Վարժություն 5: **Գտնե՛լ, թե որ բառերի կազմության ժամանակ է կատարվել երկհնչյունի հնչյունափոխություն:**

Բուսական, հրեղեն, աստղանիշ, գուրծունեություն, ձնծաղիկ, նվիրատվություն, ալրաղաց, անկյունաչափ, բնավեր, գունատ, ձկնաբուծարան, դռնակ, եղջերափող, միութենական, մանկական, սառցարան, մրցավազք, մատենագիր, բուրավետ, հրակայուն, մշակութային, տարեվերջ, արնանման, առօրեական, այգեպան, մթերային, զգուշություն:

Վարժություն 6: **Դո՛ւրս գրել այն բառերը, որոնցում կան հնչյունափոխված արմատներ. վերականգնե՛լ անհնչյունափոխ ձևերը:**

Գրադարան, մայրուղի, կատվազգի, զարդանախշ, գլխապտույտ, խնձորենի, լեզվաոճական, երկաթապատ, շինարարական, լուսանկար, գյուղամեջ, մայթեզր, կուտակել, բառիմաստ, ջրապտույտ, տուֆակերտ, սրբապատկեր, ուղղաձիգ:

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՆԻՄԱՍՏ ԵՎ ԲԱԶՄԻՄԱՍՏ ԲԱՌԵՐ

Բառագիտությունը լեզվաբանության այն բաժինն է, որում ուսումնասիրվում են լեզվի բառերի տարբեր հատկանիշները (ձևը, իմաստը, ծագումը, ինչպես նաև բառարաններն ու նրանց տեսակները), ընդհանրապես լեզվի բառապաշարը: Ամեն մի լեզու ունի իր բառերի ամբողջությունը՝ բառապաշարը: Բառապաշարը թեև ամբողջություն է, սակայն քարացած չէ և ժամանակի ընթացքում փոփոխվում է. որոշ բառեր այլևս չեն գործածվում, ստեղծվում են նոր բառեր, բառեր են փոխառվում այլ լեզուներից, ինչպես նաև կարող են փոփոխվել բառերի իմաստները: Ամեն մի բառ ունի իր իմաստը, որը կոչվում է բառիմաստ: Առանց իմաստի բառ չկա: Սակայն բառերի մի մասն արտահայտում է ոչ թե մեկ, այլ մեկից ավելի իմաստներ: *Միայն մեկ իմաստ արտահայտող բառերը կոչվում են մենիմաստ, իսկ մեկից ավելի իմաստներ արտահայտող բառերը՝ բազմիմաստ:* Մենիմաստ են, օրինակ, հետևյալ բառերը՝ *արագաքայլ, բազալտ, բազմազգ, գորգապատ, եռագմբեթ, թերարժեքություն, խեցեգործ* և այլն:

Բազմիմաստ բառերը, ինչպես ասվեց, արտահայտում են մեկից ավելի իմաստներ: Այդ իմաստներից մեկը լինում է առաջնային, իսկ մյուսները՝ երկրորդական, թեև լեզվի զարգացման ընթացքում հիմնական իմաստը կարող է փոխարինվել մեկ այլ իմաստով: Օրինակ՝ *գրիչ* բառը գրաբարում առաջին հերթին նշանակում էր *գրագիր, գրող, նոտար, դպիր, գրերի ընդօրինակող, նկարիչ,* ապա նաև *գրելու գործիք, փորագրության գործիք*[12]*:* Իսկ ժամանակակից հայերենում *գրիչ* առաջին հերթին նշանակում է *թանաքով գրելու գործիք, ապա նոր միայն ձեռագրի ընդօրինակող, գրագիր*[13]*:*

Բազմիմաստ բառն ունենում է մի տարածված, խոսքաշարից դուրս առաջին հերթին ընկալելի, հիմնական իմաստ և նոր միայն փոխաբերական իմաստներ: Օրինակ՝ *խիստ* առաջին հերթին նշանակում է *պահանջկոտ, բարձր պահանջներ ներկայացնող* և նոր միայն արտահայտում այլ իմաստներ, ինչպես՝ *խիստ ձմեռ, խիստ նկատողություն*[14] և այլն:

Բազմիմաստ բառերի կիրառությունը նպաստում է խոսքի սեղմությանը, իսկ հատկապես գեղարվեստական խոսքում՝ պատկերավորությանը, խորիմաստու-

---

[12] Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, ԵՊՀ հրատ., Երևան, 1979, էջ 587:
[13] Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 264:
[14] Տե՛ս նույն տեղը, էջ 579-580:

թյանը: Հեղինակները հաճախ են բազմիմաստ բառերով գեղեցիկ խոսք ստեղծում: Բերենք օրինակներ:

Մի *գուն* երգով արցունք ցողեմ
Իմ պապի*գան* բեկորներին...
Ա՜խ, գեթ երգի մի *գուն* թողնեմ
Ինձնից հետո եկողներին *(Համո Սահյան):*

Մայրս այս *մայր* երկրի մեջ՝
Արևի դեմ մի ճրագ *(Հովհաննես Շիրազ):*

Հաշվեցե՛ք նաև մի վերջի՜ն անգամ,
Թե այդ ի՞նչ ձևով,
Ի՜նչ մեքենայի օգնությամբ բարի
Դեռ կարելի է *մարդուն մա՛րդ* պահել
Եվ կամ նո՛ր միայն *մարդուն* դարձնել *Մա՜րդ... (Պարույր Սևակ)*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Տրված բազմիմաստ բառերից յուրաքանչյուրով կազմե՛լ երկուական նախադասություն՝ բառերը գործածելով տարբեր իմաստներով:**

Հաց, ծով, ալեկոծվել, քար, երկաթե:

Վարժություն 2: **Փակագծերում տրվածներից ընտրել այն բառը, որը փոխաբերական իմաստով կլրացնի տողասկզբի բառին:**

1. առվակ (կարկաչուն, մոլորված, լայն)
2. ժայռ (բարձր, մտախոհ, ուղղաձիգ)
3. ծաղիկ (բուրավետ, դեղին, ժպտուն)
4. փողոց (ուրախ, ասֆալտապատ, լայն)
5. սենյակ (կահավորված, նորոգված, հյուրընկալ)
6. հուշարձան (քարե, նախշազարդ, հպարտ)
7. բերդ (կիսավեր, ալևոր, հինավուրց)
8. ցայտաղբյուր (գեղեցիկ, քանդակազարդ, զվարթ)
9. ամպ (ճերմակ, թավահոնք, անձրևաբեր)
10. գիրք (կաշեպատ, մաշված, իմաստուն)

ՀՈՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ

Լեզվում կան բառեր, որոնք իրար մոտ, երբեմն էլ նույն իմաստն են արտահայտում: Օրինակ՝ *մեծ-խոշոր-վիթխարի-հսկայական-ահագին-լայնատարած* բառերն արտահայտում են հարաբերակից իմաստներ, որոնք, սակայն, նույնը չեն: Իսկ *լուսամուտ-պատուհան, սպիտակ-ճերմակ, վախ-ահ, մայրաքաղաք-քաղաքամայր* բառազույգերից յուրաքանչյուրի անդամները նույն իրողությունն են անվանում և իրարից տարբերվում են միայն կիրառական-ոճական երանգային նրբիմաստներով: *Հնչյունական կազմով տարբեր, բայց իմաստով իրար մոտ կամ նույն իրողությունն արտահայտող բառերը կոչվում են հոմանիշ:* Հոմանիշների մեջ առանձնացվում են *համանիշներ* և *նույնանիշներ:* Համանիշ են իմաստով մոտ հոմանիշները (օրինակ՝ *մաքուր-վճիտ-հստակ*): Նույնանիշ են նույն իրողությունն արտահայտող հոմանիշները (օրինակ՝ *աքլոր-աքաղաղ*): Հոմանշային հարաբերությամբ բառերը հոմանշային շարքեր են կազմում, ինչպես՝ *ուրախանալ-զվարճանալ-ցնծալ-բերկրել-հրճվել:* Հոմանշային շարքերում լինում է մի առանցքային բառ՝ հիմնաբառ, որին հարաբերակցվում են մյուսները: Բերված օրինակում հիմնաբառը *ուրախանալ*-ն է: Հիմնաբառը հիմնականում առանձնանում է նրանով, որ ոճականորեն ավելի չեզոք է լինում՝ համագործածական, ավելի տարածված ու գործածական, խոսքում մեծ մասամբ հնարավոր է լինում նրանով փոխարինել հոմանշային շարքի մյուս անդամները:

Հոմանիշ բառերի գործածությունը խոսքը բազմազան, բազմերանգ, գեղեցիկ ու դիպուկ դարձնելու լայն հնարավորություն է ստեղծում: Թե՛ առօրյա, թե՛ գեղարվեստական խոսքում հոմանիշների ճիշտ ընտրությամբ հնարավոր է խուսափել կրկնությունից, խոսքին պատկերավորություն հաղորդել: Բերենք մի քանի օրինակ գեղարվեստական գրականությունից, որոնցում հեղինակները վարպետորեն կիրառել են հոմանիշներ.

Էլ ինչո՞ւ էիր
Բոբիկ ոտներդ մաշում քարերին,
Փորձում *անհնարն* ու *անկարելին,*
Եթե աշխարհը նույնն էր մնալու.... *(Համո Սահյան):*

Եկան, ոռնացին սաղարթներիդ մեջ
Ու *ոլորելով, ճկելով* մեկ-մեկ
Դալար ճյուղերդ փշրեցին, առան
Իրար բերանից խլելով՝ տարան... *(Համո Սահյան)*

Երբ կըհոգնես, կըգազազես աշխարհից,
Դարձի՛ր իմ մոտ, *վերադարձի՛ր* դու նորից *(Վահան Տերյան):*

Լինե՞ր հեռու մի անկյուն,
Լինե՞ր մանկան արդար քուն,
Երազի մեջ երջանիկ
Հաշտ ու *խաղաղ* մարդկություն *(Հովհաննես Թումանյան):*

Բազմազանությունից բացի՝ հոմանիշների ընտրությունը կարևոր է խոսքը ճիշտ կառուցելու համար: Ինչպես ընդհանրապես սխալ բառընտրության, այպես էլ հոմանշային շարքի անդամի սխալ ընտրության դեպքում խոսողն իր մտածածը, վերաբերմունքը ճիշտ չի արտահայտի:

Առանձնացվում են լեզվական և խոսքային հոմանիշներ: Լեզվական են մոտ կամ նույն իմաստներն արտահայտող բառերը, որոնց հոմանշային հարաբերությունը պարզ է նաև խոսքաշարից դուրս, օրինակ՝ *գեղեցիկ-չքնաղ-աննման-չնաշխարհիկ-սիրուն:* Խոսքային հոմանիշները հոմանշային հարաբերություն են ստանում միայն որևէ կիրառության դեպքում, այսինքն՝ իմաստային առնչակից հարաբերություն են ունենում կոնկրետ խոսքաշարում: Խոսքային հոմանիշներն հիմնականում կիրառվում են գեղարվեստական խոսքում, երբ հեղինակները ոճական տարբեր նպատակներով իրար են առնչակցում հոմանշային հարաբերություն չունեցող բառեր: Օրինակ՝

Քարանձավներն են քրտնել
Ամայության սարսուռից,
Բայց նրանց *քիվ* ու *քունքից*
Արևի հոտ է գալիս:

Գիշերային իմաստուն
Առասպելի մեջ քնած
Քարափիդ *ծերպ* ու *ծունկից*
Արևի հոտ է գալիս:

Գիշերներ են կուլ տալիս
Քո աստղերը երկրային,
Եվ նրանց *շողք* ու *շուքից*
Արևի հոտ է գալիս:

Հայ անվանի բանաստեղծ Համո Սահյանի բանաստեղծության մեջ, որից բերված է այս հատվածը, *քիվ* և *քունք, ծերպ* և *ծունկ, շողք* ու *շուք* բառերը դարձել են խոսքային հոմանիշներ, թեև խոսքաշարից դուրս դրանք հոմանշային շարքեր չեն կազմում: Վահան Տերյանի ստեղծագործությունից վերը բերված տողում էլ *հոգնել* և *գազազել* բառերն են գործածվել որպես խոսքային հոմանիշներ:

Հոմանիշների իմացությունը հարստացնում է մարդու անհատական բառապաշարը, իսկ նրանց ճիշտ, տեղին ու չափավոր գործածությունը՝ նպաստում գեղեցիկ, ճկուն, արտահայտիչ խոսք կազմելուն:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Տրված բառերից առանձնացնե՛լ հոմանշային 10 զույգ:**

Հսկայական, ողորկ, համեստ, վիթխարի, դժվար, հավաքել, դյութիչ, հուզիչ, հմայիչ, ծավի, ստերջ, բիլ, դրվատել, դեղձան, գովել, դատարկել, սնապարծ, անպտուղ, պարպել, խոնավ, ժողովել, տամուկ, խրթին, հարթ:

Վարժություն 2: **Յուրաքանչյուր տողում գտնե՛լ տրված բառի մեկ հոմանիշ:**

ա) *Լուռ*

1. ակնդետ, անխոս, անթարթ
2. մշտապես, հանապազորդ, լռելյայն
3. անձայն, անքթիթ, անշեղ

բ) Գեղեցիկ

1. անբարետես, դեղձան, չքնաղ
2. գեղանի, կախարդական, լուսավոր
3. բյուրեղյա, չնաշխարհիկ, պատկերավոր

գ) Գովել

1. նախատել, բաղդատել, դրվատել
2. հարատևել, պարսավել, ներբողել
3. փառաբանել, ըմբոշխնել, կենսագործել

դ) Երեկո

1. արշալույս, վերջալույս, աստղալույս
2. տիվանդորր, արևամուտ, արեգնափայլ
3. ծեգ, իրիկնամուտ, ցայգ

ե) Ցանկալի

1. հանդուրժելի, զմայլելի, բաղձալի
2. տենչալի, պատկառելի, անհերքելի
3. նշմարելի, անդրդվելի, ըղձալի

ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ

Կան բառեր, որոնք իրար հակառակ իմաստներ են արտահայտում, օրինակ՝ *լավ-վատ, մեծ-փոքր, շուտ-ուշ, սկիզբ-վերջ* և այլն: Ինչպես տեսնում ենք, այս բառերը տարբեր են իրարից նաև իրենց հնչյունական կազմերով: Այս ամենի հիման վրա էլ սահմանվում են հականիշները: *Հնչյունական կազմով տարբեր և իմաստներով հակադիր բառերը կոչվում են հականիշներ:*

Առանձնացվում են *հակադրական (բացարձակ)* և *ժխտական* հականիշներ: Հակադրական հականիշները իմաստներով հակադրվում են իրար, իսկ ժխտական հականիշներից մեկը ժխտում, բացասում է մյուսին: Օրինակ՝ *արագ-դանդաղ, բարձրանալ-իջնել, ելք-մուտք, հեռու-մոտիկ* հականիշները հակադրական են, իսկ *ազնիվ-անազնիվ, դուրեկան-անդուր, կիրթ-անկիրթ, հաճելի-տհաճ, վստահելի-անվստահելի* հականիշները ժխտական են:

Կառուցվածքային առումով առանձնացվում են *նույնարմատ* և *տարարմատ* հականիշներ: Օրինակ՝ *մեծ-փոքր, լավ-վատ, հին-նոր* հականիշները տարարմատ են, մինչդեռ *մարդկային-տմարդի, գիտուն-տգետ, գեղեցիկ-տգեղ* հականշային զույգերը կազմված են նույն արմատներից, այսինքն՝ նույնարմատ են:

Կիրառական առումով առանձնացվում են *լեզվական* և *խոսքային* (կամ *համատեքստային*) հականիշներ: Լեզվական են այն հականիշները, որոնք իրենց հիմնական, գլխավոր իմաստներով հակադրվում են միմյանց, օրինակ՝ *վերջ-սկիզբ, լայն-նեղ, մեծ-փոքր:* Այսպիսի հականշների հակադրական հարաբերությունը արտահայտվում է նաև խոսքաշարից դուրս, քանի որ այն բխում է կոնկրետ բառիմաստներից: Խոսքային հականիշները խոսքաշարից դուրս հականիշներ չեն, այլ տարբեր բառեր են, որոնց իմաստներն ընդհանուր կիրառությամն մեջ չեն հակադրվում իրար, սակայն խոսքային որոշակի միջավայրում այդ բառերը գործածվում են որպես հականիշներ: Օրինակ՝ *փուշ* և *դափնի* բառերը հականիշներ չեն, բայց Համո Սահյան «Մոռանալ կտա» բանաստեղծության հետևյալ տողերում դրանք հակադրվել են իրար՝ դառնալով խոսքային հականիշներ.

Ես կգամ, դուռդ կբանաս,
Կընդունես մոլորված որդուդ,
Աշխարհի բոլոր հողմերով,
Հովերով օրորված որդուդ,
Վաստակած և՛ *փուշ,* և՛ *դափնի,*
Ցամաքներ ու ծովեր անցած
Եվ նորից երեխա դարձած
Ու հացից խռոված որդուդ:

Իսկ այս նույն հատվածում գործածված *ցամաք* և *ծով* բառերը հականշային հարաբերություն ունեն նաև խոսքաշարից դուրս, հետևաբար լեզվական հականիշներ են: Բերենք այլ օրինակներ, որոնցում իրար են հակադրվել թե՛ հականիշ, թե՛ ինչ-որ չափով առնչակից, թե՛ առնչակից հարաբերություն չունեցող բառեր.

Եկեք միասին չհարգենք նրա՜նց,
Ովքեր *սերտում* են և ոչ թե *դատում,*
Ճառո՜ւմ են, բնավ չե՜ն *կշռադատում,*
Ովքեր չեն ջոկում ո՛չ *թացը չորից,*
Ո՛չ էլ տարբերում *անդունդը ձորից,*
Ովքեր գրածի տառն են ընթերցում,
Ովքեր *քնածին մեռած* են կարծում *(Պարույր Սևակ):*

Տարիքն իմ գլխին այս ի՞նչ է բերում,
Կոճղը հովազից էլ չեմ տարբերում:
Էլ չեմ տարբերում *վեճը գրազից,*
Պղտորը՝ պարզից, երամը՝ պարսից,
Կեսուրը՝ հարսից, շահը՝ վնասից,
Բռնակը՝ կանթից, ասուպը՝ շանթից,
Վանդակը՝ վանքից, դղյակը՝ բանտից
Էլ չեմ տարբերում... Հնար էլ չկա,
Երբ *հանցավորին* դարձնում են *վկա*
Եվ բանտ են դնում ազնիվ վկային... *(Համո Սահյան)*

Հականիշների ճիշտ և տեղին կիրառությունը խոսքին հաղորդում է կտրուկություն, խորիմաստություն, գեղեցկություն, և ավելի ցայտուն են արտահայտվում խոսողի վերաբերմունքը, գնահատականը, տրամադրությունը:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Տրված բառերից առանձնացնե՛լ հականշային 10 զույգ:**

Փութաջան, ամպոտ, դալար, ծույլ, ուսյալ, երկչոտ, հինավուրց, գագաթ, օրինական, անջրդի, ապօրինի, ինքնահավան, նոսր, ողորկ, հեռավոր, արատավոր, խորդուբորդ, ջրարբի, համարձակ, ջինջ, տգետ, հմուտ, ստորոտ, թանձր, անբասիր:

Վարժություն 2: **Յուրաքանչյուր շարքում գտնե՛լ հականշային տարարմատ զույգը և յուրաքանչյուր բառով կազմե՛լ մեկական նախադասություն:**

1. մոտ-հեռու, արագ-դանդաղ, տգետ-գիտուն
2. շոգ-ցուրտ, մարդկային-տմարդի, հին-նոր
3. սառը-տաք, երկար-կարճ, վախկոտ-անվախ
4. վճարովի-անվճար, վախկոտ-արի, մաքուր-կեղտոտ
5. ամառ-ձմեռ, մուտք-ելք, հաճելի-տհաճ
6. թեք-ուղիղ, հասուն-տհաս, կայուն-խախուտ

ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ

Համանուն են այն բառերը, որոնք ձևով նույնն են, իմաստներով՝ տարբեր, օրինակ՝ *փոն* (ձայնաստիճան)- *փոն* (տոնախմբություն), *հանդերձ* (հագուստ)- *հանդերձ* (միասին), *մարտ* (կռիվ)-*մարտ* (տարվա 3-րդ ամիսը):

Համանունները լինում են՝ *ա) բառային, բառաքերականական, քերականական. բ) լիակատար և մասնակի. գ)բուն, նույնահունչ, նույնագիր:*

ա) Եթե համանունները քերականորեն չփոփոխված, ուղիղ ձևով բառեր են, կոչվում են *բառային,* օրինակ՝ *հոտ* (բույր և ոչխարների խումբ): Եթե բառերից մեկը ուղիղ ձև է, իսկ մյուսը՝ բառի քերականորեն փոխված ձև՝ բառաձև, ապա այդպիսի համանունները կոչվում են *բառաքերականական,* օրինակ՝ *օղի (*ոգելից խմիչք) – *օղի* (*օղ* բառի սեռականը), *հոր* (փոս) – *հոր* (*հայր* բառի սեռականը) *անցավ* (առանց ցավի) - *անցավ* (անցնել բայի անցյալ կատարյալը): Իսկ եթե համանուն են դարձել բառաձևերը, ապա այդպիսի համանունները կոչվում են *քերականական* համանուններ, օրինակ՝ *գրի* (*գիր* բառի սեռական հոլովաձևը) - *գրի* (*գրել* բայի ըղձական ապառնու 3-րդ դեմքը) - *գրի* (*գրել* բայի ժխտական դերբայը):

բ) Եթե համանուն բառերի համանունությունը պահպանվում է և՛ ուղիղ, և՛ քերականորեն փոփոխված ձևերում, ապա այդպիսի համանունները կոչվում են *լիակատար,* օրինակ՝ *փող* (դրամ) - *փող* (խողովակ), *փողի - փողի, փողեր - փողեր* և այլն: Իսկ եթե համանունությունը պահպանվում է քերականական ոչ բոլոր ձևերում, ապա այդպիսի համանունները կոչվում են *մասնակի,* օրինակ՝ *սեր* (զգացմունք) և *սեր* (կաթի մակերեսի թանձր շերտ) բառերը ուղղական հոլովում համանուն են, բայց սեռական հոլովում արդեն համանուն չեն՝ *սիրո* և *սերի:* Մասնակի են նաև թեքվող և չթեքվող խոսքի մասերի պատկանող համանունները: Օրինակ՝ *անհատ* (մարդ, անձնավորություն) – *անհատ* (անսպառ, անհատնում), *վախ*

(սարսափ) – *վա՛խ* (ձայնարկություն): Բերված զույգերի առաջին անդամները գոյականները են, ուստի կարող են հոլովվել, գործածվել հոգնակի թվով և հոդ ստանալ, մինչդեռ երկրորդները թեքման ձևեր չունեն, ուստի համանունային շարք են կազմում միայն բերված գոյականների ուղիղ ձևերի հետ:

գ) *Բուն* են այն համանունները, որոնք գրվում ու արտասանվում են նույն ձևով, օրինակ՝ *մարտ* (ամիս և կռիվ): *Նույնահունչ* են այն համանունները, որոնք արտասանվում են նույն ձևով, բայց գրությամբ տարբեր են, օրինակ՝ *ուղտ – ուխտ, աղտ - ախտ* և այլն: *Նույնագիր* են այն համանունները, որոնք գրվում են նույն ձևով, բայց արտասանությամբ տարբեր են, օրինակ՝ *հորդ* (առատ, օր.՝ *հորդ անձրև*) և *հորդ* (հորդ պատկանող. արտասանվում է *հորըդ*), *դուրս է գալիս* (ելնում է) և *դուրս է գալիս* (հավանում եմ. արտասանվում է *դուրըս է գալիս*) և այլն:

Համանունների կիրառությամբ գեղարվեստական խոսքում հեղինակները ստեղծում են գեղեցիկ պատկերներ, բառախաղեր, կատարում բնորոշումներ, իրենց խոսքին հաղորդում դիպուկություն, սրամտություն, պատկերավորություն, իսկ չափածո ստեղծագործություններում նաև հանգավորում տողերը: Օրինակ՝

Լրբին շնորհում կոչումը *սրբի,*
Սրբին տանում են, որ կոշիկ *սրբի*... *(Համո Սահյան)*

Ա՛խ, եթե անգամ քարե սիրտ ճարվի,
Մարդկային սրտում բա կրա՞կ *կարվի*...
Որտե՞ղ եք տեսել, որ թել ասեղով
Կտրված երակ վերստին *կարվի* *(Պարույր Սևակ):*

Յուրօրինակ է Համո Սահյանի «Լորերը» բանաստեղծությունը, որում հեղինակը, իր հայրենի *Լոր* գյուղի և *լոր* թռչնի անվանումները հիմք դարձնելով, հյուսել է մի գեղեցիկ ստեղծագործություն: Մեջբերենք մի քանի հատված (նկատի ունենանք այն հանգամանքը, որ գյուղի և թռչնի անվանումները բանաստեղծության մեջ քերականական տարբեր ձևերով են գործածված).

Լորերը Լորից հեռանում էին,
Երբ, ավաղ, չվում,
Չքվում էին տաք օրերը Լորից:
Ու երբ ցրտերը վերանում էին,
Տուն էին գալիս լորերը նորից:
. . . . .
Բոլոր լորերը սիրավոր էին,
Վիրավոր լորեր չկային Լորում,

Ինչպես տեսնում ենք, համանուն բառերի կիրառությամբ հնարավոր բազմապիսի խոսք կազմել, սակայն պետք է ուշադիր լինել, որպեսզի իմաստային շփոթ չառաջանա, անհարկի երկիմաստություն չլինի:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գտնե՛լ համանուն բառերը և մեկնաբանե՛լ նրանց իմաստները:**

1. Նա երկու օր ավել աշխատեց:
2. Անկյունում դրված էր մի մաշված ավել:
3. Վարպետը կատարեց դետալների յուղում:
4. Խոհարարը բանջարեղենը տապակեց յուղում:
5. Զգեստ կարող դերձակը աշխատանքը կատարեց բարձր որակով
6. Մեր կուրսում շատ կարող ուժեր կան:
7. Քիմիական նյութերի ազդեցությամբ սկսվեց խմորում:
8. Թխվածքի խմորում չամիչներ կային:
9. Ֆուտբոլիստը գեղեցիկ գոլ խփեց:
10. Բաժակի մեջ գոլ ջուր կար:

Վարժություն 2: **Մեկնաբանե՛լ, թե ինչ իմաստներով կարող են ընկալվել տրված բառակապակցություններն ու նախադասությունները:**

1. բարձր հարկ
2. ավել գնել
3. ոչխարի հոտ
4. մետաքսի կտոր
5. Նա ջրում է:
6. Նա գնում է:
7. Խավարում է:

Վարժություն 3: **Տրված համանուններով կազմել նախադասություններ:**

1. սեր (կաթի երեսի թանձր շերտ). սեր (զգացմունք)
2. կետ (կետանիշ, գծի հատվածի սահման). կետ (ջրային կաթնասուն կենդանի)
3. քանոն (ձողաշերտ՝ չափելու և ուղիղ գծելու համար). քանոն (երաժշտական գործիք)
4. դող (մարմնի սարսուռ). դող (անվին անցկացվող ռետինե շրջանակ)
5. տոն (ձայնաստիճան). տոն (նշանավոր իրադարձության նվիրված հանդիսավոր օր)

ՀԱՐԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ

Հարանուն են այն բառերը, որոնք ձևով նման են, սակայն իմաստով տարբեր են: Օրինակ՝ *հրավեր-հրավերք, ցուցում-ցուցմունք, զգացում-զգացմունք, այգաբաց-այգեբաց:* Հարանունություն կարող է առաջանալ պատահական նմանության հետևանքով կամ էլ բառակազմական նույն բաղադրիչներն իրենց կազմում ունենալու հետևանքով: Այս հիմունքով էլ առանձնացվում են *տարարմատ* հարանուններ և *ընդհանուր բաղադրիչներով* հարանուններ: Օրինակ՝ *կրունկ-կռունկ, ծաղկել-ճաղկել, սպրդել-սփրթնել, պայտել-պայթել* հարանունները տարարմատ են: Իսկ *հրատարակություն-հրատարակչություն, շառաչուն-շառաչյուն, հասկացություն-հասկացողություն, հնչուն-հնչյուն* հարանունները ընդհանուր բաղադրիչներով հարանուններ են:

Հարանունները ձևով նման են, ուստի երբեմն շփոթությունների տեղիք են տալիս: Այդ պատճառով էլ գործածելուց առաջ անհրաժեշտ է ճշտել և մտապահել հարանունների իմաստները: Սակայն հարանունները նաև խոսքը գեղեցկացնելու միջոց են դառնում: Գեղարվեստական խոսքում հեղինակները հարանունների գործածությամբ հաճախ են իրենց խոսքը տպավորիչ դարձնում, հանգավորում, բառախաղեր ստեղծում, պատկերավորություն հաղորդում ասվածին: Հիշենք, օրինակ, Հովհաննես Թումանյանի նշանավոր «Հայրենիքիս հետ» ստեղծագործությունը: Բանաստեղծության տները եզրափակվում են հարանուններով սկսվող երկու տողով, որոնցում կրկնվում է *հայրենիք* բառը, և հենց նրան բնորոշող հարանուններն են ընդհանրացնում, ամբողջացնում բանաստեղծական տան մեջ արտահայտված գաղափարը: Մեջբերենք հարանուններով սկսվող տողերը.

Զարկվա՛ծ հայրենիք,
Զըրկվա՛ծ հայրենիք:

Ողբի՛ հայրենիք,
Որբի՛ հայրենիք:

Հույսի՛ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք:

Հեղինակների վարպետ գրչի տակ հարանունները դառնում են ոճավորման կարևոր միջոց, նպաստում իմաստային նրբերանգների բացահայտմանը: Մեջբերենք նաև Համո Սահյանի բանաստեղծություններից մեկը, որում հեղինակը *վկա* բառը գործածել է որոշիչ հոդով՝ *վկան,* և դրա միջոցով հարանունություն է առաջացել *մկան* բառի հետ.

Սարերը աշխարհի *մկաններն* են,
Սարերը հավերժի *վկաներն* են:
Սարերը սերերն են Սարյանի,
Սարյանի մեծ հոգու նկարներն են:

Հարանունները պետք է չշփոթել *նույնագիր* և *նույնահունչ* համանունների հետ: Այդպիսի համանունների կա՛մ գրությունը, կա՛մ արտասանությունը նույնն է, իսկ հարանուններինը՝ ոչ:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Արտագրե՛լ՝ փակագծերում տրված հարանուններից ընտրելով նախադասությանը համապատասխանողը:**

1. Գրախանութում վաճառվում է այդ բառարանի երկրորդ (հրատարակությունը, հրատարակչությունը):
2. Այդ (հրատարակությունը, հրատարակչությունը) լույս է ընծայել գրքի վերջին հատորը:
3. Նա այդ գործում մեծ (երախտիք, երախտագիտություն) ունի:
4. Այդ առաջարկը վեճերի ու քննարկումների (տեղիք տվեց, տեղի տվեց):
5. Ամենուրեք (փտում, փթթում) էին կանաչ այգիներն ու գեղեցիկ ծաղկանոցները:
6. Բակում խաղացող երեխան (հովարով, հովհարով) գլխարկ էր դրել:
7. Զարմացած երեխան (թոթովեց, թոթվեց) ուսերը:
8. Մարզիկները մրցույթին մասնակցելու (հրավերք, հրավեր) էին ստացել:
9. Ջրատար խողովակի (փականը, փականքը) նորոգեցին:
10. Վարպետը (պատրաստականությամբ, պատրաստակամությամբ) օգնեց մեզ:

Վարժություն 2: **Գտնե՛լ և դո՛ւրս գրել հարանուն բառերն ու բառաձևերը. ո՞ր բառերն են (բառաձևերը) քերականական փոփոխության հետևանքով հարանուն դարձել այլ բառի:**

Տաք ճառագայթ է, մրսած փաթիլ...
Մրսած փաթիլը դառնում է կաթիլ....

Եվ պիտի ելնի ծիլը հողից,
Եվ արտը կախվի լեռան կողից:
Եվ ծիլը պիտի դառնա ցողուն,
Ցողունը պիտի հասկահանի

Սվսվոցներով հասկանալի:
Եվ հասկը ուռած կոպերի տակ
Ամփոփի պիտի արևներ խակ....

Եզը գութանի գութն ու գրգիռն էր,
Ոգու կորովն ու արյան թրթիռն էր,
Ուղեծիր հանող նրա հրթիռն էր...
Ճակատագիրն էր:

Եզան կերածը դարման ու սեզ էր,
Ինքը բարության քայլող մի դեզ էր,
Համառ էր, բայց և խոնարհ ու հեզ էր....

Հայրենի հեռավոր ձորում
Քարերից երկինք է ծորում:

Հայրենի հեռավոր դռան
Ծաղկել են ծառերը նռան:

Թափառող թախիծն եմ հողիդ,
Հայրենի հեռավոր հովիտ:

(Համո Սահյան)

ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզուն անընդհատ զարգանում է ու փոփոխվում, որովհետև անընդհատ զարգանում է հասարակական կյանքը: Ստեղծվում են նոր իրողությունները, դուրս են մղվում հները: Հետևաբար, նոր իրողություններն արտահայտելու համար ստեղծվում են նոր բառեր, իսկ հնացած երևույթներն արտահայտելու համար եղած բառերն աստիճանաբար դուրս են գալիս գործածությունից: *Այն բառերը, որոնք դուրս են եկել ընդհանուր գործածությունից, կոչվում են հնաբանություններ:* Անհրաժեշտության դեպքում, սակայն, հնաբանությունները կարող են գործածվել արդի հայերենում: Օրինակ՝ *աշտե, այրուձի, ատենադպրի, գահավորակ, սենեկապետ* բառերը հնաբանություններ են:

Առանձնացվում է հնաբանությունների հիմնական երկու խումբ՝ *պատմաբառեր* և *հնաբառեր:* Պատմաբառեր են այն հնաբանությունները, որոնց ցույց են

տալիս լեզվի զարգացման անցյալ շրջաններին բնորոշ առարկաներ ու երևույթներ, օրինակ՝ *սեպուհ, փեգ, հրովարտակ, փանուտեր:* Հնաբառերը այն հնաբանություններն են, որոնք արդի հայերենում ունեն իրենց համարժեք ձևերը, օրինակ՝ *ցորյան* (ցորեն), *լյառն* (լեռ), *մարմարիոն* (մարմար) *մատուցանել* (մատուցել), *կառափ* (գլուխ, գանգ), *զի* (որովհետև): Այսինքն, ի տարբերություն պատմաբառերի, հնաբառերն անփոխարինելի չեն և ժամանակակից հայերենում ունեն իրենց համարժեքները:

Հնաբանությունները հիմնականում գործածվում են գեղարվեստական պատմական երկերում՝ տվյալ ժամանակաշրջանի միջավայրը պատկերելու համար, ինչպես նաև խոսքին հաղորդում են հանդիսավորություն, հուզարտահայտչականություն: Այդ նպատակով հեղինակները երբեմն գործածում են նաև քերականական հին ձևեր: Բերենք մի օրինակ Պարույր Սևակի «Եռաձայն պատարագ» պոեմից.

-Ողբամ մեռելոց...

-Բեկանեմ շանթեր...

-Կոչեմ ապրողաց...

Օրինակ բերենք նաև Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգությունից, որը հագեցած է հնաբանություններով և քերականական հին ձևերով.

Նա ինձ կանչեց յուր մոտ և իմ երկյուղն ի բաց վանեց,
Երդվեց կրկին սիրով և հավատարմությամբ,
Եվ կիտելով հոնքերն ինչպես մութ ամպ,
Ուրարտական դաշինքը այպանեց:

Հասարակական կյանքի զարգացումը առաջ է բերում նոր իրողություններ, որոնք անհրաժեշտ է անվանել բառերով: Նոր իրողություններն անվանելու համար կա՛մ բառեր են փոխառվում այլ լեզուներից, կա՛մ եղած արմատներով ու ածանցներով ստեղծվում են նոր բառեր, կա՛մ էլ եղած բառերն սկսում են գործածվել նոր իմաստներով: Օրինակ, երբ ստեղծվեց համակարգչային կապի նոր միջոց, սկզբում փոխառվեց այն անվանող *ինտերնետ* բառը, ապա ստեղծվեց *համացանց*-ը: Եթե ժամանակի ընթացքում չի ստեղծվում համարժեք բառ, ապա փոխառված բառն է ամրապնդվում բառապաշարում: Նորաբանությունները, սակայն, ժամանակի ընթացքում լայնորեն գործածվելով, դադարում են նորաբանություն լինելուց: Օրինակ՝ ժամանակին նորաբանություններ են եղել *հեռախոս, հեռուստացույց, տիեզերանավ, հեծանիվ, վերելակ, ծանրամարտիկ, դիմորդ* և շատ այլ բառեր, որոնք ամրապնդվել են բառապաշարի գործուն շերտում:

Նորաբանության մի տեսակն է *հեղինակային* (անհատական) նորաբանությունը: Դրանք այն բառերն են, որոնք ստեղծում են հեղինակները այս կամ այն հասկացությունը, բնորոշումը, պատկերը արտահայտելու համար: Հեղինակային նորաբանությունները հետագայում կարող են մտնել ակտիվ բառապաշար կամ էլ չմտնել՝ մնալով միայն տվյալ ստեղծագործության մեջ: Այս վերջինները համարվում են *դիպվածային* բառեր: Բերենք մի օրինակ.

Այստեղ ամեն ինչ ապուպապոտ է,
Հորոտ-մորոտ է, մանկությունոտ...
Խեղճության հոտ է, խենթության հոտ է,
Պարզության հոտ է, մաքրության հոտ *(Համո Սահյան)*:

Առաջին տողում գործածված *ապուպապոտ* բառը նշանակում է «Ապուպապերի հետքը՝ հիշատակը կրող՝ ունեցող»[15]: Այդ բառի նմանությամբ հեղինակը կազմել է *մանկությունոտ* բառը, այսինքն՝ *մանկության հետքերը պահող, ունեցող:* Իսկ *հորոտ-մորոտ*-ը ծաղկի տեսակ է, բայց հեղինակն այս խոսքաշարում այնպես է գործածել, որ *ապուպապոտ* և *մանկությունոտ* բառերի կողքին այն ստացել է *հոր և մոր հետքը կրող, պահող, ունեցող* իմաստը: Այսինքն՝ լեզվում եղած բառը գործածվել է նոր իմաստով:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գտնե՛լ և դո՛ւրս գրել հնաբանությունները:**

Այպանել, սյուն, միջանցք, աշտե, մարդպետ, ուղևոր, ատենադպիր, պահարան, այրուձի, արդ, հետո, ի փառս, սենյակ, գրադարան, հանգույն, զի, որովհետև, վաղր, հանապազ:

ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզուներին իրենց զարգացման ընթացքում բառեր են անցնում այլ լեզուներից: Դա կատարվում է անհրաժեշտաբար, հասարակական կյանքի պահանջով ու թելադրանքով, քանի որ ազգերի միջև լինում քաղաքական, տնտեսական, մշակութային բազմազան ու բազմապիսի շփումներ: Մի լեզվից մյուսին անցած, գործածական դարձած բառը կոչվում է *փոխառություն:* Փոխառություններ կարող են կատարվել թե՛ բանավոր խոսքի միջոցով, թե՛ գրավոր ճանապարհով: Առանձնացվում է փոխառությունների երկու տեսակ՝ *անմիջական* և *միջնորդված:*

[15] Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, էջ 100:

Անմիջական են որևէ լեզվից ուղղակիորեն կատարված փոխառությունները, իսկ միջնորդված փոխառությունները կատարվում են ոչ թե տվյալ բառի սկզբնաղբյուր լեզվից, այլ մեկ ուրիշ՝ միջնորդ լեզվից: Օրինակ՝ լատիներեն *անգինա, ասիս-տենտ, էքսկուրսիա,* ռադիո բառերը հայերենին են անցել ռուսերենի միջոցով: Քանի որ հայերենին բառեր են անցել տարբեր շրջաններում, առանձնացվում են հնագույն և հին, նոր և նորագույն փոխառություններ: Դարերի ընթացքում հայերենին այլ լեզուներից շատ բառեր են անցել: Կան իրանական, ասորական, հունական, արաբական, վրացական, թուրքական, ֆրանսիական, ռուսական և այլ փոխառություններ: Բերենք օրինակներ՝ *ազատ, աշխարհ, ապակի, բաժակ, նամակ* (իրանական), *աբեղա, քահանա, քուրմ, կաքավ, կատու, տերև* (ասորական), *ադամանդ, ամբիոն, ափսե, մեղեդի, մեկտաղ* (հոնական), *բալասան, թաս, խսիր, սնդուկ* (արաբական), *խազ, ճաղ, ծիտ, թոկ, մաշիկ* (վրացական), *բեղ, բեկ, ելակ, երշիկ* (թուրքական), *կարդինալ, մարկիզ, պարոն* (ֆրանսիական), *դումա, տայգա, զագս* (ռուսական) և այլն:

Հնարավոր է, որ բառը փոխառվի, սակայն հետագայում լեզվում ստեղծվի ու տարածվի օտար բառի իմաստն արտահայտող համարժեք բառ: Այդ դեպքում փոխառված բառը վերածվում է *օտարաբանության,* օրինակ՝ *տրադիցիա-ավանդույթ, կորպուս–մասնաշենք, ֆունկցիա-գործառույթ, պրոցես-գործընթաց, միկրոֆոն–խոսափող* և այլն:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Աջ սյունակից ընտրել ձախ սյունակում գրված օտարաբանությունների համարժեքները:**

կոլեկցիա	գրավատուն
օրիենտացիա	ախտորոշում
տրադիցիա	կողմնորոշում
ստաբիլ	մեկնարկ
լոմբարդ	հավաքածու
վայլուտա	ավանդույթ
ստարտ	կայուն
դիագնոզ	արժույթ
դիսպետչեր	առևտրային
կոմերցիոն	կարգավար

Վարժություն 2: **Գտնե՛լ փոխառությունները (գտնելու համար համեմատե՛ք ձեր իմացած այլ լեզուների հետ):**

Տորթ, տեխնիկա, կամուրջ, ալբոմ, ակացիա, ակորդեոն, ծառ, ակվարիում, բազալտ, լույս, բալետ, բալլադ, հոգի, բենզին, գիպս, գլոբուս, գրամ, կարտոֆիլ, կոնկրետ, հող, կոնֆետ, հորիզոն, կարկուտ, մագնիս, հողմ, մեթոդ, պոեմ, սպիրտ, հովիվ:

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ[16]

Լեզվում կան կայուն վերաիմաստավորված կապակցություններ, օրինակ՝ *խոսքը կտուրը գցել, սար ու ձոր ընկնել* կապակցություններից առաջինը նշանակում է *խոսակցության առարկան թաքցնելու, խասակցին կամ նոր եկողին շեղելու նպատակով խոսակցության նյութը փոխել,* իսկ երկրորդը նշանակում է *որոնել, թափառել* կամ *խոսքը հիմնական նյութից դիտմամբ հեռացնել:* Այսպիսի կապակցությունները դարձվածային միավորներ կամ դարձվածքներ են:

Դարձվածքներ են կոչվում կայուն, վերաիմաստավորված, պատրաստի վերարտադրելի կապակցությունները: Դարձվածքների տեղին գործածությունը հարստացնում ու գեղեցկացնում է խոսքը, այն դարձնում սեղմ, դիպուկ ու սրամիտ: Մեկ դարձվածի տեղին գործածումով խոսողը կարող է խուսափել երկարբարակ նկարագրությունից ու բնորոշումից: Դարձվածային միավորները գործածվում են կյանքի տարբեր բնագավառներում ու ոլորտներում, իսկ գեղարվեստական խոսքում դրանք մեծապես կիրառվում են խոսքին պատկերավորություն հաղորդելու, խոսքը գեղեցկացնելու, չափածոյում նաև հանգավորման նպատակով: Բերենք օրինակ.

Խորքերում գանձ ունեն քարափները,
Թիկունքներին ունեն անտառ ու հերկ...
Միայն մի բան չունեն քարափները.
Քարափները չունեն կարապի երգ *(Համո Սահյան):*

Բերված օրինակում գործածված է *կարապի երգ* դարձվածքը: Այն նշանակում է *վերջին ստեղծագործություն, վերջին երգ, ավարտ:* Այս վերջին իմաստով էլ գործածված է բանաստեղծության մեջ:

Պետք է նշել, որ դարձվածքների մի մասն արտահայտվում է այնպիսի կապակցություններով, որոնք կարող են ընկալվել նաև ոչ փոխաբերական, այլ իրենց

[16] Դարձվածային միավորները լեզվաբանների մի մասը քննում է շարահյուսության մեջ, քանի որ դրանք կապակցություններ են:

սովորական իմաստներով, այսինքն՝ որպես ոչ վերաիմաստավորված կապակցություններ: Օրինակ, եթե *անունը գետնով տալ, լեղին ջուր կտրել,* կապակցություններն ունեն փոխաբերական իմաստներ և գործածվում են միայն որպես դարձվածային միավորներ, ապա *ջուրն ընկնել, շարքից դուրս գալ, մատների արանքով նայել, ոտքը քարին դիպչել* կապակցությունները կարող են գործածվել թե՛ որպես դարձվածային միավորներ, թե՛ որպես չվերաիմաստավորված կապակցություններ: Համեմատենք՝ *Գետափին խաղացող երեխաների գնդակը ջուրն ընկավ: Երաշտի պատճառով այգին չորացավ, և նրա ամբողջ չարչարանքը ջուրն ընկավ:* Պարզ է, որ առաջին նախադասության մեջ *ջուրն ընկնել* կապակցությունը գործածվել է ուղղակի իմաստով, իսկ երկրորդում՝ դարձվածային և նշանակում է *իզուր անցնել, կորչել, վերանալ:* Այսինքն՝ դարձվածային միավորների իմաստի արտահայտման համար կարևոր է նաև խոսքային այն միջավայրը, որում գործածվում է:

Վարժություններ

Վարժություն 1: **Գտնե՛լ և դո՛ւրս գրել այն կապակցությունները, որոնք խոսքային տարբեր միջավայրերում կարող են գործածվել թե՛ որպես դարձվածային միավորներ, թե՛ որպես չվերաիմաստավորված բառակապակցություններ:**

Շարքից դուրս գալ, խոսքը քամուն տալ, մտքի թելը կտրել, մատների արանքով նայել, հաց կտրել, խոսքը գետնով տալ, վզին փաթաթել, ապուրը եփել, բախտը ժպտալ, բառերը կուլ տալ, ամպեր կուտակվել, դիմակը պատռել, ժամանակ սպանել, կրակը գցել, ջրի երեսը ելնել, սառը ջուր լցնել:

Վարժություն 2: **Կազմե՛լ նախադասություններ՝ գործածելով տրված դարձվածային միավորները:**

Վարդագույն ակնոցով նայել, ջրից չոր դուրս գալ, համբերության բաժակը լցվել, ձեռք մեկնել, քաղցր աչքով նայել:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Բառերն ըստ կազմության տարբեր են լինում: Կան և՛ պարզ, և՛ բաղադրյալ բառեր: Բաղադրյալ բառերը կազմվում են բառակազմական տարբեր բաղադրիչներով: Բաղադրյալ բառերի մեջ կարող ենք անջատել միավորներ, որոնցով ձևավորվում է բառի հիմնական իմաստը: Օրինակ՝ *նկարազարդում* բառում

այդպիսի բաղադրիչներ են *նկար* և *զարդ:* Բառի հիմնական իմաստը ձևավորող անբաժանելի մասը կոչվում է *արմատ:* Բերված օրինակում *նկար*-ը և *զարդ*-ը արմատներ են: Սակայն բառերի կազմությունն ուսումնասիրելիս նկատում ենք, որ արմատներից բացի՝ նրանց կազմում կարող են լինել նաև այլ միավորներ, ինչպիսիք են բերված *նկարազարդում* բառի *–ա-, -ում* բաղադրիչները: Բերենք այլ օրինակ. *ծովանկարիչներ* բառի մեջ հնարավոր է առանձնացնել *ծով-ա-նկար-իչ-ներ* բաղադրիչները: *Ծով*-ը և *նկար*-ը արմատներն են, իսկ մյուս միավորներից յուրաքանչյուրն ունի իր նշանակությունը: *Ա* ձայնավորը, որն իրար է կապում բաղադրյալ բառի տարբեր բաղադրիչները կոչվում է *հոդակապ:* Բառում եղած *-իչ* մասնիկը ածանց է: Ածանցներն այն միավորներն են, որոնց ավելացման միջոցով նոր բառ է կազմվում: Բառավերջում եղած *-ներ* մասնիկը վերջավորություն է: Այն բառին հաղորդել է հոգնակիության նշանակություն: Ածանցների և վերջավորությունների էական տարբերությունն այն է, որ ածանցների միջոցով նոր բառ է կազմվում, իսկ վերջավորությունները բառին հաղորդում են քերականական տարբեր նշանակություններ:

Այսպիսով՝ բերված օրինակներում առանձնացրինք մի քանի բաղադրիչ՝ *արմատ, ածանց, հոդակապ* և *վերջավորություն:* Վերը բերված օրինակների *նկար* և *զարդ, ծով* և *նկար* արմատներն ինքնուրույն բառեր են և կարող են առանձին էլ գործածվել: Սակայն կան արմատներ, որոնք առանձին գործածություն չունեն: Օրինակ՝ *հեռախոս, շատախոս, բարեխոս, խոսք, խոսակցություն* բառերում կա *խոս* արմատը, որն առանձին չի գործածվում:

Պետք է հիշել նաև, որ արմատներն ու ածանցները բառի կազմում կարող են հանդես գալ հնչյունափոխված: Օրինակ՝ *գրչատուփ* բառում *գիր* արմատը և *իչ* ածանցը հնչյունափոխված են: Հնչյունափոխվում է նաև *ա* հոդակապը: Եթե նրան նախորդում է *ի* հնչյունով ավարտվող բաղադրիչ, ապա *ի*-ն և *ա* հոդակապը առաջ են բերում *ե* բաղադրիչը, որը համարվում է հնչյունափոխված հոդակապ, օրինակ՝ *գինի-ա-տուն - գինետուն:*

Մեկ արմատ ունեցող բառերը պարզ են, օրինակ՝ *սեղան, տուն, կատու, քար, ծառ:*

Մեկ արմատ և ածանց (կամ ածանցներ) ունեցող բառերը ածանցավոր են, օրինակ՝ *տնակ, անտուն, անմիտ, անմտություն:*

ԱԾԱՆՑՆԵՐ ԵՎ ԱԾԱՆՑՈՒՄ

Ածանցները այն մասնիկներն են, որոնք, ավելանալով բառահիմքին, նոր բառ են կազմում, օրինակ՝ *-ակ* մասնիկը, միացնելով լիճ բառին, կարող ենք կազմել *լճակ* բառը: Ածանցները կարող են ավելանալ բառահիմքի սկզբից կամ վերջից և ըստ դրա էլ առանձնացվում են *նախածանցներ* և *վերջածանցներ,* օրինակ՝ *անտուն* բառում *ան-* ածանցը նախածանց է, որովհետև ավելացել է սկզբից, իսկ *տնակ* բառում *-ակ*-ը վերջածանց է, որովհետև ավելացել է վերջից:

Ածանց ավելացնելու միջոցով բառ կազմելու եղանակը կոչվում է *ածանցում:*

Ժամանակակից հայերենում նախածանցները վերջածանցների համեմատությամբ ավելի փոքրաթիվ են: Հիմնական գործածական նախածանցներից են հետևյալները:

Ան - անզեն, անտուն, անգութ	*համ* – համալսարան, համանուն
ապ - ապերախտ, ապօրինի, ապուշ	*մակ* – մակերես, մակդիր, մականուն
արտ- արտասահման, արտաշնչել	*նախ* - նախօրյակ, նախադեպ
բաց - բացառություն, բացակայել	*ներ* – ներգրավել, ներածել
գեր- գերադասել, գերակշռել	*չ*- չխոսկան, չկամ, չբեր
դժ- դժբախտ, դժգոհ, դժկամ	*պար* – պարագիծ, պարփակել
ենթ-ենթարկել, ենթակա, ենթագլուխ	*ստոր*- ստորադասել, ստորակարգ
ընդ-ընդգծել, ընդհատել	*վեր* – վերանայել, վերանորոգել
հակ- հակադիր, հակակշիռ	*տ* – տգեղ, տգետ, տհաս

Առավել գործածական վերջածանցներից են հետևյալները:

Ակ, իկ, ուկ – լճակ, շնիկ, գառնուկ	*յակ*- տասնյակ, շաբաթօրյակ
ական, ային – տնական, ծովային	*յան*- երևանյան, Գևորգյան
անք, ունք – հարգանք, ծաղկունք	*ում, մունք* – շարժում, սխալմունք
ավետ, ավոր – հոտավետ, թունավոր	*ստան*- այգեստան, Հայաստան
արան - դասարան, լսարան	*ված, վածք* – քերթված, գործվածք
ալի, ելի – ուրախալի, եղկելի	*ոց, անոց* - դպրոց, հիվանդանոց
բար, պես, որեն – մեղմաբար, մեծապես, վեհորեն	*ություն* – մեծություն, վեհություն
գին – ուժգին, ցնծագին	*ուհի* – հայուհի, աշակերտուհի
ե, յա - փայտե, թիթեղյա	*ուն* – խոսուն, կպչուն
ենի - բալենի, խնձորենի	*ցի, եցի, ացի* – լեռնցի, սարեցի, գյուղացի
եղեն – կանաչեղեն, ոսկեղեն	*ք* – վազք, խելք, միտք

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գտնե՛լ մեկ արմատ և երկու ածանց ունեցող բառերը (բառի մեջ կարող է լինել նաև հոդակապ): Կազմե՛լ նախադասություններ՝ գործածելով այդ բառերը:**

Լուսանկարչական, տեսականորեն, գրահրատարակչական, հացթուխ, ծովեզրյա, դարբնություն, բարեհամբույր, ատաղձագործ, մանրանկարչություն, հրուշակագործ, վերաբաշխում, գիտականորեն, անօգնական, բազմություն, տգիտություն:

Վարժություն 2: **Գտնե՛լ մեկ արմատից և մեկ ածանցից կազմված բառերը:**

Հայեցակարգ, մետաղյա, բացառիկ, ասեղնագործություն, հաշվեկշիռ, որսորդ, պողպատե, ձուլակաղապար, հնություն, ժամանակահատված, արժեիջեցում, նվիրում, միջազգային, գունեղ, իրականություն, ընդհանրացում, հարթակ, խտրականություն, մեղմորեն, միջնակարգ, շարժուն, ներգաղթյալ, մենաշնորհ, միջուկ, բուսականություն:

Վարժություն 3: **Առանձին սյունակներով դուրս գրե՛լ նախածանց, վերջածանց, ինչպես նաև թե՛ նախածանց, թե՛ վերջածանց ունեցող բառերը:**

Անհայտ, խնձորենի, անմտություն, հակաթույն, մթերային, տգեղ, վերահաշվում, անհոգաբար, կաղնուտ, անհավատալի, միլիոնավոր, չկամ, ցուցանակ, արտապատկեր, ենթավարպետ, գերադաս, կղզյակ, հարակից, հայրական, ներգրավում, տրամագծորեն, անհարմար, ապաշնորհ, դժգոհություն, հավաքածու, լսարան, համատեղություն, ծիծաղելի, անթիվ, մորթեղեն, միտք:

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ[17]

Բարդ են այն բառերը, որոնք կազմված են մեկից ավելի արմատներից: Կան նաև մեկից ավելի արմատներից և ածանցից կամ ածանցներից կազմված բառեր. այդպիսի բառերը երբեմն առանձնացվում են և կոչվում բարդածանցավոր:

Բարդ և բարդածանցավոր բառերը՝ *բարդությունները,* բաժանվում են երկու խմբի՝ *համադրական* և *հարադրական* (վերլուծական):

Համադրական են այն բարդությունները, որոնց բաղադրիչները գրվում են միասին, օրինակ՝ *շքերթ, դասագիրք* և այլն: Համադրական բարդությունների բաղադրիչները կարող են կապակցվել և՛ հոդակապով, և՛ առանց հոդակապի: Դրա հիման վրա էլ առանձնացվում են *հոդակապով* և *անհոդակապ* համա-

[17] Տարբեր աշխատություններում բարդությունները տարբեր դասակարգումներով են ներկայացվում:

դրական բարդություններ: Օրինակ՝ *այսրեղ, այսօր, տանտեր, մայրուղի, հորեղբայր, ծաղկման, շաքարավազ* բառերը անհոդակապ են, իսկ *գրասեղան, լուսանկար, զարդանկար, երկաթագործ* բառերը հոդակապով են:

Հարադրական (վերլուծական) են այն բարդությունները, որոնց բաղադրիչ-ները գրվում են առանձին-առանձին, օրինակ՝ *ձայն տալ, հազար ինը հարյուր, ոչ ոք, մեծ-մեծ* և այլն: Հարադրական բարդությունները լինում են *հարադրավոր* և *կրկնավոր*: Հարադրավոր են այն բարդությունները, որոնց բաղադրիչները թեև գրվում են առանձին, բայց միասնաբար մեկ իմաստ են արտահայտում, օրինակ՝ *դուր գալ, հազիվ թե, երկու երրորդ, մի քանի* և այլն: Կրկնավոր են արմատի կրկնությամբ կազմված բարդությունները, օրինակ՝ *փունջ-փունջ, արագ-արագ, շուտ-շուտ, շերտ-շերտ, երեք-երեք, հե՛յ-հե՛յ:* Կրկնավոր բարդությունների բաղադրիչներից մեկը կարող է հնչյունափոխված լինել, օրինակ՝ *պարապ-սարապ, աման-չաման, մանր-մունր,* ինչպես նաև *կաս-կարմիր, լեփ-լեցուն, սեփ-սև, ճեփ-ճերմակ* և այլն: Կրկնությունը շեշտում, սաստկացնում է իմաստը, հաղորդում բազմակիության գաղափար: Այդ պատճառով էլ կրկնավոր բարդությունով արտահայտված որոշիչ ունեցող բառերը սովորաբար հոգնակի թվով են դրվում, ինչպես՝*մեծ-մեծ քարեր, սուր-սուր փշեր, տաք-տաք կարկանդակներ, մանր-մունր բեկորներ* և այլն:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Կան բառեր, որոնք կազմվում են բառակապակցությամբ արտահայտված տարբեր տերմինների, անվանումների բաղադրիչների սկզբնատառերով կամ դրանցից վերցված հատվածներով: Որոշ դեպքերում էլ բաղադրիչ բառերից մեկը (սովորաբար վերջինը) կարող է չկրճատվել: Օրինակ՝ *ուսմասվար* բառը կազմված է *ուսումնական մասի վարիչ* կապակցության բառերի սկզբնամասերից: Այսպիսի բառերն ընդունված է կոչել *հապավումներ* կամ *հապավական բարդություններ:* Հապավումներ կազմելու համար կարող են վերցվել կապակցության բառերի տարբեր մասեր, և դրա հիման վրա էլ կատարվում է հապավումների դասակարգումը: Հապավումները լինում են *տառային, բառամասային* (կամ *վանկային*) և *խառը:*

Տառային են այն հապավումները, որոնք կազմվում են կապակցության բառերի սկզբնատառերով, օրինակ՝ *ՀՀ* (Հայաստանի Հանրապետություն), *ՈՒԳԸ* (ուսանողական գիտական ընկերություն), *ԱԺ* (Ազգային ժողով) և այլն: Տառային հապավումների բոլոր տառերը հիմնականում գրվում են մեծատառերով և միասին: Փոքրատառերով են գրվում միայն ինքնուրույն բառերի վերածված մի

քանի հապավումներ, օրինակ՝ *բուհ* (բարձրագույն ուսումնական հաստատություն), *հէկ* (հիդրոէլեկտրակայան), *ջէկ* (ջերմաէլեկտրակայան), *ատէկ* (ատոմային էլեկտրակայան), *զագս* (ռուսերեն՝ загс - запись актов гражданского состояния), *նէպ* (ռուսերեն՝ новая экономическая политика) և այլն:

Բառամասային կամ *վանկային* են այն հապավումները, որոնք կազմվում են կապակցության բառերի մասերով, վանկերով, նրանցից վերցված միավանկ արմատներով, օրինակ՝ *ուսմասվար* (ուսումնական մասի վարիչ), *դասղեկ* (դասարանի ղեկավար), *ժողտնտխորհ* (ժողովրդական տնտեսության խորհուրդ):

Խառն են այն հապավումները, որոնց կազմում կարող են լինել կապակցության բառերի սկզբնատառեր, վանկեր, ինչպես նաև ամբողջական արմատներ ու բառեր, օրինակ՝ *անտառտնտեսություն* (անտառային տնտեսություն), *զինբժիշկ* (զինվորական բժիշկ), *շինհրապարակ* (շինարարական հրապարակ) *Քանաքեռհէկ:*

Հապավման միջոցով կազմվում են միայն գոյականներ, սակայն դրանցից կարող են կազմվել նաև այլ խոսքի մասերի պատկանող բառեր, օրինակ՝ *բուհ - բուհական*:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Դո՛ւրս գրել հոդակապ ունեցող բառերը:**

Հյուրախաղ, շաքարավազ, տնամերձ, օձաձուկ, լայնարձակ, մրգահյութ, փորձանոթ, հողագունդ, արծաթագործ, լուսարձակ, նախշազարդ, ալրաղաց, հայազգի, ծաղկափոշի, նույնարմատ, ծառատունկ, լողավազան, հորդաբուխ, քարածուխ, գառնարած, մեղվաբույծ, ժամագործ, դիմաքանդակ, ծաղկաման, սալահատակ, հորդառատ, մեծարժեք, միջանցիկ, եռավանկ, լեռնաշխարհ, դրամարկղ, կավահող, երկանդամ, քաղցրահամ, սրատամ, ժպտադեմ, հիշարժան, շաքարաման, գորգագործ, զովաշունչ, ցուցահանդես, քարանձավ, ջրագռավ, լուսամուտ, զբոսավայր, հացաթխում:

Վարժություն 2: **Կազմե՛լ *արև, լույս, հող, ջուր, նկար* արմատներով բաղադրված 5-ական բարդություն:**

Վարժություն 3: **Դո՛ւրս գրել երկու արմատից և մեկ ածանցից կազմված բառերը (բառի մեջ կարող է լինել նաև հոդակապ):**

Մտավորականություն, առաջնորդ, ապառիկ, բացահայտ, գնողունակություն, գրանցում, շաբաթօրյակ, դասական, երկընտրանք, եկամտաբերություն, ընկերություն, երկկողմանի, տանտիրուհի, պարտավորություն, գծագրական,

խտրականություն, կենսագործունեություն, կանխավճար, մրցակցություն, ֆիրմային, ողնաշարավոր, ձեռնարկատիրություն, սահմանափակություն, շուկայական, ճանապարհաշինական վերավաճառք, աշխատաժամանակ, տնտեսագիտություն, տնտեսություն, կանխակալ:

Վարժություն 4: **Առանձին սյունակներով դո՛ւրս գրել հնչյունափոխված բաղադրիչ ունեցող և չունեցող կրկնավոր բարդությունները: Կազմե՛լ 6 նախադասություն՝ երեքում գործածելով հնչյունափոխված, իսկ մյուս երեքում՝ չհնչյունափոխված բաղադրիչով բարդություն:**

Բարակ-մարակ, հեռու-հեռու, արագ-արագ, ման-չման, պարապ-սարապ, քուլա-քուլա, առոք-փառոք, տեղ-տեղ, մանր-մունր, զույգ-զույգ, փոքր-մոքր, այլուն-փայլուն, խումբ-խումբ, մարդ-մուրդ:

Վարժություն 5: **Կազմե՛լ տրված կաղապարներին համապատասխան բարդություններ:**

Արմատ-հոդակապ-արմատ-վերջածանց, նախածանց-արմատ-վերջածանց, արմատ-հոդակապ-արմատ-վերջածանց, արմատ-արմատ, արմատ-վերջածանց-վերջածանց, նախածանց-հոդակապ-արմատ, արմատ-հոդակապ-արմատ:

Վարժություն 6: **Տպագիր կամ էլեկտրոնային մամուլից դո՛ւրս գրել առնվազն 20 հապավում, դասակարգե՛լ ըստ տեսակների (տառային, բառամասային, խառը) և գրե՛լ ամբողջական:**

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոսքի մասեր

Երբ ուսումնասիրում ենք բառերը, պարզ է դառնում, որ դրանց մի մասն արտահայտում է անձ, առարկա, հասկացություն (օր.՝ *մարդ, աշակերտ, սեղան, ծառ, քար, հարգանք, ուրախություն*), մեկ այլ մասը՝ առարկայի հատկանիշ (օր.՝ *գեղեցիկ, շատ, փոքր*), մյուսները՝ գործողություն (օր.՝ *կառուցել, նկարել, փորագրել*), քանակ (օր.՝ *մեկ, երկու, մեկ երրորդ*) և այլն: Բացի այդ՝ բառերի մի մասը քերականորեն կարող է փոփոխվել՝ հոլովվել, մյուս մասը՝ խոնարհվել, մեկ այլ մասը չի փոփոխվում և այլն: Այս ամենի հետևանքով ամեն մի բառ նախադասության կազմում կատարում է շարահյուսական տարբեր գործառույթներ՝ ենթակայի, ստորոգյալի, տարբեր լրացումների, կապակցական և այլն: Ահա այս երեք հանգամանքի՝ կոնկրետ իմաստների, քերականական հատկանիշների,

շարահյուսական կիրառությունների հիման վրա էլ լեզվում եղած բառերը բաժանում ենք խմբերի, որոնք կոչվում են *խոսքի մասեր:* Ժամանակակից հայերենում կա տասը խոսքի մաս՝ *գոյական անուն, ածական անուն, թվական անուն, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական (եղանակավորող բառեր), ձայնարկություն:* Այս խոսքի մասերից յուրաքանչյուրն ունի իրեն բնորոշ քերականական հատկանիշներ, որոնք ուսումնասիրվում են ձևաբանության մեջ:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

1.Գոյականի թվի կարգը

Գոյական են կոչվում այն բառերը, որոնք անվանում են անձ, առարկա կամ հասկացություն, օրինակ. *լիճ, հող, նկարիչ, քանդակագործ, երաժշտություն, հարգանք:* Գոյականներն ունեն քերականական երեք հատկանիշ, այսինքն՝ քերականական երեք կարգ: Դրանք են *թիվը, առումը (առկայացումը)* և *հոլովը:*

Գոյականի թվի կարգը: Այս կարգը ցույց է տալիս գոյականի արտահայտած առարկաների քանակը: Գոյականն ունի երկու թիվ՝ *եզակի* և *հոգնակի:* Եզակի թիվը ցույց է տալիս մեկ առարկա կամ տվյալ տեսակի առարկան ընդհանրապես և արտահայտվում է առանց վերջավորությունների, օրինակ՝ *սար, վրձին, նկար, սեղան, ճանապարհ* և այլն: Հոգնակի թիվը ցույց է տալիս մեկից ավելի միատեսակ առարկաներ, օրինակ՝ *սարեր, վրձիններ, նկարներ, սեղաններ, ճանապարհներ:* Ժամանակակից հայերենում հոգնակի թիվը կազմվում է տարբեր վերջավորություններով: Այդ վերջավորություններն են՝ ***-եր, -ներ, -իկ, -ք, -այք, -ինք***: Առավել գործածական են *-եր* և *-ներ* վերջավորությունները, իսկ մնացածներով կազմվում է սահմանափակ քանակով բառերի հոգնակի թիվը:

-Եր և *-ներ* վերջավորությունների գործածությունը պայմանավորված է բառերի վանկերի քանակով: Եթե բառը միավանկ է, ապա հոգնակին կազմում է *-եր* մասնիկով, օրինակ՝ *սարեր, մեխեր, քարեր, ծառեր, փներ* և այլն: Եթե բառը բազմավանկ է, ապա հոգնակին կազմվում է *-ներ* մասնիկով, օրինակ՝ *գրիչներ, աթոռներ, աշակերտներ, սեղաններ, նստարաններ, պատճեններ* և այլն: Այս ընդհանուր կանոնի հետ պետք է հաշվի առնել հետևյալը:

ա) Մի շարք բառեր գրաբարում ունեցել են *ն* վերջնահնչյունը, այսինքն՝ այդ բառերը ավարտվել են *ն*-ով, որն աշխարհաբարում ընկել է (*մուկն – մուկ, դուռն - դուռ* և այլն): Այս *ն* հնչյունը մի շարք բառերի հոգնակիի կազմության ժամանակ վերականգնվում է, ինչպես՝ *բեռներ, գառներ, դռներ, եզներ, թոռներ, լեռներ, ծնկներ, ծոռներ, հարսներ, ձկներ, մկներ, մատներ, նռներ* և այլն: Գրաբարյան *ն*

վերջնահնչյունը կարող է հոգնակի թվի կազմության ժամանակ չվերականգնվել, բայց ի հայտ գալ բառակազմության ժամանակ՝ *սերմ-սերմեր-սերմնացան, կողմ-կողմեր-կողմնացույց, մաս-մասեր-մասնակից* և այլն:

բ)*Ռուս* բառի հոգնակին կազմվում է *-ներ* վերջավորությամբ՝ *ռուսներ:*

գ) Այն երկվանկ բառերը, որոնց երկրորդ վանկը կազմված է գաղտնավանկի *ը*-ով, հոգնակիում հիմնականում ստանում են *-եր* վերջավորությունը, ինչպես՝ *արկղ-արկղեր, աստղ-աստղեր, դուստր-դուստրեր, եզր-եզրեր, սանր-սանրեր, տեսր-տեսրեր, վագր-վագրեր* և այլն[18]:

դ) Հոգնակիի կազմության ժամանակ *–եր* վերջավորություն են ստանում այն բազմավանկ բաղադրյալ բառերը, որոնց վերջին բաղադրիչը միավանկ կամ երկրորդ վանկը գաղտնավանկի *ը*-ով երկվանկ բառ է, և այդ վերջին բաղադրիչը պահպանում է իր հիմնական իմաստը, օրինակ՝ *անձրևաջրեր, շոգենավեր, հեռագրեր, նախահայրեր, դրամարկղեր, արքայադուստրեր* և այլն: Իսկ եթե վերջին բաղադրիչը չի պահպանում իր հիմնական իմաստը, ապա բաղադրյալ բազմավանկ բառի հոգնակին կազմվում է *-ներ* վերջավորությամբ, ինչպես՝ *ազգասերներ, բեռնակիրներ, մեծապուններ, որմնադիրներ, պատմագիրներ, փայտահատներ* և այլն:

-Ք վերջավորությամբ կարող է կազմվել *-ցի (-ացի, -եցի)* ածանցով կազմված այն բառերի հոգնակին, որոնք ցույց են տալիս որևէ տեղի, վայրի, երկրի բնակիչ, օրինակ՝ *գյուղացիք, քաղաքացիք* և այլն: Բայց պետք է նշել, որ այս ձևերը խոսակցական են, և գրական լեզվում գործածվում են այս բառերի *-ներ* վերջավորությամբ հոգնակիները՝ *գյուղացիներ, քաղաքացիներ: -Ք* -ով է կազմվում նաև *այլ* բառի հոգնակին՝ *այլք:* Երբեմն գործածվում է նաև *այլեր* հոգնակին, օրինակ՝ *Ուր թալանում են մերոնք ու այլերը* (Հովհաննես Թումանյան):

-Այք վերջավորությամբ կազմվում են *կին,* ինչպես նաև *տիկին, պարոն* բառերի հոգնակիները՝ *կանայք, տիկնայք, պարոնայք,* սակայն *տիկին* և *պարոն* բառերի հոգնակիները կարող են կազմվել նաև *-ներ* մասնիկով՝ *տիկիններ, պարոններ:*

-Իկ վերջավորությամբ կազմվում է միայն *մարդ* բառի և նրանով կազմված այն բառերի հոգնակին, որոնցում նա վերջին բաղադրիչն է, օրինակ՝*մարդիկ, տղամարդիկ, նախամարդիկ* և այլն:

-Ինք վերջավորությամբ կազմվում է *անձ* բառի հոգնակին՝ *անձինք,* թեև գործածական է նաև *անձեր* ձևը:

[18] Հնարավոր է որոշ այսպիսի բառերի նաև *–ներ*-ով հոգնակին, ինչպես՝ *արկղներ, անգղներ, գամփռներ* և այլն:

Պետք է հիշել, որ եթե գոյականներն ունեն *բազմազան, տարբեր, մի շարք, որոշ, զանազան, բոլոր* և նման որոշիչ լրացումներ, ապա դրվում են հոգնակի թվով, օրինակ՝ *բազմազան ծաղիկներ, մի շարք խնդիրներ, որոշ գրքեր, զանազան գործեր, բոլոր տները* և այլն:

Վարժություններ

Վարժություն 1: **Դո՛ւրս գրել այն բառերը, որոնցում գրաբարյան *ն* վերջնահնչյունը հոգնակիի կազմության ժամանակ չի վերականգնվում, բայց վերականգնվում է բառակազմության ժամանակ:**

Կողմ, բեռ, գառ, դուռ, մաս, թոռ, լեռ, ծունկ, ծոռ, հարս, սերմ, ձուկ, մուկ, նուռ:

Վարժություն 2: **Առանձին սյունակներով դո՛ւրս գրել եզակի և հոգնակի գոյականները: Երեք եզակի և երեք հոգնակի գոյականներով կազմել նախադասություններ:**

Ես նայում եմ սեգ Արագած սարին,
Դարերի ձյուն կա նրա կատարին,
Ժայռեր կան այնտեղ շանթերից կիսված,
Հողմերից ծեծված, արևից կիզված,
Եվ անդունդներ կան գագաթներն ի վար
Վշտի պես խորունկ, ցավի պես խավար…
Սակայն լանջերին արև՛ է, գարո՛ւն,
Աղբյուրն է խոսում, խայտում է առուն,
Բուրմունքը թևին՝ զեփյուռն է խաղում,
Բոսոր կակաչն է հովից ծիծաղում,
Ծաղիկն է բուսնում ժայռին ու քարին,
Թեկուզ դարերի ձյուն կա կատարին,
Թեկուզ հողմածեծ գագաթներն ի վար
Անդունդներ կան մութ, վշտի պես խավար: *Վահագն Դավթյան*

Վարժություն 3: **Գտնե՛լ, թե որ շարքերի բոլոր բառերի հոգնակին է կազմվում *–եր* վերջավորությամբ:**

1. բեռնարկղ, բառատետր, բնագիր, պատմագիր
2. գլխաշոր, դեղատոմս, ձկնորսանավ, ամսագիր
3. ածխակույտ, ակնաբիբ, բաժնետեր, դասաժամ

4. եզրաշերտ, թաղամաս, լաստանավ, զարդասյուն
5. մեղրամոմ, յուղաբիծ, նավթահոր, շնագայլ
6. ջրաբույս, սառցադաշտ, որմնանկար, վարելահող
7. անվաճաղ, արքայատոհմ, բնակվարձ, գետաձի
8. գիտափորձ, զոդաձող, երկաթալար, էլեկտրասարք
9. թոնրատուն, ճամփեզր, մատենացանկ, թիթեղագործ
10. մեկնակետ, մարզաձև, ջրաշիթ, ուրվագիծ

Վարժություն 4: **Գտնե՛լ, թե որ շարքերի բոլոր բառերի հոգնակին է կազմվում *–ներ* վերջավորությամբ:**

1. գորգագործ, որմնադիր, մեղվաբույծ, էքսկավատորավար
2. ածխահատ, գյուղատնտես, այգեգործ, երգիծաբան
3. հանդիսատես, հատապտուղ, էլեկտրամուրճ, հեքիաթագիր
4. հրուշակագործ, ձիթաբլիթ, հերթապահ, մանկաբույժ
5. պատգամ, պատճեն, ջրատար, սննդամթերք
6. տիեզերագնաց, ուղղաթիռ, փականագործ, քարայր
7. քարհատ, առակագիր, ատամնաբույժ, արգելացանց
8. բնանկար, գաջագործ, դեղասրվակ, խճանկար
9. ծաղկաբույծ, համազգեստ, հատապտուղ, մեդալակիր
10. նորաբնակ, շերամապահ, սերնդակից, վաճառատեղ

2.Գոյականի որոշյալ և անորոշ առումները (առկայացման կարգը)

Գոյականի առումը կամ առկայացման կարգը ցույց է տալիս խոսքային տվյալ իրադրությունում գոյականի հայտնի կամ անհայտ լինելը: Բերենք հետևյալ նախադասությունները. *Մի մարդ եկավ: Գիրք կարդացի: Գիրքը կարդացի:* Նախադասություններից առաջինում եկած մարդը տվյալ դեպքում անհայտ, անորոշ է թե՛ խոսողի, թե՛ խոսակցի համար, երկրորդում խոսողը նկատի ունի այնպիսի գիրք, որը խոսակցին է անհայտ, իսկ երրորդում նկատի ունի այնպիսի գիրք, որի մասին գիտեն և՛ ինքը, և՛ խոսակիցը: Այսինքն՝ տվյալ դեպքում խոսող կողմերի համար առարկայի հայտնի, որոշակի լինելը դրսևորվում է երեք հարաբերությամբ. ա) առարկան անհայտ, անորոշ է խոսողի և խոսակցի համար. բ) առարկան որոշակի է խոսողի համար, բայց անորոշ՝ խոսակցի համար. գ) առարկան որոշակի է թե՛ խոսողի, թե՛ խոսակցի համար: Սրա հիման վրա էլ առանձնացվում են գոյականի *որոշյալ* և *անորոշ* առումները: *Որոշյալ առումով գոյականները ցույց են տալիս*

տվյալ դեպքում խոսողին և խոսակցին հայտնի առարկաներ, իսկ անորոշ առումով գոյականները՝ անհայտ առարկաներ: Սակայն որոշյալ առումով գոյականները կարող են ցույց տալ նաև տվյալ առարկայի տեսակն ընդհանրապես: Օրինակ՝ *Մեր պարտեզում աճող ճերմակ վարդը բացվել է* նախադասության մեջ *վարդը* ներկայացվում է որպես խոսող կողմերին հայտնի առարկա, իսկ *Վարդը գեղեցիկ ծաղիկ է* նախադասության մեջ *վարդ*-ը ցույց է տալիս ծաղկի այդ տեսակն ընդհանրապես:

Անորոշ առումով գոյականները քերականական մասնիկներ չեն ստանում (օրինակ՝ *փուն*): Դրանց հետ կարող է գործածվել *մի* անորոշ դերանունը (օրինակ՝ *մի փուն*): *Մի* բառի հետ գոյականները դրվում են եզակի թվով:

Որոշյալ առումն արտահայտվում է *ն, ը* որոշիչ հոդերի միջոցով, օրինակ՝ *փունը փունն:*

ա) Եթե բառն ավարտվում է ձայնավորով, ապա պարտադիր ստանում է *ն* հոդը, ինչպես *այգին, առուն, բարդին, երեկոն, կապուն:*

բ) Եթե բառն ավարտվում է բաղաձայնով, և նրան հաջորդող բառն էլ սկսվում է բաղաձայնով, ապա պարտադիր գործածվում է *ը* հոդը, օրինակ՝ *Բերքը շատ է: Բերքը որակյալ է:*

գ) Եթե բառն ավարտվում է բաղաձայնով, իսկ հաջորդ բառն սկսվում է ձայնավորով, մեծ մասամբ դրվում է և նախընտրելի է *ն* հոդը, սակայն կարող է գործածվել նաև *ը* հոդը, օրինակ՝ *Բերքն առատ է: Բերքը առատ է:* Այս դեպքում կարևոր են տրամաբանական շեշտի դիրքը և խոսքի տեմպը, քանի որ *ն* և *ը* որոշիչ հոդերից յուրաքանչյուրի գործածության դեպքում արտասանական տարբեր դադարներ են լինում:

Պետք է հաշվի առնել, որ նկատի է առնվում հաջորդող բառի սկզբնահնչյունը, այլ ոչ թե սկզբնատառը: Օրինակ՝ պետք է ասել *Աշակերտը եկավ,* քանի որ *եկավ* բառն սկսվում է *յ* հնչյունով: Նույն պատճառով էլ ճիշտ է *Ֆիլմն սկսվեց* նախադասության մեջ *ֆիլմ* բառի *ն* հոդով գործածությունը, քանի որ *սկսվել* բառի սկզբում կա գաղտնավանկի *ը,* այսինքն՝ ձայնավոր (որը կարող է գրվել տողադարձի կամ վանկատման ժամանակ):

Որոշ բառաձևեր որոշիչ հոդ չեն ստանում, օրինակ՝ *մարդիկ, կանայք, փիկնայք, պարոնայք, անձինք, այլք:* Որոշիչ հոդ չեն ստանում նաև *-անք, -ենք, -ոնք, -ունք* ածանցներով կազմված այն բառերը, որոնք տոհմ, ազգակցություն, գերդաստան են ցույց տալիս (օրինակ՝ *Վարդանանք, Արշակենք, ծերոնք, Վեղունք*), ինչպես նաև *–ցի (-ացի, -եցի)* ածանցով կազմված այն բառերը, որոնք ցույց են տալիս որևէ տեղի, վայրի, երկրի բնակիչ (օրինակ՝ *գյուղացիք, քաղաքացիք*):

Ը և *ն* հոդերից բացի՝ կան նաև *ս* և *դ* հոդերը:

Ս, դ, ն (ը) հոդերը կարող են արտահայտել ստացական իմաստ, այսինքն՝ ցույց տալ պատկանելություն, ինչպես՝ *գիրքս (իմ գիրքը), գիրքդ (քո գիրքը), գիրքն(ը) (նրա գիրքը):*

Ս, դ հոդերը կարող են ունենալ նաև դիմորոշ գործառույթ, այսինքն՝ հաղորդել առաջին կամ երկրորդ դեմքի իմաստ, ինչպես՝ *ես՝ ուսանողս, դու՝ ուսանողդ:*

Ս հոդը կարող է արտահայտել նաև ցուցականություն, այսինքն՝ արտահայտել *այս* դերանվան իմաստը, ինչպես՝ *Օրերս (այս օրերին) վերադարձել է մայրաքաղաքից: Վերջիններս կարողացան հաղթել մրցույթում:*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Առանձին սյունակներով դո՛ւրս գրել որոշյալ և անորոշ առումներով գոյականները:**

Գետնի տակ թաքնված հանքանյութերի մասին շատ հետաքրքիր տեղեկություններ կարող է տալ բույսերի հանելուկային լեզուն: Ծառը, թուփը, ծաղիկը կամ սովորական խոտը բնական մի բարդ լաբորատորիա է: Նրանց արմատները պոմպերի նման գետնի տակից քաշում են տարբեր նյութերի լուծույթներ: Տերևների մեջ և ցողուններում կուտակվում են մետաղներ, որոնց պաշարները թաքնված են գետնի խորքերում: Որպեսզի այդ մետաղը հայտնաբերեն, այրում են հավաքած բույսերի նմուշները և ուսումնասիրում ստացված մոխիրը: Քննության են ենթարկվում նաև բույսերի հյութերը: Այդպես կանաչ «հետախույզները» օգնում են որոշելու հողաշերտի կազմությունը, ցույց են տալիս, թե որտեղ հանքավայր կա:

Ալեքսանդր Մելքումյանի «Հայաստանի քարերի աշխարհում» գրքից

Վարժություն 2: **Յուրաքանչյուր շարքում գտնե՛լ անորոշ առումով գոյականը:**

1. ապագան, լեռնաշղթան, ենթական, պատվանդան
2. պարագան, կուլան, ավազան, թեման
3. պատճեն, սյուժեն, հյուլեն, միջօրեն
4. խճավազն, արքայազն, նոխազն, վարազն
5. թեյն, տրամվայն, որովայն, դերբայն
6. կարոտն, մոլախոտն, ծղոտն, հետիոտն
7. քնարերգուն, վերարկուն, ճողփյուն, սերմացուն
8. մեղուն, ցողուն, ժողովածուն, աղաթթուն

9. չափածոն, մետրոն, երեկոն, երգեհոն
10. զբոսայգին, մարգագետին, թերակղզին, ծառուղին

3. Գոյականի հոլովի կարգը

Հոլովի կարգն արտահայտում է գոյականի կապակցական փոփոխությունների համակարգը: Խոսքում գործածվելիս տարբեր բառերի կապակցվելու համար գոյականները որոշակի ձևերով փոփոխվում են. օրինակ՝ *պատրաստել մետաղ* բառերն իրար չեն կապակցվում, բայց *պատրաստել մետաղից* բառերը կապակցվում են, որովհետև *մետաղ* բառը ձևով փոխվել է՝ *մետաղից:* Գոյականիկապակցական այսպիսի փոփոխությունների համակարգը կոչվում է հոլովում, իսկ փոփոխման ամեն մի ձևը՝ հոլով: Այս համակարգում անշուշտ ընդգրկվում է նաև գոյականի ուղիղ՝ չփոխված ձևը, այսինքն՝ հոլովման համակարգը ձևավորվում է գոյականի ուղիղ և թեքված ձևերի ամբողջությամբ: Ժամանակակից հայերենում կա 7 հոլով[19]: Դրանք են՝ *ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական:* Ներկայացնենք հոլովների կազմությունը:

ՀՈԼՈՎԸ	ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ
ՈՒՂՂԱԿԱՆ	Գոյականի ուղիղ ձևն է. հոլովական վերջավորություն չի ստանում՝*գիրք, այգի, օր, շարժում, Արամենք, տուն, հայր:*
ՍԵՌԱԿԱՆ	Կազմվում է *-ի, -ու, -վա, -ան, -ոջ, -ց, -ա-, -ո-* թեքույթներով՝ *գրքի, այգու, օրվա, լեռան, ընկերոջ, Արամենց, տան, հոր:*
ՏՐԱԿԱՆ	Կազմվում է *-ի, -ու, -վա, -ան, -ոջ, -ց, -ա-, -ո-* թեքույթներով, այսինքն՝ ձևով նման է սեռականին, սակայն տրական հոլովով բառերը կարող են որոշիչ հոդ ստանալ՝ *գրքի(ն), այգու(ն), օրվա(ն), լեռան(ը), ընկերոջ(ը), Արամենց*[20]*, տան(ը), հոր(ը):*
ՀԱՅՑԱԿԱՆ	Ոչ անձ ցույց տվող գոյականների հայցականը ձևով հիմնականում նման է ուղղականին, անձ ցույց տվողներինը՝ տրականին, օրինակ՝ *գիրքը, աշակերտին:* Հայցականով բառերը ուղղականից և տրականից տարբերվում են շարահյուսական կիրառությամբ:
ԲԱՑԱՌԱԿԱՆ	Կազմվում է *-ից* կամ *-ուց* մասնիկներով՝ *գրքից, այգուց: -Ուց*

[19] Հոլովների քանակի մասին կան տարբեր կարծիքներ:
[20] Արդեն նշվել է, որ մի շարք բառեր, որոնց թվում նաև-*անք, -ենք, -ոնք, -ունք* ածանցներով կազմված այն բառերը, որոնք տոհմ, ազգակցություն, գերդաստան են ցույց տալիս, որոշիչ հոդ չեն ստանում:

	վերջավորությունը ստանում են սեռականում *-ու* մասնիկը ստացող գոյականները:
ԳՈՐԾԻԱԿԱՆ	Կազմվում է *-ով* կամ *-ք* վերջավորություններով՝ *գրքով, ուրախությամբ, շարժմամբ: -Ք* մասնիկով կարող է կազմվել *-ում* և *-ություն* վերջածանցներով գոյականների գործիականը: Բառավերջի *–ն* հնչյունը *–ք*-ից առաջ փոխվում է *մ*-ի՝ *մեծություն-մեծությամբ:*
ՆԵՐԳՈՅԱԿԱՆ	Կազմվում է *-ում* վերջավորությամբ՝ *քաղաքում, գրքում:* Մի շարք բառեր ներգոյական չունեն:

Ուղղական հոլովը գոյականի ուղիղ ելակետային ձևն է և ցույց է տալիս առարկան իր ողջ ծավալով: Ուղղական հոլովով դրվում են ենթական *(**Աշակերտը** նկարեց),* որոշիչը *(**Աշակերտ** Արամը վերադարձավ),* ստորոգելին *(Աշոտը **աշակերտ** է),* կոչականը *(-**Աշակերտնե՛ր,** գնացե՛ք դասարան).* կոչականը որոշիչ հոդ չի ստանում:

Սեռական հոլովը ցույց է տալիս վերաբերություն, պատկանելություն: Այս հոլովով են դրվում հատկացուցիչը *(**Աշակերտի** գրավոր աշխատանքն անսխալ էր)*, որոշիչը *(Խանութում վաճառվում էր **պապի** ժամացույց)*, դերբային կապվող կողմնակի ենթական *(Մինչև **արևի** ծագելը ճամփա ընկանք)*:

Տրական հոլովը ցույց է տալիս հանգում: Տրականով են դրվում հանգման խնդիրը *(Նրանք մոտեցան **քաղաքին**),* տարբեր պարագաներ *(Նա կվերադառնա **գարնանը**):*

Հայցական հոլովը հիմնականում ցույց է տալիս կրող առարկա: Այս հոլովով են դրվում ուղիղ խնդիրը *(Շինարարները նոր **շենք** կառուցեցին)*, տարբեր պարագաներ *(Նա գնաց **տուն**):* Անձ ցույց տվող բառերի հայցականը սովորաբար ձևով նման է տրականին, ոչ անձ ցույց տվողներինը՝ ուղղականին, ինչպես՝ *Տեսա **տղային:** Տեսա **նկարը**:*

Բացառական հոլովը ցույց է տալիս ծագում, բխում, սերում: Այս հոլովով են դրվում անջատման խնդիրը *(Տերևը պոկվեց **ծառից**)*, ներգործող խնդիրը *(Դուռը բացվեց **քամուց**),* վերաբերության խնդիրը *(Նրանք խոսում էին **գործերից**)*, տեղի պարագան *(Վարպետը ելավ **արհեստանոցից**),* պատճառի պարագան *(Նա կարմրեց **զայրույթից**)*, որոշիչը *(Տեսանք մի **քարից** տուն)* և այլն:

Գործիական հոլովը ցույց է տալիս միջոց, տեղ, ժամանակ: Այս հոլովով դրվում են միջոցի խնդիրը *(Այգեպանը փորում էր **բահով**),* տեղի պարագան *(Շարասյունը անցավ **փողոցով**),* ժամանակի պարագան *(Փրկարարները վերա-*

դարձան ***գիշերով****),* ձևի պարագան *(Նա* ***ուրախությամբ*** *համաձայնեց առաջարկին),* որոշիչը *(Խանութում* ***խնձորով*** *կարկանդակ էին վաճառում)* և այլն:

Ներգոյական հոլովը ցույց է տալիս տեղ, ժամանակ, չափ: Այս հոլովով դրվում են տեղի պարագան *(Նա ապրում է* ***քաղաքում****),* ժամանակի պարագան *(****Ընթացքում*** *պարզվեց),* չափի պարագան *(Հասանք մի* ***գիշերում****)* և այլն: Անձեր և ընդհանրապես շնչավորներ ցույց տվող գոյականները ներգոյական հոլով չունեն: Այդ իմաստն արտահայտվում է *սեռական+մեջ* կապակցությամբ՝ *մարդու մեջ, արջի մեջ:*

Այս բոլոր հոլովներով դրված բառերը կարող են ստանալ *–ս, -դ* հոդերը, իսկ *–ը, -ն* հոդերը կարող են ստանալ միայն ուղղական, տրական և հայցական հոլովներով բառերը:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Առանձին սյունակներով դո՛ւրս գրել յուրաքանչյուր հոլովով դրված գոյականները:**

Լորը մեր ժողովրդի սիրած թռչուններից է: Դեռևս միջին դարերում հայ[21] մանրանկարիչները այդ անմեղ ու գեղեցիկ թռչունին անմեռ գույներով նկարել են մագաղաթյա գրքերի լուսանցքներում և գլխազարդերի մեջ: Հիշատակենք 1280 թվականին Կիլիկիայում Պողոս գրչի ձեռքով գրված մի Ավետարանի ծաղկազարդ խորանը, որի վրա խոտերի և տերևների մեջ լորեր են կանգնած՝ կտուցները բացած կանչելիս: Մեր ժողովուրդը իր այդ սիրելի թռչնակի մասին տաղեր է հորինել ու երգել դարեդար:

Վախթանգ Անանյանի «Հայաստանի կենդանական աշխարհը» գրքից

Վարժություն 2: **Հոլովե՛լ *քաղաք, սենյակ, ծառուղի, թերակղզի* բառերը (եզակի և հոգնակի):**

Վարժություն 3: **Արտագրե՛լ նախադասությունները՝ փակագծերում տրված գոյականները անհրաժեշտ հոլովով, առումով և թվով գրելով համապատասխան տեղերում:**

1. Սարի …. երևում էին մոտակա …. բոլոր տները, իսկ ճերմակ …. մեջ նշմարվում էր մեկ այլ գյուղ: *(գյուղ, գագաթ, մշուշ)*

2. Ասֆալտապատ …. սլացող մեքենան կանգ առավ …. ցայտաղբյուրի մոտ, և …. ելավ վարորդը՝ մի ալեհեր մարդ: *(ճամփեզր, մեքենա, ճանապարհ)*

---

[21] *Հայ* բառն այս կիրառության մեջ ածականական արժեք ունի. տե՛ս Էդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, էջ 810:

3. Մեր շուրջը սփռված .... երևում էին աշխատող ...., որոնք երբեմն .... ուղղում էին մեր կողմը: *(հայացք, դաշտ, մարդ)*

4. Այդ հինավուրց .... արժեքավոր .... կային, որոնք խիստ հետաքրքրեցին .... մասնակցող մասնագետներին: *(տեղեկություն, ձեռագիր, գիտաժողով)*

5. Ամբողջ .... աշխատած .... գործն ավարտել էր, և հիմա .... նայում էր իր աշխատանքի արդյունքին: *(գոհունակություն, վարպետ, օր)*

6. Գեղարվեստական նոր ֆիլմի .... ավարտվել էր, և .... խումբ-խումբ ելնում էին ....: *(հանդիսատես, դահլիճ, ցուցադրում)*

7. Նրա աշխատանքի .... մոտ գտնվող .... վերջերս նոր խանութ է բացվել, որտեղ վաճառվում են բազմազան ....: *(իր, փողոց, վայր)*

8. Աստղերը մեկ-մեկ մարում էին ...., փչում էր վաղորդյան սառը ...., և լիճը, թեթև ծփանքով արթնանում էր ուշ .... երկար գիշերվա նիրհից: *(քամի, երկինք, աշուն)*

9. Երկրորդ .... ավագը բերել էր հաջորդ .... հարցաշարը, և տարբեր շարքերում նստած ուսանողները .... որոնում էին հարցերին վերաբերող թեմաները և տետրում նշում էջերը: *(քննության, դասագիրք, կուրս)*

10. Վերջերս կազմակերպված .... մասնակցեցին արվեստի .... սովորող շատ երեխաներ, որոնց աշխատանքներն արժանացան տարբեր ....: *(մրցույթ, մրցանակ, դպրոց)*

4.Գոյականի հոլովումները

Գոյականի սեռական հոլովը կազմվում է տարբեր թեքույթներով: Ըստ դրանց՝ առանձնացվում են տարբեր հոլովումներ: Ժամանակակից հայերենում կա 8 հոլովում՝ *-ի, -ու, -վա, -ան, -ոջ, -ց, -ա-, -ո-:* Հոլովումները լինում են *արտաքին* և *ներքին*: Արտաքին թեքման դեպքում մասնիկն ավելանում է բառի վերջից, իսկ ներքին թեքման դեպքում փոփոխությունը կատարվում է բառի մեջ: Արտաքին են *-ի, -ու, -վա, -ան, -ոջ, -ց* հոլովումները, իսկ *-ա-, -ո-* հոլովումները ներքին են:

Ի հոլովմանը պատկանող բառերի թիվը շատ մեծ է՝ *սեղանի, գրքի, ծաղկի, տետրի* և այլն: Պետք է հիշել, որ բացի *-ց* հոլովմանը պատկանող բառերից՝ մյուս բոլոր գոյականների հոգնակիի ձևերը նույնպես հոլովվում են *-ի*-ով, օրինակ՝ *լեռան,* բայց *լեռների, ընկերոջ-ընկերների, օրվա-օրերի:* Գոյականի հոլովումը որոշվում է ըստ եզակի սեռական հոլովի:

Ու հոլովմանը պատկանում է *ի*-ով ավարտվող բառերի մեծ մասը (օրինակ՝ *բարդի-բարդու, գինի-գինու*), հետևյալ բառերը՝ *ամուսին, անկողին, Աստված, մարդ, ձի* (հազվադեպ՝ *թի, դի*), ինչպես նաև անորոշ դերբայը (օրինակ՝ *գրել-*

գրելու, կարդալ-կարդալու, վազել-վազելու): Ինչպես տեսնում ենք, կա կազմության երկու ձև՝ *ի-ու (այգի-այգու)* կամ *0-ու (մարդ-մարդու):*

ՎԱ հոլովմանը պատկանում է ժամանակ ցույց տվող գոյականների մի մասը, օրինակ՝ *տարի-տարվա, օր-օրվա, ամիս-ամսվա, շաբաթ-շաբաթվա* և այլն: Սակայն ժամանակ ցույց տվող մի շարք բառեր այս հոլովմանը չեն պատկանում՝ *րոպե, դար, վայրկյան, երեկո* բառերը, ամսանունները և այլն: Շաբաթ բառը հոլովվում է *վա*-ով, եթե արտահայտում է ամբողջ շաբաթվա՝ 7 օրվա իմաստ, այլ ոչ թե շաբաթ օրվա:

ԱՆ հոլովմանը պատկանում է գրաբարում *-ն* վերջնահնչյունն ունեցած բառերի մի մասը՝ *մկան, ձկան, դռան, լեռան, թոռան, բեռան, ծոռան, եզան, գառան, նռան* և այլն, ինչպես նաև *-ում* վերջածանցով կազմված բառերը, օրինակ՝ *շարժում-շարժման, ուսման, մոտեցման, զեկուցման*: Այս հոլովմամբ են հոլովվում նաև *մանուկ* (եթե անձնանուն չէ), *գարուն, աշուն, ամառ, ձմեռ* բառերը՝ *գարնան, աշնան, ամռան, ձմռան,* թեև գործածական են նաև *ամառվա* և *ձմեռվա* ձևերը:

ՈՋ հոլովման պատկանում են անձ ցույց տվող մի քանի բառեր՝ *ընկեր, քույր, կին, տեր, սկեսուր, աներ* և այլն: Սրանց մի մասը կարող է հոլովվել նաև *-ի*-ով:

Ց հոլովման պատկանում են *-անք, -ենք, -ոնք, -ունք* ածանցներով կազմված այն բառերը, որոնք տոհմ, ազգակցություն, գերդաստան են ցույց տալիս, ինչպես՝ *Գրիգորենք-Գրիգորենց, Վարդանանք-Վարդանանց, մերոնք-մերոնց, Վեդունք-Վեդունց* և այլն: Այսպես են հոլովվում նաև *մարդիկ, կանայք* և *տիկնայք* հոգ-նակիները՝ *մարդկանց, կանանց, տիկնանց:*

Ո հոլովման պատկանում են *հայր, մայր, եղբայր* և նրանցով կազմված այն բառերը, որոնցում նրանք վերջին բաղադրիչ են (օրինակ՝ *հորեղբայր, նախա-հայր*): Այս հոլովումը ներքին է, որովհետև փոփոխությունը կատարվում է բառի ներսում:

Ա հոլովման պատկանում են *-ություն* վերջածանցով կազմված բառերը (օրինակ՝ *մեծություն-մեծության, ընկերության, գեղեցկության*), ինչպես նաև *տուն, շուն, սյուն, ձյուն, արյուն, անկյուն, անուն* բառերը: *Անկյուն* բառը հիմնականում այսպես է հոլովվում, երբ երկրաչափական հասկացություն է (օրինակ՝ *Որոշել տրված սուր անկյան աստիճանը*), իսկ մյուս դեպքերում սովորաբար հոլովվում է *ի*-ով (օրինակ՝ *Սենյակի անկյունի մոտ կախված նկարը գեղեցիկ էր*): Հոլովման ժամանակ *անուն* բառում կատարվում է *ու-վ* հնչյունափոխություն՝ *անուն-անուան-անվան:*

Այլաձև հոլովում: Ընդհանուր հոլովումից շեղվում են մի քանի բառեր, որոնք ունեն այլաձև հոլովում՝ *աղջիկ-աղջկա* (*-ա* արտաքին հոլովում), *սեր-սիրո* (*-ո*

արտաքին հոլովում), *մահ-մահվան* (*-վան* արտաքին հոլովում), *դուստր-դստեր, կայսր-կայսեր* (*-ե* ներքին հոլովում): *Դուստր* և *կայսր* բառերը կարող են հոլովվել նաև *-ի*-ով: *Սեր* բառի հոդավոր տրականը լինում է *սիրուն:* Սրանցից բացի՝ կան նաև այլ ձևեր, որոնք, սակայն, հնացած են և գործածվում են միայն որոշ քարացած կապակցություններում, ինչպես՝ *հուսո, լուսո, սգո, պատվո* (*-ո* արտաքին), *ծննդյան, հանգստյան, գալստյան, կորստյան* (*-յան* հոլովում): Սովորաբար այս բառերը հոլովվում են *ի*-ով:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գոյականները խմբավորել ըստ հոլովումների:**

Սենյակ, տուն, քաղաք, այգի, օր, գեղեցկություն, լեռ, քույր, դուռ, փողոց, բեռ, գիրք, ամիս, լուսամուտ, ձյուն, ընկեր, ուսում, աշուն, գրիչ, շուն, ձուկ, բարդի, խաղող, զարգացում, դիմում, խնձորենի:

Վարժություն 2: **Գտնե՛լ, թե որ շարքերի բոլոր բառերն են պատկանում *ան* հոլովման:**

1. լեռ, մոտեցում, թվարկում, գառ
2. տրոհում, դուռ, մեծություն, փորձարկում
3. մուկ, ձուկ, նուռ, շուն
4. մանուկ, գարուն, աշուն, լեռ
5. լրացում, անուն, թոռ, բեռ

ՀԱՏՈՒԿ ԵՎ ՀԱՍԱՐԱԿ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

Համեմատենք հետևյալ նախադասությունները. *Նա բնակվում է քաղաքում: Նա բնակվում է Երևանում:* Առաջին նախադասության մեջ գործածված է *քաղաք* բառը, որն ընդհանուր անվանում է, այսինքն՝ պարզ չէ, թե նա որ քաղաքում է բնակվում, իսկ երկրորդ նախադասության մեջ արդեն գործածված է քաղաքի անվանումը՝ *Երևան:* Անվանումը տրվում է միատեսակ առարկաներն իրարից զանազանելու համար: Այսինքն՝ կան առարկան ընդհանուր ձևով նշող գոյականներ և առարկաների կոնկրետ անվանումներ: Այս հիմունքով էլ առանձնացվում են հատուկ և հասարակ գոյականները: Միատեսակ առարկաներին տրվող ընդհանուր անվանումը կոչվում է *հասարակ անուն:* Օրինակ՝ *քաղաք, գետ, աշակերտ, մարդ, լիճ:* Միատեսակ առարկաներից յուրաքանչյուրին տրվող կոնկրետ անունը կոչվում է *հատուկ անուն,* օրինակ՝ *Երևան, Գյումրի, Վանաձոր, Գևորգ, Վարդան,*

Սևան, Արագած: Հատուկ անուններ են անձնանունները, բնակավայրերի անվանումները, տեղանունները, զանազան հիմնակների, կազմակերպությունների անվանումները և այլն:

Հատուկ և հասարակ անունների քերականական տարբերությունն այն է, որ հատուկ անունները հիմնականում հոգնակի թիվ չեն ունենում: Միայն մի քանի դեպքերում է հնարավոր հատուկ անունների հոգնակի գործածությունը. ա) երբ դրանք նշում են միևնույն հատուկ անունն ունեցող մեկից ավելի անձեր կամ առարկաներ, օրինակ՝ *Նախարարներն էին՝ իրենց համհարզներով՝ Վարդանը, Ամատունին և Արտակները՝ Ռշտունի ու Մոկաց* (Դերենիկ Դեմիրճյան). բ) երբ, հոգնակի դառնալով, նշում են որևէ հատուկ անվան բնորոշ հատկանիշը՝ վերածվելով հասարակ անվան, օրինակ՝ *Մրցույթում հաղթած այս մանուկները գուցե մեր ապագայի սարյաններն են* (այսինքն՝ աշխարհահռչակ Մարտիրոս Սարյանի նման մեծ նկարիչները). գ) երբ նշում են ընտանիքի, գերդաստանի, տոհմի անդամներ, օրինակ՝ *Հարությունյանները մեծ խնջույք էին կազմակերպել:*

Հատուկ անունները գրվում են մեծատառով: Սովորաբար *արև (արեգակ), երկիր, լուսին, գալակտիկա* բառերը գրվում են փոքրատառով: Դրանք մեծատառով գրվում են որպես աստղագիտական տերմիններ գործածվելիս: Համեմատենք հետևյալ նախադասությունները. *Ամպերի տակից ելավ լուսինը: Մեր Երկիր մոլորակի միակ բնական արբանյակը Լուսինն է:*

ԲԱՂԱԴՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հատուկ գոյականներն ըստ կազմության լինում են պարզ և բաղադրյալ: Պարզ են մեկ բառից կազմված հատուկ անունները՝ *Արտաշատ, Գյումրի, Սպիտակ, Գորիս* և այլն: Բաղադրյալ են մեկից ավելի բառերից կազմված հատուկ անունները՝ *Հայաստանի Հանրապետություն, Սևանա լիճ, Արագած լեռ* և այլն:

Պարզ հատուկ գոյականների առաջին տառը գրվում է մեծատառ, իսկ բաղադրյալ հատուկ անունների գրության դեպքում գործում է երկու սկզբունք. Բոլոր բառերն են գրվում մեծատառ, կամ միայն առաջին բառն է գրվում մեծատառ:

Բաղադրյալ հատուկ անունները գրության համար կան մի շարք կանոններ[22]:

[22] Բաղադրյալ հատուկ անունների գրության կանոնները ներկայացվում են ըստ Հ. Բարսեղյանի կազմած նախագծի, որը հաստատվել է ՀՀ ԿԳ նախարարի 2003 թ. հունվարի 14-ի հ. 18 հրամանով: Զետեղված է «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուում», Երևան, «9-րդ հրաշալիք» հրատ., 2006, էջ 286-294:

1.Բոլոր բառերն սկսել մեծատառով.

Ա. Բոլոր պետությունների պաշտոնական բաղադրյալ հատուկ անուններում.

Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Արաբական Միացյալ Ամիրայություններ, Աֆղանստանի Իսլամական Պետություն, Բելառուսի Հանրապետություն, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (նախկինում՝ Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետություն և Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն), Հայաստանի Հանրապետություն (նախկինում՝ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն), Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Ռուսաստանի Դաշնություն (այսպես նաև՝ Ռուսաստանի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն և Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն), Օսեթ-Ալանիայի Հանրապետություն և այլն:

Ծանոթություն: *Պետությունների պատմական անուններում (*պետություն, ամիրայություն, թագավորություն, կայսրություն, խանություն, մելիքություն *և այլն) մեծատառ է գրվում բաղադրյալ անվան միայն առաջին բաղադիրչը (տե՛ս իր տեղում):*

Բ. Բոլոր բաղադրյալ այն անձնանուններում և մականուններում ու ծածկանուններում, որոնց մեջ՝

ա) բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին հատուկ անուն են. օրինակ՝ Ալեքսանդր Սերգեևիչ Պուշկին, Ալեքսանդր Ստեփանի Թևոսյան (Ակսել Բակունց), Եղիշե Աբգարի Սողոմոնյան (Եղիշե Չարենց), Խոսե Ռաուլ Կապաբլանկա, Կիմ Իր Սեն, Հո Շի Մին, Մաո Ցզեդուն, Մելիք-Հակոբյան Հակոբ Մելիք-Միրզայի (Ռաֆֆի), Նիկոլայ Անդրեևիչ Ռիմսկի-Կորսակով, Ջորջ Նոել Գորդոն Բայրոն, *այսպես նաև*՝ Գամառ-Քաթիպա, Նար-Դոս, Սայաթ-Նովա *և այլն.*

բ) լրացյալը հատուկ անուն է, իսկ լրացումը (նախադաս թե հետադաս)՝ *մականուն. օրինակ*՝ Աշոտ Երկաթ, Արա Գեղեցիկ, Գայոս Սեկունդոս, Դավիթ Անհաղթ, Իվան Ահեղ, Մխիթար Սպարապետ, Պետրոս Առաջին, Պլինիոս Ավագ, Ջորջ Բուշ Կրտսեր, Սահակ Պարթև, Տիգրան Մեծ, Անանիա Շիրակացի, Ներսես Աշտարակեցի, Սողոմոն Իմաստուն, Հայկ Նահապետ, *այսպես նաև*՝ Առյուծաձև Միեր, Գայլ Վահան, Ձախորդ Փանոս, Ձենով Օհան, Մայր Թերեզա, Քաջ Նազար, Անբան Հուռի, Միկիտան Սաքո *և այլն:*

Գ. Բոլոր բաղադրյալ այն աշխարհագրական անուններում, որոնց մեջ՝

ա) բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին հատուկ անուն են. օրինակ՝ Անի-Կամախ, Արփա-Սևան, Բաղք-Քաշունիք, Դոնի Ռոստով, Էլզաս-Լոթարինգիա, Խութ-Բռնաշեն, Մայնի Ֆրանկֆուրտ, Վան-Տոսպ, Վոլգա-Դոն *և այլն.*

բ) հասարակ անուն լրացումը նախադաս է, իսկ հատուկ անուն լրացյալը՝ հետադաս. օրինակ՝ Արևելյան Եփրատ, Արևմտյան Բեռլին, Բարձր Հայք, Կենտրոնական Աֆրիկա, Հարավային Ամերիկա, Մեծ Մասիս, Նոր Արեշ, Փոքր Ասիա, Ներքին Թալին, Վերին Արտաշատ, *այսպես նաև՝* Հին Հունաստան, Հին Հռոմ *և այլն.*

գ) լրացումն ու լրացյալը օտարալեզու, բոլոր բաղադրիչները մեծատառով գրվող (վերոհիշյալ որևէ տեսակի) անուններ են. օրինակ՝ Ադիս Աբեբա, Ալմա Աթա (այժմ՝ Ալմաթի), Բուենոս Այրես, Իսիկ Կուլ, Խալխին Գոլ, Կրիվոյ Ռոգ, Ղարա Բողազ Գյոլ, Մատոչկին Շար, Մինեռալնիե Վոդի, Յասնայա Պոլյանա, Նիժնի Նովգորոդ, Նյու Յորք, Սան Ֆրանցիսկո *և այլն.*

դ) երկու բաղադրիչներն էլ հասարակ անուններ են (առաջինը՝ նաև հատուկ), բայց պայմանական կամ փոխաբերական գործածությամբ դառնում են հատուկ անվան բաղադրիչ և գրվում մեծատառ. օրինակ՝ Ծիր Կաթին (աստղակույտ), Նոր Երկիր, Հեռավոր Արևելք, Հին Արևելք, Մերձավոր Արևելք (երկրամասեր), Հայկական Պար (լեռնաշղթա), Մեծ Արջ, Փոքր Արջ (համաստեղություններ): *Այսպես նաև՝ հատուկ անվան և նրան հաջորդող պայմանական գործածության անվան բաղադրություններում. օրինակ՝* Աֆրիկայի Եղջյուր (թերակղզի), Վիեննայի Անտառ (լեռնազանգված), Բերենիկեի Վարսեր (համաստեղություն) և այլն:

Դ. Հոգևոր-պատմամշակութային այն բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին կամ «Սուրբ» մականվան հետ միասին հատուկ անուն են. *օրինակ՝* Անգղա Սուրբ Նշան, Արգյազի Սուրբ Ստեփանոս Նախավկա, Դարաշամբի Սուրբ Ստեփանոս, Ընծայից Սուրբ Աստվածածին, Մաստարայի Սուրբ Հովհաննես, Մուղնու Սուրբ Գևորգ, Վասպուրականի Մոկաց Սուրբ Մինաս, *կամ նաև՝* Սուրբ Նշան, Սուրբ Ստեփանոս Նախավկա, Սուրբ Աստվածածին, Սուրբ Հովհաննես, Սուրբ Գևորգ, Սուրբ Մինաս (վանք, եկեղեցի):

Ծանոթություն 1: *Հայերեն թե օտարալեզու բաղադրյալ անձնանուններում և աշխարհագրական անուններում գործածված միջադաս և վերջադաս մեկնական-լրացական բառերն ու քերականական-վերաբերական նշանակության բառմասնիկները (նախդիր, հոդ, կապ, շաղկապ), ինչպես այլ լեզուներում, այնպես էլ հայերենում, գրվում են փոքրատառ. օրինակ՝* Աբդ էլ Քերիմ, Անդրեա դել Սարտո, Անդրեա դըլլա Ռոբիա, Բոդուեն դե Կուրտենե, Ժաննա դ'Արկ, Լեոնարդո դա Վինչի,

Հարուն ալ Ռաշիդ, Միրզա Մելքում խան (Հովսեփ Մելքոնյան), Միրզո Թուրսուն-զադե, Մուքիմի Մուհամադ Ամին խոջա, Նուր ադ դին ալ Հալաբի, Շարլ դը Գոլ, Վիլհելմ ֆոն Հումբոլդտ, Օմար Խայամ Ղիասսադդին Աբու-լ-Ֆաթհ իբն Իբրահիմ, Մահարի Աբու-լ-Ալա, Ադրիան վան Օստադե, Մուհամեդ Սուլեյման օղլի Ֆիզուլի (Ֆուզուլի). *այսպես նաև աշխարհագրական բաղադրյալ անուններում՝* Անտիոք առ Եփրատավ, Անտիոք առ Տավրոսիվ, Իլ դը Ֆրանս (պատմական մարզ Ֆրանսիայում), Մեծ կամ Խաղաղ օվկիանոս, Նահր էլ Արդեն (Հորդանան գետի արաբերեն անվանումը), Ռիո դե Ժանեյրո (քաղաք), Սան Պիեռ և Միքելոն (կղզեխումբ), Տուլլա դե Համդոն, Տալլ իբն Համտուն (Թիլ Համտուն բերդավանի ֆրանսերեն և արաբերեն անվանումները), Ջաբալ ալ Հարիթ (Արարադի՝ Ջուդի լեռան արաբերեն անվանումը) *և այլն:*

Սակայն բաղադրյալ հատուկ անվան սկզբում կամ նախադաս դիրքում (թե՛ հայերենում, թե՛ այլ լեզուներում) այդ կարգի մեկնական-լրացական բառերն ու կապակցական բառ-մասնիկները գրվում են մեծատառ. օրինակ՝ Իբն էլ Ֆաքի, Լա Կրոզ Մաթյուրեն Վեյսիե, Լա Վալե Տուսեն Շառլ Ժան, Վան Գոգ Վինսենտ, Վան Դեյք Անտոնիս, Օ'Ռիոռդան Մայքլ, Օ'Նեյլ (Օ'Նիլ) Յուջին, **այս-պես նաև՝ աշխարհագրական անուններում՝** Լա Մանշ (նեղուց), Լա Պլատա (քաղաք), Լե Կրեզո (քաղաք), Սեն Գոթարդի (լեռնանցք), Սեն Պիեռ (նավա-հանգիստ) **և այլն:**

Ծանոթություն 2: *Հատուկ անձնանվան զբաղմունքը, մասնագիտությունը, պաշտոնը (բանաստեղծ, վիպասան, նկարիչ, երգիչ, ուսուցիչ, երկրագործ, կոշկակար, թագավոր և այլն) և տեղանվան տեսակը (գետ, լիճ, ծով, լեռ, դաշտ, գյուղ, քաղաք և այլն) որոշող հիմնաբառերը, բոլոր բառերը մեծատառով գրվող հատուկ անունների հետ գործածվելիս գրվում են փոքրատառ. օրինակ՝* Աշոտ Երկաթ թագավորը, Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը, Դերենիկ Դեմիրճյան վիպասանը, Եղիշե Չարենց բանաստեղծը, Մարտիրոս Սարյան նկարիչը, Անի-Կամախ քաղաքը, Արփա-Սևան ջրատարը, Արևմտյան Եփրատ գետը, Բարձր Հայք աշխարհը, Խալխին Գոլ լիճը, Հայկական Պար լեռնաշղթան, Մեծ Մասիս լեռը, Մաստարայի Սուրբ Հովհաննես եկեղեցին, Վասպուրականի Մոկաց Սուրբ Մինաս վանքը *և այլն:*

2. Միայն առաջին բառն սկսել մեծատառով (դրանց կազմում հատուկ անուն լինելու դեպքում պահպանելով նաև այդ անվան մեծատառով գրությունը).

Ա. Ֆիզիկաաշխարհագրական այն բաղադրյալ հատուկ անուններում, որոնց մեջ լրացյալը, առանձին վերցված, հատուկ անուն չէ. Աղթամար կղզի, Արայի լեռ, Արարատյան դաշտ, Բաղակի քար (բերդ-ամրոց), Գեղամա լեռներ, Լոռու հրաբխային բարձրավանդակ, Կասպից (Վրկանա) ծով, Կովկասի լեռնաշղթա, Հիմալայան լեռներ, Հրազդանի ձոր, Հյուսիսային սառուցյալ օվկիանոս (կամ՝ Սառուցյալ օվկիանոս), Մեծ կամ Խաղաղ օվկիանոս (կամ՝

Խաղաղ օվկիանոս), Որոտանի լեռնանցք, Պարսից ծոց, Սև ծով, Սևանա լիճ, Տրդատի թախտ (բերդավան, դաստակերտ), Ուրմիա (Կապուտան) լիճ **և այլն:**

Ծանոթություն: *Այս կարգի աշխարհագրական բաղադրյալ հատուկ անունները գրաբարում ունեն այլ շարադասություն, որի հետևանքով հասարակ անուն լրացյալները լինում են նախադաս և նույնպես գրվում են մեծատառ. այն է՝* Աթոռ Անահտա(յ), Դուռն Անտիոքա(յ), Քարն Բաղակու, Թախտ Տրդատա(յ) և այլն:

Բ. Պետությունների վարչատարածքային հին ու նոր այն անվանումներում, որոնց մեջ լրացյալը, առանձին վերցված, հատուկ անուն չէ.

Արագածոտնի մարզ, Վայոց ձորի մարզ, Տամբովի մարզ, Լոռի վոյեվոդություն, Կրակովի վոյեվոդություն, Վանի նահանգ, Փենսիլվանիայի նահանգ, Մասյացոտն գավառ, Մուշի գավառ, Կրասնոյարսկի երկրամաս, Ստավրոպոլի երկրամաս, Լանկաշիրի կոմսություն, Քենտի կոմսություն, Հոկայդոյի պրեֆեկտուրա, **այսպես նաև՝ պետությունների, ավատական (ֆեոդալական) ինքնավոր իշխանությունների պատմական անվանումներում՝** Կիլիկիայի հայկական պետություն (**կամ** թագավորություն), Կարսի թագավորություն, Սյունիքի թագավորություն, Վասպուրականի թագավորություն (**բայց նաև՝** Կարսի Բագրատունիների թագավորություն, Վասպուրականի Արծրունյաց թագավորություն), Բյուզանդական կայսրություն, Հռոմեական կայսրություն, Խամսայի մելիքություն, Հուլիսյան միապետություն, Հայաստանի առաջին հանրապետություն **կամ** Առաջին հանրապետություն, Ֆրանսիայի հինգերորդ հանրապետություն **կամ** Հինգերորդ հանրապետություն **և այլն:**

Գ. Պետությունների խմբերի (դաշինքների, միավորումների) այն անուններում, որոնց մեջ լրացյալը (նաև սրան նախորդող միջադաս բաղադրիչը), առանձին վերված, հատուկ անուն չէ.

Արաբական պետությունների լիգա, Երեք կայսրերի դաշինք, Եռյակ դաշինք, Սրբազան դաշինք, Նավթ արտահանող երկրների կազմակերպություն, Բրիտանիայի ազգերի համագործակցություն (**բայց՝** Անկախ Պետությունների Համագործակցություն) **և այլն:**

Դ. Չակերտների մեջ առնվող անուններում.

ա) գրական, գիտական, արվեստի և այլ երկերի ու ստեղծագործությունների, լրագրերի, պարբերականների բաղադրյալ անուններ՝

«Պատերազմ և խաղաղություն», «Հացի խնդիր», «Իններորդ ալիք», «Ամբոխները խելագարված», «Գրական թերթ», «Հայկական բանակ» (ամսագիր), «Հայոց աշխարհ» (թերթ), «Իմ ընկեր Նեսոն», «Մենք ենք, մեր սարերը», «Մամուլի

տեսություն» հեռուստածրագիր, «Հողի արյուն» (գինի), «Անհաղթ աքլոր» (կոնֆետ), «Արգումենտի ի ֆակտի» շաբաթաթերթ, «Ռեսպուբլիկա Արմենիա» *և այլն.*

բ) հիմնարկներին, կուսակցություններին, կազմակերպություններին և զանազան այլ հաստատություններին ու առարկաներին (տարբերանշաններ, շքանշաններ և այլն) տրվող բաղադրյալ անուններ՝

«Մուրճ և մանգաղ» գործարան, «Նաիրիտ» գործարան, «Ազգային միաբանություն» կուսակցություն, «Հանրապետություն» կուսակցություն, «Հզոր հայրենիք» կուսակցություն, «Հող և ազատություն» կուսակցություն, «Միացյալ Հայաստան» կուսակցություն, «Միություն և առաջադիմություն» կուսակցություն, «Օրինաց երկիր» կուսակցություն, «Ռադիկալ ժողովրդավարական կուսակցություն» (Գերմանիայում) (*բայց նաև՝* Գերմանիայի սոցիալ-ժողովրդավարական կուսակցություն, Ավստրալիայի լեյբորիստական կուսակցություն, Ճապոնիայի ազատական-ժողովրդավարական կուսակցություն, Հայաստանի ժողովրդական կուսակցություն, Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցություն), «Աշխատանք», «Դինամո», «Սպարտակ» (մարզական ընկերություններ), «Զինվորի մայր» կազմակերպություն, «Պատվո նշան» շքանշան, «Մարտական ծառայությունների համար» մեդալ, «Մայրական փառք» շքանշան, «Գերազանցիկ ֆինանսիստ» կրծքանշան *և այլն:*

Ե. Համաշխարհային կամ համապետական ճանաչման հաստատության, մրցանակի կամ բարձրագույն պատվավոր կոչման, ինչպես նաև պետություններից շնորհվող շքանշանների և մեդալների բաղադրյալ անուններում.

(Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան) Մատենադարան, (ՀՀ) Գիտությունների ազգային ակադեմիա, Նոբելյան մրցանակ, ԽՍՀՄ Լենինյան մրցանակ, ՀԽՍՀ Պետական մրցանակ, Հայաստանի Ազգային հերոս, Հերոսուհի մայր, *այսպես նաև՝* Հայրենիքի շքանշան, Կարմիր դրոշի շքանշան, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան, Հայրենական պատերազմի առաջին աստիճանի շքանշան, Կարմիր աստղի շքանշան, Մարտական խաչի երկրորդ աստիճանի շքանշան, Արիության մեդալ, Պատվո լեգեոնի շքանշան (*բայց նաև՝* Անանիա Շիրակացու մեդալ, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի շքանշան, Սուրբ Գեորգի խաչ շքանշան) *և այլն:*

Զ. Համաշխարհային կազմակերպությունների, միությունների, հաստատությունների, եզակի քաղաքական, արհմիութենական և հասարակական մարմինների ընդարձակ և համառոտ բաղադրյալ անուններում.

Միավորված ազգերի կազմակերպություն, Անվտանգության խորհուրդ, Խաղաղության համաշխարհային խորհուրդ, Արհեստակցական միությունների

համաշխարհային ֆեդերացիա, Շախմատի միջազգային ֆեդերացիա, Ազգերի լիգա *և այլն:*

Է. Բոլոր պետությունների կենտրոնական ղեկավոր օրենսդիր, գործադիր և դատական բարձրագույն մարմինների բաղադրյալ անուններում.

ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների *պալատ* և Սենատ, Բուլղարիայի Հանրապետության Ժողովրդական *ժողով* և Նախարարների *խորհուրդ,* Լեհաստանի Հանրապետության Սեյմ, Հայաստանի Հանրապետության Ազգային *ժողով* և Կառավարություն, ՀՀ Վճռաբեկ *դատարան* և Սահմանադրական *դատարան,* Մեծ Բրիտանիայի Պառլամենտի Համայնքների *պալատ* և Լորդերի *պալատ,* (ԱՄՆ, ՌԴ) Գերագույն *դատարան,* Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Ժողովրդական ներկայացուցիչների *համաչինական ժողովի* Մշտական կոմիտե, ՉԺՀ Պետական *խորհուրդ,* Ռուսաստանի Դաշնության Պետդումա (Պետական *դումա* կամ Դուման), ՌԴ Կառավարություն, Ֆրանսիայի Ազգային *ժողով* և այլն:

Ծանոթություն: *Պաշտոնական փաստաթղթերում և հաղորդագրություններում մեծատառով գրվող* Պառլամենտ, Կոնգրես, Սենատ, Սեյմ, Մեջլիս, Դուման, Ռադա, Խուրալ, *հայերեն՝* Կառավարություն *և այլ անունները՝ իբրև պետական կենտրոնական ղեկավարի մարմնի տեսակ անվանող բառեր գործածվելիս գրվում են փոքրատառ և մտնում են բառարան՝ որպես հասարակ անուն:*

Ը. Պատմահասարակական նշանավոր անցքերի ու շրջափուլերի և պաշտոնական ու ազգային-ավանդական տոների անուններում.

ա) պատմահասարակական նշանավոր անցքեր՝

Առաջին համաշխարհային պատերազմ (Առաջին աշխարհամարտ), Երկրորդ համաշխարհային պատերազմ (Երկրորդ աշխարհամարտ), Դիմադրության շարժում, Երեսնամյա պատերազմ, Թոնդրակյան շարժում, (հայկական) Մեծ եղեռն, Հայրենական մեծ պատերազմ (Մեծ Հայրենական), Հարյուրամյա պատերազմ, Հյուսիսային պատերազմ, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխություն, Ռուսաստանի 1812 թ. Հայրենական պատերազմ, 1920 թ. Մայիսյան ապստամբություն, Յոթնամյա պատերազմ, 1917 թ. Փետրվարյան հեղափոխություն, 1848 թ. Ֆրանսիական բուրժուադեմոկրատական հեղափոխություն, 1789-1794 թթ. Ֆրանսիական մեծ հեղափոխություն, Գրիգորյան տոմար, Հուլյան տոմար *և այլն.*

բ) պետական-պաշտոնական և միջազգային տոներ՝

Թարգմանչաց տոն, Հաղթանակի տոն, Մայիսի մեկ, Ապրիլի յոթ (Մայրության և գեղեցկության տոն), Մարտի ութ (Կանանց միջազգային օր), Նոր տարի կամ Ամանոր, Անկախության օր, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Ռազմաօդային ուժերի օր, Սահմանադրության օր, Երկաթուղայինի օր *և այլն.*

գ) եկեղեցական-ծիսական և ժողովրդական, ավանդական դարձած տոներ՝

Քրիստոսի հարության կամ պայծառակերպության տոն, Սուրբ ծննդի տոն (Սուրբ ծնունդ), Տյառնընդառաջի տոն, ինչպես նաև՝ Կանաչ կիրակի, Կարմիր կիրակի, Մեծ պաս (տոն օրեր), Զատկի տոն (Զատիկ), Ծաղկազարդի տոն (Ծաղկազարդ), Համբարձման տոն (Համբարձում), Ջրօրհնեքի տոն (Ջրօրհնեք), Վարդավառի տոն (Վարդավառ) *և այլն:*

3. Դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերի ու հաղորդագրությունների մեջ, Հայոց եկեղեցու պաշտոնական լեզվում, հեղինակային վերաբերմունքի՝ քաղաքավարական և մեծարման ոճերում թույլատրվում է մեծատառի ազատ գործածություն՝ ըստ ընդունված կարգի:

4. Վերոհիշյալ կանոնների մեջ չմտնող բաղադրյալ անվանումները, եթե չեն տեղայնացված, որպես հասարակ անուններ գրել փոքրատառով.

(ՀՀ) արտաքին գործերի նախարարություն, գիտության և կրթության նախարարություն, պետական գիտատնտեսական խորհուրդ, գազի արդյունաբերության գլխավոր վարչություն, լեզվի պետական տեսչություն, գլխավոր դատախազություն, ռազմածովային ուժեր, գրողների միություն, նկարիչների միություն, արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդ, երիտասարդության միություն, մարզական ընկերությունների և կազմակերպությունների միություն, պետական համալսարան, բժշկական համալսարան, պետական հումանիտար քոլեջ, կաուչուկի գործարան, քաղաքային դեպարտամենտ, ազգային գրադարան, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն, հայկական երգի-պարի վաստակավոր անսամբլ, պատմության պետական թանգարան:

Այսպես են գրվում կուսակցությունների՝ չակերտներում չառնվող բաղադրյալ անունները. օրինակ՝ կոմունիստական կուսակցություն, բանվորական կուսակցություն, դեմոկրատական կուսակցություն, սոցիալիստական միասնական կուսակցություն, լեյբորիստական կուսակցություն, քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցություն: *Այսպես են գրվում նաև պետական, զինվորական, գիտական պաշտոնների, պատվավոր և այլ կոչումների բաղադրյալ անունները. օրինակ՝* գերագույն գլխավոր հրամանատար, գլխավոր դատախազ, ավիացիայի մարշալ, ժողովրդական արտիստ, գիտության վաստակավոր գործիչ, վաստակավոր ուսուցիչ, վաստակավոր շինարար, *այսպես նաև՝* հանրապետության նախագահ, կուսակցության կենտկոմի քարտուղար, երկրի վարչապետ *և այլն:*

Ծանոթություն: *Եթե բաղադրյալ անվան վերադիր ածականը տեղայնացնող կամ մասնավորող նշանակություն ունի և օտարաբանությամբ գործածված է տեղանվան*

սեռական հոլովի իմաստով ու կարող է փոխարինվել այդ ձևով, գրվում է մեծատառով. օրինակ՝ Լեհական (*փոխանակ՝* Լեհաստանի) միացյալ բանվորական կուսակցություն, Հայ (Հայկական *կամ* Հայաստանի) ռամկավար ազատական կուսակցություն, *այսպես նաև՝* Երևանյան լիճ, Թբիլիսյան խճուղի, Կիևյան փողոց *և այլն:*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Արտագրե՛լ՝ մեծատառերը թողնելով ըստ անհրաժեշտության:**

1. ՓՈՔՐ ԾԱՌ Է ՍՈՎՈՐԱԿԱՆ ՆՇԵՆԻՆ. ՀԱՋԻՎ ՀԱՄՆՈՒՄ Է 4-8 Մ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ, 10-40 ՍՄ ԲՆԻ ՏՐԱՄԱԳԾՈՎ: ԱՐԺԵՔԱՎՈՐ ՊՏՂԱՏՈՒ ԲՈՒՅՍ ԼԻՆԵԼՈՒ ՀԵՏ ՆՇԵՆԻՆ ՆԱ& ԲԱՐՁՐ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԾԱՌԱՏԵՍԱԿ Է: ՀԱՏԿԱՊԵՍ ԳԵՂԵՑԻԿ Է ՎԱՂ ԳԱՐՆԱՆԸ, ԵՐԲ ԾԱՌԸ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԾԱԾԿՎՈՒՄ Է ՁՅՈՒՆԱՍՊԻՏԱԿ ԲՈՒՐՈՒՄՆԱՎԵՏ ԾԱՂԻԿՆԵՐՈՎ: ՏԱՐԱԾՎԱԾ Է ԿՈՎԿԱՍՈՒՄ, ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ, ԻՐԱՆՈՒՄ, ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ, ՓՈՔՐ ԱՍԻԱՅՈՒՄ: *Լևոն Հարությունյանի «Քո շրջապատի ծառերը» գրքից*

2. ՍՈՎՈՐԱԿԱՆ ՈՐՈՐԸ ՏԱՐԱԾՎԱԾ Է ԵՎՐՈՊԱՅՈՒՄ, ԱՍԻԱՅՈՒՄ, ԿԱՄՉԱՏԿԱՅՈՒՄ՝ ՄԻՆՉԵՎ ՍԱՌՈՒՑՅԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ, ՍԵՎ ԾՈՎԻ ԱՓԵՐԻՆ, ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ, ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ, ԱՆԴՐԲԱՅԿԱԼՈՒՄ ԵՎ ՕԽՈՏՅԱՆ ԾՈՎՈՒՄ: ՄԻՋԻՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՐ Է, ԹԵՎԵՐԸ ՄՈՒԽՐԱԳՈՒՅՆ՝ ՍԵՎ ԾԱՅՐԵՐՈՎ. ՄՆԱՑԱԾ ՓԵՏՐԱՎՈՐՈՒՄԸ ՍՊԻՏԱԿ Է, ԿՏՈՒՑԸ ԵՎ ՈՏՔԵՐԸ ՄՈՒԳ ԿԱՐՄԻՐ ԵՆ: ԱՄՌԱՆԸ ԳԼՈՒԽԸ ՍԵՎ Է, ՁՄՌԱՆԸ՝ ՍՊԻՏԱԿ, ԱՉՔԻ ՄՈՏ ՈՒՆԻ ԳՈՐԾ ԿԵՏ:

Մարտին Ադամյանի «Հայաստանի թռչունները» գրքից

Վարժություն 2: **Գտնե՛լ, թե որ շարքերի հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ, ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ
2. ԱՇՈՏ ԵՐԿԱԹ, ՎԵՐԻՆ ԱՐՏԱՇԱՏ, ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏ
3. ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹ, ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ, ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ
4. ԱՌՅՈՒԾԱՁԵՎ ՄՀԵՐ, ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ, ՆԱՐ-ԴՈՍ
5. ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ, ԾԻՐ ԿԱԹԻՆ, ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Կան բառեր, որոնք արտահայտում են առարկայի հատկանիշ, օրինակ՝ *մեծ, փոքր, լավ, գեղեցիկ, լուսավոր, լեռնային, փայտե, մետաղական, տնտեսական* և այլն: *Առարկայի այդպիսի հատկանիշ ցույց տվող բառերը միավորվում են մեկ խոսքի մասի մեջ, որը կոչվում է ածական անուն կամ ածական:* Ածականները հատկանիշները կարող են ցույց տալ երկու ձևով՝ *ուղղակի* և *միջնորդված:* Օրինակ՝ *մեծ, փոքր, լավ, վատ, կանաչ* ածականները ուղղակիորեն անվանում, ցույց են տալիս հատկանիշներ: Իսկ *քարե, քաղաքային, երկաթյա* ածականները հատկանիշն արտահայտում են միջնորդված, այսինքն՝ *քար*-ի, *քաղաք*-ի, *երկաթ*-ի միջոցով միջնորդված վերագրումով: Ըստ դրա՝ ածականները բաժանվում են երկու տեսակի՝ *որակական* և *հարաբերական:* Որակական ածականները հատկանիշն ուղղակիորեն են արտահայտում, իսկ հարաբերականները՝ միջնորդված:

Որակական և հարաբերական ածականները իրարից տարբերվում են նաև քերականական հատկանիշով. որակական ածականները հիմնականում ունեն համեմատության աստիճաններ, իսկ հարաբերականները՝ ոչ: Որակական ածականների համեմատության աստիճանները երեքն են՝ *դրական, բաղդատական, գերադրական:*

Դրական աստիճանը ցույց է տալիս առարկայի հատկանիշը առանց համեմատության, օրինակ՝ *մեծ, լավ, կարճ* և այլն: Արտահայտվում է ածականի անփոփոխ ձևով:

Բաղդատական աստիճանը ցույց է տալիս առարկայի հատկանիշի առավել լինելը մեկ այլ առարկայի միևնույն հատկանիշի համեմատությամբ, ինչպես՝ *ավելի մեծ, ավելի լավ, ավելի կարճ* և այլն: Կազմվում է դրական աստիճանի ձևի և *ավելի* բառի համադրությամբ[23]:

Գերադրական աստիճանը ցույց է տալիս հատկանիշի առավելագույն դրսևորումը, ինչպես՝ *ամենամեծ, ամենից մեծ, մեծագույն, ամենալավ, ամենից լավ, լավագույն* և այլն: Ինչպես տեսնում ենք, գերադրական աստիճանը կազմվում է դրականին ավելացնելով *ամենա-* կամ *–(ա)գույն* մասնիկները կամ էլ *ամենից* բառը գործածելով դրականի հետ, սակայն *-ագույն* հնարավոր է ավելացնել ոչ բոլոր ածականներին (օրինակ՝ *բարակ, կարճ* ածականների գերադրականը *–գույն*-ով չի

[23] Լեզվաբանների մի մասը առանձնացնում է նաև նվազական բաղդատական, որը կազմվում է *պակաս, նվազ* բառերով:

կազմվում): Պետք է խուսափել այս երկու մասնիկները միաժամանակ գործածելուց (օրինակ՝ *ամենամեծագույն*):

Կան նաև համեմատության աստիճաններ չունեցող որակական ածականներ: Դրանք այն ածականներն են, որոնք ցույց են տալիս ոչ համեմատելի հատկանիշներ՝ *մերկ, դատարկ, դեղին, բոբիկ* և այլն:

Ածականները կարող են գործածվել նաև գոյականաբար, օրինակ՝ *մեծ տուփերը-մեծերը, դեղին ծաղիկները-դեղինները:* Այսինքն՝ նրանք հանդես են գալիս իրենց լրացյալ գոյականի փոխարեն և ստանում են նրա քերականական կարգերը:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Դո՛ւրս գրել ածականները. դրանցից երեքը գործածե՛լ նախադասություններում:**

Այս գետի ափին, այս ուռենու տակ
Իմ մանկությունն է անցել երազուն,
Խաղացել է նա գետում այս հստակ,
Ոսկի է փնտրել այս տաք ավազում:

Նա թառել է այս ծառերին դալար,
Երկյուղով մտել այրերը այս մութ
Ու կածաններում այս օձագալար
Թափառել է նա մինչև մայրամուտ:

Եվ իր ծիծաղի ալիքներն է ջինջ
Տվել նա մի օր ջրերին այս խենթ,
Որ ուրախ երգով տարել ամեն ինչ
Ու, սակայն, ոչինչ չեն բերել էլ ետ:

…Ամեն ինչ այստեղ նույնն է մնացել,
Նույն ալիքներն են գալիս ու գնում,
Եվ միայն ուռին ջրին կռացել,
Մի ինչ-որ կորած բան է որոնում:

Վահագն Դավթյան

Վարժություն 2: **Գտնե՛լ այն ածականները, որոնց գերադրական աստիճանը *–գույն* մասնիկով չի կազմվում:**

Բարձր, մեծ, տաք, նվազ, թանկ, լավ, ուժեղ, ազնիվ, զվարթ, խոշոր, հին, բարակ, կոշտ, ուրախ, նոր, քաղցր:

Վարժություն 3: **Գրե՛լ տրված գոյականներից յուրաքանչյուրին բնորոշող երեք ածական:**

Նկար, այգի, ծաղիկ, գիրք, գորգ:

Վարժություն 4: **Գտնե՛լ որակական ածականները. կազմե՛լ նախադասություններ՝ գործածելով դրանք:**

Բարձր, մարմնագույն, աշակերտական, ամուրի, թունդ, լեռնային, բրդյա, պղտոր, տխուր, վճարովի, ցածր, դեղին, ժլատ, նարնջագույն, պատանեկան, ջրալի, դաշտային, թավշյա, ասվե, ուրախ, քաղցր, անվճար:

Վարժություն 5: **Գտնե՛լ ածականները և դրանցով կազմել բառակապակցություններ:**

Աղոտ, դերձակ, դժվարին, հոգատար, մանրահատակ, կավ, հաճարենի, հյուսնություն, լսարան, հանգամանորեն, երկաթ, պողպատե, սնահավատ, դետալ, գործունյա, բարեգութ, դաժան, ատլաս, չիթ, փայտե, կաղապար, շրջանակ, թղթե:

ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Թվական անունը ցույց է տալիս առարկայի թիվ, քանակ, թվային կարգ, օրինակ՝ *երեք գրիչ, երկրորդ կուրս, երկուական փեփոր* և այլն: Թվականները լինում են չորս տեսակի՝ *քանակական, դասական, բաշխական, կոտորակային*[24]:

Քանակական թվականներն արտահայտում են առարկաների քանակն ամբողջ թվերով, ինչպես՝ *հինգ գրիչ, տասը տուն, քսանութ քանոն* և այլն: Այս թվականները գրվում են բառերով (օրինակ՝ *մեկ, երկու*), արաբական թվանշաններով (*1, 2, 3* և այլն), ինչպես նաև հայոց այբուբենի տառերով[25] (*Ա*-1, *Բ*-2, *Ժ*-10 և այլն): Բառերով գրվելիս *տասնմեկից* մինչև *իննսունինը* թվականները գրվում են միասին (*տասնութ, քսանհինգ, երեսունութ, հիսունհինգ* և այլն), իսկ *հարյուրից* հետո գրվում են առանձին (օրինակ՝ *հազար ինը հարյուր քառասունութ*): *Ինը* և *տասը*[26] թվականներն ունեն երկու ձև՝ *ինը* և *ինն, տասը* և *տասն*: *Ինը* և *տասը* գրվում է, երբ նրանց հաջորդում է բաղաձայնով սկսվող բառ (օրինակ՝ *ինը գիրք, քսանինը գիրք, տասը գրիչ*), իսկ երբ նրանց հաջորդում է ձայնավորով սկսվող բառ, հիմնականում գրվում է *ինն, տասն* բայց երբեմն, արտասանության տեմպով և տրամաբանական շեշտով պայմանավորված, կարող է գրվել նաև *ինը, տասը* (օրինակ՝ *ինն օր, ինը օր, տասն անգամ, տասը անուն*): Բաղադրյալ քանակական թվականների մեջ որպես առաջին կամ միջին բաղադրիչ գործածվելիս միշտ գրվում է *ինն*

[24] Կատարվում է նաև թվականների այսպիսի դասակարգում. առանձնացվում են *քանակական* և *դասական* թվականներ, որոնցից քանակականն ունի երեք ենթատեսակ, *բացարձակ* (օրինակ՝ *մեկ, երկու*), *բաշխական* (օրինակ՝ *մեկական, երկուական*), *կոտորակային* (օրինակ՝ *մեկ երկրորդ*):

[25] Հայոց այբուբենի թվային արժեքի մասին տե՛ս «Տառ և այբուբեն» թեմայում:

[26] Լեզվաբանների մի մասը *տաս* ձևը համարում է ընդունելի, իսկ մյուս մասը համարում է խոսակցական ոչ ճիշտ ձև:

և *տասն* (օրինակ՝ *իննսունհինգ, տասներկու*, *տասնչորս, հազար երկու հարյուր տասնութ*): *Երկու* թվականը, երբ գոյականաբար գործածվելիս հոլովվում է, հոգնակի թվով է գործածվում կամ էլ հոդ ստանում, ունենում է *երկուս* ձևը, ինչպես՝ *երկուսներ, երկուսի, երկուսը* և այլն:

Դասական թվականները ցույց են տալիս առարկայի թվային կարգը, օրինակ՝ *երկրորդ հարկ, հինգերորդ դասարան:* Այս թվականները կազմվում են քանակականներից՝ *-րորդ* կամ *-երորդ* ածանցներով. *-րորդ*-ով կազմվում են *երկրորդ, երրորդ, չորրորդ* դասական թվականները: Որպես *մեկ* թվականի դասական գործածվում է *առաջին* բառը: Այս թվականները գրվում են բառերով (օրինակ՝ *առաջին, երկրորդ, վեցերորդ, քսաներկուերորդ, վաթսունհինգերորդ*), արաբական թվանշաններով, որոնց կցվում են *–ին* և *-րդ* մասնիկները՝ *1-ին, 2-րդ, 3-րդ, 48-րդ* և այլն, հռոմեական թվերով՝ *II, VI, IX* և այլն, որոնց մասնիկ չի կցվում: *1-ին* կարդացվում է *առաջին,* բայց կարող է նշանակել նաև *մեկին,* ինչպես՝ *սեպտեմբերի 1-ին:* Դասական թվականները կարող են գրվել նաև հայոց այբուբենի տառերով, որոնցից հետո դրվում է կետ կամ փակագիծ՝ *ա), բ.,* ինչպես նաև արաբական թվանշաններով, որոնցից հետո դարձյալ դրվում է կետ կամ փակագիծ՝ *1), 2.:* Սրանք սովորաբար գործածվում են համարակալման ժամանակ: Կա նաև դասական թվականի իմաստ արտահայտելու այսպիսի ձև: Երբ արաբական թվանշանը գրվում է իր լրացյալից հետո, ստանում է դասականի իմաստ: Օրինակ՝ *5 տուն* նշանակում է հինգ հատ տուն, իսկ *տուն 5* նշանակում է տուն համար հինգ:

Բաշխական թվականները ցույց են տալիս առարկաների բաշխումը որոշակի թվերով, ինչպես՝ *բաժանել երկուական թերթիկ, բաշխել երեք-երեք* և այլն: Բաշխական թվականները կազմվում են քանակականներից՝ *-ական* ածանցով (օրինակ՝ *վեցական, ութական, իններական, տասական, քսանական*) կամ էլ քանակական թվականի կրկնությամբ, օրինակ՝ *երկու-երկու, հինգ-հինգ, ութ-ութ*: Կրկնությամբ կազմված բաշխական թվականները գրվում են գծիկով:

Կոտորակային թվականները ցույց են տալիս առարկայի քանակը մասի և ամբողջի հարաբերությամբ, օրինակ՝ *մեկ հինգերորդ, երկու երրորդ*: Կոտորակային թվականները կազմվում են համարիչից (բերված օրինակներում՝ *մեկ, երկու*) և հայտարարից (հինգերորդ, երրորդ): Համարիչն արտահայտվում է քանակական թվականով, իսկ հայտարարը՝ դասական: Կոտորակային թվականները գրվում են թվանշաններով, օրինակ՝ *1/2, 3/4* կամ էլ բառերով, որոնք գրվում են առանձին-առանձին, օրինակ՝ *մեկ երկրորդ, երեք չորրորդ*: *Չորրորդ* հայտարարի փոխարեն գործածվում է նաև *քառորդ* բառը՝ *երեք քառորդ:* Տասնորդական կո-

տորակների հայտարարը կազմվում է *-ական* ածանցով՝ *զրո ամբողջ հինգ տասնորդական: Մեկ երկրորդ*-ի փոխարեն գործածվում է նաև *կես* բառը:

Թվականները ածականների նման կարող են գործածվել գոյականաբար, օրինակ՝ *երեք աշակերտ-երեքը, ութ գրքից-ութից*:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Դո՛ւրս գրել տեքստում եղած թվականները, որոշե՛լ գրության ձևը (արաբական թվանշաններով, այբուբենի տառերով և այլն): Թվականները գրել բառերով և նշե՛լ տեսակները: Դո՛ւրս գրել նաև թվականներով կազմված բառերը (գոյական, ածական):**

Զվարթնոց. Վաղարշապատի Ս. Գրիգոր. վաղ միջնադարի հայկական ճարտարապետության հուշարձան Արարատյան դաշտում՝ Էջմիածնից 3 կմ հարավ: Ըստ հայ պատմիչների վկայության և պահպանված հունարեն արձանագրության՝ կառուցել է Ներսես Գ Իշխանցի (Շինող) հայոց կաթողիկոսը, և նրա գահակալության տարիներից էլ՝ 641-661, արտածվում է Զվարթնոցի կառուցման ժամանակը: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ Զվարթնոցը օծվել է 652-ին: Թ. Թորամանյանի կարծիքով շինարարությունը սկսվել է 643-ին և հիմնականում ավարտվել 652-ին: Զվարթնոցը կանգուն է եղել մինչև X դ. վերջը. ավերման պատճառի մասին մեզ հայտնի պատմական աղբյուրները լռում են: Ըստ պեղված նյութերի՝ նախքան Զվարթնոցը այստեղ եղել են հնագույն և IV-V դդ. կառույցներ: Տեղանքի ցածրիկ, շրջանաձև բլրակը պարագծով շրջապատված է յոթաստիճան բազմանիստ հենապատով (բացի հարավարևմտյան մասից, ուր պալատն է)՝ կազմելով սալահատակ պատվանդան, որի կենտրոնում կառուցվել է տաճարը: 1905-ին Թ. Թորամանյանը ստեղծեց Զվարթնոցի գիտական վերակազմությունը: Ըստ պահպանված հատակաձևի և այդ վերակազմության՝ կառույցի ծավալատարածական հորինվածքի կորիզը քառակոնքն է, որը ցածում շրջապատված է երկհարկ պարարկյալ սրահով (տրամագիծը՝ 35,75 մ), իսկ վերևում՝ կիպ պարփակված գլանային պատով: Կիսագմբեթ, հիմնական առանցքներով խաչաձև տեղադրված 4 կոնքերը միմյանց են կապվում բարդ կտրվածքի, զանգվածեղ, վերևում կամարակապ մայր մույթերով՝ գմբեթակիր քառակուսին, որից անցումը թմբուկի բոլորակին իրականացված է առագաստների միջոցով: Կոնքերը, բացի արևելյանից, որը հոծ է և ամփոփում է բեմը, իրենց ստորին մասում սյունակազմ են (6-ական սյուն, տրամագիծը՝ 0,6 մ): Սյուներն ավարտվում են կողովաձև, խոյազարդ խոյակներով և միմյանց կապվում կամարներով:

Ըստ «Հայկական սովետական հանրագիտարանի»

Վարժություն 2: **Գրե՛լ բառերով:**

9, 12, 99, 50, 60, 70, 80, 100, 1938, II, III, IV:

Վարժություն 2: **Ո՞ր շարքի բոլոր թվականներն են կազմությամբ պարզ (արմատական):**

1. տասնինը, երեսուն, ինը
2. քառասուն, մեկ, հազար
3. յոթ, միլիարդ, հարյուր
4. տասը, երկու, տասնմեկ
5. ինը, միլիարդ, քսանչորս
6. տասնութ, քսանութ, հարյուր
7. տասնմեկ, երեսուն, երեք
8. տասը, երկու, տասնմեկ

ԴԵՐԱՆՈՒՆ

Լեզվում կան բառեր, որոնք ցույց են տալիս անձ, առարկա, հատկանիշ և այլն, սակայն առանց դրանց կոնկրետ անվանումների, օրինակ՝ *Արմենը եկավ* - ***Նա*** *եկավ. հինգ գիրք* - ***այսքան*** *գիրք: Առանց կոնկրետ անվանումների՝ անձ, առարկա և տարբեր հատկանիշներ ցույց տվող բառերը միավորվում են մեկ խոսքի մասի մեջ, որը կոչվում է դերանուն:* Դերանունն ունի ութ տեսակ՝ *անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ, ժխտական*[27]*:*

1.Անձնական դերանուններ

Անձնական դերանունները ցույց են տալիս խոսող, խոսակից կամ մի երրորդ անձ: Անձնական դերանուններն են՝ *ես, դու, նա, ինքը* (եզակի թիվ), *մենք, դուք, նրանք, իրենք* (հոգնակի թիվ): Այս դերանուններն ունեն դեմքի կարգ. առաջին դեմքը ցույց է տալիս խոսողին *(ես, մենք),* երկրորդ դեմքը՝ խոսակցին *(դու, դուք),* երրորդ դեմքը՝ մի երրորդ անձի *(նա, նրանք, ինքը, իրենք):* Ինչպես տեսնում ենք, երրորդ դեմքի համար կա երկու ձև, սակայն *ինքը* դերանունը, ստանալով *ս, դ* հոդերը, կարող է առանձին կամ առաջին և երկրորդ դեմքերի դերանունների հետ էլ գործածվել՝ արտահայտելով այդ դեմքերը *(ինքս//ես ինքս, ինքդ//դու ինքդ): Ինքս, ինքդ* ձևերը չեն հոլովվում, իսկ *ինքը* դերանունը հոլովվում է: Անձնական

[27] Լեզվաբանական մի շարք աշխատություններում *հարցական* և *հարաբերական* դերանունները միավորվում են մեկ տեսակի մեջ: Երբեմն միավորվում են նաև որոշյալ և ժխտական դերանունները:

դերանունների հոգնակի թիվը, ի տարբերություն գոյականների, կազմվում է ուրիշ հիմքով և ոչ թե ցույց է տալիս մեկից ավելի նույն առարկայից, այլ տվյալ անձը և այն խումբը, որի անունից նա հանդես է գալիս, որը տվյալ դեպքում ինչ-որ կերպ առնչվում է նրան: Հարգալից վերաբերմունք արտահայտելու համար անձնական դերանվան երկրորդ դեմքը գործածվում է հոգնակի թվով, թեև վերաբերում է մեկ անձի. այդ դեպքում դերանունը գրվում է մեծատառ (օրինակ՝ *Ես* ***Ձեզ*** *շնորհավորում եմ*): Երբեմն *մենք* դերանունը գործածվում է *ես*-ի փոխարեն: Այս ձևը ընդունված է հատկապես գիտական ոճում և կոչվում է ‘հեղինակային մենք (օրինակ՝ *Այդ հարցը* ***մենք*** *աշխատության մեջ այսպես ենք մեկնաբանել*): Անձնական դերանունները հոլովվում են, բայց գոյականից տարբեր ձևով, այսինքն՝ այս դեպքում ոչ թե միայն մասնիկ է ավելանում, այլ փոխվում է ամբողջ բառը: Բացի այդ՝ անձնական դերանունները սեռական և տրական հոլովների համար առանձին ձևեր ունեն: Անձնական դերանունների ներգոյականը հիմնականում գործածական չէ. միայն երբեմն հանդիպում են որոշ կիրառություններ, օրինակ՝ *Մեզանում այդպես է ընդունված*: Անձնական դերանունները հոլովվում են հետևյալ ձևով:

Հոլովը	*Եզակի թիվ*				*Հոգնակի թիվ*			
	1-ին դեմք	*2-րդ դեմք*	*3-րդ դեմք*		*1-ին դեմք*	*2-րդ դեմք*	*3-րդ դեմք*	
Ուղղական	ես	դու	նա	ինքը	մենք	դուք	նրանք	իրենք
Սեռական	իմ	քո	նրա	իր	մեր	ձեր	նրանց	իրենց
Տրական	ինձ	քեզ	նրան	իրեն	մեզ	ձեզ	նրանց	իրենց
Հայցական	ինձ	քեզ	նրան	իրեն	մեզ	ձեզ	նրանց	իրենց
Բացառական	ին(ա)նից	քեզ(ա)նից	նրանից	իրենից	մեզ(ա)նից	ձեզ(ա)նից	նրանցից	իրենցից
Գործիական	ինձ(ա)նով	քեզ(ա)նով	նրանով	իրենով	մեզ(ա)նով	ձեզ(ա)նով	նրանցով	իրենցով
Ներգոյական	---	---	---	---	---	---	---	---

2.Ցուցական դերանուններ

Ցուցական դերանունները ցույց են տալիս առարկա (երբեմն անձ) կամ հատկանիշ առանց դրանք կոնկրետ անվանելու: Ցուցական դերանուններն են *սա, դա, նա, այս, այդ, այն, սույն, նույն, միևնույն, մյուս, այսպես, այդպես, այնպես, նույնպես, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այստեղ, այդտեղ, այնտեղ, նույնտեղ, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ:* Ի տարբերություն անձնական դերանունների՝ ցուցական դերանունները չունեն դեմք, բայց արտահայտում են տարածական և ժամանակային հարաբերություն, այսինքն՝ կարող են արտահայտել խոսողին, խոսակցին կամ մի երրորդ անձի (առարկայի) մոտ գտնվող առարկա կամ այդ առարկայի հատկանիշը, ինչպես

նաև խոսելու նյութի հետ ժամանակային հարաբերությամբ կապ ունեցող իրողություն, օրինակ՝ *այս գիրքը* (խոսողին մոտ գտնվող գիրք), *այդ գիրքը* (խոսակցին մոտ գտնվող գիրքը), *այն գիրքը* (երրորդ անձին կամ առարկային մոտ գտնվող գիրքը), *այս տարի, այդ տարի, այն տարի* և այլն: առարկայանիշ ցուցական դերանուններն ունեն նաև եզակի և հոգնակի թվեր:

Այն ցուցական դերանունները, որոնք հատկանշային իմաստ են արտահայտում, չեն հոլովվում: Մյուս մասը հոլովվում է գոյականի նման՝ այսինքն մասնիկներ ստանալով, ինչպես՝ *այստեղ-այստեղի-այստեղի-այստեղ-այստեղից-այստեղով* և այլն: *Սա, դա, նա* դերանունները անձնականների նման յուրատեսակ (դերանվանական) հոլովում ունեն:

Հոլովը	*Եզակի թիվ*			*Հոգնակի թիվ*		
Ուղղական	սա	դա	նա	սրանք	դրանք	նրանք
Սեռական	սրա	դրա	նրա	սրանց	դրանց	նրանց
Տրական	սրան	դրան	նրան	սրանց	դրանց	նրանց
Հայցական	սա (սրան)	դա (դրան)	նա (նրան)	սրանք, (սրանց)	դրանք, (դրանց)	նրանք, (նրանց)
Բացառական	սրանից	դրանից	նրանից	սրանցից	դրանցից	նրանցից
Գործիական	սրանով	դրանով	նրանով	սրանցով	դրանցով	նրանցով
Ներգոյական	սրանում	դրանում	նրանում	սրանցում	դրանցում	նրանցում

3.Փոխադարձ դերանուններ

Փոխադարձ դերանունները ցույց են տալիս իրար փոխադարձաբար կապված անձեր, առարկաներ, երևույթներ: Փոխադարձ դերանուններն են *իրար (իրարու), միմյանց, մեկմեկու (մեկմեկի):* Սրանք չունեն եզակի թիվ, որովհետև ցույց են տալիս իրար կապված մեկից ավելի իրողություններ: Չունեն նաև ուղղական հոլով: Փոխադարձ դերանունները հոլովվում են հետևյալ ձևով:

Ուղղական	---	---	---
Սեռական	իրար	միմյանց	մեկմեկու
Տրական	իրար	միմյանց	մեկմեկու
Հայցական	իրար	միմյանց	մեկմեկու
Բացառական	իրարից	միմյանցից	մեկմեկուց
Գործիական	իրարով	միմյանցով	մեկմեկով
Ներգոյական	իրարում	միմյանցում	մեկմեկում

4.Հարցական դերանուններ

Հարցական դերանուններն արտահայտում են խոսողի հարցումը որևէ իրողության մասին: Հարցական դերանուններից են՝ *ո՞վ, ի՞նչ, ե՞րբ, ո՞ւր, ո՞ր, որտե՞ղ, ինչպիսի՞, ինչքա՞ն, քանի՞, քանի՞երորդ, ո՞րերորդ, ինչպե՞ս, որքա՞ն* և այլն: Հարցական դերանունների մի մասը չի հոլովվում, իսկ մյուս մասը հոլովվում է գոյականների նման (օրինակ՝ *ի՞նչ-ինչի՞-ինչի՞ն-ի՞նչ-ինչի՞ց-ինչո՞վ-ինչո՞ւմ*): Յուրահատուկ հոլովում ունի *ո՞վ* դերանունը: Այն ունի եզակի *(ո՞վ)* և հոգնակի *(ովքե՞ր)* թվեր, սակայն հոլովվում է մեկ՝ եզակի ձևով, որը գործածվում է և՛ եզակիի, և՛ հոգնակիի համար: Սեռական հոլովից սկսած՝ անձնական և որոշ ցուցական դերանունների նման փոխվում է ամբողջ հիմքը, սակայն, ի տարբերություն դրանց, այս դերանունը սեռական և տրական հոլովների համար տարբերակված ձևեր չունի:

Հոլովը	*Եզակի*	*Հոգնակի*
Ուղղական	ո՞վ	ովքե՞ր
Սեռական	ո՞ւմ	(ո՞ւմ)
Տրական	ո՞ւմ	(ո՞ւմ)
Հայցական	ո՞ւմ	(ո՞ւմ)
Բացառական	ումի՞ց	(ումի՞ց)
Գործիական	ումո՞վ	(ումո՞վ)
Ներգոյական	---	---

5. Հարաբերական դերանուններ

Հարաբերական դերանունները ձևով նույն հարցական դերանուններն են, սակայն ոչ թե հարցում են արտահայտում, այլ ստորադաս և գերադաս նախադասությունները տարբեր հարաբերություններով կապում են իրար օրինակ՝ *Նա կարդաց այն գիրքը,* ***որը*** *նվիրել էր ընկերը: Աշխատանքը կատարեց այնպես,* ***ինչպես*** *պահանջել էին: Շենքը կառուցեցին այնտեղ* ***որտեղ*** *նախկինում ամայի տարածություն էր:* Հետևաբար հարաբերական դերանունների վրա հարցական նշան չի դրվում: Իրենց քերականական հատկանիշներով (հոլով, թիվ) հարաբերական դերանունները չեն տարբերվում հարցականներից:

6.Որոշյալ դերանուններ

Որոշյալ դերանունները առանց կոնկրետ անվանելու ցույց են տալիս տվյալ դեպքում հայտնի, որոշակի անձեր, առարկաներ, հատկանիշներ, դրանց ամբող-

ջությունը կամ ամբողջության մեջ մտնող առարկաներն ու անձերը առանձին-առանձին: Որոշյալ դերանուններից են *ամեն մի, ամեն մեկը, ամեն(ը), ամենքը, բոլոր(ը), յուրաքանչյուր(ը), յուրաքանչյուր ոք, ողջ(ը), ամբողջ(ը), համայն* և այլն: Հատկանշային իմաստով որոշյալ դերանունները չեն հոլովվում, իսկ առարկայանիշ իմաստ արտահայտողները հոլովվում են: Դրանք հոլովվում են գոյականի նման՝ *ի* արտաքին հոլովմամբ, օրինակ՝ *բոլորը-բոլորի-բոլորին-բոլորը-բոլորից-բոլորով-բոլորում:*

7.Անորոշ դերանուններ

Անորոշ դերանունները ցույց են տալիս տվյալ իրադրությունում անորոշ, անհայտ անձեր, առարկաներ, հատկանիշներ առանց դրանք անվանելու: Անորոշ դերանուններից են՝ *երբևէ, ինչ-որ, ինչ-ինչ, մի, մի քանի, ինչ-որ մի, ոմն, որևէ, որևիցե, որոշ* և այլն: Առարկայնիշ անորոշ դերանունները հոլովվում են, օրինակ՝ *մի քանիսը - մի քանիսի - մի քանիսին - մի քանիսը - մի քանիսից - մի քանիսով - մի քանիսում*: *Ոմն* դերանունն արտահայտում է հատկանշային իմաստ. նշանակում է *ինչ-որ,* օրինակ՝ *Քեզ նամակ է ուղարկել* ***ոմն*** *Հարություն: Ոմն*-ը չի հոլովվում: Ոմանք դերանունը, որը *ոմն*-ի հոգնակին է, անձնանիշ է և նշանակում է *մի քանիսը,* օրինակ՝ ***Ոմանք*** *առանձնացան իրենց կպտարած փայլուն աշխատանքով: Ոմանք*-ը հոլովվում է *g* հոլովմամբ՝ *ոմանք-ոմանց-ոմանց-ոմանց-ոմանցից-ոմանցով:*

8.Ժխտական դերանուններ

Ժխտական դերանունները ցույց են տալիս տվյալ իրադրությունում ժխտվող անձեր, առարկաներ, մասամբ էլ հատկանիշներ առանց դրանք անվանելու: Ժխտական դերանուններն են՝ *ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը:* Սրանց յուրահատկությունն այն է, որ այս դերանունների հետ բայերը դրվում են ժխտական ձևերով, օրինակ՝ *Ոչ ոք չհեռացավ*: Ժխտական դերանուններից *ոչ մի*-ն չի հոլովվում, իսկ մյուսները հոլովվում են գոյականների նման, օրինակ՝ *ոչինչ - ոչնչի – ոչնչին ոչինչ – ոչնչից – ոչնչով – ոչնչում:* Արևմտահայերենում ժխտական դերանունների հետ բայերը դրվում են դրական խոնարհումով, օրինակ՝ *Ոչ ոք ըսավ.- հե՛գ փղա, արդյոք ինչո՞ւ կմխա* (Պետրոս Դուրյան): Պետք է չշփոթել *ոչ ոք* դերանվան սեռական հոլովաձևը՝ *ոչ ոքի* (օրինակ՝ *Ոչ ոքի չասես*), և *ոչ-ոքի* ձևի մակբայը (օրինակ՝ *Խաղն ավարտվեց ոչ-ոքի*):

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Դո՛ւրս գրել անձնական դերանունները և որոշե՛լ դրանց դեմքը, թիվը, հոլովը:**

Ես եմ, դու ես, ես ու դու
Գիշերում այս դյութական,
Մենք մենակ ենք – ես ու դու.
Ես էլ դու եմ. ես չըկամ…
Կապույտ երկնքի ոսկեղե՛ն աստղեր,
Ձեր հեռվից դուք միշտ տեսնում եք նրան.
Ասացե՛ք, արդյոք նա էլ թախծո՞ւմ էր,
Արդյոք տրտո՞ւմ էր նա էլ ինձ նըման:

Խորհրդագետնե՛ր, դուք տեսնում եք միշտ.
Արդյոք մենա՞կ էր նա էլ ինձ նըման,
Թե՛ ընկեր գտած ժպտում էր անվիշտ
Եվ փայփայում էր և սիրում նրան:

Խորհրդագետնե՛ր, դուք ժպտում եք լուռ,
Դուք լուռ ժպտում եք իմ ցավի վրա.
-Նա, քեզ մոռացած, վաղուց ամենուր
Ծաղրում է քո խենթ խոսքերը հիմա…

Վահան Տերյան

Վարժություն 2: **Գտնե՛լ, թե որ հատվածներում նշված հոլովով անձնական դերանուններ կան:**

Ուղղական

1.Կյանքիս բերքն ու բարին ես ցրեցի լրիվ
Հողի նման բարի, հողի նման…. *(Հրաչյա Հովհաննիսյան)*
2. Իմ սերունդն ամբողջ եղյամի մեջ է.
Նշանակում է ցրտեր են եղել…. *(Մարո Մարգարյան)*
3. Ես լուռ կարդում եմ գիրը քարերի
Եվ քարանում եմ քարե բառերից…. *(Գևորգ Էմին)*

Սեռական

1.Թափառում ենք փողոցներում՝
Ես քո սիրով, դու՝ ուրիշի *(Սիլվա Կապուտիկյան)*
2. Արշալույսից մինչ երեկո ես լսեցի քամուն.
Նա ուռենու շրշյուն բերեց իմ հեռավոր ձորից *(Լյուդվիգ Դուրյան)*

3. Ես չեմ ուզում աշխարհից բազում գանձեր ու երազ,

Միայն երգն այս սիրավետ ու իմ սիրտը հասկանաս… *(Լիպարիտ Սարգյան)*

Տրական

1.Ինձ փոխանցեցին ծիծաղի մի լաթ,

Որ տխրությունից իմ հոգին սրբեմ *(Ռազմիկ Դավոյան):*

2. Գնացքը սողաց մթին ձորից,

Ինձ էլ վերցրեց, ճչաց, գնաց… *(Գուրգեն Մահարի)*

3. Կնայի քեզ երկնքից մի գունատ լուսին,

Կիջնի ահա երեկոն, գիշեր կլինի…*(Գեղամ Սարյան)*

Վարժություն 3: **Դո՛ւրս գրել ցուցական դերանունները, որոշե՛լ թիվը և հոլովը (չհոլովվող դերանունների դեպքում նշել չթեքվող լինելը):**

Գագիկ թագավորի ծառաները պալատի առաջ մի օձ են տեսնում, որը անհանգիստ գետնին էր քսում եղջյուրները: Թագավորը կարգադրում է կտրել օձի եղջյուրները: Դրանից հետո օձը հանգստանում է և գոհ հեռանում: Ժամանակ անց նա նորից երևում է պալատի մոտ և բերանից մի կորիզ գցելով՝ անհայտանում է: Գագիկի հրամանով կորիզը տնկում են և հետևում նրան: Ամռանը այդ կորիզից մի հսկայական կլոր պտուղ է աճում: Փորձելու համար մի կտոր տալիս են ուտելու մերձիմահ ծերուկի: Սա անմիջապես կազդուրվում է ու երիտասարդանում: Գագիկն իր պալատականների հետ վայելում է պտուղի մնացած մասը և նույնպես կազդուրվում ու երիտասարդանում: Դրանից հետո այդ պտուղի անունը դնում են չմեռուկ, որը, բերանից բերան անցնելով, դառնում է ձմերուկ:[28]

Արամ Ղանալանյանի «Ավանդապատում» գրքից

Վարժություն 4: **Գտնե՛լ փոխադարձ դերանունները:**

Կախարդական մի շղթա կա երկնքում՝
Անրերևույթ, որպես ցավը խոր հոգու,
Իջնում է նա հուշիկ, որպես իրիկուն՝
Օղակելով լույս աստղեցը մեկմեկու:

Մեղմ գիշերի գեղագանգուր երազում
Այն աստղերը, որպես մոմեր սրբազան,
Առկայծում են կարոտագին երազուն՝
Հավերժաբար իրար կապված և բաժան:

Ես ու դու էլ շղթայված ենք իրարու,
Կարոտավառ երազում ենք միշտ իրար,
Միշտ իրար հետ, բայց միշտ բաժան ու հեռու
Աստղերի պես և՛ հարազատ, և՛ օտար…

Վահան Տերյան

[28] Սա ժողովրդական ստուգաբանություն է. Հրաչյա Աճառյանն իր «Հայերեն արմատական բառարանում» *ձմերուկ* բառը համարում է *ձմեռն* բառից կազմված (որպես զովացնող):

Վարժություն 5: **Դո՛ւրս գրել դերանունները և խմբավորե՛լ ըստ տեսակների: Հոլով, թիվ կամ դեմք ունեցող դերանունների դեպքում նշե՛լ դրանք:**

Մկան թագավորը հրաման է տալիս, կանչում իր մոտ չղջիկին և ասում. «Ա՛յ անպիտան, դու մուկ ես, ո՞ւր ես թաքնվում, ինչի՞ տուրք չես տալիս»: Չղջիկը բաց է անում թևերը և ասում. «Ես ինչի՞ պիտի տուրք տամ քեզ, չե՞ս տեսնում սրանք. Ես թռչուն եմ, ես որտեղի՞ մուկն եմ»: Մկան թագավորը գրում է թռչունների թագավորին, թե այս տեսակ մի թռչուն կա. ինչի՞ դու նրանից տուրք չես վերցնում: Թռչունների թագավորը սա որ լսում է, կանչում է չղջիկին, ասում. «Թե որ թռչուն ես, մեր օրենքը ինչի՞ ես խախտում, ինչի՞ տուրք չես տալիս»: Չղջիկը բաց է անում բերանը, ցույց տալիս ատամները և ասում. «Ես մուկ եմ, թռչունը բա ատամներ կունենա՞»: Թռչունների թագավորը մնում է շվարած, գլուխը կորցրած: Այսպես չղջիկը, երկուսին էլ խաբելով, մինչև հիմա էլ իր համար հանգիստ ապրում է առանց տուրք տալու:

Արամ Ղանալանյանի «Ավանդապատում» գրքից

Վարժություն 6: **Դո՛ւրս գրել անձնական դերանունները. կազմե՛լ նախադասություններ՝ գործածելով այդ դերանունները:**

Իրար, այսչափ, նրանք, ոմն, ուրիշ, մենք, յուրաքանչյուրը, ինքը, նույնպիսի, ամեն ինչ, ողջ, իրենք, ոչինչ, դա, ամբողջ, սա, միմյանց, ոչ մեկը, ոչ ոք, դուք, ամենքը, մեկմեկու:

Վարժություն 7: **Դո՛ւրս գրել ցուցական դերանունները. կազմե՛լ նախադասություններ՝ գործածելով այդ դերանունները:**

Ոմն, այսչափ, ինչ-որ, դրա, մենք, յուրաքանչյուրը, ինքը, նույնպիսի, ամեն ինչ, ողջ, իրենք, ոչինչ, դա, ամբողջ, սա, միմյանց, ոչ մեկը, ոչ ոք, դուք, մյուս, ամենքը, միևնույն:

Վարժություն 8: **Ո՞ր շարքի բոլոր դերանուններ են ցուցական:**

1. ողջ, ամբողջ, միևնույն, ամենայն
2. համայն, սույն, միևնույն, ինչ
3. այսպես, այդպես այնպես, որքան
4. սա, դա, նույնտեղ, այնչափ

Վարժություն 9: **Ո՞ր շարքի բոլոր դերանուններ են որոշյալ:**

1. միմյանց, յուրաքանչյուր, ինչ, երբ
2. ամեն ինչ, համայն, ամեն մի, ողջ
3. որտեղ, քանի, ինչպես, ինչու
4. իրար, որերորդ, քանիսը, այլ

Վարժություն 10: **Ո՞ր շարքի բոլոր դերանուններ են հարաբերական:**

1. ով, ինչ, երբ, սույն
2. ողջ, քանի, ինչու, որ
3. որտեղ, քանի, ինչպես, ինչու
4. իրար, որերորդ, քանիսը, այլ

ԲԱՅ

Դիմավոր և անդեմ ձևեր

Բայ խոսքի մասի մեջ միավորվում են այն բառերը, որոնք արտահայտում են գործողություն, օրինակ՝ *գրել, վազել, կառուցեցին, կարդում եմ, խաղաց* և այլն: Գործողության, ընթացքի գաղափարը բայերն արտահայտում են իրենց բնորոշ քերականական կարգերով: Դրանք են սեռի, եղանակի, դեմքի, թվի, ժամանակի կարգերը: Սակայն ոչ բոլոր բայաձևերն ունեն այս բոլոր կարգերը: Ըստ այս կարգերի դրսևորման՝ բայը խոսքում գործածվում է երկու ձևով՝ *դիմավոր* և *անդեմ:* Անդեմ ձևերն ունեն սեռի կարգ, իսկ դիմավոր ձևերը՝ նաև մյուս կարգերը, օրինակ՝ *գրել, գրած* բայերն անդեմ են, որովհետև պարզ չէ նրանց դեմքը, այսինքն՝ գործողության և կատարողի հարաբերությունը, իսկ *գրում եմ, կգրես* բայերը դիմավոր են, քանի որ հասկանալի է, որ *գրում եմ ես, կգրես դու*:

Բայի անդեմ ձևերը կոչվում են *դերբայներ:* Ժամանակակից հայերենում կա ութ դերբայ[29]:

Դերբայը	***ե խոնարհման***	***ա խոնարհման***
անորոշ	նկարել	կարդալ
ենթակայական	նկարող	կարդացող
հարակատար	նկարած	կարդացած
համակատար	նկարելիս	կարդալիս
անկատար	նկարում	կարդում
վաղակատար	նկարել	կարդացել
ապակատար	նկարելու	կարդալու
ժխտական	նկարի	կարդա

Ինչպես տեսնում ենք, անորոշ դերբայը կազմվում է *-ել* կամ *-ալ* վերջավորությունները: Ըստ դրա՝ բայերը լինում են *-ե* խոնարհման (կամ լծորդության) և *-ա* խոնարհման:

Անորոշ, ենթակայական, համակատար, հարակատար դերբայները կարող են բառակապակցության և նախադասության մեջ հանդես գալ որպես առանձին

[29] Դերբայների քանակի, անվանումների և դասակարգման վերաբերյալ կան տարակարծություններ:

անդամ, օրինակ՝ *վազող երեխա, նկարող մարդ, փորագրված նախշ, կարդալ գիրքը:* Այս դերբայները կոչվում են անկախ:

Անկատար, վաղակատար, ապակատար, ժխտական դերբայները գործածվում են միայն օժանդակ բայերի հետ՝ կազմելով եղանակային ժամանակաձևեր և նախադասության մեջ գործածվելով միայն որպես ստորոգյալներ, օրինակ՝ *գրում եմ, կարդացել եմ, կարդալու եմ, չեմ կարդա:* Այս դերբայները կոչվում են կախյալ:

Ե խոնարհման բայերի անորոշը մի շարք դեպքերում ձևով նման է վաղակատար դերբային (ինչպես վերևում բերված օրինակում), սակայն դրանք իմաստով և գործառույթով միշտ տարբերվում են, և շփոթություն չի առաջանում. Վաղակատարով ձևերը կատարված գործողություն են ցույց տալիս, իսկ անորոշ դերբայն անվանում է գործողությունը. հմմտ. *Նա նկարել է մի գեղեցիկ բնանկար* (վաղակատար): *Նրա հիմնական զբաղմունքը նկարելն է* (անորոշ): Ձևով նման են նաև ապակատար դերբայը և անորոշ դերբայի սեռական հոլովաձևը (օրինակ՝ *գրելու, կարդալու*): Դրանք առաջարկում ենք տարբերել հետևյալ հատկանիշներով: Անորոշը անկախ դերբայ է և կարող է գործածվել առանձին (օրինակ՝ *խմելու ջուր*): Իսկ ապակատարը կախյալ դերբայ է, այսինքն՝ առանց օժանդակ բայի չի գործածվում (օրինակ՝ *Նա խմելու է ջուրը*): Հետևաբար առանց օժանդակ բայի գործածվածները անորոշ դերբայի սեռականի ձևերն են: Օժանդակ բայի հետ գործածվելիս անորոշի սեռականը և ապակատարը տարբերում ենք հետևյալ ձևով: Բերենք օրինակներ. *Այս ջուրը խմելու է: Նա այս ջուրը խմելու է:* Տարբերելու համար դարձնում ենք ժխտական. անորոշի սեռականի ձևում, ինչպես առհասարակ բաղադրյալ ստորոգյալների դեպքում, չեն փոխվում ժխտական օժանդակ բայի ձևը և շարադասությունը՝ *խմելու չէ:* Ապակատարով կազմված ձևերում օժանդակ բայը փոխվում է ձևով և շարադասությամբ՝ *չի խմելու:* Այս նույն սկզբունքով հնարավոր է տարբերել նաև անորոշ և վաղակատար դերբայներով ձևերը՝ *նկարել է-չի նկարել. նկարելն է-նկարելը չէ:*

Բայերի կազմությունը

Բայերն իրենց ազմում կարող են ունենալ յուրահատուկ ածանցներ, որոնք կոչվում են բայածանցներ: Բայածանցներն են՝ *սոսկածանցներ* (*ան, են, ն, չ* – հեռ*ան*ալ, մոտ*են*ալ, գտ*ն*ել, թռչել), *պատճառական ածանցներ* (*ացն, եցն, ցն* – հեռ*ացն*ել, մոտ*եցն*ել, թռ*ցն*ել), *բազմապատկական ածանցներ* (*ատ, ոտ, կոտ, տ* – կտր*ատ*ել, ջարդ*ոտ*ել, թռչ*կոտ*ել, պատռ*տ*ել), *կրավորական ածանց* (*վ* - գրվել): Ածանցավոր են համարվում միայն այն բայերը, որոնց կազմում կա *բայածանց*: Օրինակ՝ *արտանկարել* բայը կազմված է *արտ-* նախածանցից, *նկար* արմատից և

անորոշ դերբայի *-ել* վերջավորությունից: Այն ածանցավոր բառ է, բայց ածանցավոր բայ չի համարվում, որովհետև իր կազմում *բայածանց* չունի: Բայերի կազմությունը որոշվում է *անորոշ* դերբայով, որովհետև բայի որոշ ձևերում ածանցներն ընկնում են: Օրինակ՝ *գտել է* բայն ածանցավոր է, քանի որ անորոշում ունի *ն* սոսկածանցը՝ *գտնել:*

Կան հարադիր բայեր, որոնց բաղադրիչները գրվում են առանձին, օրինակ՝ *ծափ տալ, դուր գալ:* Սրանք բարդ բառեր են, բայց որպես բայ՝ նրանց կազմությունը ևս որոշվում է բայածանցի առկայությամբ, օրինակ՝ *վեր թռչել, գլխի ընկնել* բայերը սոսկածանցավոր են, իսկ *ձեռք բերել, հանկարծակիի գալ* բայերը՝ պարզ, որովհետև բայածանց չունեն:

Պատճառական բայեր, բացի *ացն, եցն, ցն* ածանցներից, կարող են կազմվել նաև *տալ* բայի հարադրությամբ, օրինակ՝ *գրել տալ, վազել տալ:*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Դո՛ւրս գրել անկախ դերբայները (նաև հոլովված ձևերը), որոշե՛լ խոնարհումը (*ե, ա*) և կազմությունը (պարզ, ածանցավոր):**

1. Գիլլիի եղեգնուտներում շրջելիս երեսնական թվականներին ես էլ եմ հանդիպել հավալուսնի բների: Լողալով շարժվող մի կղզյակի վրա եղեգների և ջրային բույսերի անճոռնի կույտեր կային, որոնց վրա ես տեսա այդ թռչուններին՝ անշարժ նստած, ահագին կտուցները հնարավորին չափ ներս քաշած և ծայրերը հենած բլրակի պռնկին: Չկարողացա մոտենալ, ուստի և թխսկանները իրենց բները թողնելու փորձ չարին:

2. Հավալուսնը ջրի մեջ սուզվելու սովորություն չունի, ուստի որսին դեպի ափ քշելիս ձկների մի մասը հատակով ետ է փախչում դեպի ջրի խորքը: Այդ բանը բնազդով «գիտեն» հավալուսնները, ուստի հաճախ իրենց որսորդությանը ընկերացնում են ձկնկուլներին, որոնք, ինչպես հայտնի է, հիանալի սուզվել գիտեն: Այդ դեպքում ստացվում է խելացի կազմակերպված որս. Հավալուսնները ջրի վերին շերտից քշում են ձկներին դեպի ափ, իսկ ձկնկուլները սուզվում և հատակով են շարժվում դեպի ծանծաղուտը:

Վախթանգ Անանյանի «Հայաստանի կենդանական աշխարհը» գրքից

Վարժություն 2: **Յուրաքանչյուր շարքում գտնե՛լ ածանցավոր բայը:**

1. որոնել, թոշնել, տոնել, իջնել
2. զբոսնել, հայտնել, տեսնել, ձոնել
3. օթևանել, հորինել, հիմնել, ելնել

4. հասնել, մթնել, մեկնել, դեղնել
5. զանազանել, խթանել, անվանել, հագնել
6. ճանաչել, զեղչել, փախչել, կանչել
7. թռչել, շնչել, գոչել, հնչել
8. կոչել, կորչել, շառաչել, կանաչել
9. եզրապատել, կոտրատել, ընդհատել, վանկատել
10. կարոտել, կավճոտել, ցատկոտել, փոշոտել

Բայի սեռը

Սեռի կարգը բայի միջոցով ցույց է տալիս քերականական ենթակայի և խնդրի հարաբերությունը: Ըստ քերականական ենթակայի և խնդրի առնչության՝ ամեն մի գործողություն կատարվում է երեք հարաբերությամբ. ենթական անմիջականորեն ազդում է որևէ առարկայի վրա, ենթական ինքն է կրում գործողությունն իր վրա, ենթական ո՛չ ազդում է այլ առարկայի վրա, ո՛չ էլ ինքն է կրում մեկ այլ առարկայի գործողությունը: Օրինակ՝ *Անձրևը թրջեց հողը* նախադասության մեջ *հողը* այն առարկան է (խնդիրը), որն իր վրա է կրում *անձրևը* ենթակայի գործողությունը: *Հողը թրջվեց անձրևից* նախադասության մեջ *հողը* ենթական իր վրա է կրում *անձրևի* (խնդրի) գործողությունը: Իսկ *Երեխան քայլում է բակում* նախադասության մեջ ո՛չ *երեխան* ենթական է իր վրա կրում գործողությունը, ո՛չ էլ ինքն է անմիջականորեն, ուղղակիորեն ազդում մեկ այլ առարկայի (խնդրի) վրա: Ըստ այդմ՝ առանձնացվում է բայի երեք սեռ՝ *ներգործական, կրավորական* և *չեզոք:*

Ներգործական սեռի բայերն արտահայտում են այնպիսի գործողություն, որով ենթական ուղղակիորեն ազդում է որևէ առարկայի վրա. այս բայերը պահանջում են ուղիղ խնդիր լրացում (որն արտահայտում է կրող առարկան), օրինակ՝ *Այգեպանը ջրեց **այգին:** Երեխան **փուն** նկարեց:*

Կրավորական սեռի բայերն արտահայտում են այնպիսի գործողություն, որը մեկ այլ առարկայից անցնում է ենթակային. Այս բայերը պահանջում են ներգործող խնդիր լրացում (որն արտահայտում է, թե ում կողմից կամ ինչից է գործողությունն անցնում ենթակային), օրինակ՝ *Կամուրջը քանդվեց **հեղեղից:** Աշակերտը գնահատվեց **ուսուցչի կողմից:** :*

Չեզոք սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որով ո՛չ ենթական է ազդում մեկ այլ առարկայի վրա, ո՛չ էլ ինքն է կրում մեկ այլ առարկայից: Այսինքն՝ այս բայերը ուղիղ կամ ներգործող խնդիր լրացում չեն ստանում, օրինակ՝ *Նա զբոսնում էր պուրակում: Ես հիացա նկարով:*

Կրավորական բայերը կազմվում են ներգործականներից *-վ-* ածանցով, ինչպես՝ *գրել-գրվել, կառուցել-կառուցվել, ուսումնասիրել-ուսումնասիրվել:* Այսինքն՝ ներգործական բայերի կազմում չկա *–վ-* ածանցը, իսկ կրավորականների կազմում նրա առկայությունը պարտադիր է: Չեզոք սեռի բայերի մեջ *–վ-* ածանցը կարող է լինել կամ չլինել, այսինքն՝ չեզոք բայերը ձևով նման են կա՛մ ներգործականներին, կա՛մ կրավորականներին: Չեզոք սեռի հետևյալ բայերը *–վ-* ածանցը չունեն՝ *զբոսնել, բնակվել, ուրախանալ, բարկանալ, փխրել, հիանալ, երազել* և այլն: *-Վ-* ածանցով չեզոքները բաժանվում են 4 խմբի:

Առաջին խմբի մեջ մտնում են այն բայերը, որոնց կազմում կա *վ*-ն, սակայն այն կրավորական սեռ չի արտահայտում, օրինակ՝ *բնակվել, գժվել, գանգատվել, գունատվել, զմայլվել, խելագարվել, հաշտվել, հիասթափվել, հպատակվել, պապանձվել:*

Երկրորդ խմբի մեջ են մտնում այն բայերը, որոնք կրավորականներից տարբերվում են կոնկրետ կիրառությամբ, իսկ ձևով նման են: Եթե գործողությունը ենթական կրում է իր վրա, ապա բայը կրավորական է, իսկ եթե ենթական ինքն է գործողությունը կատարում, ապա բայը չեզոք սեռի է: Համեմատենք՝ *Ծառը* ***շարժվեց*** *քամուց* (կրավորական): *Ես* ***շարժվեցի*** *նստած տեղիցս* (չեզոք): Այդպիսի բայեր են *բացվել, թեքվել, խառնվել, փռվել, օրորվել* և այլն:

Երրորդ խմբի մեջ մտնում են այն բայերը, որոնք ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը տվյալ դեպքում կատարողն էլ հենց կրում է իր վրա: Այս բայերը կոչվում են անդրադարձ բայեր. օրինակ՝ *լվացվել, հագնվել, սանրվել, սափրվել, օծվել* և այլն:

Չորրորդ խմբի մեջ մտնող բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը տվյալ դեպքում փոխադարձաբար իրենց վրա են կրում կատարող կողմերը: Այս բայերը կոչվում են փոխադարձ, օրինակ՝ *բախվել, համբուրվել, ողջագուրվել, փաթաթվել:*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Յուրաքանչյուր շարքում գտնե՛լ այն բայը, որը կրավորական ածանց չունի:**

1. կոտրվել, գրվել, ծարավել, հաղորդվել
2. սոսնձվել, սեղմվել, ներկվել, գրավել
3. խորովել, վաճառվել, գնահատվել, կրճատվել
4. շարվել, տպագրվել, բղավել, մթերվել
5. գլորվել, գովել, ձևավորվել, միավորվել

Վարժություն 2: **Դո՛ւրս գրել անկախ դերբայները (նաև հոլովված) և որոշե՛լ սեռը:**

Հոգնել եմ արդեն հանդարտ հոսելուց,
Իմ մտքերի հետ մթնում խոսելուց,
Սեթևեթ խոսքից, սեթևեթ սիրուց
Հոգնել եմ արդեն:

Հոգնել եմ թաքուն ալեկոծվելուց,
Առուծախի մեջ այսքան փորձվելուց,
Կշտամբանքներով ռմբակոծվելուց
Հոգնել եմ արդեն:

Հոգնել եմ արդեն ինքս ինձ խոցելուց,
Համբերությունս շահագործելուց,
Սին կյանքս խոսքով ոսկեզօծելուց
Հոգնել եմ արդեն:

Հոգնել եմ արդեն զուր թափառելուց,
Սուտ կուռքերի դեմ մոմեր վառելուց,
Ամեն պարողի ծափահարելուց
Հոգնել եմ արդեն:

Հոգնել եմ ամեն հովից թեքվելուց,
Հոգուս մեջ հոգուս ցավը հեգնելուց,
Ինքս իմ ստվերից ահաբեկվելուց
Հոգնել եմ արդեն:

Հոգնել եմ հոգնած մարդկանց օգնելուց,
Կրկնված երգերն անվերջ կրկնելուց,
Հոգնել եմ նաև այսքան հոգնելուց,
Հոգնել եմ, հոգնել:

Համո Սահյան

Վարժություն 3: **Յուրաքանչյուր շարքում գտնե՛լ նշված սեռի բայը:**

1. *ներգործական* – նիրհել, ցատկել, նկարել, ձգտել
2. *ներգործական* – խարխափել, բաշխել, զբոսնել, հիանալ
3. *ներգործական* – սայթաքել, մրսել, շտապել, ստուգել
4. *չեզոք* – զարդարել, նախորդել, շաղախել, ձուլել
5. *չեզոք* – ընդգծել, փոփոխել, կուտակել, փայլել
6. *չեզոք* – ուղղել, թողարկել, ցատկել, հղկել
6. *կրավորական* – գրավել, սղոցվել, բղավել, խռովել
7. *կրավորական* – վրդովել, նզովել, հոլովել, վաճառվել
8. *կրավորական* – կռավել, բովել, ճշգրտվել, թոթովել

Բայի ժամանակի դեմքի և թվի կարգերը

Բայի ժամանակի կարգը ցույց է տալիսգործողության կատարման ժամանակը խոսելու պահի համեմատությամբ, այսինքն թե երբ է կատարվում գործողությունը՝ խոսելու պահի՞ն, դրանից առա՞ջ, թե՞ դրանից հետո: Դրա հիման վրա առանձնացվում է երեք հիմնական ժամանակ՝ *ներկա* (խոսելու պահին կատարվող գործողություն), *անցյալ* (խոսելու պահից առաջ կատարված գործողություն), *ապառնի* (խոսելու պահից հետո կատարվելիք գործողություն): Օրինակ՝ *գրում եմ*

(ներկա), *գրեցի, գրել էի, գրում էի* (անցյալ), *կգրեմ, պիտի գրեմ* (ապառնի): Ըստ արտահայտման ընդհանուր ձևի՝ բայի ժամանակները լինում են *պարզ* և *բաղադրյալ:* Պարզ են բայահիմքով և վերջավորությամբ արտահայտված ժամանակաձևերը (*գրեցի, գրեմ, կարդա* և այլն): Բաղադրյալ են կախյալ դերբայներով և օժանդակ բայով կազմված ժամանակաձևերը (*կարդալու եմ, գրում եմ, կարդացել էի* և այլն):

Ժամանակակից հայերենում բայն ունի երեք դեմք: *Առաջին* դեմքով բայերն արտահայտում են խոսողի կատարած գործողությունը (օրինակ՝ *գրում եմ, գրեցի*), *երկրորդ* դեմքի բայերը՝ խոսակցի կատարած գործողությունը (օրինակ՝ *գրում ես, գրեցիր*), *երրորդ* դեմքի բայերը՝ մեկ այլ անձի կամ առարկայի կատարած գործողությունը (օրինակ՝ *գրում է, կոտրվեց*): Դեմքի կարգն արտահայտվում է օժանդակ բայի կամ վերջավորությունների միջոցով:

Բայն ունի երկու թիվ՝ *եզակի* և *հոգնակի:* Եզակի թվով բայաձևերն արտահայտում են այնպիսի գործողություն, որը կատարում է մեկ անձ կամ առարկա, օրինակ՝ *Ես գրում եմ: Ես գնացի: Գնդակը գլորվեց:* Հոգնակի թվով բայաձևերն արտահայտում են այնպիսի գործողություն, որը կատարում են մեկից ավելի անձեր կամ առարկաներ, օրինակ՝ *Մենք գրում ենք: Մենք գնացինք: Գնդակները գլորվեցին:* Ինչպես տեսնում ենք, թվի կարգը ևս արտահայտվում է օժանդակ բայով կամ վերջավորություններով:

Բայի եղանակի կարգը

Եղանակի կարգը բայի միջոցով արտահայտում է ներկայացվող գործողության նկատմամբ խոսողի վերաբերմունքը: Օրինակ՝ *Ես պետք է գնամ* նախադասության մեջ *պետք է գնամ* բայաձևի միջոցով արտահայտվում է անհրաժեշտության, հարկադրության իմաստ: Կամ *գրի՛ր* բայն արտահայտում է հրաման և այլն: Առանձնացվում է բայի հինգ եղանակ՝ *սահմանական, ըղձական, ենթադրական (պայմանական), հարկադրական, հրամայական:*

Սահմանական եղանակի բայաձևերը ցույց են տալիս քերականորեն ստույգ կատարված, կատարվող կամ կատարելի գործողություն: Քերականորեն ենք ասում, որովհետև իրականում այդ գործողությունը կարող է տեղի ունեցած չլինել, օրինակ *Նա* ***գնաց*** *տուն* նախադասության մեջ արտահայտված *գնաց* գործողությունը կարող է չհամապատասխանել իրականությանը, սակայն խոսողն այն քերականորեն ներկայացնում է որպես ստույգ գործողություն:

Ըղձական եղանակի բայաձևերը ցույց են տալիս գործողության կատարման իղձ, ցանկություն, օրինակ ***Գնամ*** *տուն: Երանի* ***գնայի*** *հանգստանալու:*

Ենթադրական (կամ պայմանական) եղանակի բայաձևերը ցույց են տալիս պայմանով, ենթադրաբար կամ էլ հաստատապես կատարելի գործողություն, օրինակ՝ *Ես շուտով* ***կգնամ*** *տուն: Եթե թույլ տան,* ***կգամ****:*

Հարկադրական եղանակի բայաձևերը ցույց են տալիս հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելի գործողություն, օրինակ՝ *Ես պետք է գնամ: Դու պիտի սովորեիր:*

Հրամայական եղանակի բայաձևերը ցույց են տալիս գործողության կատարման *հրաման, հորդոր, խնդրանք,* օրինակ՝ *Հեռացի՛ր: Դուռը փակի՛ր:* Հրամայականի բայաձևերի սովորաբար վրա դրվում է շեշտ:

Բայի եղանակների ժամանակաձևերը ներկայացնենք աղյուսակով:

Դեմք	ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ			
	1.Անկատար ներկա		**2.Անկատար անցյալ**	
	Եզակի թիվ	*Հոգնակի թիվ*	*Եզակի թիվ*	*Հոգնակի թիվ*
1-ին	գրում եմ խաղում եմ	գրում ենք խաղում ենք	գրում էի խաղում էի	գրում էինք խաղում էինք
2-րդ	գրում ես խաղում ես	գրում եք խաղում եք	գրում էիր խաղում էիր	գրում էիք խաղում էիք
3-րդ	գրում է խաղում է	գրում են խաղում են	գրում էր խաղում էր	գրում էին խաղում էին
	3.Վաղակատար ներկա		**4.Վաղակատար անցյալ**	
	Եզակի թիվ	*Հոգնակի թիվ*	*Եզակի թիվ*	*Հոգնակի թիվ*
1-ին	գրել եմ խաղացել եմ	գրել ենք խաղացել ենք	գրել էի խաղացել էի	գրել էինք խաղացել էինք
2-րդ	գրել ես խաղացել ես	գրել եք խաղացել եք	գրել էիր խաղացել էիր	գրել էիք խաղացել էիք
3-րդ	գրել է խաղացել է	գրել են խաղացել են	գրել էր խաղացել էր	գրել էին խաղացել էին
	5.Ապակատար ներկա		**6. Ապակատար անցյալ**	
	Եզակի թիվ	*Հոգնակի թիվ*	*Եզակի թիվ*	*Հոգնակի թիվ*
1-ին	գրելու եմ խաղալու եմ	գրելու ենք խաղալու ենք	գրելուէի խաղալու էի	գրելու էինք խաղալու էինք
2-րդ	գրելու ես խաղալու ես	գրելու եք խաղալու եք	գրելու էիր խաղալու էիր	գրելու էիք խաղալու էիք
3-րդ	գրելու է խաղալու է	գրելու են խաղալու են	գրելու էր խաղալու էր	գրելու էին խաղալու էին
	7.Անցյալ կատարյալ			
	Եզակի թիվ		*Հոգնակի թիվ*	
1-ին	գրեցի խաղացի մոտեցրի գտա		գրեցիք խաղացինք մոտեցրինք գտանք	
2-րդ	գրեցիր խաղացիր մոտեցրիր գտար		գրեցիք խաղացիք մոտեցրիք գտաք	
3-րդ	գրեց խաղաց մոտեցրեց գտավ		գրեցին խաղացին մոտեցրին գտան	
	ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ		**ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ**	
	1.Անցյալ		**1.Անցյալ**	
	Եզակի թիվ	*Հոգնակի թիվ*	*Եզակի թիվ*	*Հոգնակի թիվ*
1-ին	գրեի խաղայի	գրեինք խաղայինք	կգրեի կխաղայի	կգրեինք կխաղայինք
2-րդ	գրեիր խաղայիր	գրեիք խաղայիք	կգրեիր կխաղայիր	կգրեիք կխաղայիք
3-րդ	գրեր խաղար	գրեին խաղային	կգրեր կխաղար	կգրեին կխաղային
	2.Ապառնի		**2.Ապառնի**	
	Եզակի թիվ	*Հոգնակի թիվ*	*Եզակի թիվ*	*Հոգնակի թիվ*
1-ին	գրեմ խաղամ	գրենք խաղանք	կգրեմ կխաղամ	կգրենք կխաղանք
2-րդ	գրես խաղաս	գրեք խաղաք	կգրես կխաղաս	կգրեք կխաղաք
3-րդ	գրի խաղա	գրեն խաղան	կգրի կխաղա	կգրեն կխաղան

	ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ		ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ	
	1.Անցյալ		**1.Անցյալ**	
	Եզակի թիվ	*Հոգնակի թիվ*	*Եզակի թիվ*	*Հոգնակի թիվ*
1-ին	պիտի գրեի պիտի խաղայի	պիտի գրեինք պիտի խաղայինք	---	---
2-րդ	պիտի գրեիր պիտի խաղայիր	պիտի գրեիք պիտի խաղայիք	---	---
3-րդ	պիտի գրեր պիտի խաղար	պիտի գրեին պիտի խաղային	---	---
	2.Ապառնի		**2.Ապառնի**	
	Եզակի թիվ	*Հոգնակի թիվ*	*Եզակի թիվ*	*Հոգնակի թիվ*
1-ին	պիտի գրեմ պիտի խաղամ	պիտի գրենք պիտի խաղանք	---	---
2-րդ	պիտի գրես պիտի խաղաս	պիտի գրեք պիտի խաղաք	գրի՛ր, խաղա՛, մոտեցրո՛ւ	գրեցե՛ք/գրե՛ք, խաղացե՛ք, մոտեցրե՛ք
3-րդ	պիտի գրի պիտի խաղա	պիտի գրեն պիտի խաղան	---	---

Ինչպես տեսնում ենք, սահմանական եղանակն ունի 7 ժամանակաձև, ըղձականը, ենթադրականը և հարկադրականը երկուական, իսկ հրամայականը՝ մեկ:

Սահմանական եղանակի *անկատար ներկա* և *անցյալ, վաղակատար ներկա* և *անցյալ, ապակատար ներկա* և *անցյալ* ժամանակաձևերը կազմվում են անկատար, վաղակատար, ապակատար կախյալ դերբայներով և օժանդակ բայի ներկայի կամ անցյալի ձևերով: *Անցյալ կատարյալը* կազմվում է 2 տիպի վերջավորություններով: Դրանք հետևյալներն են.

-ի	*-ա*
-իր	*-ար*
--- կամ *-եց*	*-ավ*

Ընդհանուր վերջավորություններն են *-ի, -իր,* --- (կամ *–եց*), *-ինք, -իք, -ին,* օրինակ՝ *գրեց-ի, գրեց-իր, գրեց, գրեց-ինք, գրեց-իք, գրեց-ին:* Եզակի երրորդ դեմքի բայերը հիմնականում վերջավորություն չեն ստանում, այլ արտահայտվում են բայահիմքով (*գրեց*): Միայն պատճառական բայերի եզակի երրորդ դեմքի բայաձևերն են ունենում *-եց* վերջավորությունը, օրինակ՝ *մոտեցր-ի, մոտեցր-իր, մոտեցր-եց, մոտեցր-ինք, մոտեցր-իք, մոտեցր-ին*: Սոսկաձանցավոր բայերի անցյալ կատարյալը կազմվում է հետևյալ վերջավորություններով՝ *-ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան* (օրինակ՝ *գտ-ա, գտ-ար, գտ-ավ, գտ-անք, գտ-աք, գտ-ան*):

Ըղձական եղանակի *ապառնին* կազմվում է *-մ, -ս,* ---, *-նք, -ք, -ն* վերջավորություններով (օրինակ՝ *գրե-մ, գրե-ս, գրի, գրե-նք, գրե-ք, գրե-ն // խաղա-մ, խաղա-ս, խաղա, խաղա-նք, խաղա-ք, խաղա-ն*): Ինչպես տեսնում ենք, եզակի երրորդ դեմքը վերջավորություն չի ստանում, այլ ավարտվում է *ե* և *ա* խոնարհիչ-

ներով, որոնցից *ե*-ն փոխվում է *ի*-ի: Ըղձական *անցյալը* կազմվում է *-ի, -իր, -ր, -ինք, -իք, -ին* վերջավորություններով (օրինակ՝ *գրե-ի, գրե-իր, գրե-ր, գրե-ինք, գրե-իք, գրե-ին*):

Ենթադրական եղանակի *անցյալը* և *ապառնին* կազմվում են ըղձական անցյալից և ապառնուց *կ(ը)*- եղանակիչի հավելումով (ձայնավորով սկսվող բայերի դեպքում *կ*-ից հետո *ը* չի արտասանվում՝ *կասեմ, կիջնի*), օրինակ՝ *կգրեի, կգրեիր, կգրեր, կգրեինք, կգրեիք, կգրեին // կգրեմ, կգրես, կգրի, կգրենք, կգրեք, կգրեն :*

Հարկադրական եղանակի *անցյալը* և *ապառնին* ևս կազմվում են ըղձական անցյալից և ապառնուց *պիտի* կամ *պետք է* եղանակիչներով, օրինակ՝ *պետք է գրեի, պետք է գրեիր, պետք է գրեր, պետք է գրեինք, պետք է գրեիք, պետք է գրեին // պետք է գրեմ, պետք է գրես, պետք է գրի, պետք է գրենք, պետք է գրեք, պետք է գրեն:*

Հրամայական եղանակն ունի միայն ապառնի ժամանակի երկրորդ դեմքի բայաձևեր: Դրանք կազմվում են հետևյալ ձևով: Բացի *ա* խոնարհման պարզ և պատճառական բայերից՝ մյուս բոլոր բայերը եզակի թվում ստանում են *-ի՛ր* վերջավորությունը (օրինակ՝ *գրի՛ր, գտի՛ր, մոտեցի՛ր*), *ա* խոնարհման պարզ բայերը ստանում են *-ա* վերջավորությունը (օրինակ՝ *կարդա՛, խաղա՛*), իսկ պատճառական բայերը ստանում են *-ո՛ւ* վերջավորությունը (օրինակ՝ *մոտեցրո՛ւ, հեռացրո՛ւ*): Հոգնակի թվի բոլոր բայերը ստանում են *-ե՛ք* վերջավորությունը (օրինակ՝ *գրե՛ք//գրեցե՛ք, կարդացե՛ք, գտե՛ք, մոտեցրե՛ք)*:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Արտագրե՛լ նախադասությունները՝ փակագծերում տրված բայերը անհրաժեշտ քերականական ձևերով գրելով համապատասխան տեղերում:**

1. Մայր մտնող արևի ճառագայթները …. ամեն ինչ, և մի կախարդող տեսարան …., որով …. հյուրանոցի պատշգամբները ելած զբոսաշրջիկները:

(հիանալ, ոսկևորել, ստեղծել)

2. Արդեն …. պարտեզի ծաղիկները, և հեռվից նայելիս …., թե մի նախշուն գորգ …. պատշգամբի առջև փռված այդ հողակտորը: *(թվալ, ծածկել, բացել)*

3. Ցանկապատի հետևում …. մի տուն. նրա բակում արևածաղիկներ …., որոնք, իրենց գեղեցիկ գլուխները բարձր պահած, կարծես …. անցորդներին:

(ժպտալ, երևալ, աճել)

4. Մենք մեքենայի միջից անշարժ …. ճամփեզրի մոտակա սյունին նստած արագիլին, մինչև որ նա տեղից …. և թևերը ծանր-ծանր թափահարելով՝ …. դեպի մոտակա ճահիճները: *(թռչել, պոկել, նայել)*

5. Առաջարկը միաձայն …., և հաջորդ օրվանից բոլորը …. աշխատանքի գալ մեկ ժամ շուտ, որպեսզի …. ժամանակին ավարտել պատվերի կատարումը:

(սկսել, ընդունել, կարողանալ)

6. Ընթացող գնացքի լուսամուտից …. մոտակա բնակավայրերի լույսերը, որոնք մի պահ …. թանձրացող խավարում, ապա ….:

(երևալ, անհետանալ, առկայծել)

7. Հանգստյան տան բակում մարդիկ …., երեխաները, ճոճանակների վրա նստած, …., իսկ մեղմ քամին …. մոտակա սարերի զովությունը:

(օրորել, զբոնել, բերել)

8. Վարպետը …. հաստոցը, …. նոր պատրաստած դետալը և …. գծագրի հետ՝ երբեմն ինչ-որ չափումներ անելով: *(վերցնել, անջատել, համեմատել)*

9. Դաշնակահարի մատները …. ստեղների վրայով, և դահլիճը …. հոգեպարար մի երաժշտությամբ, որն …. ունկնդիրների հոգիները:

(ալեկոծել, ողողել, սահել)

10. Ճամփեզրի խոտերի միջից հանկարծ մի աղվես …., որն …. ճանապարհի մյուս կողմն ու …. թփուտներում: *(անցնել, անհետանալ, հայտնվել)*

Վարժություն 2: **Դո՛ւրս գրել դիմավոր բայերը և որոշե՛լ եղանակը, ժամանակաձևը, թիվը, դեմքը, սեռը, կազմությունը և խոնարհումը:**

Լուսամփոփը հանկարծ շողաց,
Եվ ես հանկարծ քեզ հիշեցի,
Ծառը խշշաց, ճյուղը դողաց,
Եվ ես հանկարծ քեզ հիշեցի,
Առուն փախավ խոխոջալով,
Եվ ես հանկարծ քեզ հիշեցի,
Ծածկվեց լուսնյակն ամպի շալով,
Եվ ես հանկարծ քեզ հիշեցի:
Դու ինչո՞ւ ես լցվել այդպես
Աշխարհով մեկ,
Դու ինչո՞ւ ես այդպես անհուն
Ու անեզերք:

Մարո Մարգարյան

Ժխտական խոնարհում

Բայերը խոսքում կարող են գործածվել թե՛ դրական, թե՛ ժխտական ձևերով: Ժխտական խոնարհման ձևերով ժխտվում, բացասվում է գործողության կատարումը, օրինակ՝ *գրում է - չի գրում, գրեց – չգրեց:* Բայի ժխտական ձևերը կազմվում են չ- կամ մի՛ մասնիկներով:

Սահմանական եղանակի՝ օժանդակ բայով կազմված ձևերի ժխտականը կազմվում է՝ օժանդակ բային չ- ավելացնելով, ինչպես՝ *գրում եմ-չեմ գրում, չես գրում, չի գրում, չենք գրում, չեք գրում, չեն գրում, գրել եմ – չեմ գրել, չես գրել, չի գրել, չենք գրել, չեք գրել, չեն գրել, գրելու եմ-չեմ գրելու, չես գրելու, չի գրելու, չենք գրելու, չեք գրելու, չեն գրելու:* Ինչպես տեսնում ենք, ժխտական օժանդակ բայը փոխում է իր դիրքը և դրվում է կախյալ դերբայից առաջ, իսկ ներկա ձևի եզակի երրորդ դեմքի օժանդակ բայը՝ *է*, դառնում է *ի*, որին էլ կցվում է չ-ն: Անցյալ կատարյալի ժխտականը կազմվում է բային չ- ավելացնելով, օրինակ՝ *գրեցի-չգրեցի, չգրեցիր, չգրեց, չգրեցինք չգրեցիք չգրեցին:*

Ըղձական եղանակի բայաձևերի ժխտականը կազմվում է՝ բային չ- մասնիկն ավելացնելով, օրինակ՝ *գրեմ – չգրեմ, չգրես, չգրի, գրեի – չգրեի, չգրեիր, չգրեր* և այլն:

Հարկադրական եղանակի բայաձևերի ժխտականը կազմվում է՝ եղանակիչին չ- ավելացնելով, օրինակ՝ *պիտի գրեմ – չպիտի գրեմ, չպիտի գրես, պետք է գրեի – չպետք է գրեի, չպետք է գրեիր* և այլն:

Ենթադրական եղանակի ժխտականի կազմությունը տարբերվում է մյուսներից: Այն ոչ թե կազմվում է դրականի ձևերին չ- մասնիկն ավելացնելով, այլ ժխտման դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով, օրինակ՝ *կգրեմ – չեմ գրի, կգրես-չես գրի, կգրի-չի գրի, կգրեի – չէի գրի, կգրեիր-չէիր գրի* և այլն: Սա ժխտական դերբայի միակ կիրառությունն է:

Հրամայական եղանակի ժխտականը (արգելական հրամայականը) կազմվում է *մի՛* մասնիկով, օրինակ՝ *գրի՛ր – մի՛ գրիր, գրեցե՛ք//գրե՛ք – մի՛ գրեցեք // մի՛ գրեք, կարդա՛ - մի՛ կարդա, կարդացե՛ք – մի՛ կարդացեք* և այլն: Սոսկածանցավոր և պատճառական բայերի ժխտական հրամայականը կազմվում է երկու ձևով՝ *մի՛ մտնիր – մի՛ մտրիր, մի՛ փախչիր – մի՛ փախիր, մի՛ հեռացնի – մի՛ հեռացրու* և այլն: Երկրորդ ձևերը տարածվել են ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ և գերիշխող են դառնում:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Դո՛ւրս գրել ժխտական խոնարհումով բայերը և որոշե՛լ եղանակը, ժամանակաձևը, թիվը, դեմքը, սեռը, կազմությունը և խոնարհումը:**

Ո՛չ, ես չե՞մ կորչի, ես ետ կդառնամ
Իմ ոսկեհատիկ երգերի հետքով…

Դեռ չեմ հագեցել քեզ նայելուց,
Քո հրաշք լեռան, գույնին գրին….

Դեռ չեմ հասցրել բերկրել ներքուստ
Քո ազատությամբ շփոթեցնող….

Սիլվա Կապուտիկյան

Ես քայլում եմ քո հետքերով ու խորհում,
Որ քեզ նման էլ չեմ լինի իմ օրում,
Չի ողողանջի զանգակ ծաղիկն ինձ համար,
Ինձ չեն գերի թիթեռնիկներն անհամար:

Վահագն Դավթյան

Դեղին տերևն ընկավ քարին,
Ոչ մի շշուկ չլսվեց….

Մարո Մարգարյան

Աչքդ պահի՛ր, աշխա՛րհ, խղճիդ վրա,
Որ չփակվի հանկարծ աչքը նրա,
Որ չքնի հանկարծ, քնով չանցնի…

Համո Սահյան

Սոսկածանցավոր և պատճառական բայերի խոնարհումը և դերբայների կազմությունը

Ինչպես նշվել է, բայածանցներն են *ան, են, ն, չ* (սոսկածանցներ), *ացն, եցն, ցն* (պատճառական), *ապ, ոպ, կոպ, պ* (բազմապատկական), *վ* (կրավորական): Խոնարհման համակարգում և դերբայներ կազմելիս սոսկածանցավոր և պատճառական բայերը որոշ տարբերություններ են դրսևորում: Սոսկածանցավոր և պատճառական բայերի առանձնահատկությունն այն է, որ մի շարք ձևերում *ն* և *չ* ածանցներն ընկնում են, *ան, են* սոսկածանցների փոխարեն դրվում են *աց, եց*,

իսկ պատճառական *ացն, եցն, ցն* ածանցների փոխարեն դրվում են *ացր, եցր, ցր:* Այս փոփոխությունները կատարվում են հետևյալ ձևերում:

Սոսկածանցավոր բայեր՝ *հեռ**ան**ալ, մոտ**են**ալ, գտ**ն**ել, փախ**չ**ել:*

Ենթակայական	հեռացող	մոտեցող	--------	---------
վաղակատար	հեռացել	մոտեցել	գտել	փախել
հարակատար	հեռացած	մոտեցած	գտած	փախած
անցյալ կատարյալ	հեռացա	մոտեցա	գտա	փախա
հրամայական	հեռացի՛ր	մոտեցի՛ր	գտի՛ր	փախի՛ր
արգելական հրամայական	մի՛ հեռացիր մի՛ հեռանա	մի՛ մոտեցիր մի՛ մոտենա	մի՛ գտիր մի՛ գտնիր	մի՛ փախիր մի՛ փախչիր

Պատճառական բայեր՝ *հեռ**ացն**ել, մոտ**եցն**ել, թռ**ցն**ել:*

Վաղակատար	հեռացրել	մոտեցրել	թռցրել
հարակատար	հեռացրած	մոտեցրած	թռցրած
անցյալ կատարյալ	հեռացրի	մոտեցրի	թռցրի
հրամայական	հեռացրո՛ւ	մոտեցրո՛ւ	թռցրո՛ւ
արգելական հրամայական	մի՛ հեռացրու մի՛ հեռացնի	մի՛ մոտեցրու մի՛ մոտեցնի	մի՛ թռցրու մի՛ թռցնի

Անկանոն բայեր

Կան բայեր, որոնց խոնարհման համակարգի որոշ ձևեր և դերբայներ կազմությամբ շեղվում են ընդհանուր օրինաչափություններից: Այդ բայերը կոչվում են *անկանոն:* Օրինակ՝ *ասել* բայի անցյալ կատարյալը պետք է լիներ *ասեց*՝ որպես *ե* խոնարհման պարզ բայ, սակայն լինում է *ասաց,* հրամայականը պետք է լիներ *ասի՛ր,* մինչդեռ լինում է *ասա՛* և այլն: *Գալ, ուտել, լինել* բայերի դեպքում փոխվում է ամբողջ հիմքը՝ *եկա*[30]*, կերա, եղա* և այլն: Որոշ անկանոն բայեր ունեն զուգահեռ ձևեր, օրինակ՝ *բերի // բերեցի:* Անկանոն բայերը հետևյալներն են. *ե* խոնարհման պարզ բայեր՝ *ասել, բերել, զարկել, ուտել, ե* խոնարհման ածանցավոր բայեր՝ *անել, դնել, տանել, թողնել, ելնել, առնել, տեսնել, լինել, ա* խոնարհման պարզ բայեր՝ *գալ, լալ, տալ, ա* խոնարհման ածանցավոր բայեր՝ *դառնալ, լվանալ, կենալ:*

[30] Որտանելպես *գալ* բայի հրամայական՝ *ե՛կ*-ից բացի՝ գործածվում է նաև *արի՛*-ն, որը ծագում է այլ բայաձևից:

Անկանոն բայերի շեղումները ներկայացնենք աղյուսակով. բերվում են անկանոնություն դրսևորող ձևերը:

Բայը	*Հրամա-յական*	*Անցյալ կատարյալ*	*Վաղակա-տար*	*Հարակա-տար*	*Ենթակա-յական*	*Անկատար-համակա-տար*
ելնել	ե՛լ / ելի՛ր					
առնել	ա՛ռ					
տեսնել	տե՛ս					
ասել	ասա՛	ասաց				
բերել	բե՛ր	բերի/բերեցի				
զարկել	զա՛րկ/զարկի՛ր	զարկի/զարկեցի				
լվանալ	լվա՛	լվացի				
թողնել	թո՛ղ	թողի/թողեցի				
ուտել	կե՛ր	կերա	կերել	կերած		
անել	արա՛	արի/արեցի	արել	արած		
դնել	դի՛ր	դրի/դրեցի	դրել	դրած		
լինել	եղի՛ր	եղա	եղել	եղած	եղող/լինող	
դառնալ	դարձի՛ր	դարձա	դարձել	դարձած	դարձող	
(վեր) կենալ	կա՛ց	կացա	կացել	կացած	կացող	
գալ	ե՛կ	եկա	եկել	եկած	եկող	գալիս
լալ	լա՛ց	լացի/լացեցի	լացել	լացած	լացող	լալիս
տալ	տո՛ւր	տվի/տվեցի	տվել	տված	տվող	տալիս

Պակասավոր բայեր

Կան բայեր, որոնք չունեն խոնարհման մի շարք ձևեր և որոշ դերբայներ: Այդպիսի բայերը կոչվում են *պակասավոր:* Պակաս ձևերը լրացվում են այլ բայերով: Պակասավոր են *հուսալ, ցանկալ, լվալ, կենալ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ, եմ* բայերը: Սրանցից *կամ, գիտեմ, ունեմ, արժեմ, եմ* բայերը հարց չեն ստանում:

Հուսալ բայն ունի անորոշ դերբայ (*հուսալ*), ըղձական (*հուսամ*), ենթադրական (*կհուսամ*), հարկադրական (*պիտի հուսամ*), մասամբ էլ հրամայական եղանակների (*հուսա՛*) բայաձևեր: Մյուս ձևերի համար գործածվում է *հույս ունենալ* հարադիր բայը:

Ցանկալ բայն ունի անորոշ դերբայ (*ցանկալ*), ըղձական (*ցանկամ*), ենթադրական (*կցանկամ*), հարկադրական (*պիտի ցանկամ*) եղանակների բայաձևեր: Մյուս ձևերի համար գործածվում է *ցանկանալ* բայը:

Լվալ բայը չունի անկատար դերբայ, բնականաբար նաև անկատար ներկա և անցյալ ժամանակաձևեր: Դրանց փոխարեն գործածվում են *լվանալ* բայի ձևերը (*լվանում եմ, լվանում էի*):

Կենալ բայն ունի անորոշ դերբայ (*կենալ*) և հրամայական եղանակի բայաձևեր (*կա՛ց, կացե՛ք*): Որպես հարադիր բայերի բաղադրիչ՝ *կենալ*-ը կարող է խոնարհվել մյուս ձևերով, սակայն որպես ինքնուրույն բայ՝ գործածվում է միայն նշված ձևերով:

Կամ, գիտեմ, ունեմ, արժեմ բայերն ունեն միայն սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակաձևեր (*կամ-կայի, գիտեմ-գիտեի, ունեմ-ունեի, արժեմ-արժեի*): *Արժել* բայն ունի նաև անորոշ դերբայ: Պակաս ձևերը լրացվում են *գիտենալ, ունենալ, արժենալ* բայերով:

Եմ բայը կոչվում է օժանդակ բայ. ունի ներկա (*եմ, ես, է // ենք, եք, են*) և անցյալ (*էի, էիր, էր // էինք, էիք, էին*) ժամանակաձևեր:

Վարժություններ

Վարժություն 1: **Դո՛ւրս գրել անկանոն և պակասավոր բայերը և ձևաբանորեն վերլուծե՛լ:**

Կամաց-կամաց արդեն խելքի ես գալիս,
Գիտես արդեն խոսքեր կտրել ու կապել.
Թոթով-թոթով բառերն իրար ես տալիս,
Գիտես արդեն խորամանկել ու խաբել:

Մորդ կամքը դարձրել ես խաղալիք,
Արդեն որքան սուտ արտասուք ես թափել,
Ձեռքդ առած տկար թելերն իմ հոգու՝
Գիտես արդեն խորամանկել ու խաբել:

Խակ մտքերի դեռ անհաստատ նժարով
Լավն ու վատը գիտես կշռել ու չափել,
Շուտ ես գտել ծուռ շավիղներն աշխարհի,
Գիտես արդեն խորամանկել ու խաբել:

Մարո Մարգարյան

Վարժություն 2: **Յուրաքանչյուր շարքում գտնե՛լ անկանոն բայը:**

1. արարել, ելնել, ծալել, մտածել
2. խոսել, ասել, գրել, նկարել
3. դիտել, նայել, նշմարել, տեսնել
4. ուտել, հյուսել, տնտեսել, սպասել
5. շրջել, թվարկել, լինել, որոշել
6. գնալ, խաղալ, կարդալ, գալ
7. հիշել, թողնել, նշել, հնչել

8. թեթևանալ, զովանալ, դառնալ, վարպետանալ
9. թերանալ, լալ, ջանալ, ցանկանալ
10. սկսել, հյուսել, առնել, փորել

ՄԱԿԲԱՅ

Լեզվում կան բառեր, որոնք արտահայտում են գործողության (հատկանիշի) հատկանիշներ, օրինակ՝ ***հերոսաբար*** *կռվել,* ***դանդաղորեն*** *քայլել,* ***լիովին*** *վստահել,* ***անմիջապես*** *օգնել,* ***չափազանց*** *դժվար: Գործողության (հատկանիշի) հատկանիշներ ցույց տվող բառերը միավորվում են մակբայ խոսքի մասի մեջ:* Մակբայները լինում են *տեղի, ձևի, չափ ու քանակի, ժամանակի:*

Տեղի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման տեղը, օրինակ՝ *ամենուրեք, դեմ դիմաց, հեռու, մեջտեղ, գյուղեգյուղ, դռնեդուռ:*

Ձևի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ձևը, օրինակ՝ *արագ, բարեկամաբար, դանդաղ, կամաց, հերոսաբար, միաձայն, լրջորեն, հազիվհազ, հապճեպ, հոտնկայս, ներքուստ, արտաքուստ:*

Չափ ու քանակի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման չափը, հատկանիշի դրսևորման աստիճանը, օրինակ՝ *ամբողջովին, հաճախ, լիովին, գրեթե, մոտավորապես, բազմիցս, մասամբ, չափազանց, փոքր-ինչ, իսպառ, քառակի:*

Ժամանակի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը, օրինակ՝ *այժմ, այլևս, այսուհետև, արդեն, նախօրոք, վաղ, վաղուց, ուշ, օրեցօր, առայժմ, միշտ, հիմա, հավիտյան:*

Որոշ մակբայներ բազմիմաստ են և տարբեր նախադասություններում կարող են արտահայտել տարբեր իմաստներ: Սրանք կոչվում են *ընդհանրական* մակբայներ, օրինակ՝ ***Շուտ-շուտ*** *այցելում է* (չափ). ***Շուտ-շուտ*** *ուտում էր* (ձև): Սրանց տեսակը որոշվում է ըստ տվյալ կիրառության:

Մակբայների մի մասը կազմված է *մակբայակերտ* ածանցներով, որոնցից են՝ *-բար* (օրինակ՝ *հերոսաբար*), *-պես* (օրինակ՝ *մշտապես*), *-որեն* (օրինակ՝ *մտերմորեն*), *-ովին* (օրինակ՝ *ամբողջովին*), *-ակի* (օրինակ՝ *շեղակի*), *-գին* (օրինակ՝ *ցավագին*), *-պատիկ* (օրինակ՝ *կրկնապատիկ*), *-վարի* (օրինակ՝ *մարդավարի*), *-ուստ* (օրինակ՝ *ներքուստ*) և այլն:

Նախադասության կազմում մակբայները կատարում են պարագաների շարահյուսական պաշտոններ:

Վարժություններ

Վարժություն 1: **Յուրաքանչյուր շարքում գտնե՛լ մակբայը:**

1. արագորեն, դեպի, փայտե, անշուշտ
2. ապա, մասին, լիովին, անշուշտ
3. եթե, որտեղ, ամենուր, այստեղ
4. մյուս, բոլոր, ուր, հապճեպ
5. ոչինչ, գրեթե, ինչ-որ, այսպես
6. երբ, բայց, նախօրոք, յուրաքանչյուր
7. միաձայն, ձայնավոր, հնչյուն, շառաչ
8. ինչ-ինչ, փոքր-ինչ, ինչ, որտեղ
9. սա, բոլոր, մասամբ, յուրաքանչյուր
10. ողջ, ամբողջ, ամբողջովին, ոչ մի

Վարժություն 2: **Կազմե՛լ նախադասություններ՝ գործածելով տրված մակբայները:**

Հերոսաբար, մասամբ, փոքր-ինչ, ամենուրեք, լիովին:

ԿԱՊ

Կապ կոչվում են այն բառերը, որոնք մի բառ կապում են մեկ այլ բառի և այդ կապվող բառի հետ դառնում են նրա լրացումը: Օրինակ՝ *խոսել դասից* կապակցության մեջ *խոսել* և *դասից* բառերը կապվել են իրար անմիջականորեն՝ հոլովաձևով, սակայն *խոսել դասի մասին* կապակցության մեջ *մասին* բառը *դասի* բառը կապել է *խոսել* բառին, և *դասի մասին* կապակցությունը արտահայտել է բերել մեկ իմաստ՝ *դասից: Մասին*-ը կապ է և կապակցել է *խոսել* և *դասի* բառաձևերը:

Կապերը մի մասը դրվում է կապակցվող բառերից առաջ, մյուս մասը՝ դրանցից հետո, իսկ մի քանիսը՝ առաջ կամ հետո: Կապվող բառից առաջ դրվող կապերը կոչվում են *նախադրություններ:* Դրանցից են՝ *առանց, դեպի, մինչև, հանուն, նախքան, չնայած, ըստ, հօգուտ* (սխալ է *ի օգուտ* ձևը) և այլն, օրինակ՝ *առանց գրքի, դեպի տուն, մինչև այգի:* Կապակցվող բառերից հետո դրվող կապերը կոչվում են *հետադրություններ:* Դրանցից են՝ *առթիվ, զատ, համար, հանդերձ, հանդեպ, մասին, միջև, մեջ, վրա, տակ, դիմաց:* և այլն, օրինակ՝ *տոնի առթիվ, դրանից զատ, գործի համար:* Այն կապերը, որոնք կարող են դրվել կապակցվող բառերից թե՛ առաջ, թե՛ հետո, կոչվում են *երկդրություններ,* օրինակ՝

բացի (*բացի նրանից* կամ *նրանից բացի*), *անկախ, շնորհիվ* (սխալ է *ի շնորհիվ* կապակցությունը) և այլն:

Որպես կապ հանդես եկող բառերը բաժանվում են 3 խմբի՝ *իսկական, անիսկական* և *կապական բառեր:* Իսկական են միշտ որպես կապ հանդես եկող և չհոլովվող բառերը, օրինակ՝ *մասին, բացի, դեպի:* Անիսկական են որպես կապ գործածվող, սակայն հոլովվող բառերը, օրինակ՝ *վրա, մոտ, առջև, տակ, մեջ* և այլն: Կապական բառեր են համարվում այլ խոսքի մասերին պատկանող բառերը, որոնք կարող են գործածվել նաև կապական արժեքով, օրինակ՝ *Նա աջ* ***ձեռքով*** (գոյական) *բռնել էր գրիչը: Նա իր բոլոր նպատակներն իրագործում էր նրա* ***ձեռքով*** (կապական բառ): *Պատկերը* ***գծով*** (գոյական)*բաժանված է երկու մասի: Այդ մասնագիտության* ***գծով*** (կապական բառ) *փորձառու մարդիկ են հարկավոր:*

Կապերի խնդրառությունը (կառավարումը): Ամեն մի կապի հետ կապակցվող բառը դրվում է որոշակի հոլովով, օրինակ՝ *վրա* կապի հետ բառը պետք է դրվի սեռական հոլովով՝ *սեղանի վրա:* Կապի՝ որոշակի հոլովով խնդիր պահանջելը կոչվում է կապերի խնդրառություն կամ կառավարում: Պետք է հիշել, թե որ կապը որ հոլովով խնդիր է պահանջում:

Ուղղական հոլովով կապի խնդիրներ գրեթե չեն դրվում: Այսպես են դրվում միայն ուղղական հոլովով բացահայտյալ ունեցող մասնական բացահայտիչները, որոնք կապի խնդիրներ են, օրինակ՝ *Նա՝* ***իբրև ընկեր****, կատարեց իր պարտքը:* Քանի որ *նա* ենթական ուղղական հոլովով է, նրա բացահայտիչը ևս համարվում է ուղղական հոլովով:

Սեռական հոլովով խնդիր են պահանջում շատ մեծ թվով կապեր՝ *առթիվ, առջև, դիմաց, մասին, համար, նման, նկատմամբ, պատճառով, փոխարեն* և այլն:

Տրական հոլովով խնդիր են պահանջում որոշ կապեր՝ *զուգընթաց, ընդառաջ, կից, հակառակ, չնայած* և այլն:

Հայցական հոլովով խնդիր են պահանջում մի շարք կապեր՝ *առ, դեպի, ի վար, ի վեր, մինչև, իբրև, նախքան, չհաշված* և այլն:

Բացառական հոլովով խնդիր են պահանջում մի շարք կապեր՝ *բացի, դուրս, զատ, վար, վերև, ներքև, ներս, անկախ* և այլն:

Գործիական հոլովով խնդիր են պահանջում մի քանի կապեր՝ *հանդերձ, մեկտեղ, մեկ* (օրինակ՝ *սենյակով մեկ*)::

Ներգոյական հոլովով կապի խնդիրներ չեն դրվում:

Պետք է հիշել, որ մի շարք կապերի հետ առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունները դրվում են տրական հոլովով, թեև գոյականները դրվում են սեռականով: Այդ կապերն են՝ *մոտ, վրա, հետ, պես, չափ, համար, նման, հօգուտ, հանձին, ի դեմս, հանուն: Չափ* կապի հետ նշված դերանունները

կարող են դրվել նաև սեռական հոլովով՝ *իմ չափ: Հանդեպ* կապի հետադաս լինելու դեպքում դերանունը դրվում է սեռականով (***իմ*** *հանդեպ*), իսկ նախադաս լինելու դեպքում՝ տրականով (*հանդեպ* ***ինձ***): Կապերի հոլովված ձևերի հետ առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունները դրվում են սեռական հոլովով՝ *իմ մոտից, քո մոտից, քո վրայից* և այլն:

Վարժություններ

Վարժություն 1: **Դո՛ւրս գրել կապերն ու կապական բառերը, որոշե՛լ նրանց խնդիրների հոլովը:**

Յուրաքանչյուր մարդու համար մի որևէ բան կյանքի խորհրդանիշ է դառնում: Ինձ համար մեր վանքի ճակատի այն ծառն է դարձել խորհրդանիշ, որ ուղեկցել է ինձ մանուկ օրերից մինչև ծերություն: Կյանքին կառչելու, համառ պայքարով ապրելու խորհրդանիշ: Քամու բերած աղքատիկ փշրանքներով էր սնվում նա՝ իմ մանկության ընկեր ծառը, մշտական քաղցի ահից, ինչպես և չէր ընկճվում իր շուրջը փոթորկող չար տարերքի առաջ, ուրեմն և՝ ամեն պայմանի դիմանալու խորհրդանիշ: Քարի և կարիքի դեմ օրհասական կռվի մեջ անգամ այդ ծառը իր բարձունքից ժպտում էր աշխարհին ապրելու խենթ հաճույքով: Ու իր բարձր թառից հեգնանքով էր նայում ներքևում՝ առվի պարարտ ափին պարարտացած ու հղփացած իր ցեղակիցներին: *Վախթանգ Անանյան*

Վարժություն 1: **Յուրաքանչյուր շարքում գտնե՛լ կապը:**

1. երբ, բացի, որովհետև, այնտեղ
2. մտերմորեն, ամենուրեք, դեպի, ստեպ-ստեպ
3. վրա, որևէ, և, մյուս
4. ինչու, յուրաքանչյուր, մասին, մասամբ
5. հանուն, անուն, այնքան, սույն

ՇԱՂԿԱՊ

Լեզվում կան բառեր, որոնք իրար են շաղկապում բառեր կամ ամբողջ նախադասություններ: Այդ բառերը միավորվում են *շաղկապ* խոսքի մասի մեջ: Համեմատենք հետևյալ նախադասությունները. *Գիրքը* ***և*** *տետրը դրված են սեղանին: Աշակերտը մտավ դասարան* ***և*** *վերցրեց գիրքը:* Նախադասություններից առաջինում *և*-ը իրար է շաղկապել նախադասության անդամներ, իսկ երկրորդում՝ նախադասություններ: *Բառեր և նախադասություններ իրար շաղկապող բառերը կոչվում են շաղկապներ:*

Ըստ իրենց շարահյուսական դերի՝ շաղկապները բաժանվում են երկու խմբի՝ *համադասական* և *ստորադասական:* Համադասական շաղկապներն իրար են շաղկապում բառեր կամ համադաս, համազոր նախադասություններ, իսկ ստորադասական շաղկապները՝ ստորադաս նախադասությունը շաղկապում են գերադասին:

Համադասական շաղկապներից են՝ *և, ու, բայց, իսկ, սակայն, էլ, այլ, նաև, այլև, կամ, ապա* և այլն:

Ստորադասական շաղկապներից են՝ *որ, որովհետև, քանզի, մինչև որ, եթե, թեև, թեկուզ, թեպետ, որպեսզի, քանի որ* և այլն:

Ըստ կիրառության՝ շաղկապները լինում են *մենադիր, կրկնադիր* և *զուգադիր:* Մենադիր են միայնակ գործածվող շաղկապները. *Մութն ընկավ,* ***և*** *բոլորը ցրվեցին:* Կրկնադիր են կրկնվող շաղկապները. *Նա* ***և՛*** *սովորում էր,* ***և՛*** *աշխատում:* Զուգադիր են որոշակի զույգերով գործածվող շաղկապները. ***Եթե*** *թույլ տան,* ***ապա*** *կգամ:* ***Թեև*** *դժվար էր,* ***սակայն*** *կատարեցինք:* ***Ոչ միայն*** *եկավ,* ***այլև*** *բոլորին օգնեց:* ***Ոչ թե*** *դժգոհեք,* ***այլ*** *փորձեք որևէ ձևով օգնել:* Կրկնադիր շաղկապների վրա շեշտ է դրվում, և նրանց կապակցած միավորները տրոհվում են ստորակետերով: Շաղկապները նախադասության անդամ չեն համարվում:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գտնե՛լ շաղկապները և խմբավորե՛լ (համադասական և ստորադասական):**

Եթե, իսկույն, այնտեղ, բայց, և, մյուս, բոլոր, թեև, սակայն, որովհետև, ինչպես, այս, որպեսզի, պատճառով, դեպի, քանզի, նաև, բացի, քանի որ:

Վարժություն 2: **Կազմե՛լ նախադասություններ՝ գործածելով *եթե, որպեսզի, որովհետև, սակայն, իսկ, և* շաղկապները:**

ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ

Կան բառեր, որոնք արտահայտում են խոսողի դատողական վերաբերմունքը եղելության նկատմամբ, օրինակ՝ ***Բարեբախտաբար,*** *ամեն ինչ լավ անցավ: Որևէ իրողության նկատմամբ խոսողի դատողական վերաբերմունքն արտահայտող բառերը կոչվում են վերաբերականներ (եղանակավորող բառեր):* Առանձնացվում են վերաբերականների հետևյալ խմբերը.

հաստատական՝ *այո՛, արդարև, անշուշտ, անկասկած, անպատճառ, անտարակույս, անպայման, իսկապես, իրոք, հիրավի* և այլն.

ժխտական՝ *ո՛չ, չէ՛.*

երկբայական՝ *գուցե, երևի, թերևս, կարծեմ, կարծես, կարծես թե, ասես, միգուցե, մի՞թե, արդյոք* և այլն.

զգացական՝ *բարեբախտաբար, դժբախտաբար, երանի, ցավոք* և այլն.

սաստկական՝ *անգամ, նույնիսկ, հենց, մանավանդ, նամանավանդ, մինչև անգամ, մինչև իսկ* և այլն.

սահմանափակման՝ *գեթ, լոկ, գոնե, թեկուզ, միայն, սոսկ, միայն թե* և այլն

ցուցական՝ *ահա, ահավասիկ.*

կամային՝ *թող, ապա, հապա, մի* և այլն.

զիջական՝ *ի դեպ, իմիջիայլոց, համենայն դեպս, այնուամենայնիվ, այսուհանդերձ* և այլն:

Վերաբերականների մի մասը, եթե դրված է լինում իր եղանակավորած բառի մոտ, սովորաբար չի տրոհվում, իսկ եթե հեռացած է լինում այդ բառից, տրոհվում է ստորակետով: Համեմատենք հետևյալ նախադասությունները. *Նա այսօր առավոտյան* ***անշուշտ*** *կմեկնի:* ***Անշուշտ,*** *նա այսօր առավոտյան կմեկնի:* Առաջին նախադասության մեջ անշուշտ վերաբերականը եղանակավորել է *կմեկնի* բառին, անմիջապես նախորդում է նրան և ստորակետով չի տրոհվել: Երկրորդ օրինակում *անշուշտ*-ը նախորդում է *նա* բառին: Եթե այդ դիրքում *անշուշտ* վերաբերականը չտրոհվի, կվերաբերի *նա* բառին, և կարտահայտվի *անշուշտ նա, այլ ոչ թե մեկ ուրիշը* իմաստը: Վերաբերականները նախադասության անդամ չեն համարվում:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Վերաբերականները խմբավորե՛լ ըստ տեսակների:**

Բարեբախտաբար, արդարև, անշուշտ, միայն, ահավասիկ, ի դեպ, անպատճառ, ահա,անպայման, իսկապես, իրոք, հիրավի, ո՛չ, չէ՛, գուցե, երևի, իմիջիայլոց, թերևս, կարծեմ, կարծես, միգուցե, այնուամենայնիվ, մի՞թե, արդյոք, երանի, ցավոք, նույնիսկ, մանավանդ, մինչև իսկ, գեթ, լոկ, գոնե, կարծես թե, սոսկ, միայն թե, անկասկած, հապա, մի, համենայն դեպս, այսուհանդերձ:

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կան բառեր, որոնք արտահայտում են տալիս խոսողի զգացական վերաբերմունքը, ինչպես նաև կոչ, նմանաձայնություն: *Խոսողի զգացական վերաբերմունքը, ինչպես նաև կոչ կամ նմանաձայնություն արտահայտող բառերը կոչվում են ձայնարկություններ:* Ձայնարկություններ են հետևյալ բառերը՝ *վա՛յ, օ՛ֆ, հե՛յ,*

խը՛22 և այլն: Ձայնարկությունները բաժանվում են երեք տեսակի՝ *զգացական, կոչական* և *նմանաձայնական* (կամ բնաձայնական):

Զգացական են այն ձայնարկությունները, որոնցով խոսողն արտահայտում է իր զգացական վերաբերմունքը, օրինակ՝ *ա՛խ, պա՛հ, ջա՛ն, վա՛խ, ո՛ւխ* և այլն:

Կոչական են այն ձայնարկությունները, որոնց միջոցով խոսողը փորձում է կանչել որևէ մարդու կամ կենդանու կամ էլ հրավիրել նրա ուշադրությունը, օրինակ՝ *է՛յ, էհե՛յ, պո՛, ջո՛ւ-ջո՛ւ, փի՛շպ* և այլն:

Նմանաձայնական ձայնարկություններով խոսողը փորձում է արտահայտել բնության մեջ եղած ձայները, օրինակ՝ *խը՛22, բը՛զզ, ծի՛վ-ծի՛վ, ճը՛ռռ* և այլն:

Ձայնարկությունները նախադասության մյուս բառերից սովորաբար անջատվում են ստորակետով, և նրանց վրա դրվում է բացականչական նշան կամ շեշտ: Ձայնարկությունների մի մասը բազմիմաստ է: Օրինակ՝ *վա՛յ* ձայնարկության միջոցով խոսողը կարող է արտահայտել զարմանք, ուրախություն, վախ, զայրույթ և այլն: Ձայնարկություններից կարող են կազմվել այլ խոսքի մասեր, օրինակ՝ *խը՛22 - խշշալ* (բայ) – *խշշոց* (գոյական) – *խշշուն* (ածական): Ձայնարկությունները նախադասության անդամ չեն համարվում:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գրե՛լ երեք այնպիսի ձայնարկություն, որոնցով հնարավոր լինի կազմել այլ խոսքի մասեր:**

Վարժություն 2: **Գտնե՛լ ձայնարկությունները (առոգանության նշանները դրված չեն) և խմբավորե՛լ ըստ տեսակների:**

Վայ, խշշալ, ձայն տալ, ծուղրուղու, հեյ, հարայ կանչել, ճռռոց, օֆ, քչքչոց, ծիվ-ծիվ, բզզոց, ախ, վաշ-վիշ, ճռվողյուն, ուխայ, թրըխկ, շրխկոց:

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ
ԲԱՌԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Շարահյուսությունը լեզվի այն բաժինն է, որն ուսումնասիրում է բառերի ու բաղադրիչ նախադասությունների կապակցման միջոցներն ու եղանակները, նրանց հարաբերություններն իրար նկատմամբ նախադասության կազմում: Բառերն ու բաղադրիչ նախադասությունները իրար կապակցվում են որոշակի օրինաչափություններով:

Բառերի շարահյուսական կապակցության միջոցներն են *բառաձևերը, կապերն* ու *շաղկապները, շարադասությունը, հնչերանգը:*

Բառերի մի մասը կարող է քերականորեն փոփոխվել՝ հոլովվել, հոգնակի թիվ կազմել, խոնարհվել և այլն: Բառի՝ քերականորեն փոփոխված ձևը կոչվում է *բառաձև:* Իրար կապակցվելու համար բառերը դրվում են զանազան բառաձևերով: Օրինակ՝ *սեղան, դնել, գիրք* բառերը իրար չեն կապվում, սակայն, եթե դրանք քերականորեն փոփոխենք, ապա կկապակցվեն՝ *Գիրքը դրեցի սեղանին:* Այսինքն՝ բառերն իրար կապվելու համար դրվում են տվյալ կապակցության համար անհրաժեշտ բառաձևերով:

Կապերն ու շաղկապները լեզվում ունեն կապակցական դեր: Կապերը մի բառ կապում են մյուսին՝ կապակցվող բառի հետ դառնալով նրա լրացումը, օրինակ՝ *առյուծի* ***նման*** *զինվոր, խոսել գրքի* ***մասին:*** Համադասական շաղկապները շաղկապում են համազոր նախադասություններ, ինչպես նաև բառեր, օրինակ՝ *գիրքը* ***և*** *տետրը:* Այսինքն՝ բառերն իրար կապելու համար գործածվում են նաև *կապեր* և *շաղկապներ:*

Իրար կապակցելու համար անհրաժեշտ է նաև բառերը դնել որոշակի դասավորությամբ՝ *շարադասությամբ:* Օրինակ՝ *ներս, ճառագայթները, ընկել էին, պատուհանից* բառերն այս շարադասությամբ չեն կապակցվում, իսկ *Ճառագայթները պատուհանից ներս էին ընկել* շարադասությամբ արդեն կապակցվում են՝ ձևավորելով նախադասություն: Հետևաբար կապակցելու համար բառերը պետք է դնել ճիշտ և տվյալ դեպքում անհրաժեշտ շարադասությամբ: Ոչ ճիշտ շարադասության կամ շարադասության փոփոխության հետևանքով բառերը կա՛մ չեն կապակցվի (ինչպես վերը բերված օրինակում), կա՛մ էլ կփոխվի կապակցության իմաստը, օրինակ՝ *Մի մարդ մի ճամփորդ տեսավ: Մի ճամփորդ մի մարդ տեսավ: Տարբեր մարդիկ մտնում էին խանութներ: Մարդիկ մտնում էին տարբեր խանութներ:*

Իրար կապակցվող բառերն արտասանվում են որոշակի *հնչերանգով*, որը ևս կապակցում է նրանց: Առանձին արտասանելու դեպքում բառն ունենում է ավարտուն հնչերանգ, իսկ կապակցման համար հնչերանգը փոխվում է, որից հասկանալի է դառնում, որ կա հաջորդող բառ, որին կապակցվում է նախորդը: Հնչերանգի փոփոխությունը ևս կարող է առաջացնել իմաստի փոփոխություն, ինչպես՝ *Քայլում էր՝ ուրախ մոր ձեռքը բռնած: Քայլում էր ուրախ՝ մոր ձեռքը բռնած:*

ԲԱՌԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Շարահյուսական կապակցման եղանակներն են՝ *համաձայնությունը, խնդրառությունը* (կառավարումը) և *առդրությունը:*

Համաձայնությունը կապակցման այն եղանակն է, որի դեպքում իրար կապակցվող բառերը դրվում են քերականական միևնույն կարգով, օրինակ՝ միևնույն հոլովով, միևնույն դեմքով, միևնույն թվով և այլն: Ժամանակակից հայերենում համաձայնությամբ հիմնականում կապակցվում են ենթական ու ստորոգյալը, բացահայտիչն ու բացահայտյալը:

Ենթական և ստորոգյալը համաձայնում են *դեմքով* և *թվով:* Ենթական և ստորոգյալը դրվում են միևնույն դեմքով, եթե ենթական արտահայտված է անձնական դերանուններով, օրինակ՝ *Ես գնացի: Դու գնացիր: Նա գնաց:* Եթե նախադասության մեջ կան տարբեր դեմքերով մեկից ավելի ենթականեր, ապա ստորոգյալը համաձայնում է ըստ դիմային առաջնության: Այսինքն՝ 1-ին և 2-րդ դեմքերով ենթակաների հետ դրվում է 1-ին դեմքով ստորոգյալ (*Ես ու դու գնացինք*), իսկ 2-րդ և 3-րդ դեմքերով ենթակաների հետ՝ 2-րդ դեմքով ստորոգյալ (*Դու և նա գնացիք*): Այլ խոսքի մասերով արտահայտված ենթակաների հետ ստորոգյալը դրվում է 3-րդ դեմքով (*Երեխան խաղում է: Առուն քչքչում է:*): Ենթական և ստորոգյալը համաձայնում են նաև թվով: Պարզ ստորոգյալի դեպքում եզակի ենթակայի հետ դրվում է եզակի ստորոգյալ, հոգնակի կամ բազմակի ենթակաների հետ՝ հոգնակի ստորոգյալ, օրինակ՝ *Արամը եկավ: Աշակերտները եկան: Արամը և Աշոտը եկան:* Բաղադրյալ ստորոգյալի դեպքում գործում է նույն սկզբունքը, սակայն հոգնակի կամ բազմակի ենթակաների հետ հոգնակիով կարող է դրվել նաև ստորոգելին, օրինակ՝ *Արամը և Աշոտը* ***աշակերտ*** *են* կամ *Արամը և Աշոտը* ***աշակերտներ*** *են:* Տրոհական հարաբերությամբ կապված գոյականով արտահայտված բազմակի ենթակաների ստորոգյալը դրվում է եզակի թվով օրինակ՝*Կա՛մ Աշոտը, կա՛մ Գեղամը* ***կգա*** *ինձ օգնելու:*

Բացահայտիչը և բացահայտյալը համաձայնում են դեմքով, թվով և հոլովով: Դեմքով համաձայնում են անձնական դերանունների բացահայտիչները, որոնք համապատասխանաբար ստանում են *ս, դ, ն(ը)* հոդերը, ինչպես՝ *ես՝ ուսանողս, դու՝ ուսանողդ, նա՝ ուսանողը(ն):* Գոյականների բացահայտիչը ստանում է *ը(ն)* հոդը կամ էլ մնում է անորոշ, օրինակ՝ *Արամը՝ աշակերտը, Արամը՝ մի աշակերտ:* Թվով համաձայնությունը կատարվում է հետևյալ ձևով: Եզակի բացահայտյալի հետ դրվում է եզակի բացահայտիչ, հոգնակի կամ բազմակի բացահայտյալների հետ՝ հոգնակի կամ բազմակի բացահայտիչ, օրինակ՝ *ծառը՝ կաղնին. ծառերը՝*

կաղնիները. ծառերը՝ կաղնին. բարդին և խնձորենին. Արմենն ու Գեղամը՝ ընկերները: Բուն բացահայտիչները և նրանց բացահայտյալները դրվում են նույն հոլովով, օրինակ՝ *քաղաքը՝ Երևանը. քաղաքի՝ Երևանի. քաղաքից՝ Երևանից* և այլն: Հիմնականում համաձայնում են նաև մասնական բացահայտիչները՝ *Աշոտը՝* ***որպես նկարիչ,*** *մասնակցեց մրցույթին: Աշոտին՝* ***որպես նկարչի,*** *հրավիրել էին մրցույթին: Աշոտից՝* ***որպես նկարչից,*** *պահանջվում էր կատարել ձևավորման աշխատանքը:*

Խնդրառությունը կապակցման այն եղանակն է, որի դեպքում գերադաս բառի պահանջով լրացումը դրվում է որոշակի հոլովով կամ կապով ու նրա խնդրով: Օրինակ՝*խոսել* բայը պահանջում է բացառական հոլովով կամ *մասին* կապով ու նրա խնդրով ձևավորված լրացում՝ *խոսել գործերից* կամ *գործերի մասին: Պոկել* բայը պահանջում է բացառականով լրացում (*պոկել ճյուղից*), *հպարտանալ* բայը՝ գործիականով (*հպարտանալ պարգևով*), *դժգոհ* ածականը՝ բացառականով լրացում (*դժգոհ ճակատագրից*) և այլն:

Առդրությունը կապակցման այն եղանակն է, որի դեպքում լրացումը և լրացյալը իրար կապակցվում են իմաստով և շարադասությամբ, օրինակ՝ *կանաչ տերև, բարձր շենք, գեղեցիկ նկար, արագ վազել* և այլն:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գտնե՛լ համաձայնության սխալները:**

1. Մարդկանց մի մասը գնացին աշխատելու:
2. Պահանջվում է հմուտ մասնագետներ:
3. Նրան՝ որպես հմուտ մասնագետ, պարգևատրեցին:
4. Արմենը ընկերոջ հետ անցան բակով:
5. Ամեն մեկը գնացին իր աշխատավայրը:

Վարժություն 1: **Գտնե՛լ խնդրառության սխալները:**

1. Նա դաշնամուրի վրա լավ է նվագում:
2. Այդ գործում նա չի մասնակցել:
3. Ընկերս համաձայն էր իմ առաջարկի հետ:
4. Նկարը փակցրեց պատից:
5. Ոչ ոք չհետաքրքրվեց կատարվածից:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Բառը կամ կապակցված բառերի խումբը, որն արտահայտում է ամփոփ միտք և ունի ստորոգում, կոչվում է նախադասություն: Ստորոգումը ժամանակային հարաբերությամբ հատկանիշի վերագրումն է: Օրինակ՝ *Երեխան խաղում է* նախադասության մեջ *խաղալու* հատկանիշը ստորոգման միջոցով վերագրվել է *երեխային:* Իսկ *խաղացող երեխա* կապակցության մեջ ժամանակային հարաբերություն չկա, ուստի չկա ստորոգում: Նույն ձևով՝ *գեղեցիկ նկար* և *Նկարը գեղեցիկ է:*

Նախադասությունը կազմում լինում են գլխավոր, ինչպես նաև երկրորդական անդամներ: Գլխավոր անդամներն են *ենթական* և *ստորոգյալը,* իսկ երկրորդական անդամներն են *լրացումները: Ենթական նախադասության այն գլխավոր անդամն է, որին ստորոգման միջոցով վերագրվում է հատկանիշ: Ստորոգյալը նախադասության այն անդամն է, որը հատկանիշը ստորոգման միջոցով վերագրում է ենթակային:* Օրինակ՝ *Տերևը դեղնել է* նախադասության մեջ *տերևը* ենթական է, որովհետև ստորոգումով նրան է վերագրվել *դեղնել է* հատկանիշը, իսկ *դեղնել է*-ն ստորոգյալն է, որովհետև հատկանիշը ստորոգումով վերագրում է ենթակային:

Լրացումները լինում են *բայական անդամի* և *գոյականական անդամի:* Օրինակ՝ *Խելացի աշակերտը ուշադրությամբ կարդում է* նախադասության մեջ *խելացի* բառը լրացնում է գոյականական անդամին, տվյալ դեպքում՝ ենթակային (*աշակերտը*)՝ արտահայտելով նրա հատկանիշը, իսկ *ուշադրությամբ* բառը լրացնում է բայական անդամին (*կարդում է*), տվյալ դեպքում՝ ստորոգյալին՝ արտահայտելով նրա հատկանիշը: Լրացումներն էլ իրենց հերթին կարող են ունենալ լրացումներ: Օրինակ՝ *Շատ խելացի աշակերտը մեծ ուշադրությամբ կարդում է* նախադասության մեջ *շատ* և *մեծ* բառերը լրացման լրացումներ են: Ածականների և մակբայների լրացումները նման են բայականին, ինչպես՝ *շատ կարդալ – շատ գեղեցիկ – շատ արագ:* Գոյականական անդամի լրացումներն են *որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը,* իսկ բայական անդամի լրացումներն են *խնդիրները* և *պարագաները,* որոնք ունեն իրենց ենթատեսակները:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

Ըստ կազմության՝ առանձնացվում են *պարզ* և *բարդ* նախադասություններ: Պարզ նախադասությունն ունի մեկ ստորոգում, ինչպես՝ *Վարպետը գեղեցիկ նախշեր* ***փորագրեց:*** Եթե նախադասությունը կազմված է մեկից ավելի պարզ

նախադասություններից, այսինքն՝ ունի մեկից ավելի ստորոգումներ, ապա կոչվում է բարդ նախադասություն: Օրինակ՝ *«Ներկայացումն ավարտվեց», «Բոլորը հեռացան»* երկու պարզ նախադասությունները, միանալով իրար, կարող են կազմել բարդ նախադասություն. *«Ներկայացումն ավարտվեց, և բոլորը հեռացան»:* Այսինքն՝ բարդ նախադասությունը կազմված է մեկից ավելի պարզ նախադասություններից, որոնք, միանալով իրար, դառնում են մեկ ամբողջություն և հաճախ, առանձին վերցրած, ինքնուրույն չեն կարող գործածվել, օրինակ՝ *«Նա վաղ արթնացավ, որովհետև շատ աշխատանք պետք է կատարեր»*:Եթե առաջին բաղադրիչը հնարավոր է առանձին գործածել որպես ինքնուրույն նախադասություն, ապա երկրորդը առանձին չի գործածվի:

Պարզ և *բարդ* նախադասությունները ունեն իրենց ենթատեսակները:

Պարզ նախադասությունները լինում են *պարզ համառոտ* և *պարզ ընդարձակ:* Պարզ համառոտ նախադասությունները կազմված են միայն ենթակայից և ստորոգյալից (օրինակ՝ *Նա գնաց*), իսկ պարզ ընդարձակ նախադասությունների կազմում կա գոնե մեկ լրացում (օրինակ՝ *Նա գնաց* ***տուն***):

Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները կապակցվում են տարբեր հարաբերություններով. բաղադրիչները կարող են լինել իրար համազոր կամ իրար նկատմամբ ունենալ գերադասի և ստորադասի հարաբերություն: Այն բարդ նախադասությունը, որի բաղադրիչներն իրար համազոր են, կոչվում է *բարդ համադասական:* Օրինակ՝ *Խողովակը վնասվել էր, և ջուրը հոսում էր* նախադասությունը համադասական է, որովհետև նրա՝ *«Խողովակը վնասվել էր»* և *«Ջուրը հոսում էր»* բաղադրիչները համազոր են, չեն լրացնում իրար: Այն բարդ նախադասությունը, որի բաղադրիչներից մեկը լրացնում է մյուսին, կոչվում է *բարդ ստորադասական:* Օրինակ՝ *«Քանի որ խողովակը վնասվել էր, ջուրը հոսում էր»* նախադասությունը ստորադասական է. նրա *«Քանի որ խողովակը վնասվել էր»* երկրորդական նախադասությունը լրացնում է (պատճառի իմաստով) *«Ջուրը հոսում էր»* գերադաս նախադասությանը: Բարդ ստորադասական նախադասություններում կարող են լինել մեկից ավելի երկրորդական նախադասություններ, օրինակ՝ *Սեղանին դրված էր մի գիրք, որը գեղեցիկ էր և նոր էր:* Այս նախադասության *«Սեղանին դրված էր մի գիրք»* գլխավոր բաղադրիչին լրացնում է *և* շաղկապով կապակցված երկու երկրորդական՝ *«որը գեղեցիկ էր»* և *«նոր էր»*: Առանձնացվում է բազմաբաղադրիչ ստորադասականների կոնկրետ կառուցվածքով երեք տեսակ՝ *ենթաստորադասական, համաստորադասական, տարաստորադասական:*

Ներկայացնենք բարդ համադասական, բարդ ստորադասական, ինչպես նաև ենթաստորադասական, համաստորադասական, տարաստորադասական նախադասությունները:

Բարդ համադասական է այն նախադասությունը, որի բաղադրիչներն իրար նկատմամբ համազոր են, օրինակ՝ *Աշխատանքն ավարտվեց (1), և բոլորը գնացին հանգստանալու (2):*



Բարդ ստորադասական է այն նախադասությունը, որը կազմված է մեկ գլխավորից և նրան լրացնող մեկ երկրորդականից, օրինակ՝ *Երբ աշխատանքն ավարտվեց (1), բոլորը գնացին հանգստանալու (2):*



Բարդ ենթաստորադասական է այն նախադասությունը, որը կազմված է հաջորդաբար իրար լրացնող նախադասություններից, օրինակ՝ *Որդին գեղեցիկ ծաղկեփունջ գնեց (1), որպեսզի նվիրի մորը (2), քանի որ նրա ծննդյան օրն էր (3):*

Բարդ համաստորադասական է այն նախադասությունը, որը կազմված է մեկ գլխավոր և մեկից ավելի երկրորդական նախադասություններից, որոնք նույն բնույթով լրացնում են գլխավորի միևնույն անդամին: Երկրորդականի բնույթ ասելով՝ նկատի է առնվում շարահյուսական այն պաշտոնը, որը նա կատարում է՝ լրացնելով գլխավորին:Բերվող օրինակում երկու երկրորդականներն էլ որոշիչներ են, քանի որ ցույց են տալիս *պուրակ* գոյականի հատկանիշները. *Նրանք զբոսնում էին պուրակում (1), որը շատ գեղեցիկ էր (2), և երգող շատրվաններ ուներ (3):*



Բարդ տարաստորադասական է այն նախադասությունը, որը կազմված է մեկ գլխավորից և մեկից ավելի երկրորդականներից, որոնք կա՛մ տարբեր բնույթներ ունեն կա՛մ էլ, եթե նույն բնույթն ունեն, լրացնում են գլխավորի տարբեր

անդամների, օրինակ՝ ա) *Երբ ներկայացումն ավարտվեց* (1. ժամանակի պարագա), բոլորը մոտեցան անվանի դերասանին (2. գլխավոր), *որը հաջորդ օրը մեկելու էր հյուրախաղերի* (3. որոշիչ): բ) Արձանը (1. գլխավոր), *որը քանդակել էր Արմենը* (2. որոշիչ), այն քարից էր (1. գլխավորի շարունակությունը), *որը բերում էին մոտական հանքից* (3. որոշիչ):

ա)



բ)



Սակայն հաճախ խոսքում նախադասությունները հանդես են գալիս ոչ թե այսպիսի հստակ կառուցվածքային տեսակներով, այլ դրանց տարբեր զուգաձևումներով: Այդպիսի նախադասությունները կոչվում են *խառը տիպի* կամ *բազմաբարդ* նախադասություններ, օրինակ՝ *Երբ դասերն ավարտվեցին (1), ուսանողները գնացին ցուցահանդես (2), որը գործում էր նախորդ օրվանից (3), իսկ ցուցադրված աշխատանքները դիտելուց հետո գնացին սրճարան (4), որը գտնվում էր մոտակա զբոսայգում (5):*



<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Առանձնացնե՛լ տրված հատվածում եղած պարզ և բարդ նախադասությունները: Կազմել՛ բարդ նախադասությունների գծապատկերները:**

Երբ միառժամանակ ձիու ոտնաձայն և վրնջյուն չլսվեց, Թորգոմը սրտի թրթիռով գնաց դեպի անտառի եզրը ու ցաքուցրիվ մացառների մեջ բերանքսիվայր պառկելով՝ նայեց աջ և ձախ: Դիմացը միայն բարձրաբերձ սարն էր՝ լերկ ու քարակարկառ, իսկ շուրջը ամայություն էր: Հավաստիանալու համար, որ իրոք չկա ոչ ոք, նա նույն դիրքով սրտատրոփ դույզն-ինչ էլ սպասեց: Դարձյալ ոչ մի ձայն չլսվեց: Այնժամ նա զգույշ հետ դարձավ:

Ըստ Ստեփան Զորյանի

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կան նախադասություններ, որոնք ունեն մեկ կենտրոն, այսինքն՝ մեկ գերադաս անդամ: Այդպիսի նախադասությունները կոչվում են *միակազմ,* օրինակ՝ *Մթնեց: Անձրևում է: Լռե՛լ: Չծխե՛լ:* Միակազմ նախադասությունները լինում են *դիմավոր* և *անդեմ:* Բերված օրինակներից առաջինը երկուսը դիմավոր են, երկրորդները՝ անդեմ:

Դիմավոր միակազմ նախադասությունները կոչվում են նաև *անենթակա.* դրանք չունեն ենթակա, և հնարավոր չէ այդ ենթական վերականգնել: Կարող ենք միայն ձևականորեն տվյալ դեմքով մի դերանուն դնել: Եթե հնարավոր է վերականգնել ենթական, ուրեմն այդ նախադասությունը ոչ թե անենթակա է, այլ զեղչված ենթակայով:

Անդեմ միակազմ նախադասությունները լինում են *անվանական, բայական* և *բառ-նախադասություններ:* Անվանական նախադասությունների գերադաս անդամը արտահայտվում է որևէ անուն խոսքի մասով, օրինակ՝*Ամառ: Լռություն: Շոգ:* Բայական անդեմ նախադասություններն արտահայտվում են դերբայով (հիմնականում անորոշ), օրինակ՝ *Չաղմկե՛լ: Դուռը փակե՛լ:* Բառ–նախադասություններն արտահայտվում են վերաբերականներով, որոնք տվյալ դեպքում ամբողջ նախադասության արժեք ունեն, օրինակ՝ *Այո՛: Հավանաբար:* Թե՛ դիմավոր, թե՛ անդեմ միակազմ նախադասություններում գերադաս անդամը կարող է լրացումներ ստանալ, այսինքն՝ միակազմ նախադասությունները ևս լինում են *համառոտ* և *ընդարձակ:* Մինչ այժմ բերված նախադասությունները համառոտ էին, իսկ հետևյալները ընդարձակ են. *Այրող շոգ: Արդեն մթնեց:*

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ

Նախադասության գլխավոր անդամներն են *ենթական* և *ստորոգյալը:*

Ենթական նախադասության այն անդամն է, որին ստորոգման միջոցով վերագրվում է որևէ հատկանիշ: Ենթական դրվում է ուղղական հոլովով, օրինակ՝ ***Արևը*** *շողում է:* ***Ես*** *կարդացի գիրքը:* ***Ծառերն*** *օրորվում էին քամուց:* Առանձնացվում է նաև *մասնական* ենթակա, որն արտահայտվում է բացառական հոլովով: Այդպիսի ենթակաները ցույց են տալիս, որ ստորոգմամբ վերագրված հատկանիշը նրանց վերաբերում է մասնակիորեն, օրինակ՝ *Վաճառվում են Թումանյանի* ***գրքերից****: Հաղորդվեցին կոմպոզիտորի* ***երգերից:*** *Խանութում կա այդ* ***ներկից:*** Ենթական արտահայտվում է գոյականով (օրինակ՝ ***Երեխան***

նկարում է), առարկայանիշ դերանուններով (օրինակ՝ ***Նա*** *գնաց:* ***Ո՞վ*** *է եկել*) և գոյականաբար գործածված բառերով (օրինակ՝ *Կարմիր ծաղիկները դրված էին ծաղկամանում, իսկ* ***դեղինները***՝ *սեղանի վրա: Հինգ վարպետ գնացել էր նորոգելու խողովակը.* ***երեքը*** *վերադարձան:* ***Քնածը*** *արթնացավ*)։Անորոշ դերբայը ևս՝ որպես գործողության ընդհանուր անվանում, կարող է դառնալ ենթակա, օրինակ՝ ***Նկարելը*** *նրա ամենօրյա զբաղմունքն է:* Ենթական պատասխանում է *ո՞վ (ովքե՞ր), ի՞նչ (ինչե՞ր)* հարցերին:

Ստորոգյալը նախադասության այն անդամն է, որը ստորոգման միջոցով որևէ հատկանիշ է վերագրում ենթակային: Ստորոգյալն ունի երկու տեսակ՝ *պարզ* և *բաղադրյալ:* Պարզ է այն ստորոգյալը, որն արտահայտված է միայն դիմավոր բայով, օրինակ՝ *Նա* ***երգում է:*** *Ուսանողը* ***կգրի:*** *Աշակերտը* ***պետք է գրի:*** *Երեխան* ***ծափ է տալիս:*** Բաղադրյալ ստորոգյալը կազմվում է որևէ խոսքի մասով և հանգույցով, օրինակ՝ *Նա* ***աշակերտ է:*** *Տունը* ***գեղեցիկ է:*** *Նրանք* ***հինգն են:*** *Ավագը* ***նա է:*** *Նա լավ* ***վազող է:*** *Նրա համաձայնելը* ***արտաքուստ էր:*** *Խոսքը* ***նրա մասին է:*** Բերված օրինակներում բաղադրյալ ստորոգյալը կազմվել է գոյականով, ածականով, թվականով, դերանունով, անկախ դերբայով, մակբայով, կապով ու նրա խնդրով, որոնց միացել է օժանդակ բայը: Բաղադրյալ ստորոգյալի այդ բաղադրիչը կոչվում է *ստորոգելի*. բերված օրինակներում ստորոգելիներ են՝ *աշակերտ, գեղեցիկ, հինգ, նա, վազող, արտաքուստ, նրա մասին: Հանգույցը* հիմնականում արտահայտվում է օժանդակ բայով, ինչպես վերը բերված օրինակներում: Կան մի շարք բայեր, որոնք ընդհանուր, վերացական իմաստ ունեն և կոչվում են վերացական բայեր, օրինակ՝ *լինել, դառնալ, թվալ, երևալ, համարվել, կոչվել:* Այսպիսի բայերը նույնպես կարող են հանդես գալ որպես հանգույց: Օրինակ՝ *մեծ է դարձել* բաղադրյալ ստորոգյալը կազմված է *մեծ* ստորոգելիից[31] և *է դարձել* հանգույցից:

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Գոյականական անդամի լրացումներն են *որոշիչը, հատկացուցիչը* և *բացահայտիչը:*

Որոշիչը ցույց է տալիս գոյականական անդամի հատկանիշը: Հատկանիշները կարող են տարբեր լինել՝ քանակ, երկարություն, բաղկացություն և այլն, օրինակ. ***Նկարիչ*** *Գևորգը պարգևատրվեց:* ***Հին*** *գորգը պատռվեց:* ***Մեծաղյա*** *դարպասը ներկեցին: Ոսկերիչը* ***գեղեցիկ*** *նախշեր փորագրեց:* Որոշիչն արտա-

[31] Վերացական բայերի հետ գործածվող ստորոգելին կոչվում է նաև *ստորոգելիական վերադիր:*

հայտվում է որակական և հարաբերական ածականներով (օրինակ՝ *Խանութից* ***կարճ*** *և* ***երկար*** *մետաղաձողեր գնեցինք:* ***Փորձառու*** *վարպետը աշխատում էր:*), գոյականի ուղղական, սեռական, բացառական, գործիական հոլովաձևերով (օրինակ՝ ***Նկարիչ*** *Արշակն աշխատում էր: Խանութում* ***պատի*** *ժամացույցներ էին վաճառում, իսկ* ***ձեռքի*** *ժամացույց չկար: Գյուղի ծայրին կար* ***քարից*** *մի տուն: Խանութում* ***մսով*** *կարկանդակ էր վաճառվում*) թվականներով (օրինակ՝ *Նա արդեն* ***հինգ*** *տուն է կառուցել: Աշոտը սովորում է* ***երկրորդ*** *կուրսում*), դերանուններով (***Այդ*** *մարդը* ***այդպիսի*** *նկար դեռ չէր տեսել:*), անկախ դերբայներով (***Վազող*** *տղան կանգ առավ:* ***Քնած*** *երեխան արթնացավ*), կապական կառույցներով (***Առյուծի նման*** *մի զինվոր պայքարեց մինչև հաղթանակ*):

Հատկացուցիչը ցույց է տալիս պատկանելություն, վերաբերություն, օրինակ՝ ***Ծառի*** *տերևները դեղնել էին:* ***Աշակերտի*** *պայուսակը գեղեցիկ էր:* ***Դռան*** *բռնակը նախշազարդ էր:* Հատկացուցիչն արտահայտվում է միայն սեռական հոլովով և պատասխանում է *ո՞ւմ, ինչի՞ (ինչերի՞)* հարցերին:

Բացահայտիչը բացահայտում է գոյականի կամ գոյականական դերանվան էությունը, ով կամ ինչ լինելը, օրինակ՝ *Վարպետը՝* ***Ռուբենը,*** *շատ հմուտ է: Նա՝* ***քանդակագործը,*** *լուռ աշխատում էր: Ջրի ափին քայլում էին այդ վայրում ամենատարածված թռչունները՝* ***արագիլները:*** Առանձնացվում է բացահայտչի երեք տեսակ՝ *բուն, մասնավորող* և *մասնական*[32]*:* Բուն բացահայտիչը բացահայտում է բացահայտյալի[33] ով կամ ինչ լինելը, օրինակ՝ *Ընկերս՝* ***Արամը,*** *եկավ:* Մասնավորող բացահայտիչը մասնավորում կոնկրետացնում է տեղը, ժամանակը, օրինակ՝ *Արհեստանոցում՝* ***դարակի վրա,*** *շարված էին գործիքները: Ուրբաթ օրը՝* ***դասերից հետո,*** *կգնանք պատկերասրահ:* Մասնական բացահայտիչը ձևավորվում է *որպես, իբրև* կապերով և մասնավորող, կոնկրետացնող գործառույթ է կատարում, օրինակ՝ *Անուշը՝* ***որպես կուրսի ավագ,*** *բարեխղճորեն կատարում է իր պարտականությունները:* Բառերի շարահյուսական կապակցման եղանակները ներկայացնելիս նշվել է, որ բացահայտիչն ու բացահայտյալը հոլովով, դեմքով և թվով համաձայնում են: Դա վերաբերում է բուն և մասնական բացահայտիչներին: Բացահայտչի երեք տեսակներն էլ կետադրվում են միանման. դրանք բացահայտյալից տրոհվում են բութով, իսկ հաջորդող բառից՝ ստորակետով (ինչպես վերը բերված օրինակներում): Բացահայտչից հետո ստորակետ չի դրվում հետևյալ դեպքերում. ա) եթե նրան հաջորդում է օժանդակ բայ. *Ընկերս՝ Արմենն* ***է*** *եկել.* բ) եթե նրան հաջորդում է *էլ* շաղկապը. *Ընկերս՝ Արմենն* ***էլ*** *եկավ.* գ) եթե

[32] Այս դասակարգման վերաբերյալ կան տարակարծություններ:

[33] *Բացահայտյալ* է կոչվում այն բառը, որն ունի բացահայտիչ լրացում: Բերված երեք օրինակում էլ բացահայտյալները ենթականեր են (*վարպետը, նա, թռչունները*):

բացահայտյալը հատկացուցիչ է. ***Ընկերոջս՝*** *Արմենի հաղթանակը ուրախացրեց մեզ.* դ) եթե բացահայտյալը կապի խնդիր է. *Կուրսի* ***ավագից՝*** *Անահիտից* ***հետո*** *բեմ ելավ Նունեն.* ե) եթե բացահայտչին հաջորդում է բացահայտյալին եղանակավորող սաստկական վերաբերական. *Նրա մտերիմ ընկերուհին՝ Աննան* ***անգամ*** *չէր տեսել նրա նոր կտավը.* զ) եթե բացահայտյալը անկախ դերբայի լրացում է, և այդ դերբայը հաջորդում է բացահայտչին (անմիջապես կամ լրացումներով). *Հայաստանի մայրաքաղաք՝ Երևան* ***տանող*** *ճանապարհը անցնում էր գեղատեսիլ վայրերով.* է) եթե ոճական նպատակով բացահայտիչը հարկադրական եղանակի բայաձևերի բաղադրիչների միջև է դրվել. *Համերգին* ***պետք է*** *կուրսի ավագը՝ Լուսինեն* ***մասնակցեր,*** *բայց մեկնել էր գործուղման:*

Մասնական բացահայտիչը կարող է լինել նախադասության սկզբում. այդ դեպքում նրանից հետո դրվում է բութ, ինչպես՝ ***Որպես կուրսի ավագ՝*** *Հարությունը մասնակցեց խորհրդակցությանը:*

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գտնե՛լ գոյականական անդամի լրացումները և որոշե՛լ տեսակը:**

Արևագալից առաջ դարան էինք մտել կիրճում: Գիշերային ամոթխած գեղեցկուհին՝ լուսինը, վաղուց արդեն թաքնվել էր հանդիպակաց երկնակարկառ լեռան հետևում: Հատուկենտ աստղերն էլ դանդաղորեն հեռանում էին իրենց ասպարեզից:

Խավարչտին գիշերը հետզհետե աղոտացավ, տարրալուծվեց օդում: Գիշերվա նիրհից արթնացավ վաղորդյան մեղմօրոր զեփյուռը, և հազարաթույր ծաղիկների զգլխիչ բույրով տոգորվեց ողջ մթնոլորտը

Ես աննկատելի դուրս էի եկել իմ թաքստոցից և զմայլված ու անէացած շուրջս էի դիտում:

Հանկարծ ինչ-որ ձայն լսվեց. չորացած մի ճյուղ էր, որ ճռռոցով կոտրվեց մոտիկ անտառում:

Ես առաջին անգամ էի տեսնում եղջերուին ազատ բնության գրկում քայլելիս: Դուրս եկավ մի խաղաղ հպարտությամբ, վեհ ու չքնաղ քայլվածքով: Վայրենի շնորհքով ոլորեց երկայն վիզը՝ զգուշորեն նայելով շուրջը: Ապա սուրաց դեպի բացատում բխող ականակիտ աղբյուրը: Հասնելով ջրին՝ եղջերուն հանկարծ կանգ առավ և գլուխը գիրթ բարձրացնելով՝ հայացքն ուղղեց դեպի ինձ:

Ըստ Հովհաննես Թումանյանի

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Բայական անդամի լրացումները *խնդիրները* և *պարագաներն* են, որոնք ունեն իրենց ենթատեսակները: Խնդիրները ցույց են տալիս գործողությանն առնչվող առարկաներ, իսկ պարագաները՝ գործողության հանգամանքներ կամ հատկանիշներ: Սովորաբար առանձնացվում են *ուղիղ խնդիրը, ներգործող, հանգման, անջատման, միջոցի, վերաբերության* անուղղակի խնդիրները և *ձևի, տեղի, ժամանակի, չափ ու քանակի, պայմանի, նպատակի, պատճառի, հիմունքի, զիջման* պարագաները:

Խնդիրներ

Ուղիղ խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որն իր վրա է կրում գործողությունը, օրինակ՝ *Շինարարները* ***տուն*** *կառուցեցին: Վարպետը հարթեցրեց* ***պատը:*** Ոչ անձ ցույց տվող գոյականների դեպքում ուղիղ խնդիրը հիմնականում արտահայտվում է ուղղականաձև հայցականով, իսկ անձ ցույց տվող գոյականների դեպքում՝ տրականաձև հայցականով, օրինակ՝ *Տեսա* ***նկարը:*** *Տեսա* ***աշակերտին:*** Սակայն սա պարտադիր կանոն չէ, օրինակ՝ *Մի* ***մարդ*** *տեսա* (ուղղականաձև հայցականով անձնանիշ գոյական)*: Անասնաբույժը զննեց հիվանդ* ***կենդանուն*** (տրականաձև հայցականով ոչ անձնանիշ գոյական): Այս դեպքում դեր է խաղում նաև ուղիղ խնդրի որոշյալ կամ անորոշ լինելը:

Ներգործող անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից գործողությունը անցնում է ենթակային, օրինակ՝ *Կամուրջը քանդվեց* ***հեղեղից:*** *Դուռը բացվեց* ***քամուց:*** *Մասնակիցները գնահատվեցին* ***հանձնաժողովի կողմից:*** Ներգործող անուղղակի խնդիրն արտահայտվում է բացառականով հոլովով, իսկ անձնանիշ գոյականների դեպքում՝ *կողմից* կապով ու նրա խնդրով: Կան նաև գործիականով դրվող ներգործող խնդիրներ, օրինակ՝ *Դաշտը ծածկվեց* ***ձյունով:***

Հանգման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին հանգում, որտեղ ավարտվում է գործողությունը, օրինակ՝ *Զբոսաշրջիկները մոտեցան* ***հուշարձանին:*** Հանգման անուղղակի խնդիրն արտահայտվում է տրական հոլովով կամ կապով ու նրա խնդրով, օրինակ՝ *Հայացքը հառել էր* ***նկարին:*** *Մայրը փարվեց* ***երեխային:*** *Կռվում էին* ***թշնամու դեմ****:*

Անջատման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից ծագում, սկսվում, անջատվում, բխում է գործողությունը, օրինակ՝ *Դեղձը քաղեց* ***ծառից:*** *Էջը պոկեց* ***ալբոմից:*** *Նա հրաժարվեց* ***աշխատանքից:*** *Նա զրկվեց* ***մրցանակից:***

Ինչպես երևում է բերված օրինակներից, անջատման անուղղակի խնդիրն արտահայտվում է բացառական հոլովով:

Միջոցի անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որի միջոցով կատարվում է գործողությունը, օրինակ՝ *Հատակը մաքրեց **խոզանակով:** Դարբինը հարվածում էր **մուրճով:** Հյուսնը կոտրված մասը ամրացրեց **մեխով:** Նամակը ուղարկեց **ծառայի միջոցով:*** Միջոցի անուղղակի խնդիրն արտահայտվում է գործիական հոլովով (ինչպես բերված առաջին երեք նախադասության մեջ) կամ կապով ու նրա խնդրով (ինչպես վերջին օրինակում):

Վերաբերության անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է խոսքը, որի մասին մտածվում կամ պատմվում է, օրինակ՝ *Նրանք զրուցում էին **առօրյայից:** Ծերունին պատմում էր **անցյալից:** Ուսանողը **մ**տածում էր **հարցի մասին:** Խոսում էին **դասի վերաբերյալ:*** Վերաբերության անուղղակի խնդիրն արտահայտվում է բացառական հոլովով (ինչպես առաջին երկու օրինակում) կամ կապով ու նրա խնդրով (ինչպես վերջին երկու օրինակում):

<u>Վարժություններ</u>

***Վարժություն 1:* Գտնե՛լ խնդիրները և որոշե՛լ տեսակը:**

Մի բարձրուղեշ ծառի մոտով անցնելիս ինձ թվաց, թե լսում եմ մարդկային բազմաթիվ ձայներ և երաժշտության նման ինչ-որ ելևէջներ: Նայեցի աջ ու ձախ, բայց ոչինչ չտեսա: Ձայները դադարեցին և մի քանի վայրկյանից նորից կրկնվեցին: Պարզվեց, որ դրանք գալիս են տասնինը-քսան մետր բարձրություն ունեցող այդ ծառից: Երբ մի թեթև սյուք է անցնում ճյուղերի միջով, ծառի ասեղնաձև տերևները, իրար շփվելով, մի տեսակ նվագահանդեսի պատրանք են ստեղծում: Հիշեցի, որ մի գրքում վաղուց կարդացել էի այդ ծառի մասին:

Ըստ Ալեքսանդր Շիրվանզադեի

Պարագաներ

Ձևի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ձևը, օրինակ. *Նա **հաճույքով** օգնեց: Ճամփորդը **արագ-արագ** պատմեց դեպքը: Քամին **մեղմորեն** օրորեց ծաղիկները:* Ձևի պարագան արտահայտվում է գոյականի գործիական հոլովով (օրինակ՝ ***Թախիծով** հիշեց դեպքը*), դերանուններով (օրինակ՝ *Նա **այդպես** ասաց*), դերբայներով (օրինակ՝ *Երեխան **վազելով** հեռացավ: Ծերունին **ոգևորված** պատմեց*), ձևի մակբայներով (օրինակ՝ *Նա **հերոսաբար** կռվեց*), կապական կառույցներով (օրինակ՝ *Կռվում էր **հերոսի նման***):

Տեղի պարագան ցույց է տալիս գործողության կատարման տեղը, օրինակ՝ *Վարպետն աշխատում էր **արհեստանոցում:** Այցելուները ելան **ցուցասրահից:** Բարձրացանք **սարնիվեր:*** Տեղի պարագան արտահայտվում է գոյականի տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով (օրինակ՝ *Նստեց **աթոռին**: Նա եկավ **տուն:** Հեռացավ **քաղաքից:** Անցավ **ճանապարհով:** Ապրում է **գյուղում***), դերանուններով (օրինակ՝ ***Ո՞ւր** գնաց:* ***Այստեղ** եկավ*), տեղի մակբայներով (օրինակ՝ *Ընկել է **դռնեդուռ***), կապական կառույցներով (օրինակ՝ *Գիրքը դրեց **սեղանի վրա***):

Ժամանակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը, օրինակ՝ *Շինարարները **երեկոյան** վերադարձան:* ***Ձմռանը** շինարարությունը ժամանակավորապես դադարեցվեց: Աշխատանքն ավարտեցին **ժամը վեցին:*** Ժամանակի պարագան արտահայտվում է գոյականի տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական հոլովներով (օրինակ՝ *Կվերադառնա **գարնանը**:* ***Ցերեկը** կգնամ:* ***Ամառվանից** չեմ տեսել:* ***Գիշերով** վերադարձավ:* ***Կյանքում** չեմ տեսել*), դերանուններով (օրինակ՝ ***Ե՞րբ** եկավ*), դերբայներով (օրինակ՝ ***Վազելիս** ընկավ*), ժամանակի մակբայներով (օրինակ՝ ***Վաղուց** չեմ հանդիպել*), կապական կառույցներով (օրինակ՝***Դասից առաջ** հանդիպեցինք*):

Չափ ու քանակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման չափը, աստիճանը, օրինակ՝ *Նա **հինգ անգամ** այցելեց հորեղբորը: Վարպետը **ամբողջ օրն** աշխատեց:* Չափ ու քանակի պարագան արտահայտվում է չափի մակբայներով (օրինակ՝ ***Ամբողջովին** ժանգոտել էր*), դերանուններով)օրինակ՝ ***Այնքա՜ն** պետք է չարչարվեր, որ ավարտեր աշխատանքը*) կապական կառույցներով (օրինակ՝ *Ծառը **տան չափ** բարձրացել էր*):

Պայմանի պարագան ցույց է տալիս գործողության կատարման պայմանը, օրինակ՝ ***Հաղթանակի դեպքում** նրանք կմասնակցեն հաջորդ փուլի խաղերին:* Պայմանի պարագան արտահայտվում է կապական կառույցներով (օրինակ՝ ***Թույլատրության դեպքում** կգնամ*), գոյականի գործիական հոլովով (օրինակ՝ ***Լավ աշխատավարձով** կաշխատեմ*):

Նպատակի պարագան ցույց է տալիս գործողության կատարման նպատակը, օրինակ՝ *Մեկնել է **սովորելու համար**: Գնացին պահեստ՝ **ապրանք բերելու:*** Նպատակի պարագան արտահայտվում է գոյականի տրական հոլովով (օրինակ՝ *Գնացել է **հացի***), անորոշ դերբայի տրական հոլովով (օրինակ՝ *Այգեպանը գնաց **աշխատելու***՝), կապական կառույցներով (օրինակ՝ *Պատրաստում եմ հետս **տանելու նպատակով***):

Պատճառի պարագան ցույց է տալիս գործողության կատարման պատճառը, օրինակ՝ ***Ուրախությունից*** *պարում էր:* ***Նվերների համար*** *շատ ուրախացավ:* ***Անձրևի պատճառով*** *աշխատանքը դադարեցվեց:* Պատճառի պարագան արտահայտվում է գոյականի բացառական հոլովով (օրինակ՝ ***Հիվանդությունից*** *նիհարել էր*), կապական կառույցներով (օրինակ՝ ***Մշուշի պատճառով*** *չէր երևում*):

Հիմունքի պարագան ցույց է տալիս այն հիմունքը, ըստ որի կատարվում է գործողությունը, օրինակ՝ ***Ըստ օրենքի՝*** *դա անհնար է: Այստեղ լողալն* ***օրենքով*** *արգելված է:* Հիմունքի պարագան արտահայտվում է գոյականի գործիական հոլովով (օրինակ՝ ***Հրամանագրով*** *թույլատրվեց*), բացառական հոլովով (օրինակ՝ *Նրա* ***տեսքից*** *հասկացա, որ գործն հաջողությամբ է ավարտել*), կապական կառույցներով (***Ըստ հրամանի՝*** *աշխատանքը պետք է ավարտել մեկ ամսում*):

Չիջման պարագան ցույց է տալիս, թե հակառակ ինչին է կատարվում գործողությունը, օրինակ՝ ***Հակառակ արգելքին՝*** *նրանք մեկնեցին:* ***Չնայած անձրևին՝*** *ճանապարհ ընկան:* ***Ի հեճուկս նրա՝*** *բոլորն ուրախ էին:* Չիջման պարագան արտահայտվում է կապական կառույցներով:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գտնե՛լ պարագաները և որոշե՛լ տեսակը:**

Ամեն առավոտ՝ ժամը վեցին, ես բարձրանում էի կանաչազարդ բլրի գագաթը՝ ոսկեվառ արևածագը տեսնելու: Բարձրաբերձ լեռներից փչում էր վաղորդյան սարսռեցնող զովությունը, և դրանից կնճռոտվում էր լճի վիթխարի կապույտ հայելին: Արևի դեղնազօծ սկավառակը ելնում էր Այծեմնասարի խորդուբորդ թիկունքից, և այդ պահին լիճն առկայծում էր երփնավառ ծփանքով: Լսվում էր աղավնիների կանչը մոտակա քարափից, և երամը փռփռոցով օդ էր բարձրանում՝ լողալու արևի առաջին ոսկեզօծ շողերում:

Ըստ Վախթանգ Անանյանի

ԿՈՉԱԿԱՆ

Կոչականը ցույց է տալիս, թե ում է դիմում խոսողը: Օրինակ՝ *-Ուսանողնե՛ր, քննաշրջանն արդեն սկսվել է* նախադասության մեջ *ուսանողներ* բառը կոչական է: Կոչականն արտահայտվում է ուղղական հոլովով գոյականի (հազվադեպ նաև դերանունների կամ գոյականաբար գործածված բառերի) անորոշ առումով: Կոչականը կարող է ունենալ լրացումներ՝ օրինակ՝ *Սիրելի՛ մասնակիցներ, հայտնում եմ մեր երախտագիտությունը* նախադասության մեջ *սիրելի*-ն *մասնակիցներ*

կոչականի որոշիչ լրացումն է: Կոչականը նախադասության անդամ չի համարվում:

Կոչականը նախադասության մեջ կարող լինել նախադաս, միջադաս կամ վերջադաս: Օրինակ՝ ***Գևո՛րգ,*** *ես այսօր մեկնելու* եմ (նախադաս): *Ես,* ***Գևո՛րգ,*** *այսօր մեկնելու* եմ (միջադաս): *Ես այսօր մեկնելու եմ,* ***Գևո՛րգ*** (վերջադաս): Նախադաս կոչականից հետո դրվում է ստորակետ, վերջադաս կոչականից առաջ է դրվում ստորակետ, իսկ միջադաս կոչականը երկու կողմից տրոհվում է ստորակետերով: Հնչերանգով պայմանավորված՝ գրավոր խոսքում կոչականի վրա դրվում է շեշտ: Տվյալ կիրառության հնչերանգով պայմանավորված՝ շեշտի փոխարեն կոչականի վրա կարող է դրվել բացականչական կամ հարցական նշան, օրինակ՝ *-Ո՞վ քեզ ծեծեց, Մարո՛ ջան* (հովհաննես Թումանյան): *-Աշո՞տ, ինչո՞ւ աշխատանքը չես ներկայացրել:* Եթե կոչականն ունի նախադաս լրացում, ապա շեշտը դրվում է լրացման վրա, օրինակ՝ *-Սիրելի՛ ուսանողներ, մրցույթն ավարտվեց:*

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ

Անկախ դերբայները (անորոշ, ենթակայական, հարակատար, համակատար) կարող են տարբեր լրացումներ ստանալ: Բերենք հետևյալ նախադասությունը. ***Գտնված*** *խաչքարը շատ գեղեցիկ էր:* Այս նախադասության մեջ *գտնված* հարակատար դերբայը որպես որոշիչ լրացնում է *խաչքար* բառին: ***Բակից գտնված*** *խաչքարը շատ գեղեցիկ էր* նախադասության մեջ *գտնված* դերբայն ունի *բակից* լրացումը: ***Եկեղեցու բակից գտնված*** *խաչքարը շատ գեղեցիկ էր* նախադասության մեջ *բակ* բառը ստացել է *եկեղեցու* հատկացուցիչը: Այսինքն՝ երկրորդ օրինակում դերբայը ստացել է լրացում, իսկ երրորդում լրացումն էլ ստացել է լրացման լրացում: Եթե առաջին նախադասության մեջ *խաչքար* բառի լրացումն արտահայտվել էր մեկ դերբայով (*գտնված*), ապա երկրորդ և երրորդ նախադասություններում՝ դերբայական դարձվածներով (*բակից գտնված* և *եկեղեցու բակից գտնված*): Անկախ դերբայն իր լրացման կամ լրացումների, ինչպես նաև լրացման լրացումների հետ (եթե դրանք կան) կազմում է կապակցություն, որը կոչվում է *դերբայական դարձված:* Օրինակ՝ *վազել* բային կարող ենք կապակցել լրացումներ, դրանց էլ՝ լրացման լրացումներ, ինչպես՝ *արագ վազել, արագ վազելիս, արագ վազելով, շատ արագ վազելիս* և այլն: Սրանք դերբայական դարձվածներ են: Ըստ կետադրման առանձնահատկության՝ դերբայական դարձվածները լինում են տրոհվող և չտրոհվող: Տրոհվում են անորոշ դերբայի գործիական հոլովով և հարակատար դերբայով արտահայտված գերադաս անդամ

ունեցող դերբայական դարձվածները, օրինակ՝ ***Լսելով զանգի ձայնը՝*** *աղջիկը ելավ լսարանից: Աղջիկը,* ***լսելով զանգի ձայնը,*** *ելավ լսարանից: Աղջիկը ելավ լսարանից՝* ***լսելով զանգի ձայնը****:* ***Սեղանի մոտ նստած՝*** *նա հայացքը հառել էր հեռուստացույցին: Երեխան,* ***խաղալիքն ամուր բռնած,*** *վազեց տուն:* Ինչպես տեսնում ենք, նախադաս և վերջադաս դերբայական դարձվածները տրոհվում են բութով, իսկ միջադասները՝ ստորակետերով: Հարակատար դերբայով դարձվածները չեն տրոհվում եթե նախադաս որոշիչներ են, օրինակ՝ ***Սեղանին դրված*** *արձանիկը գեղեցիկ էր: Նա վերցրեց* ***փայտից պատրաստված*** *շրջանակը և դրեց արկղի մեջ:* Բարդ նախադասության մեջ դերբայական դարձվածի դիրքը որոշվում է ըստ այն բաղադրիչի, որում նա գտնվում է, օրինակ՝ *Նա հեռացավ՝* ***բոլորին հրաժեշտ տալով,*** *և նրան այլևս ոչ ոք չտեսավ* նախադասության մեջ *բոլորին հրաժեշտ տալով* դերբայական դարձվածը վերջադաս է և տրոհվել է բութով, քանի որ այն գտնվում է առաջին բաղադրիչ նախադասության վերջում:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գտնե՛լ դերբայական դարձվածները և որոշե՛լ, թե գերադաս անդամը որ դերբայով է արտահայտված:**

Ու սարսափից քարացած, թաքստոցներում կծկվելուց ընդարմացած փախստականները ելան և հապշտապ, ինչպես փրկության դուռ գտած բանտարկյալը, քայլեցին առաջ: Քայլեցին փրկվելու փափագով և չզգացին, թե ինչպես դուրս եկան հինավուրց անտառից ու ոտք դրին սարի՝ սորուն մանրախճերով պատված լանջին: Լեռը գրեթե ուղղահայաց էր: Թերևս այդ էր պատճառը, որ մերկ էր ամբողջովին, և ամեն քայլափոխի ահագին մանրաքար էր սահում ցած՝ առաջացնելով չարագույժ մի խշշոց, որից սրդողում, նյարդայնանում էին թշվառ փախստականները:

Ըստ Ստեփան Զորյանի

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Բարդ նախադասության բաղադրիչներն իրար կապակցվում են բառական և ոչ բառական միջոցներով: Բառական միջոցներն են *շաղկապները, հարաբերական դերանունները* և *հարաբերյալները,* իսկ ոչ բառական միջոցներն են *ինչերանգը* և շարադասությունը:

Հարաբերյալները այն ցուցական (նաև անորոշ և որոշյալ) դերանուններն են, որոնք հանդես են գալիս գլխավորի կազմում և ձևականորեն կատարում են որևէ շարահյուսական պաշտոն, սակայն նրանց իմաստը բացահայտվում է երկրոր-

դականի միջոցով: Օրինակ՝ *Տեսա **այն** մարդուն, որը կատարել էր աշխատանքը* նախադասության մեջ *այն* հարաբերյալը կատարում է որոշչի դեր, սակայն նրա իմաստը կոնկրետանում, պարզ է դառնում երկրորդականից:

Շաղկապները և *հարաբերական դերանունները* իրար են կապում բաղադրիչ-ները, սակայն այն տարբերությամբ, որ շաղկապները նախադասության անդամ չեն համարվում, իսկ հարաբերական դերանունները՝ համարվում են:Օրինակ՝ *Նա գնաց, որ աշխատի* նախադասության բաղադրիչները կապակցվել են *որ* ստորադասական շաղկապով, որը նախադասության անդամ չի համարվում: Իսկ *Նա ցույց տվեց իր փորագրած նախշը, որը շատ գեղեցիկ էր* նախադասության բաղադրիչները կապակցվել են *որը* հարաբերական դերանունով: Այս դերանունը նախադասության անդամ է՝ ենթակա:

Հնչերանգը և *շարադասությունը* ևս կարևոր են: Հնչերանգով պայմանա-վորված՝ լսողն զգում է, որ տվյալ բաղադրիչին հաջորդելու և կապակցվելու է մեկ ուրիշը: Բաղադրիչ նախադասությունների հարաբերությունը հաճախ պայմանա-վորված է շարադասությամբ: Համեմատենք հետևյալ նախադասությունները. *Արծանիկը, որը շատ գեղեցիկ էր, դրված էր սեղանին: Արծանիկը դրված էր սեղանին, որը շատ գեղեցիկ էր:* Առաջին նախադասության մեջ երկրորդական նախադասությունը լրացնում է գլխավորի *արծանիկ* բառին, իսկ երկրորդում՝ *սեղան* բառին: Մի շարք դեպքերում, երբ շարադասությունը պայմանավորված է տրամաբանական հաջորդականությամբ, հնարավոր չէ փոխել, օրինակ՝ *Անձրևը եկավ, և հողը թրջվեց:* Այս նախադասության բաղադիրչների շարադասության փոփոխությունից իմաստը կաղավաղվի:

Բարդ նախադասության բաղադրիչները կարող են կապակցվել նաև առանց բառական միջոցների, օրինակ՝ *Քամին փչում էր, ծառերն օրորվում էին, դեղնած տերևները թափվում էին:* Այդ դեպքում հնչերանգի և շարադասության դերն ավելի մեծ է:

<u>Վարժություններ</u>

***Վարժություն 1:* Գտնե՛լ բարդ նախադասությունները և որոշե՛լ, թե բաղադրիչներն ինչ միջոցով են կապակցվել:**

Անդրեասը աչքը մոտեցրեց նախամուտքի դռան զարդանախշ ճաղերին: Ներ-սում ականակիր խավար էր: Վերադարձի համար ամենավատ ժամանակն էր, ո-րովհետև բոլորը քնած էին: Նա ճակատը հեռացրեց սառը ճաղերից, շրջվեց ու հապշտապ քայլեց տան կողքի խորդուբորդ, ծուռումուռ նրբանցքով, որտեղ կար հացի մի հին փուռ՝ անուշ բույրով: Հիշեց, որ տուն գնալիս միշտ հաց էր գնում, ու

նրան թվաց, թե ոչ մի վայրկյան չի բացակայել, և սա շարունակությունն է վերջին օրվա: Դարակներին շարված էին թարմ, տաք-տաք հացեր, իսկ հացերի կողքին քնած էր հացթուխը՝ ալյուրոտված, ձեռքերը խմորոտ: Մյուս հացթուխը քափ-քրտինք մտած գրտնակած խմորը ծեփում էր թոնրի թեժացած պատերին: Չորս հաց գնելով՝ Անդրեասը վերադարձավ:

Ըստ Աղասի Այվազյանի

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԴԱՍ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Բարդ նախադասություններում երկրորդական բաղադրիչները կապակցվում են գերադասին՝ կատարելով գրեթե նույն պաշտոնները, ինչ կատարում են նախադասության անդամները: Ըստ այդմ՝ երկրորդականները լինում են *ենթակա, ստորոգելի, գոյականական անդամի լրացում* (որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ), *բայական անդամի լրացում* (խնդիր և պարագա): Համեմատենք հետևյալ նախադասությունները. *Եկավ **նկարիչ** Սարգիսը: Եկավ Սարգիսը, **որը նկարիչ է:*** Առաջին նախադասության մեջ *Սարգիսը* ենթական ունի որոշիչ լրացում՝ *նկարիչ,* որն արտահայտված է մեկ բառով: Երկրորդ նախադասության մեջ որոշիչն արտահայտվել է երկրորդական նախադասությունով: Այսինքն՝ այս դեպքում երկրորդական նախադասության շարահյուսական պաշտոնը (կամ բնույթը) որոշչի է: Բերենք ենթակայի օրինակ՝ *Կտավին նայելիս երևում էր **խոնավ լինելը:** Կտավին նայելիս երևում էր, **որ խոնավ է:***

Ստորոգելի երկրորդականի դեպքում գլխավոր նախադասության մեջ պարտադիր լինում է հարաբերյալով և հանգույցով արտահայտված բաղադրյալ ստորոգյալ, որի ստորոգելիի իմաստը պարզվում, մեկնաբանվում է երկրորդականի միջոցով, օրինակ՝ *Իրողությունն այն է, որ աշխատանքը որակով է կատարվել: Իրողությունը աշխատանքի որակով կատարվելն է:* Բերենք այլ օրինակներ:

Երկրորդականի բնույթը	*Նախադասությունը*
ենթակա	Ակնհայտ էր, որ դա դժվար աշխատանք է:
ստորոգելի	Զարմանալին այն է, որ տախտակը դիմացել է ծանրությանը:
որոշիչ	Բերել էր այն նկարները, որոնք ներկայացվել էին ցուցահանդեսում:
հատկացուցիչ	Կարդացին նրանց անունները, ովքեր պետք է մասնակցեին մրցույթին:

բացահայտիչ	Նա, որ կատարել էր ամբողջ աշխատանքը, չէր կարող չպարգևատրվել:
ուղիղ խնդիր	Իմացանք, որ նա վերադարձել է:
ներգործող անուղղակի խնդիր	Աշխատանքը կատարվեց նրանց կողմից, ովքեր եկել էին գործարանից:
հանգման անուղղակի խնդիր	Մենք մոտեցանք նրանց, ովքեր եկել էին մեզ օգնելու:
անջատման անուղղակի խնդիր	Դժվարությամբ բաժանվեցինք նրանցից, ում հետ աշխատանքի ընթացքում մտերմացել էինք:
միջոցի անուղղակի խնդիր	Տղան մեզ հիացրեց նրանով, որ կարողանում էր հիանալի նվագել:
վերաբերության անուղղակի խնդիր	Մտածում էի այն մասին, թե ինչպես եմ կատա-ռելու հանձնարարությունը:
ձևի պարագա	Ապրանքը բերեցին այնտեղ, որտեղ պահանջվում էր:
տեղի պարագա	Գնաց այնտեղ, որտեղ աշխատանք կար:
ժամանակի պարագա	Երբ լույսը բացվեց, նրանք գնացին կայարան:
չափ ու քանակի պարագա	Աշխատեց այնքան, մինչ ավարտեց կառուցումը:
պատճառի պարագա	Չէր եկել, որովհետև հիվանդ էր:
պայմանի պարագա	Եթե թույլ տային, կմեկներ:
նպատակի պարագա	Գնաց, որ աշխատի:
զիջման պարագա	Թեև ցուրտ էր, ելավ զբոսնելու:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Տրված գլխավոր նախադասությունը շարունակե՛լ նշված երկրորդականներով:**

1. Աշխատանքն ավարտեցին, …. (ժամանակի պարագա, զիջման պարագա):
2. Բերել էր գիրքը, …. (որոշիչ, նպատակի պարագա):
3. Անշուշտ կգնար, …. (պայմանի պարագա, պատճառի պարագա):
4. Բոլորը հավաքվել էին, …. (նպատակի պարագա, զիջման պարագա):
5. Նրանք մեկնեցին, …. (պատճառի պարագա, ժամանակի պարագա):

ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՊԱՐԶԻ ԵՎ ՀԱԿԱՌԱԿԸ

Բարդ ստորադասական նախադասությունները հաճախ հնարավոր է փոխակերպել պարզի և հակառակը: Օրինակ՝ *Նա գնաց, որ դարպասը ներկի* բարդ ստորադասական նախադասությունը կարող ենք փոխակերպել՝ ստանալով հետևյալ պարզ նախադասությունը. *Նա գնաց դարպասը ներկելու:* Բարդ

նախադասությունը պարզի փոխակերպելիս հիմնականում կատարվում է մի քանի էական փոփոխություն:

ա) Երկրորդական նախադասության պարզ ստորոգյալը վերածվում է դերբայի: Եթե ստորոգյալը բաղադրյալ է, ապա օժանդակ բայ-հանգույցը փոխարինվում է *լինել* բայով, կամ էլ դուրս է ընկնում: Վերացական բայերով (*լինել, թվալ դառնալ* և այլն) արտահայտված հանգույցները դառնում են դերբայներ:

բ) Դուրս են գալիս ստորադաս նախադասությունը կապակցող շաղկապները և հարաբերական-կապակցական բառերը. դրանց փոխարեն կարող են գործածվել համապատասխան կապեր:

գ) Երկրորդական նախադասության ենթական վերածվում է կողմնակի ենթակայի, որը կարող է դրվել սեռական հոլովով:

Բերենք օրինակ. *Քանի որ եղանակը բարենպաստ չէր, ուղևորությունը հետաձգվեց:* Փոխակերպենք այս նախադասությունը. *Եղանակի բարենպաստ չլինելու պատճառով ուղևորությունը հետաձգվեց:* Փոխակերպելիս *բարենպաստ չէր* բաղադրյալ ստորոգյալի *չէր* հանգույցը փոխարինվել է *չլինելու* դերբայով, *քանի որ* շաղկապի փոխարեն գործածվել է *պատճառով* կապական բառը,, *եղանակը* ենթական վերածվել է սեռական հոլովով դրված կողմնակի ենթակայի՝ *եղանակի:*

Հնարավոր է, որ այս փոփոխությունները մասնակիորեն կատարվեն: Օրինակ՝ *Նա պատրաստվեց, որ համերգի գնա - Նա պատրաստվեց համերգի գնալու:* Այս դեպքում դուրս է ընկել որ շաղկապը, բայց նրա փոխարեն կապ չի դրվել իսկ *գնա* ստորոգյալը դարձել է դերբայ՝ *գնալու*: Երկրորդականի մեջ ենթակա չկա, բնականաբար չկա նաև ենթակայի փոփոխման խնդիր:

Փոխակերպումը ճիշտ կատարելու համար պետք է ուշադրություն դարձնել երկրորդականի բնույթին, օրինակ՝ որոշիչ երկրորդականը պետք է վերածվի որոշիչ դերբայական դարձվածի և այլն: Դերբայական դարձվածը պետք է դառնա այն բառի լրացումը, որին լրացնում է երկրորդական նախադասությունը: Փոխակերպելիս շաղկապներին և հարաբերական դերանուններին փոխարինում են համապատասխան կապեր: Նշենք շաղկապների ու կապերի փոխարինության հիմնական զույգերը՝ *որովհետև - պատճառով, քանի որ – պատճառով, հենց որ – պես, թե չէ - պես, որպեսզի – համար, եթե - դեպքում, թեև - չնայած, հակառակ, նախքան – նախքան: Այնքան* հարաբերյալը փոխարինվում է *չափ* բառով, *այնպես*-ը՝ *նման, պես* բառերով:

Վարժություններ

Վարժություն 1: **Տրված բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպե՛լ պարզի:**

1. Զբոսաշրջիկները հասան հուշարձանին, որը կառուցվել է մեկ դար առաջ:
2. Այդ ամենն անշուշտ ձեռնտու կլիներ, եթե կարողանային ճիշտ կազմակերպել:
3. Բոլորին հայտնի էր, որ նա լա քանդակագործ է:
4. Երբ աշխատանքն ավարտեց, հավաքեց գործիքները:
5. Աղբյուրի մեղմ կարկաչը հանգստություն բերեց նրանց սրտերին, ովքեր եկել էին հեռու քաղաքից:
6. Ցանկանում էր անպայման գնալ, որպեսզի բերի իրեն անհրաժեշտ նյութերը:
7. Ընտրել էր այն գրքերը, որոնք հետաքրքիր էին:
8. Բոլորը հավաքվել էին սրահում, որ դիմավորեն եկող հյուրերին:
9. Բոլորը նոր միայն իմացան, որ նա մրցանակ է ստացել:
10. Նախքան աշխատանքը կսկսեր, մի քանի անգամ հաշվարկներ կատարեց:

ՄԵՋԲԵՐՎՈՂ ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

Խոսելիս երբեմն մեջբերվում է որևէ մեկի խոսքը: Այն կարող է մեջբերվել ուղղակիորեն կամ անուղղակի ձևով, օրինակ՝ - *Ես քեզ կօգնեմ,- ասաց ընկերս* և *Ընկերս ասաց, որ ինքն ինձ կօգնի:* Առաջին օրինակում խոսքը մեջբերվել է ուղղակիորեն, անփոփոխ, իսկ երկրորդ դեպքում՝ անուղղակիորեն, պատմողաբար:

Ուղղակիորեն մեջբերված խոսքը կոչվում է *ուղղակի խոսք,* իսկ անուղղակիորեն՝ պատմողաբար մեջբերված խոսքը՝ *անուղղակի խոսք:* Ուղղակի խոսքը հիմնականում հնարավոր է լինում դարձնել անուղղակի: Պատմողական նախադասությամբ արտահայտված ուղղակի խոսքը անուղղակիի վերածվելիս կարող է կապակցվել *որ* կամ *թե* շաղկապներով, իսկ հարցական ուղղակի խոսքը փոխակերպելիս կապակցվում է *թե* շաղկապով, օրինակ՝ *-Ես կօգնեմ,- ասաց նա: Նա ասաց,* ***որ*** *ինքը կօգնի: -Հետաքրքիր է՝ ինչպես ես կատարելու այդ աշխատանքը,- ասաց նա ընկերոջը: Նա ընկերոջը ասաց,* ***թե*** *հետաքրքիր է՝ ինչպես է կատարելու այդ աշխատանքը: -Ե՞րբ ես վերադարձել,- հարցրեց նա ընկերոջը: Նա ընկերոջը հարցրեց,* ***թե*** *երբ է վերադարձել:*

Ուղղակի խոսքն անուղղակիի փոխակերպելիս դուրս են ընկնում զգացական բառերը, փոխվում են դերանունների դեմքերը՝ ըստ տվյալ կիրառության, օրինակ՝ ***-Սիրելի՛ս,*** *ես քեզ կօգնեմ,- ասաց մայրը որդուն: Մայրը որդուն ասաց, որ ինքը նրան կօգնի:*

Ուղղակի խոսքում եղած կոչականն անուղղակի խոսքում դառնում է հանգման խնդիր կամ ենթակա, օրինակ՝ -***Անո՛ւշ,*** *դու վաղը պետք է գնաս տնօրենի մոտ,- ասաց ուսուցչուհին: Ուսուցչուհին ասաց* ***Անուշին,*** *որ վաղը պետք է գնա տնօրենի մոտ* կամ *Ուսուցչուհին ասաց, որ* ***Անուշը*** *վաղը պետք է գնա տնօրենի մոտ:*

Հեղինակային խոսքը ուղղակի խոսքի նկատմամբ կարող է լինել նախադաս, միջադաս և վերջադաս, օրինակ՝ ***Նա ասաց.*** *- Ես կգնամ: -Ես,-* ***ասաց նա,****- կգնամ: -Ես կգնամ,-* ***ասաց նա:*** Ինչպես երևում է օրինակներից, նախադաս լինելիս հեղինակային խոսքն ունի ենթակա-ստորոգյալ (*նա ասաց*) շարադասությունը, իսկ միջադաս և հետադաս լինելիս՝ ստորոգյալ-ենթակա (*ասաց նա*) շարադասությունը:

Մեջբերվող ուղղակի խոսքը կետադրվում է հետևյալ սկզբունքներով:

Նախադաս մեջբերվող խոսքից հետո դրվում է ստորակետ-գծիկ, որին հաջորդում է հեղինակի խոսքը, օրինակ՝ *-Ես առավոտյան պետք է մեկնեմ,- ասաց նա:*

Միջադաս մեջբերվող խոսքը հեղինակի խոսքից առանձնացվում է ստորակետ-գծիկով, օրինակ՝ *-Ես,- ասաց նա,- առավոտյան պետք է մեկնեմ:*

Եթե հեղինակի խոսքը նախադաս է, ապա նրանից հետո միջակետ է դրվում, իսկ մեջբերվող խոսքը գրվում է նոր տողից, և նրանից առաջ դրվում է անջատման գիծ, օրինակ՝

Նա ասաց.

-Ես առավոտյան պետք է մեկնեմ:

Միջադաս հեղինակի խոսքից առաջ կարող է դրվել նաև միջակետ-գծիկ կամ վերջակետ-գծիկ, եթե հեղինակի խոսքը գտնվում է մեջբերվող խոսքի այնպիսի բաղադրիչների միջև, որոնք իրարից պետք է տրոհվեն միջակետով կամ վերջակետով: Բերենք օրինակներ՝ *-Մենք ոչինչ չենք կարող անել,- ասաց նա.- ամեն ինչ բժշկի ձեռքում է: -Կառույցն արդեն ապամոնտաժվել է,- հայտնեց ճարտարապետը:- Շուտով կսկսվի նորի շինարարությունը:*

Չհնչող մեջբերվող խոսքն առնվում է չակերտների մեջ, օրինակ՝ *«Ես մեկ ամսից կվերադառնամ»,- նամակում գրել էր տղան: «Ես,- նամակում գրել էր տղան,- մեկ ամսից կվերադառնամ»: Տղան նամակում գրել էր. «Ես մեկ ամսից կվեարադառնամ»:*

Կարճ՝ մի քանի բառից բաղկացած հետադաս ուղղակի խոսքը կարող է տրոհվել նաև բութով, օրինակ՝ *Նա ասաց՝* ***կվերադառնամ:***

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Ուղղակի խոսքը դարձնե՛լ անուղղակի:**

1. –Ես ամեն ինչ կկազմակերպեմ,- ասաց կուրսի ավագը:

2. Բազմոցին նստած՝ խորհում էր. «Ես վաղը կսկսեմ այդ աշխատանքը, որ մեկ շաբաթում կավարտեմ»:

3. –Մենք ե՞րբ կարող ենք գնալ ցուցահանդես,- տնօրենին հարցրին աշակերտները:

4. –Մենք,- ասաց նա,- երբեք գործը կիսատ չենք թողել:

5. «Մեզ մի քանի օր է հարկավոր,- գրված էր նամակում,- որ կարողանանք կատարել հանձնարարությունը»:

6. Հայտարարության մեջ գրված էր. «Մենք կարող ենք պատվերը կատարել երեք օրում»:

7. –Ես իմ քանդակները ստեղծելիս չեմ մտածում աշխատանքի դժվարության մասին,- ասաց Արմանը:

8. –Հասմի՛կ, դու խմբի ցուցակը պետք է ներկայացնես ինձ,- ասաց ուսուցչուհին:

9. «Ես ոչինչ չպետք է մոռանամ, այլապես հաջողության չեմ հասնի»,- մտածեց մրցույթի վերջին մասնակիցը:

10. –Մեզ մի քանի օր ժամանա՛կ տվեք, որ մենք կարողանանք կազմել նախահաշիվը,- այցելուին պատասխանեց կազմակերպության աշխատակիցը:

ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գրավոր խոսքն արտահայտվում է տառերով և կետադրական նշաններով: Ժամանակակից հայերենում գործածվում է կետադրական 15 նշան՝ *վերջակետը, ստորակետը, բութը, միջակետը, շեշտը, հարցական նշանը, բացականչական նշանը, չակերտները, փակագծերը, կախման կետերը, բազմակետը, միության գծիկը, անջատման գիծը, ենթամնան, ապաթարցը:* Իրենց հիմնական կիրառություններին հիման վրա կետադրական նշանները պայմանականորեն բաժանվում են երեք խմբի՝ *տրոհության, բացահայտության, առոգանության:*

Տրոհության նշաններն են *վերջակետը, ստորակետը, բութը, միջակետը:*

Բացահայտության նշաններն են *փակագծերը, չակերտները, կախման կետերը, բազմակետը, միության գծիկը, անջատման գիծը, ենթամնան, ապաթարցը:*

Առոգանության նշաններն են *շեշտը, հարցական նշանը, բացականչական նշանը:*

ՏՐՈՀՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Տրոհության նշաններն են *վերջակետը, ստորակետը, բութը, միջակետը:*

Վերջակետը դրվում է ինքնուրույն նախադասության վերջում, եթե անհրաժեշտություն չկա այդտեղ կախման կետեր դնելու (տե՛ս կախման կետերին վերաբերող մասը), օրինակ՝ *Մենք գնացինք համալսարան: Շինարարությունն ավարտվեց տարեվերջին:* Վերջակետ է դրվում նաև այն վերնագրերից և վերնագրային արժեք ունեցող միավորներից հետո, որոնց նույն տողում անմիջապես հաջորդում է տեքստ, օրինակ՝ *Թվական անուն: Թվականները ցույց են տալիս առարկայի թիվ կամ թվային կարգ:*

Ստորակետը դրվում է նախադասության բազմակի անդամների միջև, եթե նրանց միջև չկա *և, ու, կամ, թե* շաղկապներից որևէ մեկը, օրինակ՝ *Գլխարկները, ձեռնոցները, գոտիները և վերնաշապիկները շարված էին խանութի ցուցափեղկերի դարակներում: Կարմիր, դեղին, կապույտ ու ճերմակ ծաղիկները շատ գեղեցիկ էին: Հանձնարարված էր կարդալ որևէ պոեմ, պատմվածք կամ վիպակ: Քամի ու փոթորիկ, ձյուն թե անձրև նրան չէին վախեցնում:* Ստորակետերով են անջատվում նաև *կրկնադիր* շաղկապներով կապակցված անդամները, իսկ շաղկապների վրա դրվում է շեշտ, օրինակ՝ *Թե՛ Աշոտը, թե՛ Գեղամը, թե՛ Վարդանը աշխատանքը լավ էին կատարել: Ե՛վ նկարները, և՛ քանդակները, և՛ ասեղնագործությունները գեղեցիկ էին:* Եթե վերջին անդամը կրկնվող շաղկապից բացի կապվում է նաև *և, ու, կամ* շաղկապներից որևէ մեկով, ապա նրանից առաջ ստորակետ չի դրվում, օրինակ՝ *Թե՛ Աշոտը, թե՛ Գեղամը և թե՛ Վարդանը աշխատանքը լավ էին կատարել:*

Ստորակետով իրարից տրոհվում են բարդ նախադասության բաղադրիչները, եթե կապված են շաղկապով կամ հարաբերական դերանուններով, օրինակ՝ *Բոլորը եկել էին, որ մասնակցեն միջոցառմանը: Ներկայացրին այն մասնակիցներին, որոնք պետք է մասնակցեին եզրափակիչ փուլին: Բոլորն ավարտել էին աշխատանքը, բայց չէին հեռանում: Նկարը գեղեցիկ էր, և բոլորը գովում էին հեղինակին:* Բարդ նախադասության բաղադրիչներն իրարից չեն տրոհվում, եթե

կապված են *և, ու, կամ* շաղկապներից որևէ մեկով և ունեն ընդհանուր ենթակա, օրինակ՝ *Երեխան վերցրեց մատիտը և սկսեց նկարել: Նրանք պետք է ներկայացուցիչ ուղարկեին կամ նամակով հայտնեին իրենց վերաբերյալ տվյալները:*

Դերբայական դարձվածին վերաբերող թեմայում արդեն նշվել է, որ անորոշ դերբայի գործիական հոլովով և հարակատար դերբայով արտահայտված գերադաս անդամ ունեցող միջադաս դերբայական դարձվածները տրոհվում են ստորակետերով, օրինակ՝ *Նկարիչը, վերցնելով վրձինը, սկսեց աշխատանքը: Բոլոր ներկաները, այդ անսպասելի լուրից շփոթված, լռել էին:*

Ինչպես նշվել է, կոչականը ևս տրոհվում է ստորակետ(եր)ով, օրինակ՝ -*Վարպե՛տ, այս աշխատանքն այսօր չենք կարող ավարտել: -Այս աշխատանքը, վարպե՛տ, այսօր չենք կարող ավարտել: -Այս աշխատանքն այսօր չենք կարող ավարտել, վարպե՛տ:*

Ձայնարկությունները նախադասության մյուս բառերից հիմնականում տրոհվում են ստորակետերով, օրինակ՝ -*Վա՛յ, վա՛յ, մենք հենց իմացանք՝ մարդ ես դառել, խելոքացել ես… Էդ տեսակ բան կասե՞ն* (Հովհաննես Թումանյան):

Վերաբերականների մի մասը տրոհվում է ստորակետերով, եթե իր եղանակավորած անդամի կողքին չէ, օրինակ՝ *Անշուշտ, այդ ամենը նրանց հայտնի չէր:* Եթե վերաբերականը լինի *հայտնի չէր* ստորոգյալի կողքին (որին եղանակավորում է), ապա չի տրոհվի, ինչպես՝ Այդ *ամենը նրանց անշուշտ հայտնի չէր:*

Բացի, բացառությամբ, ըստ, ի հեճուկս, ի պատիվ, հակառակ, համաձայն, չհաշված, չնայած և մի քանի այլ կապերով ու կապական բառերով ձևավորված միջադաս խնդիրներն ու պարագաները հիմնականում տրոհվում են ստորակետերով, օրինակ՝ *Բոլորը, բացի նրանից, մասնակցեցին:* Նախադաս և հետադաս դիրքերում այս անդամները բութով են տրոհվսում, օրինակ՝ *Բացի նրանից՝ բոլորը մասնակցեցին: Բոլորը մասնակցեցին՝ բացի նրանից:*

Բութը դրվում է, եթե բարդ նախադասության բաղադրիչ նախադասություններ կապակցող շաղկապը զեղչված է, օրինակ՝ *Թվում էր՝ այդ ամենը նա մի անգամ արդեն տեսել է* (զեղչված է *թե* շաղկապը)

Արդեն նշվել է, որ բացահայտչի երեք տեսակներն էլ (բուն, մասնական, մասնավորող) բացահայտյալից անջատվում են բութով, իսկ հաջորդող բառից՝ ստորակետով, օրինակ՝ *Ծաղիկները՝ վարդերը, շատ գեղեցիկ էին: Նա՝ որպես մասնագետ, իրեն լավագույն ձևով դրսևորեց: Այգում՝ ծառերի տակ, մի գեղեցիկ նստարան կար:*

Հատկացուցչի վրա բութ է դրվում, եթե հատկացուցչի և հատկացյալի միջև կա գոյական կամ գոյականական (առարկայական) իմաստով բառ, օրինակ՝

Լուսինեի՝ խանութից գնված զգեստը գեղեցիկ էր: Այս բութը դրվում է իմաստային հնարավոր շփոթությունը կանխելու համար: Եթե բութ չդրվի, ապա կընկալվի, որ խանութը պատկանում է Լուսինեին:

Բազմակի կամ ծավալուն հետադաս որոշիչները տրոհվում են բութով, իսկ նրանցից հետո դրվում է ստորակետ, օրինակ՝ *Մի քանի մատիտ՝ կարմիր, կանաչ, կապույտ, դեղին, դրված էր տուփի մեջ, մյուսները թափված էին հատակին: Այդ պայուսակը՝ կարված որակյալ կաշվից, նրան շատ դուր եկավ:*

Հետադաս նպատակի պարագան տրոհվում է բութով, եթե նրա լրացյալի օժանդակ բայը շրջուն շարադասությամբ է, օրինակ՝ *Նրանք պահեստ էին գնացել՝ ապրանք բերելու: Խանութ էր գնացել՝ հացի:* Հետադաս նպատակի պարագան բութով տրոհվում է նաև այն դեպքում, երբ նրա ու լրացյալի միջև կա նպատակի պարագային չլրացնող բառ, օրինակ՝ *Գնաց դահլիճ՝ մարզվելու: Հեռուստացույցը բերել էին արհեստանոց՝ նորոգելու:*

Հիմնականում բութ է դրվում ստորոգյալի լրիվ կամ մասնակի զեղչման դեպքում, օրինակ՝ *Ոմանք աշխատում էին, ոմանք՝ հանգստանում* (զեղչված է *էին* օժանդակ բայը):

Նախադաս և հետադաս դերբայական դարձվածները, ինչպես նշվել է, տրոհվում են բութով, իսկ միջադասը՝ ստորակետերով՝ օրինակ՝ *Այդ անսպասելի լուրից շփոթված՝ բոլոր ներկաները լռել էին: Բոլոր ներկաները լռել էին՝ այդ անսպասելի լուրից շփոթված:*

Ինչպես նշվել է, կարճ՝ մի քանի բառից բաղկացած հետադաս ուղղակի խոսքը կարող է տրոհվել նաև բութով, օրինակ՝ *Նա ասաց՝ կօգնեմ:*

Միջակետը դրվում է բարդ համադասական նախադասության այնպիսի բաղադրիչների միջև, որոնք ունեն պատճառահետևանքային իմաստային հարաբերություն կամ էլ որոշակի ինքնուրույնություն և կապված չեն շաղկապով, օրինակ՝ *Նա շատ հոգնած էր. ամբողջ օրն աշխատել էր*: *Կեսօր էր. այդ ժամանակ բոլորը սովորաբար տներում էին լինում:*

Միջակետ է դրվում նաև հեղինակային նախադաս խոսքից հետո, օրինակ՝ *Նա ուրախությամբ մտածեց. «Վաղը մեկնելու եմ հանգստանալու»:*

Միջակետ դրվում է նաև համարակալում արտահայտող թվականներից, տառերից, համառոտագրություններից հետո, օրինակ՝ *1., 2., 3., ա., բ., գ., Հ. Թումանյան, 19-րդ դ. (դար)* և այլն:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Բացահայտության նշաններն են *փակագծերը, չակերտները, կախման կետերը, բազմակետը, միության գծիկը, անջատման գիծը, ենթամնան, ապաթարցը:*

Փակագծերի մեջ են առնվում ներդրյալ բառերը, բառակապակցություններն ու նախադասությունները, որոնք լրացուցիչ տեղեկություններ հաղորդող միավորներ են, օրինակ՝ *Կուրսի ավագը (նկարում ձախից առաջինը) և մյուս մասնակիցները պարգևը ստանալուց հետո:*

Չակերտների մեջ են առնվում կապակցություններում (ոչ առանձին) գործածված վերնագրերը, կազմակերպությունների և այլ պայմանական անվանումները, օրինակ՝ *Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմը, «Հիմք» ընկերությունը:* Սակայն մատենագիտական ցանկերում, երբ հեղինակի անունը ուղղական հոլովով է, ստեղծագործությունների վերնագրերը գրվում են առանց չակերտների, օրինակ՝ *Համո Սահյան,* ***Տոհմի կանչը,*** *«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան, 1981:*

Չակերտներում են գրվում հեգնական, ոչ բուն իմաստներով գործածվող բառերը, օրինակ՝ *Նա «շատ» խելոք է. ոչինչ չի հասկանում:*

Ինքնանվանողական գործառույթով գործածվող բառերը ևս գրվում են չակերտներում, օրինակ՝ *«Մոտենալ» բայը սոսկածանցավոր է:* Սրանք կարելի է գրել նաև շղատառ, առանց չակերտների, օրինակ՝ *Մոտենալ* բայը սոսկածանցավոր է:

Չակերտների մեջ առնվում է ներքին, չինչող խոսքը (մտածմունք, նամակ և այլն), օրինակ՝ *Երիտասարդը դանդաղ քայլում էր ու մտածում. «Վաղը կայցելեմ նրան»:*

Կախման կետերը դրվում են նախադասության սկզբում, մեջտեղում կամ վերջում՝ արտահայտելով հույզեր, զգացմունքներ, հուզական անավարտություն, օրինակ՝ *Լեռնե՜ր… բարձր ու կանա՛չ լեռներ, լեռնե՛ր, դուք հայրենիքն ու գահը զով զեփյուռների, անուշաբույր ծաղիկների, սուրբ ցողերի ու շաղերի, անմահական սառն աղբյուրների, սև-սև ամեպերի, հրեղեն կայծակների, ջրեղեն փարափների… Դո՜ւք- մոտիկ Աստծուն, աստղերին, լուսնին, երկնային շնորհքներին ու գաղտնիքներին, վեհ ու վեհապանծ լեռներ…* (Հովհաննես Թումանյան):

Բազմակետը դրվում է մեջբերումներում՝ կրճատման տեղը նշելու համար, օրինակ՝ *Հովտում շոգ էր, իսկ անտառում, որով ընթանում էին մեր ձիերը, դուրեկան զով էր: ….Վերջապես մտանք ծով կանաչի աշխարհը, և Լալվարի*

բարձունքից եկող հովը շոյեց մեր դեմքերն ու զվարթացրեց մեզ (Վախթանգ Անանյան): Առաջին նախադասությունից հետո կրվատված է մի հատված:

Միության գծիկով են գրվում մի շարք բաղադրյալ բառեր (տե՛ս բաղադրյալ բառերի գրությանը վերաբերող թեման), օրինակ՝ *արագ-արագ, փուն-թանգարան, հինգ-վեց:*

Միության գծիկ է դրվում նաև թվականներին, հապավումներին, ինքնանվանողական գործառույթով գործածվող բառերին կցվող մասնիկներից առաջ, օրինակ՝ *1-ին, 8-ից, ՀՀ-ում, զարդանախշ-ի կազմությունը և ուղղագրությունը:*

Անջատման գիծ է դրվում այն միավորների միջև, որոնք արտահայտում են սկզբնակետի և վերջնակետի տարածական կամ ժամանակային հարաբերություն, օրինակ՝ *Երևան-Սևան, ժամը 14-15-ը:*

Անջատման գիծը դրվում է մեջբերվող խոսքի սկզբում (տե՛ս մեջբերվող խոսքին վերաբերող թեման):

Ենթամնան դրվում է տողադարձի կամ վանկատման ժամանակ բառի անջատված հատվածների միջև, օրինակ՝ *դա~սա~գիրք, պա~հա~ման:*

Ապաթարցը գործածվում է հիմնականում արևմտահայերենում՝ դրվելով զեղչված ձայնավորների փոխարեն: Արևելահայերենում գործածվում է միայն օտար անուններում, օրինակ՝ *Ժաննա դ'Արկ:*

ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Առոգանության նշաններն են *շեշտը, հարցական նշանը, բացականչական նշանը:*

Շեշտը դրվում է հրամայական եղանակի բայաձևերի վրա, օրինակ՝ *գրի՛ր, նկարի՛ր, կարդա՛, ասա՛* և այլն: Հարադիր բայերի հրամայականի դեպքում շեշտը դրվում է անվանական բաղադրիչի վրա, օրինակ՝ *հա՛րց փուր, մի՛փք արա:*

Ինչպես նշվել է (տե՛ս կոչականին վերաբերող թեման), կոչականը տրոհվում է ստորակետ(եր)ով և շեշտվում, օրինակ՝ *-Ուսանողնե՛ր, վաղը կհանձնվեն ավարտական վկայականները:*

Շեշտ (երբեմն էլ բացականչական նշան) է դրվում նաև կոչական ձայնարկությունների վրա, օրինակ՝ *-Ա՛յ փղա, ի՞նչ ծիծաղ կգար, սիրտներս սևացել էր. դանակ տայիր՝ արյուն չէր կաթիլ* (Հովհաննես Թումանյան):

Շեշտվում են կրկնվող շաղապները (տե՛ս «Շաղկապ» թեման, նաև «Տրոհության նշաաներ» թեմայի՝ ստորակետին վերաբերող մասը), օրինակ՝ *Թե՛ փունը, թե՛ բակը, թե՛ պարտեզը գեղեցիկ էին:*

Հարցական նշանը դրվում է հարցական դերանունների վրա՝ *ո՞վ, ի՞նչ, ինչո՞ւ, ո՞ւր, ե՞րբ, քանի՞* և այլն, ինչպես նաև հարցական-երկբայական վերաբերականների վրա՝ *մի՞թե, չէ՞ որ, չլինի՞ թե* և այլն, օրինակ՝

Ինչո՞ւ ես հեծում, մի՞թե ամեհի

Օձն է ճնշում քեզ- կասկածը անհույս….(Ավետիք Իսահակյան)

Հարցական նշան է դրվում նաև այն բառի վրա, որը տվյալ դեպքում արտահայտում է հարցում, օրինակ՝ *Արմե՞նը փարավ նկարը: Արմենը փարա՞վ նկարը:*

Բացականչական նշանը դրվում է ձայնարկությունների վրա՝ *հե՛յ, վա՛յ, է՛, ջա՛ն,* ինչպես նաև այն բառերի վրա, որոնք տվյալ դեպքում արտաբերվում են բացականչական հնչերանգով, օրինակ՝ *Նրանք դեռ այնքա՛ն պիտի չարչարվեն, մինչև կարողանան գործն ավարտել:*

-Ա՛խ, երնե՛կ քո մատաղ կյանքին,

Որ պիտ ծաղկի Բինգյոլում (Ավետիք Իսահակյան):

Ես դուրս եմ գալիս, փողոց եմ գնում

Եվ երկա՛ր, երկա՛ր մայթերն եմ մաշում (Վահան Տերյան):

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Արտագրե՛լ և կետադրե՛լ:**

ա) Միշտ էլ հետաքրքրվել եմ բնության բոլոր արարածներով և դրանցից որն էլ պատահել է փորձել եմ մանրազնին ուսումնասիրել: Մի օր տարիներ առաջ ճահճային թռչունների որսի ժամանակ մի կրիա գտա և բերեցի տուն: Տանը պատշգամբի մի անկյունում նրա համար ստեղծեցի մի հարմար անկյուն բերելով խոտեր ճյուղեր ու հարդ: Ինքնամփոփ ու զգույշ են կրիաները բայց երբ համոզվում են որ իրենց որևիցե վտանգ չի սպառնում պատյանից դուրս են հանում գլուխն ու ոտքերը և քայլում դանդաղ ու անճոռնի շարժումներ անելով: Փոքր-ինչ ընտելանալուց հետո նույնիսկ կեր են վերցնում ձեռքիցդ: Սակավապետ ու քչակեր կենդանիներ են դրանք շաբաթներով կարող են ոչինչ չուտե, բայց շատ հեշտ են դիմանու, որովհետև շարժումներ քիչ են անու, և էներգիա քիչ է ծախսվում: Ժողովրդական մի հինավուրց ավանդություն կրիայի դանդաղաշարժությունը բացատրում է նրանով որ ուր էլ լինի կրիան իր տան մեջ է ուստի չի շտապում:

Ըստ Վախթանգ Անանյանի

բ) Ծիրանի ծառը դարձավ գյուղի բնակիչ: Դժվար էր ասել երբ և ով էր կորիզը նետել եկեղեցու գմբեթին բայց ավելի դժվար էր ըմբռնել թե ինչպես էր կորիզը հարմարվել ճեղքում և արմատները թել-թել տարածել շաղախի միջով: Այո զարմանալի էր բայց ծառը գոյատևում էր ու մարդիկ դադարեցին զարմանալուց: Գիտեմ եկող գարնանն էլ ծառը կծաղկի ու հետո կծածկվի պտուղներով և գյուղի տղաների հերթական կենսախինդ սերունդը դարձյալ չհամբերելով կմագլցի վեր կպոկի դեռևս չհասած կանաչ պտուղները շտապելուց ու խառնաշփոթից մի քանի ճյուղ կոտրելով: Հետո նրանք մի խորին խորհրդով կնստեն վերևում կիսավեր գմբեթի վրա կսեղմվեն իրար ճգնելով տեղավորվել ծիրանենու թրթռացող ստվերում: Իսկ ծառը կհամբերի ու մյուս գարնանն էլ կհագնի ճերմակ ծաղիկներով իր հարսանեկան զգեստը:

Ըստ Վարդգես Պետրոսյանի

գ) Սեղաններից մեկին դրված էր ճեփ-ճերմակ գլխարկ մյուսին սև: Աճպարարը նապաստակին իջեցնում էր մի գլխարկի մեջ հետո հանում էր մյուս գլխարկից արժանանալով հանդիսատեսների որոտընդոստ ծափերին: Հանդիսատեսները շատ էին տեսել այդ համարը բայց դարձյալ ծափահարում էին մինչև իսկ ապշում որովհետև այն ընդունված էր օրինաչափ: Մարդիկ աշխարհում մի հիմնարկ են ստեղծել կրկես: Այնտեղ պետք է հավաքվեն պետք է գա մի ծաղրածու կամ աճպարար ցույց տա որևէ ներկայացում պարզունակ կամ անըմբռնելի և իրենք պետք է ծափահարեն: Ու հիմա աճպարարը հետևելով այդ անխախտ պայմանավորվածությանը անբասիր պարտաճանաչությամբ կատարում էր իր գործը և մարդիկ զվարթ ծիծաղում էին: Արտասովոր ոչինչ չկար իրենց ամենօրյա տեղերում էին թե հսկիչները թե հասարակությունը թե նապաստակը և թե աճպարարը: Եվ աճպարարն էլ հրճվում էր իր արածներով որոնք հեքիաթային էին թվում նույնիսկ իրեն չնայած երևի միլիոն անգամ կատարել էր:

Ըստ Աղասի Այվազյանի

ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՃԵՐԸ

Ըստ խոսքի գործառության, այսինքն թե ինչ նպատակով է կազմվում խոսքը, առանձնացվում է գործառական հինգ ոճ՝ *գիտական, վարչական (պաշտոնական), գեղարվեստական, հրապարակախոսական, առօրյախոսակցական:* Ոճերը դասակարգելիս հաշվի են առնվում խոսքի իմաստային, բառապաշարային, քերականական և հուզաարտահայտչական հատկանիշները:

Գիտական ոճով գրվում են գիտական աշխատությունները՝մենագրությունները, դասագրքերը, գիտական հոդվածները և այլն, սակայն գիտական ոճով խոսքը կարող է լինել բանավոր, օրինակ՝ դասախոսություն, գիտական քննարկում և այլն: Այսինքն՝ այս ոճով շարադրվում են խիստ գիտական (ակադեմիական), գիտաուսումնական, գիտահանրամատչելի տեքստեր, որոնցում հիմնականում չեն լինում հուզական բառեր, լինում են տերմիններ, բառերի, հատկանպես տերմինների կրկնություններ: Գիտական շարադրանքում հեղինակը կարող է օգտվել այլոց կարծիքներից ու մեջ բերել դրանք: Գիտական ոճով շարադրված խոսքում հաճախ գործածվում են զուգադիր շաղկապներ (օրինակ՝ *եթե…. ապա, քանի որ…. ուրեմն*), որոնց միջոցով ապահովվում է շարադրանքի տրամաբանական կապը:

Վարչական (պաշտոնական) ոճով գրվում են տարբեր փաստաթղթեր ու օրենքներ, այսինքն՝ այս ոճով շարադրանքը գործածվում է օրենսդրական, դիվանագիտական, գրասենյակային ոլորտներում: Հասկանալի է, որ փաստաթղթերում առաջնայինը հստակությունն ու միօրինակությունն են, երկիմաստության բացակայությունը և կոնկրետությունը: Այդ պատճառով էլ կան խոսքի կառուցման մշակված սկզբունքներ, որոնք գործածվում են այս ոլորտում: Դրանք գործավարական տերմիններ են, դիմելաձևեր, տեքստի կառուցման ձևեր և այլն: Օրինակ՝ դիմումը գրվում է որոշակի ձևով, տեղեկանքը՝ մեկ ուրիշ, քաղվածքը՝ ուրիշ և այլն: Կարևոր է երկիմաստությունից խուսափելը և հստակ ձևակերպումներ անելը, ուստի երբեմն գործնական գրությունների համար կիրառվում են մշակված ձևաթերթեր, որոնցում անհրաժեշտ է միայն լրացնել կոնկրետ տվյալները:: Վարչական ոճում հաճախ գործածվում են արդեն կայունացած պատրաստի արտահայտություններ, օրինակ՝ *սույնով հաստատվում է, տրվում է առ այն, կարգադրել, ուղարկել ըստ պատկանելության* և այլն:

Գեղարվեստական ոճով գրվում են գեղարվեստական ստեղծագործությունները՝ բանաստեղծություններ, պատմվածքներ, վիպակներ և այլն: Այս ոճի գրվածքներում շատ են հուզական բառերը, մակդիրները, փոխաբերությունները, համեմատությունները և այլն: Այսինքն՝ հեղինակն իր խոսքը շարադրելիս մեծապես օգտվում է պատկերավորման ու արտհահայտչական միջոցներից՝ իր խոսքը դարձնելով հուզական, տպավորիչ, գեղեցիկ ու հարուստ: այդ նապատակով գործածվում են հնչյունական, բառային և քերականական զանազան իրողություններ՝ հնչյունների կուտակում, հոմանիշներ, հականիշներ, համանուններ ու հարանուններ, ձևաբանական շեղումն, շրջուն շարադասություն և այլն: Այս ոճի գրվածքներում կարող են լինել նաև այլ ոճերի տարրեր, որովհետև հեղինակը կարող է ներկայացնել գրական տարբեր հերոսների և տարբեր միջավայրերում:

Հրապարակախոսական ոճով կազմվում է մարդկանց տարբեր խմբերին ուղղված խոսքը, որի միջոցով հեղինակը փորձում է իր կարծիքները և տեսակետները հաղորդել հանրությանը կամ նրա որոշակի խավին: Այս ոճով արտահայտված խոսքն ունի տեղեկատվական, քարոզչական գործառույթ, և առկա է գնահատողական վերաբերմունք: Հրապարակախոսական ոճում կարող են գործածվել նաև տարբեր ոճերի տարրեր, որոնց գործադրմամբ հեղինակը փորձում է հասնել իր նպատակին: Այս ոճով կառուցված խոսքում կարևոր են ինքնատիպությունն ու յուրօրինակությունը, որոնց շնորհիվ խոսքը տպավորիչ կլինի և ավելի մեծ ազդեցությունն կունենա:

Առօրյա-խոսակցական ոճով կազմվում է առօրյա խոսքը: Այս ոճի խոսքում շատ են զեղչումները, հուզական բառերը, խոսակցական բառերը, դարձվածային արտահայտությունները և այլն: Այս ոճով խոսքի ձևավորման գործընթացում կարևոր դեր ունեն խոսողի անհատական հատկանիշները (կրթություն, ծագում, մտածելակերպ, աշխարհայացք և այլն), խոսքային միջավայրը, խոսող-խոսակից հարաբերությունը և այլն: Առօրյա-խոսակցական ոճում հաճախ են գրական լեզվից շեղումներ. Դրանք վերաբերում են թե՛ հնչյունական-արտասանական, թե՛ բառային ու քերականական իրողություններին:

ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Խոսքի կարևոր հատկանիշներից է պատկերավորությունը: Պատկերավորման միջոցների կիրառությունը օգնում է գեղեցիկ, տպավորիչ, սրամիտ խոսք կազմելուն: Պատկերավորման միջոցները բազմաթիվ են, որոնցից հաճախ են գործածվում *մակդիրը, համեմատությունը, փոխաբերությունը:*

Մակդիրը գեղարվեստական որոշիչն է, այսինքն՝ այն որոշիչը, որը պատկերավոր, հուզական, փոխաբերական հատկանիշ է վերագրում[34], ինչպես՝ *ժպտացող արև, պարող քամի, ծով աչքեր* և այլն: Հաճախ մակդիրներ են համարվում ոչ միայն առարկաներն ու երևույթները, այլև գործողությունն արտահայտչականորեն բնորոշող բառերն ու արտահայտությունները, օրինակ՝ *Արևը* ***ժպտալով*** *ելավ ամպերի միջից:* Առանձնացվում են *լեզվական* և *խոսքային* մակդիրներ: Լեզվական մակդիրները տարածված են լեզվում և հաճախ են գործածվում բոլորի կողմից, օրինակ՝ *ծաղիկ հասակ, ծով վշտեր, քար սիրտ, քաղցր խոսք:* Խոսքային մակդիրները գործածում է հեղինակն խոսքում՝ թարմություն հաղորդելով նրան:

[34] Մակդիրի որոշման վերաբերյալ կան տարբեր կարծիքներ:

Հիշենք, օրինակ, Համո Սահյանի «Ինքնությունս» բանաստեղծության հետևյալ տողերը.

Ինքնությունս հունցեցին
Օրերդ անհանգիստ,
Քարանձավներդ լալկան
Եվ քարերդ խիստ…

Ջրվեժներդ հեթանոս
Եվ քամիներդ
Եվ ճգնավոր, ճգնավոր
Մասրենիներդ…

Քարասապան սարերիդ
Շուքը պատվական
Եվ մշուշները նրանց
Նախապատմական…

Երկնքի մեջ մոլորված
Արահետներդ
Ու երկնքից խռոված
Խոնարհ երդերդ…

Անհանգիստ օր կապակցության *անհանգիստ* մակդիրը լեզվական է, մինչդեռ ***լալկան*** *քարանձավ,* ***խիստ*** *քարեր,* ***հեթանոս*** *ջրվեժներ,* ***ճգնավոր*** *մասրենիներ,* ***քարասապատ*** *սար,* ***պատվական*** *շուք,* ***նախապատմական*** *մշուշ,* ***երկնքի մեջ մոլորված*** *արահետ,* ***երկնքից խռոված, խոնարհ*** *երդ* կապակցություններում մակդիրները խոսքային են. հենց դրանք էլ մեծապես նպաստել են բանաստեղծական խոսքի պատկերավորությանը:

Համեմատությունը մի առարկայի կամ երևույթի բնորոշումն է մի ուրիշի միջոցով՝ նրանց ընդհանրության կամ տարբերության հիման վրա: Համեմատության շնորհիվ հնարավոր է բացահայտել տարբեր իրողությունների նոր նկատված կողմերը՝ դրանով իսկ գեղեցկություն ու թարմություն հաղորդելով խոսքին: Համեմատություն կատարելու համար հաճախ գործածվում են *նման, պես, որպես, կարծես, ասես* և այլ բառեր: Համեմատության միջոցով հեղինական արտահայտում է իր զգացողությունը, դիտողականությունը, վերացարկված մտածողությունը, վերաբերմունքը և այլն: Բերենք համեմատության օրինակներ:

Կենսական ծովի հույզերին միջին
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր.
Կայծակն է զարկում իմ վեհ ճակատին,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր (Ավետիք Իսահակյան):

Ինքնաշարժերը,
Որ մինչև հիմա ասես կույր էին
Կատվի նորածին ձագերի նման,
Իրար ետևից աչքերն են բացում (Պարույր Սևակ):

Ամեն ինչ պարզ էր ու պարզունակ էր
Եվ նախնական էր իմ հոգու պես.... (Համո Սահյան)

Դու հրդեհի պես շողում ես իմ դեմ,
Ու ես այրվում եմ իմ բախտին հլու,
Մենք կյանքում ո՛ւշ ենք հանդիպել, գիտեմ,
Իրավունք չունեմ ես քեզ սիրելու (Վահագն Դավթյան):

Փոխաբերությունը հիմնվում է առարկաների ու երևույթների նմանության, համեմատական լինելու վրա. այդ ամենի հիման վրա խոսողը կարողանում է բառերն ու բառակապակցությունները գործածել այլ իմաստով՝ դրանով պատկերավոր դարձնելով ասվածը: Բերենք օրինակ Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմից:

Էսպես տիկինը տրվավ պատասխան.
Անհուն ցասումից մրոնչաց Շահը....

Շահի զայրույթը պատկերելու համար հեղինակը գործածել է *մռնչալ* բառը:

<u>Վարժություններ</u>

Վարժություն 1: **Գտնե՛լ մակդիրները, համեմատությունները և փոխաբերությունները:**

Թելիկ-մելիկ առու,
Ուլունք-ուլունք մասուր...
Այցելության գալու
Անրջանքներ լազուր:

Ժայռը թիկնել է ժայռի ուսին,
Ժայռը նստել է ժայռի վրա,
Եվ ժայռի վրա նորած լուսինն
Արծաթ եղջյուրն էր փշրում իրա:
Ոլոր կածանը որպես պարան
Ժայռի պռունկից իջնում էր գետ.
Լոկ այդ պարանն էր ձիգ ու բարակ
Կապում իմ գյուղը աշխարհի հետ...

Համո Սահյան

Հեռու եմ ես, ու մեկն ասես
Կանչում է ինձ, անվերջ կանչում,
Մոր խոսքի պես ու երգի պես
Մի ձայն կա միշտ իմ ականջում:

Խշշում է նորից վտակը այն խենթ,
Որ խաղընկերն էր իմ մանկության…

Ողջո՜ւյն քեզ, հի՛ն անտառ,
Հացիներին քո հեզ,
Լորիներին խարտյաշ,
Ուռիներին բեհեզ:

Վահագն Դավթյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	6
ԼԵԶՎԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐԸ	6
ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՁԱՅՆԱԿԱՊ	6
ՏԱՌ ԵՎ ԱՅԲՈՒԲԵՆ	8
ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ	13
ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	13
ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ Յ ՁԱՅՆԱԿԱՊԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	15
ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	18
ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	24
ՄՅՈՒՍ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	25
ԲԱՂԱԴՐՅԱԼ ԲԱՌԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	27
ՎԱՆԿԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	30
ՏՈՂԱԴԱՐՁ	32
ՇԵՇՏԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	36
ՇԵՇՏԱՓՈԽԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ	37
ՄԵՆԻՄԱՍՏ ԵՎ ԲԱԶՄԻՄԱՍՏ ԲԱՌԵՐ	41
ՀՈՄԱՆԻՇ ԲԱՌԵՐ	43
ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ	46
ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ	48
ՀԱՐԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ	51
ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	53
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**Error! Bookmark not defined.**
ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ	57
ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ	58
ԱԾԱՆՑՆԵՐ ԵՎ ԱԾԱՆՑՈՒՄ	60
ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	61
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	62
ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	64
ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ	65
ԳՈՅԱԿԱՆԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ - ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ	65
ՀԱՏՈՒԿ ԵՎ ՀԱՍԱՐԱԿ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ	76
ԲԱՂԱԴՐՅԱԼ ՀԱՏՈՒԿ ԳՈՅԱԿԱՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	77
ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ	86
ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ	88
ԴԵՐԱՆՈՒՆ	91
1.ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ	91
2.ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ	92
3.ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ	93

5.ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ 94
6.ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ 94
8.ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ 95
ԲԱՅ 99
ԴԻՄԱՎՈՐ ԵՎ ԱՆԴԵՄ ՁԵՎԵՐ 99
ԲԱՅԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ 100
ԲԱՅԻ ՍԵՌԸ 102
ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԴԵՄՔԻ ԵՎ ԹՎԻ ԿԱՐԳԵՐԸ 104
ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿԻ ԿԱՐԳԸ 105
ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ 110
ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ 112
ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ 113
ՄԱԿԲԱՅ 115
ԿԱՊ 116
ՇԱՂԿԱՊ 118
ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐ 119
ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ 120
ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ 121
ԲԱՌԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ 121
ԲԱՌԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ 123
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ 124
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ 125
ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 129
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ 129
ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ 130
ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ 133
ԽՆԴԻՐՆԵՐ 133
ՊԱՐԱԳԱՆԵՐ 134
ԿՈՉԱԿԱՆ 136
ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ 137
ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ 138
ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԴԱՍ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 140
ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՊԱՐԶԻ ԵՎ ՀԱԿԱՌԱԿԸ 141
ՄԵՋԲԵՐՎՈՂ ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ 143
ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ 145
ՏՐՈՀՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ 146
ԲԱՑԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ 149
ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ 150
ՀԱՅԵՐԵՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՃԵՐԸ 152
ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 154

ԱՐՏԱՇԵՍ ԼԻՊԱՐԻՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ
ՍԱՍՈՒՆ ՎԱՉԳԵՆԻ ՀԱՄԱԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ

Ուսումնական ձեռնարկ

Համակարգչային աշխատանքները՝ *Մարիամ Պետրոսյանի*
Սրբագրիչ՝ *Գոհար Ամիրբեկյան*

Հանձնված է տպագրության 22.12.2012
Ծավալը 10 մամուլ:
Չափսը 70X100 1/16:
Ք. Երևան. Տիգրան Մեծի 67